

ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Օ՝ՁԱՂ ԾԱՇԱՂԻ ԸՆԴԵՒ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS



ՊՐԱԿ 1 TOM 1 VOLUME 1
2022
êï »÷³ Ý³ İ»ñï

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ծննդի օրը՝ 1998 թ. հունիսի 25-ին
«Գրականության ամսագիր»-ի 3-րդ համարի 1998 թ. հունիսի 25-ին
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

ԷՍՄԻ ԿԱՅԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԿՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՆԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ի ձգտմամբ պատրաստվելու է օգնություններ տրամադրվելու օգնությամբ:

Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆՍԵՐԻ ՄԱՍԻՆ:

Главный редактор: д.и.н. Аванесян В.М.

Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

ԷՍՄԻ ԿԱՅԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ծառնագիր օգնություններ

Editorial board

Հասարակական գիտություններ

1. Եկոնոմիկական գիտություններ, ա. թ. թ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳ –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազխիյան Գ.Ս., ի.գ.դ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳ – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., ա.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Մանգասարյան Ռ.Յա, ա.գ.թ. – Мангасарян Р.Я., к.э.н. –Mangasaryan R.Ya., Ph.D. in Economics
5. Բալայան Վ.Ռ., ա.գ.դ. - Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., մ. թ. թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Ս., ա.գ.դ. - Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., թ. թ. թ., Арутюнян В.Н., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. ԷՍՄԻ ԿԱՅԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՍԵՐԻ ՄԱՍԻՆ - Ханян С.А., д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Տեր-Մատոսյան Պ., ա.գ.դ. (ՄՄՄ) –Тер-Матосян П. д.ф.н. (США) -Ter-Matosyan P., Doctor of Science (USA)
11. Տեր-Մկրտչյան Բ., ա.գ.դ. (ՄՄՄ) – Тер-Мкртчян Б. д.ф.н. (США) - Ter-Mkrтчyan B., Doctor of Science (USA)
12. Թանշինա Ն.Պ., ա.գ.դ. (ՌՌ) – Таньшина Н.П. д.и.н. (РФ) – Tanshina N.P., Doctor of History (RF)
13. Ի կրթական գիտություններ, ա. թ. թ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳԳԳԳ - Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
14. Ի կրթական գիտություններ, մ. թ. թ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳԳԳԳԳԳԳ – Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology, Professor
15. Գալանթյան Լ.Ս., ա.գ.դ. թ. թ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳ - Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Novhannisyants L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
16. Օմարյան Ա.Ս., ա.գ.դ. թ. թ., ԾԾ ԳԶԶ ԳԶԶ՝ՍՍՍԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳԳ - Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences

17. ՇՅ ը՝ Յ ըՅՅ Կ Լ. Պ., ք. ձ. Ա.– Маргарян Л. Г., к.ф.н.– Margaryan L.G., Ph. D. in Philology, Scientific Secretary of ASU

18. ՇԷՇԱՅ ըՅՅ Կ Չ. Չ., հ.գ.թ. – Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psychology

19. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. – Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psychology

20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia

21. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ. – Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics

22. Թադևոսյան Հ.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	7
Ծ. ՄԻՆԱՍՅԱՆ, Հ. ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ).....	20
Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՑԱԽԻ «ԱԿԱՂՔՅՈՒՐ» ՀԱՄԱՆՈՒՆ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐԶ.....	33
Ն. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՅՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅՄԱԿԱՆ).....	39
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԴՐԱՄԱՆ ՎԱՀԵ ՀԱՅԿԻ «ՀԱՅՐԵՆԻ ԾԽԱՆ» ՀԻՆԳՀԱՏՈՐՅԱԿՈՒՄ.....	48
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿՈՐՈՒՄՅԱԼ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԵՐԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՌԿԱ ՎԵՐԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱՐՈՏԻ ԱՐԶԱԿՈՒՄ. ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ, ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿՅԱՆ.....	61
Մ. ԲԱԼԱՅԱՆ ՈՌՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ. «ԲԱՌԱՍԽԱԿ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.....	71
Չ. ԲԱԼԱՅԱՆ ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆԴՅԱՆՅԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ» ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՐԱՐԶԵՐԸ	81
Չ. ԲԱԼԱՅԱՆ ՄԻԼԼՈԳԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԱՆԵՐԸ ԵՎ ՄՈՒՐԱՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ. «ԱՆԴՐԵԱՍ ԵՐԵՅ».....	100
Ա. ԽԱԶՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈԵՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	112
Չ. ՍԱՌԱԶՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ԸՍՏ ՄՈՒՐԱՅԱՆԻ.	120
Չ. ՍԱՌԱԶՅԱՆ, Մ. ՍԱՐԳՍՅԱՆ «ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԹԵՐԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2010-2022 ԹԹ.....	127
Հ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	136

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Ն.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿՐԿԻՆ Յ.Մ. ԴՈՍՏՈՆԵՎՍԿՈՒ ՈՐՈՇ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԵՐԿԱԿԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (ԳՐՈՂԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ)..... 148

Ի.ՀԱԿՈՐՅԱՆ

ՌՈՒՍԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՅԱԽԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ..... 155

Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅՈՒՄ ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 164

Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԱՌՄՏՈՎՍԿՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՎԵԼՆԵՐԻ ԻՆՏԵՐՏԵՔՍՈՒԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 177

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՔՍՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս.ՊԵՏՈՅԱՆ

ԲԱԶԵԼԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ 20-30-ԱԿԱՆ ԹԹ..... 186

Մ.ԱՐՉԱԿԱՆՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՎԵՐՋՈՒՄ..... 195

Ս.ԴԱԴԱՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ՝ ՊԱՏՄԱՊԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ..... 202

Տ.ՀԱԿՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՅԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՅԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ԶԵՌՔԵՐՈՒՄ..... 218

Տ.ՀԱԿՈՐՅԱՆ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՅԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992Թ. ԱՊՐԻԼ)..... 228

Մ.ԹԵԼՈՒՆՅ

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅՄՅՅՔՆԵՐԸ, ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ..... 239

Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳՈՒՄ (ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ) 246

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՒՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՉՄՈՒՆՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ՄԵՌԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 258

Վ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՊԸ
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ..... 268

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ն. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԵՆՍԱԿԱՆ
ԿՈՂՄԵՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ՄԵՌԱՅԻՆ ՏԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 279

Վ. ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԴԺՎԱՐ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ..... 291

Ա. ԱՎԱԳՅԱՆ, Կ. ՀԱԿՈՔՅԱՆ
ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՎԱՐՔԻ ԵՎ
ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՀԱՐԱՔԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ..... 299

Ա. ԱՎԱԳՅԱՆ, Մ. ՔԵՐԻՄՅԱՆ
ՉՈՒՅԳԵՐԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ
ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵՐԻ ԲԱԾԽՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 310

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ա. ՖԻՐՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱՄԵՐԶ ԳՈՏՈՒՄ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՉՐՈՒՅԹԻ ՏԵՍԱՄԵԹՈՂԱՔԱՆԱԿԱՆ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 320

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՄԱՐՄՆԻ ՉԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՉՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ..... 331

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ԿԱՆԱՆՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱՉԻ ԳԵՂԱՉԱՐԴՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 335

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀՒՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ..... 352

ՀՏԴ 398

Բանահյուսություն

Արմեն ՄԱՐԳՍՅԱՆ

ԱրՊՀ ակ. Ս. Արբահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.,

ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

E-mail: armen.sarkisyan.68@mail.ru

ԱՐՅԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ներկայացվում է Արցախի բանահյուսության գրառման համառոտ պատմությունը 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը: Առանձին պարբերություններով քննության են առնվում Արցախի բանահյուսական ժողովածուները, դրանցում տեղ գտած տարբեր ժանրերի ստեղծագործությունները, գիտական տառադարձության աղավաղումները և այլ հարցեր: Անդրադարձ է կատարվում նաև Արցախի բանահյուսության ուսումնասիրության պատմությանը:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, ժողովածու, հոդված, հեքիաթ, առակ, հանելուկ, ավանդություն, զվարճախոսություն, առած, անեծք, օրհնանք

A. Саргсян

КРАТКАЯ ИСТОРИЯ ЗАМЕТОК ОБ АРЦАХСКОМ ФОЛЬКЛОРЕ

В статье представлена краткая история заметок об арцахском фольклоре с середины XIX века до наших дней. В отдельных абзацах рассматриваются фольклорные сборники Арцаха, произведения разных жанров, искажения научной транслитерации и другие вопросы. Делается ссылка и на историю изучения арцахского фольклора.

Ключевые слова: фольклор, сборник, статья, сказка, басня, загадка, традиция, прибаутка, пословица, проклятие, благословение

A. Sargsyan

A BRIEF HISTORY OF NOTES ON ARTSAKH FOLKLORE

The article presents a brief history of notes on Artsakh folklore from the middle of the 19th century to the present day. In separate paragraphs,

folklore collections of Artsakh, works of various genres, distortions of scientific transliteration and other issues are considered. Reference is also made to the history of the study of Artsakh folklore.

Key words: *folklore, collection, article, fairy tale, fable, riddle, tradition, byword, proverb, curse, blessing*

Հայ ժողովրդական բանահյուսության հարուստ ժառանգության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են խոր հնադարում: Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունները մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա նիստն ու կացը, հոգեկան ապրումներն ու երեակայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմության եւ այլ գիտությունների համար անլուծելի են: Դժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ ժամանակին գրի չառնվելու պատճառով:

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրյանները, ովքեր 1860թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Այդ գրառումներում առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթրյանները որեւէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է «*Հաքյաթին ընտրությունը*» խորհրդածությունը, որտեղ ասվում է. «*Հաքյաթին ընտրությունը էն ա, որ մին հաքյաթի մեջի տուրուստ պան ինի: Հաքյաթեն ամենը սոտ պաներ ա, ուրուր քցած, էրկանացրած: Ամմա կյիրիլիս վախտը հինչ ինի, պետում ա կյիրենք: Բայց մունք մեր խելքին ըկորա պետում ա փոնըցրենք, տեսանք, որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոտի, որըն ա լափ ճշմարիտ*»¹:

Իրենց պակասություններով հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության եւ պատմելիաձեւի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը եւ մակարդակը:

Դեռեւս 19-րդ դարի 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով հայ բանահյուսության գրառմանը, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը հրապարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու եւ հրատարակելու ժողովրդի հոգեւոր մշակույթի գանձերը²:

¹ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երեւան, 1973, էջ 706

² «*Մշակ*», 1882, N 4, 222, 1883, N 79, 1884, N 10, 1890, N 109

Արձագանքելով այդ կոչին՝ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881- 1882թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրվում են Ս.Նավասարդյանի կողմից¹, իսկ ամբողջությամբ՝ 1973 թվականին²:

Ընդհանուր առմամբ, Նավասարդյանի կոչը լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Վարանդայի (ներկայումս՝ Մարտունու) Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը գրի է առնում մի շարք հեքիաթներ, հանելուկներ, երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ եւ այլ ժանրերի նմուշներ՝ ուղարկելով Ս.Նավասարդյանին, ով դրանց մեծ մասը հրատարակում է³, իսկ որոշ նյութեր հրատարակվում են 20-րդ դարի 70-ական թվականներին⁴: Ուշագրավ է այն փաստը, որ բանահավաքը իր նյութերին կցել է նաեւ ազգագրական բովանդակությամբ բարբառային բառերի բառարան:

Բահաթրյանների, Մ. Տեր-Հովհաննիսյանի ձեռագրերը, ինչպես նաև Հարություն Թավրիզյանի՝ Շուշու խոսվածքով Մոսկվայում գրառած հեքիաթներն ու այլ բանահավաքների որոշ գրառումներ պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Ս. Նավասարդյանի ֆոնդում:

Այս շրջանում լայն տարածում է ստանում երգիծական ժանրի ստեղծագործությունների հավաքումը: Գալուստ Շերմազանյանը առաջին անգամ հավաքում է հրատարակում է Արցախի նշանավոր զվարճախոս Պըրը-Պուղու, ինչպես նաև Արցախում ապրած եւ գործած պատմական որոշ դեմքերի ու դեպքերի շուրջ ստեղծված գրույցները⁵, որոնք հեղինակի կողմից ենթարկվել են որոշակի մշակման եւ չունեն գրառման հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Հեղինակը մինչև այդ տպագրել էր նաև «Սարի բեգ և Գիքի» պիեսը⁶, այն համարելով Ղարաբաղի բարբառով գրված, բայց իրականում ե՛ւ գրվածքի լեզուն, ե՛ւ բացատրությունները կիսազգրական են, եղած բարբառայինն էլ՝ ավելի շուտ Ջուղայի բարբառով⁷:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում նշանակալից է Մակար Բարխուդարյանի դերը: Քաջատեղյակ լինելով մայրենի բարբառին եւ շրջելով պատմական Արցախը՝ նա գրառել է տարբեր ժանրերի

¹ **Նավասարդեան Ս.**, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, պրակ 8, 9, 10, Թիֆլիս, 1894, 1902, 1903

² *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երևան, 1973

³ **Նավասարդեան Ս.**, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, պրակ 1, Վաղարշապատ, 1882

⁴ **Գրիգորյան Ռ.**, *Հայ ժողովրդական մանկական երգեր ու խաղերգեր*, Երևան, 1970, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 6, Երևան, 1973

⁵ **Շերմազանեանց Գ.**, *Անեկդոտներ, գուարճալի գրույցներ, համառոտ դեպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած*, Թիֆլիս, 1878

⁶ **Շերմազանեանց Գ.**, *Սարի բեգ եւ Գիքի*, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, 1863

⁷ **Դավթյան Կ.**, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Երևան, 1966, էջ 8

նմուշներ, հատկապես ավանդություններ, գրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ՝ դրանք ամփոփելով «*Բարոյական, առածներ*» ժողովածուում¹: 1883 թվականին հրատարակվում է նրա «*Պըլը Պուղի*» ժողովածուն, որն ընդգրկում է զվարճախոսի շուրջը ստեղծված բանահյուսությունը¹¹: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ ներկայացվում է Պըլը-Պուղու կենսագրությունը, ինչպես նաև քերականական ծանոթագրություններ եւ բառարան: Միաժամանակ Բարխուդարյանը բարբառով գրել է նաև գեղարվեստական ստեղծագործություններ³: Նշանավոր է նրա «*Արցախ*» պատմագիտական աշխատությունը⁴, որը ներառում է բանահյուսական որոշ նմուշներ:

Արցախյան բառուբանով հարուստ ֆելիետոններով ասպարեզ եկավ Կոնստանդին Մելիք-Շահնագարյանը՝ Տսֆլաչի Խաչանը: 1900-1901թթ. Բաքվում⁵, ապա 1907 և 1908թթ. Վաղարշապատում⁶ հրատարակվեցին նրա «*Ձուռնա-Տսֆլա*» ժողովածուի գրքերը, որտեղ ամփոփված են հեղինակի՝ 1879-1907թթ. «*Նոր Դար*» եւ այլ թերթերում տպագրած ֆելիետոնները, եւ որոնք, քաղված լինելով Շուշու ընտանեկան ու հասարակական կյանքից, որոշակի աշխուժություն են առաջացնում հայ պատմագագագրական շրջանակներում եւ խթանում բանահավաքչական աշխատանքները: «Բ» գրքի վերջում հեղինակը տվել է քերականական ծանոթագրություններ եւ դժվարիմաց բառերի բացատրություններ: Լինելով բնիկ շուշեցի, ուսանելով Շուշու թեմական դպրոցում, Էջմիածնի Գետրոցյան ճեմարանում եւ ապա բարձրագույն կրթություն ստանալով Ֆրանսիայում՝ մասնագիտությամբ գյուղատնտես Կ. Մելիք-Շահնագարյանը իր ողջ կյանքում գրառում է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր⁷, որոնց մի մասը հրատարակվում է⁸, իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ

¹ *Բարխուտարեանց Գ.*, *Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898* (Մ. Բարխուդարյանը եւ Գ. Բար - խուդարյանը նույն անձն են)

² *Բարխուդարեանց Մ.*, *Պըլը Պուղի, Թիֆլիս, 1883*

³ *Բարխուդարեանց Գ.*, *Արագը տարին կտարի, Շուշի, 1883, Չոբանն ու նշանածը, Թիֆլիս, 1896, Միրգա եւ Աննա, Չմյուռնիա, 1876*

⁴ *Բարխուտարեանց Մ.*, *Արցախ, Բագու, 1895*

⁵ *Մելիք-Շահնագարեանց Կ.* (Տսֆլաչի Խաչան), *Ձուռնա-Տսֆլա*, հ. 1-3, Բաքու, 1900-1901

⁶ *Մելիք-Շահնագարեանց Կ.* (Տսֆլաչի Խաչան), *Ձուռնա-Տսֆլա*, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908

⁷ *Հայրապետյան Թ.*, *Կոնստանդին Մելիք-Շահնագարյան (Տսֆլաչի Խաչան)*. Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 24, Երեւան, 2007, գլուխ 5

⁸ *Մելիք-Շահնագարեանց Կ.*, *Առակներ Ղարաբաղի բարբառով, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1930, 1931, Հանելուկներ Ղարաբաղի լեզուով «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1930, Ղարաբաղի բարբերեն, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1928, Ղըլըցէ կնանոց պընը-փեշակը, Թիֆլիս, 1882, Շոշվա դալին խերն ու շառը, Թիֆլիս, 1887, Ղանալանյան Ա., Առածանի, Երեւան, 1960, Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում եւ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

19-րդ դարի երկրորդ կեսերին Շուշին դարձել էր գիտամշակութային, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման խոշոր կենտրոն¹, որտեղ ապրում եւ գործում էին բազմաթիվ նշանավոր մտավորականներ: Եվ պատահական չէ, որ հենց այստեղ հայ ազգագրության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը 1895թ. հիմնադրեց «Ազգագրական, հանդեսը», որտեղ ազգագրական եւ տեղագրական նյութերը ներկայացվում էին բանահյուսականի հետ միասին² ընդգրկելով հատկապես ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երգեր եւ այլ նմուշներ: Հանդեսի հրատարակչությունը Թիֆլիս տեղափոխվելուց հետո էլ այնտեղ շարունակվում էր արցախյան ժողովրդագրական նյութերի տպագրումը: Այստեղ է տպագրվել նաեւ Ե. Լալայանի նշանավոր «Վարանդա» աշխատությունը³, որը հազեցած է բանահյուսական նյութերով՝ հատկապես ավանդություններով⁴:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին առանձին ուշադրություն է դարձվում Արցախի քնարական բանահյուսությանը: 1895թ. Խաչիկ Դադյանը՝ Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղից, լույս է ընծայում «Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից» խորագրով մի շարք՝ արժեքավոր ծանոթագրություններով⁵, իսկ 1908- 1910թթ. «Ազգագրական հանդեսի» տարբեր գրքերում Ա. Դադյանի հետ տպագրում 1885-1903թթ. Վարանդայի տարբեր գյուղերում գրառած խաղիկները՝ հակիրճ ծանոթագրություններով եւ բարբառային բառերի բացատրությամբ⁶: Խ. Դադյանը 1878-1920 թվականներին Արցախի տարբեր բնակավայրերից հավաքել է նաև բանահյուսական այլ նյութեր՝ հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկանմանկական, ծիսական, վիճակի, երգեր, խաղերգեր, ծաղրերգեր, հանելուկներ, կենաց-

¹ **Խենցյան Է.**, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի հոդվածներ, Երևան, 2007

² **Մարգարյան Ա.**, Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը <<Ազգագրական հանդեսի>> էջերում, <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր>>, Ստեփանակերտ, 2017, էջ 59-66

³ **Լալայան Ե.**, Վարանդա. նյութեր ապագա ուսումնասիրության համար, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, **Լալայան Ե.**, Վարանդա. Նշանավոր տոներ, «Ազգագրական հանդես», գիրք Գ., Թիֆլիս, 1898

⁴ **Վարդանյան Ս.**, Վարանդայի բանավոր մշակույթը Երվանդ Լալայանի և նրա թղթակից-բանահավաքների գրառումներում, <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, Երևան, 2015, N 2, էջ 356-367

⁵ **Դադեան Խ.**, Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից, «Արարատ», Վաղարշապատ, 1895, N 12

⁶ **Դադեան Ա.**, Վարանդայի բանավոր գրականությունից, «Ազգագրական հանդես», գգ. 17, 18, 19, Թիֆլիս, 1908-1910

բարենաաղթություններ են, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում (N 319):

20-րդ դարի սկզբին նվազում է հետաքրքրությունը դեպի բանահյուսությունը՝ կապված քաղաքական բարդ իրավիճակի հետ: Այս շրջանում բանահավաքչական աշխատանքներ է ծավալում Սարգիս Իսրայելյանը՝ Վարանդայի Նախիջեւանիկ գյուղից: Նա ոչ միայն Արցախի, այլև Շամշադինի եւ Ջանգեզուրի տարբեր բնակավայրերից գրառում է հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, մանրապատումներ, երգեր, խաղիկներ եւ այլ ժանրերի ստեղծագործություններ, կազմում բարբառային բառերի բացատրական բառարան: Ս. Իսրայելյանի գրառումների մի մասը տպագրվում է առանձին գրքով¹, մի մասը՝ համահավաք ժողովածուներում², որոշներն էլ ձեռագիր վիճակում պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

20-րդ դարի կեսերին Արցախի բանահյուսության գրառման աշխատանքները նորից աշխուժանում են: Երախտագիտությամբ պետք է հիշել ծննդով շուշեցի, Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի անունը, որի 1920-60-ական թվականներին Շուշուց եւ Արցախի տարբեր գյուղերից հավաքած նյութերը ամփոփվեցին «Հայ ժողովրդական հեքիաթներ»³ եւ «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը»⁴ ժողովածուներում: Սրանցից առաջինում ընդգրկված է 156 հեքիաթ, որ ամբողջությամբ գրի է առել Մ. Գրիգորյանը 1922-56թթ. ընթացքում: Մյուս ժողովածուն աչքի է ընկնում բազմաժանրությամբ՝ ժողովրդական վիճակի երգեր (ջանգյուլումներ), հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, բանաձեւային բանահյուսության նյութեր:

Հեղինակը, երկար տարիներ շրջագայելով պատմական Արցախի Վարանդա, Գյուլիստան, Խաչեն, Դիզակ եւ Ջրաբերդ գավառների բնակավայրերը, եռանդուն ջանասիրությամբ, անձնվեր սիրով ու հմտությամբ է գրի առել բոլոր այդ ստեղծագործությունները: Ժողովածուներին կցված են բացատրական բառարաններ եւ ծանոթագրություններ: Մ. Գրիգորյանի ձեռագրերը ներկայումս պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

1960-70-ական թթ. Արցախի ժողովրդական բանահյուսությունը հարստացվում է նոր բանահավաքների գրառումներով (Բ. Ղազիյան, Ա.

¹ *Իսրայելյան Ս., Ղարաբաղի զվարճախոս Պըրը Պուղին, Երեւան, 1956*

² *Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

³ *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Երեւան, 1966*

⁴ *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971*

Ղազիյան, Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, Մ. Մխիթարյան, Մ. Օհանջանյան, Լ. Հարությունյան):

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Միքայել Առաքելյանը 1960-ական թթ. Արցախի տարբեր գյուղերից հավաքում է բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնց մեծ մասը տպագրվում է¹:

1960թ. Ստեփանակերտում բացվում է ժողովրդական ստեղծագործության մարզային տունը, որի աշխատակիցների՝ մարզի տասնյակ գյուղերից գրառած բազմաթիվ հեքիաթների, առակների, զրույցների, ավանդությունների, առած-ասացվածքների, ժողովրդական խաղիկների եւ այլ ժանրերի նյութերի մի մասը հրատարակվում է²:

1983թ. լույս է տեսնում Ալվարդ Ղազիյանի «Արցախ» խորագրով բանահյուսական ժողովածուն³, որն ամփոփում է հիմնականում հեղինակի եւ Բարխուդար Ղազիյանի կողմից 1966, 1970-78 թթ. ընթացքում Արցախի եւ Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից գրառված նյութերը՝ հեքիաթներ, զրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ավանդություններ, երգեր, խաղերգեր, մականուններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Ժողովածուի վերջում կան ծանոթագրություններ եւ բարբառային բառերի բացատրություններ: Ծանոթագրություններում տրվում են բանահյուսական ստեղծագործությունների սերման ու կենցաղավարման հանգամանքները, բանասացների կենսագրական տվյալները, հայացքները, մեկնաբանություններն ու գնահատականները պատմվող նյութի վերաբերյալ, նյութերի գրանցման վայրն ու ժամանակը: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ արժեւերկրվում են մինչեւ այդ հրատարակված աշխատանքները, ներկայացվում տվյալ ժողովածուն կազմելու հանգամանքները եւ սկզբունքները: Հետաքրքիր է այն փաստը, որ հեքիաթների շարքում զետեղված է նաեւ հայ ժողովրդական էպոսի առաջին ճյուղի մի պատումը՝ «Սանասար նան Բաղդասարը»: Ալվարդ Ղազիյանը բանագետ Սվետլանա Վարդանյանի հետ կազմել է նաեւ «Բաքվի հայոց բանահյուսությունը» ժողովածուն⁴, որի նյութերի զգալի մասը գրառված է Բաքվում բնակվող արցախցի բանասացներից:

Արցախի բանահյուսության հավաքման գործընթացին նոր թափ հաղորդեց Մարտունու շրջանի Աշան գյուղի վաստակաշատ ուսուցիչ, բանահավաք Լեւոն Հարությունյանի՝ 1991թ. հրատարակած «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուն⁵, որտեղ բացի բանահյուսական վերոհիշյալ

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.6,7, Երեւան, 1973, 1979

² Նմուշներ Լեւոնյանի Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978

³ Ղազիյան Ա, Արցախ, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ.15, Երեւան, 1983

⁴ Բաքվի հայոց բանահյուսությունը (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Մ. Վարդանյանը), Երեւան, 2004

⁵ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Երեւան, 1991

Ժանրերից, հեղինակն ուշադրություն է դարձրել նաև ասույթաբանական բանահյուսության ամենատարբեր տեսակների՝ կենացներ, խրատ, սուգ, ծիսական արտահայտություններ, դարձվածքներ, անձնանուններ եւ այլն: Միաժամանակ տրվում են տեղեկություններ ժողովրդական որոշ խաղատեսակների, բուսական եւ կենդանական աշխարհի, ուտեստի, սովորությունների, ծիսական երգերի, պարերի վերաբերյալ: Ընդարձակ առաջաբանում ներկայացվում է արցախյան բանահյուսության էությունը՝ որպես արցախցու հոգու եւ մտքի արտահայտություն: Ժողովածուն ունի բացատրական բառարան եւ ծանոթագրություններ: Բանահյուսական եւ ազգագրական բազմաթիվ նյութեր են ընդգրկված հեղինակի՝ նույն խորագիրը կրող հաջորդ¹, ինչպես նաև «Կաթնակորեկ»² ժողովածուներում:

Արցախի տարածքից նյութեր են գրառվել ու հրատարակվել նաև այլ հեղինակների կողմից³: Բազմաթիվ նմուշներ են ընդգրկված հայ բանահյուսական համահավաք ժողովածուներում⁴, ինչպես նաև Արցախի ու նրա տարբեր բնակավայրերի պատմությանը, ազգագրությանը, բարբառին

¹ **Հարությունյան Լ.**, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երկրորդ գիրք, Ստեփանակերտ, 2004, Երրորդ գիրք, Ստեփանակերտ, 2007, Չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009, Հինգերորդ գիրք, Ստեփանակերտ, 2011

² **Հարությունյան Լ.**, Կաթնակորեկ, Երևան, 1998

³ **Ալեքսանյան Ն.**, Հայացք ի ներս, Ստեփանակերտ, 1995, **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ, Ստեփանակերտ, 1995, **Գրիգորյան Գ.**, Մոխրաթաղյան ժպիտներ, Ստեփանակերտ, 1998, **Խաչատրյան Ա.**, Մեր գյուղի մարդիկ (Արցախյան զվարճապատումներ), Երևան, 2014, **Հախումեանց Ս.**, Առակ ի բարբառ արցախեցւոց, <<Արարատ>>, Ս. Էջմիածին, 1877, թիւ ԺԲ, էջ 460-461, **Հայրապետյան Թ.**, Երգիւնքան իրեր ինձոր վեր ընգավ ու տասը խրատ, Երևան, 2014, **Հայրապետյան Հ.**, Ականջող կանչի, Պուղի, Ստեփանակերտ, 2013, **Հայրապետյան Ռ.**, Ղարաբաղյան խաղիկներ, Ստեփանակերտ, 2000, **Ղանդամանյան Գ.**, Վարդուտ զավառի բառ ու բանը, Երևան, 2011, **Ղանդամանյան Ռ.**, Առածանի, Ստեփանակերտ, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2011, Խաղիկներ, Ստեփանակերտ, 2005, **Ղուկասյան Մ.**, Արցախյան պատումներ, Ստեփանակերտ, 2010, **Մարկոսյան Ս.**, Արցախյան անեկդոտներ, Երևան, 2004, **Պետրոսյան Մ.**, Արցախյան առածանի, սասձանի, Ստեփանակերտ, 1999 ևն

⁴ **Աբեղյան Մ.**, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, **Նազիկյան Ա.**, Ծաղկեփունջ, Երևան, 1960, **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, **Ղանալանյան Ա.**, Առածանի, Երևան, 1960, Ավանդապատում, Երևան, 1969, **Караян Г.**, Армянский фольклор, Москва, 1967, *Забавные и назидательные истории армянского народа*, Москва, 1975 ևն

նվիրված և այլ աշխատանքներում¹: Ոչ պակաս ուշագրավ են տարբեր արձակագիրների ու բանաստեղծների կողմից կատարված մշակումները²:

Նշված բոլոր բանահավաքների գործունեությունը, անշուշտ, լուրջ ներդրում է Արցախի բանահյուսական ժառանգությունը կորստից փրկելու գործում, սակայն, դժբախտաբար, պետք է ասել, որ նրանք հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի, հատկապես կոնկրետ խոսվածքների յուրահատկությունները՝ հավաքած նյութերը եւ հրատարակած ժողովածուները բարբառի ուսումնասիրման համար հաճախ դարձնելով ոչ հուսալի աղբյուր³: Եվ եթե որոշ աշխատանքներ տպագրվել են գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով, ապա մյուսների մեջ էլ ակնհայտ են բարբառային օրինաչափությունների աղավաղումներ, որոնք հանդես են գալիս լեզվական տարբեր մակարդակներում⁴: Հնչյունաբանական մակարդակում բանահավաքները հաճախ են անտեսել քմային ձայնավորների ու բաղաձայների, ը^է, ը^ի երկբարբառակերպերի, գաղտնավանկի ը-ի տառադարձումը: Որոշ դեպքերում հանդիպում ենք Ղարաբաղի բարբառին խորթ *Ֆ* բաղաձայնի գործածությանը, հաճախակի են բառասկզբի դիրքում գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների պահպանման դեպքերը, չնայած բարբառում դրանք հիմնականում իլլանում են: Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները պայմանավորված են բարբառին ոչ հատուկ՝ գրական հայերենի բազմաթիվ բառերի գործածությամբ, ինչպես *անգամ, բոլորովին, գուցե, երիտասարդ, թեկուզ, ձկնորս, սրամիտ*: Քիչ չեն նաեւ քերականական օրինաչափությունների խախտումները. ժողովածուների մեծ մասում նկատելի

¹ **Աբրահամյան Հ.**, Քերթ, Երևան, 2010, **Աղաջանյան Մ.**, Հաթերք, Ստեփանակերտ, 2012, **Բաբախանեան Ա.**, Ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1890, **Գալստյան Ա.**, Հաղթանակ, Ստեփանակերտ, 2000, **Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, **Լիսիցյան Ստ.**, Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ), <<Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ>>, Երևան, 1981, հ. 12, էջ 9-84, **Ղազարյան Խ.**, Տուվի, **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հ.2, Երևան, 2006, Օջախի գիրք. Նշխարներ, Երևան, 2002, **Պողոսյան Ա.**, Հաղորդի բարբառը, Երևան, 1965, **Սարգսյան Ա.**, Շաղախի ենթաբարբառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, **Патканов К.**, Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869 ևն

² **Ավետիսյան Ն.**, Բմ Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 2002, **Բեգարյան Հ.**, Կատակում է Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 1998, **Գաբրիելյան Գ.**, Ղարաբաղի հորովել, Ստեփանակերտ, 2003, **Խանգադյան Ս.**, Պըլը Պուղի, Երևան, 1988, **Օվյան Վ.**, Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց, Ստեփանակերտ, 1993 ևն

³ **Սարգսյան Ա.**, Տառադարձության կարեւորությունը բանահյուսության մեջ, «Միջազգային գիտաժողովի նյութեր. Մեւրոպ Մաշոոց համալսարան», Ստեփանակերտ, 2007, **Սարգսյան Ա.**, Բարբառային օրինաչափությունների պահպանման կարեւորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, № 1

⁴ **Սարգսյան Լ.**, Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 118

են բացառական եւ գործիական հոլովածեւերի, դասական թվականների, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի եւ մի շարք այլ գրականաձեւ կազմություններ: Ընդհանուր առմամբ բոլոր ժողովածուներում անտեսված է բարբառագիտության մեջ ընդունված ուղղագրության միասնական սկզբունքը՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է: Նման աղավաղումները, մեր կարծիքով, պայմանավորված են հետեւյալ գործոններով.

1. Բանահավաքները, կարեւորելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը եւ բարբառի գիտական քննումը նպատակ չհամարելով, առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով: Այդ մասին նշված է որոշ ժողովածուների առաջաբաններում եւ ծանոթագրություններում:

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են գրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Չի բացառվում, որ բազմաթիվ նյութեր գրառվել են վերհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է եկել նաեւ որպես բանասաց:

3. Հաճախ նյութը հնչունաքերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաեւ բանասացները՝ ձգտելով այն գրականացնել:

4. Որոշ դեպքերում էլ, անշուշտ, խախտումների պատճառները տեխնիկական են՝ պայմանավորված բարբառային տառադարձությամբ նյութերի տպագրության դժվարություններով:

Թերեւս այդ թերությունները հաշվի առնելով է կազմված և հրատարակված տողերիս հեղինակի <<Արցախի բանահյուսությունը>> ժողովածուն¹, որի մեջ ներառված են նաև հեղինակի նախորդ ժողովածուները²: Ժողովածուի ընդարձակ առաջաբանում ներկայացվում են Արցախի համառոտ պատմությունը, Արցախի բանահյուսության հավաքման, հրատարակման պատմությունը, նյութերի բանագիտական վերլուծությունը, Ղարաբաղի բարբառի հնչունաքառաքերականական օրինաչափությունները: Բուն ժողովածուն, որն ընդգրկում է հեղինակի կողմից 1992-2014թթ. Արցախի Հանրապետության 163 բնակավայրերի հարյուրավոր բանասացներից գրառած բանահյուսական 8078 նմուշ, բաղկացած է երեք բաժնից՝ *Վիպական բանահյուսություն* (1.Շեքիաթներ, 2.Ավանդություններ, 3.Առակներ, 4.Զվարճախոսություններ), *Քնարական բանահյուսություն* (5.Խաղիկներ, 6.Զափածո այլ ստեղծագործություններ), *Ասույթաբանական բանահյուսություն*

¹ **Մարգարյան, Ա.**, *Արցախի բանահյուսությունը*, Երևան, 2015

² **Մարգարյան Ա.**, *Արցախյան հանելուկներ, Ստեփանակերտ, 2002, Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, Արցախի բանաձեւային բանահյուսությունը, Ստեփանակերտ, 2009, Արցախյան առակներ, Ստեփանակերտ, 2011, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014*

(7.Առած-ասացվածքներ, 8.Անեծքներ, 9.Օրինանքներ և բարեմաղթանքներ, 10. Հանելուկներ, 11.Գյուղերի և քաղաքների մականուններ, 12.Մարդկանց մականուններ, 13.Շուտասելուկներ, 14.Հանգախաղեր): Բոլոր նյութերը բերվում են առանց բնագրերի փոփոխության՝ բարբառային տառադարձության և յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների խիստ պահպանմամբ, չնայած հարկ է նշել, որ երբեմն նույն բնակավայրի տարբեր բանասացների, անգամ նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում երբեմն նկատվում են արտասանական զուգաձեռություններ:

Ժողովածուին կցված են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ, ընդարձակ բառարան, անձնանունների, տեղանունների, նյութերն ըստ Ղարաբաղի բարբառի խոսվածքների ներկայացնող, տպագիր ու ձեռագիր աղբյուրների ցանկեր, ռուսերեն և անգլերեն լեզուներով անփոփոմներ: Հեղինակը կազմել ու հրատարակել է նաև Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության մատենագիտությունը¹, որտեղ ներկայացրել է Արցախի բանահյուսությանը լիովին կամ մասնակիորեն առնչվող տպագիր և ձեռագիր աշխատանքների ու նյութերի հնարավորինս ամբողջական ցանկերը՝ յուրաքանչյուր նյութի ամփոփ նկարագրությամբ:

Բանահյուսական նյութերի գրառմանն ու հրատարակմանը զուգընթաց տարբեր ժամանակներում հրատարակվել են նաև գիտական ուսումնասիրություններ: Արցախի բանահյուսության և առանձին ժանրերի վերաբերյալ բանագիտական աշխատանքներ, գրախոսություններ են հրատարակել Ա. Աթայանը², Ռ. Աթայանը³, Մ. Առաքելյանը⁴, Է.

¹ **Մարգարյան Ա.**, *Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության*, Երևան, 2019

² **Աթայան Ա.**, *Արցախի բանահյուսության հինգ նշխարները*, «Մեսրոպ մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2013, N1, էջ 172-180, *Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները* **Լ. Հարությունյանի** «<Նշխարներ Արցախի բանահյուսության>> ժողովածուներում, «ԱրՊՀ. Հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2014, էջ 150-165, **Լ. Հարությունյանի** «<Նշխարներ...>>-ի հեքիաթային աշխարհը, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2016, էջ 261-269,

³ **Աթայան Ռ.**, *Ղարաբաղի հորովելները Կոմիտասի գրառումներում*, «Սովետական Հայաստան», Երևան, 1988, N7, էջ 29-30,

⁴ **Առաքելյան Մ.**, *Օսմանյան արշավանքների արձագանքները Լեռնային Ղարաբաղի ավանդություններում*, «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1974-1975թթ. ազգագրական-բանահյուսական դաշտային աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ, դեկտեմբերի 23-24, 1976», Երևան, 1976, էջ 18-19, *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը*, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1987, 30 սեպտեմբերի, Հայտնաբերել և գրի առնել ժողովրդական ավանդությունները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 22 հունվարի,

Բաղդասարյան¹, Մ. Գրիգորյան-Սպանդարյան², Է. Խենյան³,
Ժ.Խուրշուդյան⁴, Ա. Կալաշն⁵, Թ. Հայրապետյան⁶, Ա. Ղազիյան⁷,

¹ **Բաղդասարյան Է.**, Արցախյան բանահյուսական արվեստի գնահատության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1993, N2, էջ 187-192, Էթնոմանկավարժության գաղափարները արցախահայ բանահյուսության մեջ, «Կանթեդ», Երևան, 2007, N2, էջ 227-233

² **Գրիգորյան-Սպանդարյան Մ.**, Ղարաբաղի հեքիաթները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 31 օգոստոսի, Ղարաբաղի ջանգյուլումները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 31 մայիսի

³ **Խենյան Է.**, Արմեն սարգսյան, Արցախի բանահյուսությունը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2016, օգոստոս, էջ 167-170, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները, «Շուշիի հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 335-351, Պատմական անձանց վիպական կերպավորումը Արցախի բանահյուսության մեջ, «Լ.Ղ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Ջեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 325-336

⁴ **Խուրշուդյան Ժ.**, Մարտակերտի շրջանի բանահյուսությունը (ըստ 1972-79թթ. գործուղման արդյունքների), «1978-1979թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների արդյունքները: Ջեկուցումների թեզիսներ, մայիսի 5-7, 1980», Երևան, 1980, էջ 41-43

⁵ **Калашев А.**, Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии, Шушинского уезда, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. восемнадцатый, Тифлис, 1894, отд. второй, с. 1-36

⁶ **Հայրապետյան Թ.**, Առասպելական տարրերը Բահայթյանների գրառած հրաշապատում հեքիաթներում (Շուշի, XIX դարի երկրորդ կես), «Շուշիի հայկական մշակույթի օջախ. Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ», Շուշի, 2014, էջ 107-116, Ծիսաառասպելական տարրերը Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում՝ ըստ 2006-2008թթ. գրառած նյութերի (համեմատական ուսումնասիրություն), «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2008, N3-4, էջ 31-39, **Կոնստանդին Մելիք-Շահնազարյան.** Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ. 24, էջ 7-119, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուդին (ըստ 1991-2015թթ. Արցախում գրառած նյութերի), «Ար.Պ. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ II, էջ 142-146,

⁷ **Ղազիյան Ա.**, Ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1996, N3, էջ 135-145, Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973թթ. գրառումների հիման վրա, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1974, N4, էջ 235-241, **Խաչիկ Օ. Վարդապետ Ղաղեանի** ժողովրդագիտական-բանահավաքական գործունեությունը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1999, N1-12, էջ 387-402, Ղարաբաղի բանահյուսության գրառման, հրատարակման պատմություն, «Լ.Ղ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Ջեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 378-387, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուդին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1978, N9, էջ 60-69, Устное народно-поэтическое творчество Арцаха (обзор), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, N7, էջ 27-36

Լ.Մարգարյանը¹, Ռ. Նահապետյանը², Ա. Մարգարյանը³, Վ. Սվազյանը⁴, Ս. Վարդանյանը⁵, Ա. Փաշայանը⁶ և ուրիշներ:

Հիշատակության արժանի է նաև Լուսինե Մարգարյանի ուսումնասիրությունը⁷, որտեղ հանգամանորեն ներկայացվում են Արցախի բանահյուսության հնչյունական համակարգը, բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հումանիշության, խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի դրսևորումները, շարահյուսական որոշ յուրահատկություններ, տարբեր ժանրերի ոճական առանձնահատկությունները, գրականացման երևույթը և խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները:

Սրանցով չեն սպառվում Արցախի բանահյուսությանը վերաբերող և առնչվող տպագիր և ձեռագիր ժողովածուները, ուսումնասիրություններն ու նյութերը, որոնց թիվն իրականում ավելի մեծ է⁸:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը:

¹ **Մարգարյան Լ.**, Ռուս-դարաբաղյան փոխհարաբերությունները Արցախի բանահյուսության մեջ, <<Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու>>, Ստեփանակերտ, 2011, էջ 130-136

² **Նահապետյան Ռ.**, Արմեն Մարգարյան. <<արցախի բանահյուսությունը>>, Երևան, 2015, 747 էջ (գրախոսություն), <<Կրթությունը և գիտությունը Արցախում>>, Երևան, 2017, N3-4, էջ 135-137

³ **Մարգարյան Ա.**, Առած-ասացուածքները, անէծք-օրհնանքները և հանելուկները Արցախի բանահյուսության մեջ, <<Հայկազեան հայագիտական հանդես>>, Պէրոլթ, 2014, էջ 389-402, Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը <<Ազգագրական հանդեսի>> էջերում, <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր>>, Ստեփանակերտ, 2017, էջ 59-66, Արցախյան ավանդությունների ժանրային և իմաստային առանձնահատկությունները, <<ԱրՊՀ. Հայագիտական հանդես>>, Ստեփանակերտ, 2010, էջ 156-173, Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արվեստը, <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր>>, Ստեփանակերտ, 2003, N1-2, էջ 152-158,

⁴ **Սվազյան Վ.**, Արցախյան բանահյուսությունն իմ ժողովրդագիտական գործունեության ոլորտում, <<ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Ձեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, Ստեփանակերտ>>, Երևան, 2007, էջ 474-487

⁵ **Վարդանյան Ս.**, Արմեն Մարգարյան. Արցախի բանահյուսությունը, Երևան, Էդիթ Պրինտ, 2015, 748 էջ, <<Պատմաբանասիրական հանդես>>, Երևան, 2017, N1, էջ 238-241, Բանահյուսական նյութերի կենցաղավարումը Շուշիի շրջանում (Ըստ 1970թ. Դաշտային նյութերի), <<Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր>>, Երևան, 2007, էջ էջ 351-359, Բանահյուսական նյութեր Լեռնային Դարաբաղից, <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, Երևան, 1971, , N8, էջ 88-93, Ժողովրդական բանահյուսության դրսևորումները Արցախյան ազատամարտում, <<ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Ձեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, Ստեփանակերտ>>, Երևան, 2007, էջ 151-152, Պաշտամունքային տարրերը <<Ալեյրոյայի>> արցախյան տարբերակներում, <<Պատմաբանասիրական հանդես>>, Երևան, 2002, N2, էջ 148-156

⁶ **Փաշայան Ա.**, Պըլը Պուղին հայ մշակույթի պատմության էջերում, Ստեփանակերտ, 2010

⁷ **Մարգարյան Լ.**, Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011

⁸ Ամբողջական ցանկը տես **Մարգարյան Ա.**, Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության, Երևան, 2019, էջ 51-118

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

E-mail: Shoger.minasjan@mail.ru

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

E-mail: ghazarian.hasmik@gmail.com

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)

Մույն հոդվածում բարդ ստորադասական նախադասության շրջանակներում քննվում են շարահյուսական մի շարք անկանոնություններ, որոնք հիմնականում վերաբերում են ստորադասի գերադաս նախադասության ոչ ենթադրելի բառին լրացնելու, գերադաս նախադասության մեջ պարտադիր հարաբերյալ ունենալու- չունենալու, երկրորդական նախադասությունների կայուն շարադասության, գոյականին լրացնող պարագա և բային լրացնող որոշիչ երկրորդական նախադասությունների գոյության և մի շարք այլ հանգամանքների հետ:

Բանալի բառեր՝ հարաբերյալ շարահյուսություն, շարադասություն, գերադաս ու ստորադաս նախադասություններ, անկանոնություն, փոխակերպում, դերբայական դարձված, ենթակա, ստորոգելի, որոշիչ, պարագա, խնդիր, շաղկապ, բառական միջոցներ, քերականություն:

Յ. Մինասյան, Ա. Գազարյան
НЕЗАКОНОМЕРНЫЕ СИНТАКСИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ В
СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ
(СЛОЖНОПОДЧИНЕННОЕ ПРЕДЛОЖЕНИЕ)

В статье рассматриваются неправильные предикативные конструкции в сложноподчиненном предложении. Предикат в

этом случае дополняет члены предложения, малопредполагаемые синтаксическими правилами или не состоит в обязательных отношениях с членами главного предложения. Анализируются также проблема прямого порядка слов, проблема придаточного предложения обстоятельства, дополняющие существительное, и дополнительные придаточное предложение, дополняющее глагол.

Ключевые слова: соотносительное слово, синтаксис, главное и придаточное предложение, незакономерность, трансформация, деепричастный оборот, подлежащее, предикат, определение, обстоятельство, дополнение, союз, лексические средства, грамматика

Sh. Minasjan, H. Ghazaryan

IRREGULAR SYNTACTIC PHENOMENA IN MODERN ARMENIAN (COMPOUND SENTENCE)

The article considers some syntactic irregularities of compound sentence. In particular, it deals with the predicate of the secondary clause relating to unexpected parts of sentence. It may or may not have relations with the main basic parts of the principal clause. The article further covers fixed syntax of the secondary clause, the adverbial modifier clause supplementing the argument and attribute clause supplementing the verb.

Key words: correlative word, syntax, main and principal clauses, irregularity, transformation, verbal, subject, predicate, attribute, adverbial modifier, conjunction, lexical means, grammar.

Լեզվական նորմը պատմական մի որոշակի ժամանակաշրջանի համար լեզվի ինքնազարգացմամբ պայմանավորված և հասարակության կողմից ընտրված և ընդունված, հասարակական հաղորդակցմամբ ամրապնդված և խոսքային գործընթացում հաստատված լեզվական ամենաօրինակելի միջոցների համակարգը կանոնավորող օրենքների, օրինաչափությունների ամբողջությունն է, որը պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար¹:

Լեզվական նորմը արտացոլում է օրինաչափ երևույթներն ու գործընթացները, որոնք տեղի են ունենում խոսքում և իրենց արտահայտությունն են գտնում խոսքային գործընթացում: Լեզվական նորմը մեկընդմիջտ տրված, քարացած երևույթ չէ, այլ ժամանակի ընթացքում փոփոխվող, ուստի անհրաժեշտ է ժամանակին արձանագրել այդ փոփոխությունները և ամրագրել կանոնական համակարգում:

Լեզվական նորմը նախևառաջ գրական լեզվի նորմն է: Գրական նորմը ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները, ըստ այդմ լինում է հնչյունական, հնչյունափոխական, ուղղախոսական, ուղղագրական, վանկային,

¹ Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, էջ 13:

բառագիտական, բառակազմական, քերականական, կետադրական, ոճական: Քերականական նորմը իր հերթին համապատասխանաբար դրսևորվում է ձևաբանական նորմ և շարահյուսական նորմ հասկացությունների մեջ: Եթե ձևաբանական նորմը վերաբերում է բառերի ձևաբանական կառուցվածքին, այդ կառուցվածքի կրած ձևական փոփոխություններին, ձևաբանական միավորների դասակարգմանը ըստ նրանց ընդհանուր իմաստի ու ձևաբանական հատկանիշների, ապա շարահյուսական նորմը վերաբերում է բառակապակցությունների ու նախադասությունների կազմության, նախադասության անդամների ու նախադասությունների կապակցման եղանակների ու միջոցների, շարադասության հարցերին:

Սույն ուսումնասիրության մեջ կանդրադառնանք ժամանակակից հայերենում գործող շարահյուսական նորմի շրջանակներից դուրս գտնվող իրողություններին, որոնք կարելի է համարել շարահյուսական անկանոնություններ: Դրանք ներկայացնելու ենք բարդ ստորադասական նախադասության շրջանակում:

Ինչպես հայտնի է, բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կապված են ստորադասական հարաբերությամբ: Գերադաս է կոչվում բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն գերադաս(լրացյալ) է և ունի ստորադաս նախադասություն¹: Ստորադաս է կոչվում բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն ստորադաս է և լրացնում է գերադաս նախադասության միտքը²:

Ս.Աբրահամյանի տված սահմանումից ենթադրելի է, որ գերադաս և ստորադաս նախադասությունների գոյությունը պայմանավորված է միմյանցով: Սակայն հանդիպում են բազմաբաղադրիչ նախադասություններ, որոնցում կա ստորադասական շաղկապ ունեցող և զիջման պարագայական հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասություն, որը այդ կառույցում չունի իր լրացյալ գլխավոր նախադասությունը: Բերենք օրինակ:

Ասում են՝ Լուսինեն քննություններին լավ չի պատրաստվում. թեև չարժե, որ ես նրա համար այդքան մտահոգվում եմ:

Ընդգծված ստորադաս նախադասությունը բերված կառույցում չունի իր գերադաս նախադասությունը, այն կարելի է միայն մտքով վերականգնել (**թեև չարժե, բայց մտահոգվում եմ**):

Ստորադաս նախադասությունները իրենց բնույթով բազմազան են: Նրանք հիմնականում համապատասխանում են պարզ նախադասության անդամներին, բայց տարբերվում են նրանցից որոշ հատկանիշով: Կառուցվածքային հատկանիշով պայմանավորված ստորադաս նախադասությունը պարզ

¹ **Աբրահամյան Ս.Ջ.**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Ե., 2004, էջ 143:

² *Տե՛ս նույնը, էջ 144:*

նախադասության համապատասխան անդամի համեմատությամբ ավելի հարուստ բովանդակություն է արտահայտում: Չկա ստորոգյալին համապատասխանող երկրորդական նախադասություն, ստորոգելի երկրորդական նախադասությունը համապատասխանում է ստորոգելիին: Կան նաև ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդական նախադասություններ:

Այսպիսով՝ այն ստորադաս նախադասությունները, որոնք համապատասխանում են գերադաս նախադասության որևէ անդամի, լինում են՝ ա) գլխավոր անդամներին համապատասխանող, բ) ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասություններ, որոնք բաժանվում են գոյականական անդամի լրացում և բայական անդամի լրացում ենթատեսակների:

Իրենց լրացյալի բնույթով պայմանավորված՝ անկանոն պետք է համարել այն ստորադաս նախադասությունները, որոնց լրացյալը **կոչական է, վերաբերական կամ ձայնարկություն:** Բերենք օրինակներ:

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի անունը քո:

Ա՛յ տղա, որ կանգնած ես վերջում, մոտեցի՛ր:

Ընդգծված բառերը կոչականներ են, որ ստացել են որոշիչ ստորադաս նախադասություն լրացում:

Ափսսո, որ քեզ ավելի շուտ չեմ հանդիպել:

Երանի նրան, ով իր հայրենիքում է ապրում:

Երկու գերադաս նախադասություններում դիմավոր բայը գեղջված է, բայց ենթադրելի է (առաջինում՝ է, երկրորդում՝ տանք), այդ դեպքում համապատասխանաբար կունենանք ենթակա և հանգման ինդիք ստորադաս նախադասություններ:

Կան հարաբերական դերանունով կապակցված բարդ ստորադասական նախադասություններ, որոնց գերադաս նախադասությունը միակազմ է, իսկ ստորադասը փոխարինում է գերադասի գլխավոր անդամին և ստորադաս նախադասությունների որևէ տեսակի մեջ չի մտնում: Օրինակ՝ **Ահա նա, ում ես փնտրում էի: Ամառ էր, երբ նրան հանդիպեցի:**

Ինչպես հայտնի է, ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է բառական և քերականական եղանակներով: Որպես բառական միջոցներ հանդես են գալիս շաղկապներ, շաղկապական բառեր և հարաբերյալներ:

Որպես հարաբերյալներ հանդես են գալիս հիմնականում ցուցական դերանունները, ընդ որում միայն **և** արմատական հնչյուն ունեցողները: Ս.Աբրահամյանի կարծիքով՝ հարաբերյալի դերում կարող են հանդես գալ նաև որոշյալ դերանուններ և համապատասխան իմաստ արտահայտող բառակապակցություններ, ինչպես՝ **ամենը, այն ամենը, ամեն բան, ամեն մեկը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), յուրաքանչյուր ոք՝**: Օրինակ՝ **Հայտնի չէ այն ամենը,**

¹ Տե՛ս նույնը, էջ 141:

ինչ կատարվել է: Ստուգիր ամենք, ինչ գրված է: Ընդգծվածները պետք է համարել հարաբերյալներ, քանի որ հակառակ դեպքում պետք է ստանանք որոշիչ երկրորդական նախադասություններ, մինչդեռ որոշյալ դերանունը որոշիչ չի ընդունում:

Ինչ վերաբերում է **բոլոր** և **ամեն բան** լեզվական միավորներին, ապա Ս.Աբրահամյանը դրանք համարում է տարածք՝ հարաբերյալ կամ գերադաս նախադասության լիարժեք անդամ. « Այսպես՝ **Մենք տեսանք բոլորին, ովքեր եկել էին** նախադասության ստորադաս բաղադրիչը ուղիղ խնդիր է, եթե մենք այն ընկալում ենք որպես **բոլորը** հարաբերյալին փոխարինող լրացում(համտ.**Մենք տեսանք եկածներին**): Բայց այդ ստորադաս նախադասությունը կարող է նաև ըմբռնվել որպես **բոլորը** բառի լրացում(համտ. **Մենք տեսանք եկած բոլորին**), և այդ դեպքում այն կլինի որոշիչ ստորադաս նախադասություն»¹: Կարծում ենք՝ այստեղ կարող ենք ունենալ նաև երրորդ տարբերակը՝ բացահայտիչ երկրորդական նախադասություն: Այսպես՝ **Մենք տեսանք բոլորին՝ եկածներին**:

Քննվող երևույթի շրջանակներում անկանոնություն պետք է համարել հարաբերյալի դերում որոշ գոյականների հանդես գալը, ինչպես՝ **բան, տեղ, ժամանակ, ձև**: Բերենք օրինակներ:

Մենք հասանք այն բանին, որ մեզ ընդունեցին: Մենք հասանք այն տեղը, որտեղ մեզ սպասում էին: Մենք հասանք այն ժամանակ, երբ արդեն ուշ էր: Մենք կվարվենք այն ձևով, ինչպես մեզ հարմար է:

Առաջին նախադասության մեջ ունենք հանգման անուղղակի խնդիր ստորադաս, երկրորդում՝ տեղի պարագա, երրորդում՝ ժամանակի պարագա, չորրորդում՝ ձևի պարագա:

Ակնհայտ է, որ այս գոյականների հարաբերյալ ընկալվելուն նպաստել է այն ցուցական դերանունը, որը տրամաբանական շեշտի կրողն է, **բան** բառի ընդհանրական իմաստ ունենալը, իսկ **տեղ, ժամանակ** և **ձև** բառերը հանդես են գալիս այն գլխավոր նախադասություններում, որոնք ունեն համապատասխանաբար համանուն երկրորդականներ:

Օրինաչափորեն շաղկապները և շաղկապական բառերը հանդես են գալիս ստորադաս նախադասության մեջ, իսկ հարաբերյալները գերադաս: Ըստ Հ. Զաքարյանի և Յու. Ավետիսյանի՝ հետևանքի շաղկապները, ի տարբերություն մյուս բոլոր ստորադասական շաղկապների, լինում են գլխավոր նախադասության կազմում²: Ըստ նրանց՝ «Ուրիշ հյուրանոց չճարեցինք, ուրեմն բավարարվենք այս մեկով» նախադասության երկրորդ բաղադրիչն է գլխավոր, որովհետև առաջին բաղադրիչ նախադասության մեջ կարելի է ավելացնել

¹ Տե՛ս նույնը, էջ 163:

² **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե.2009, էջ 133:

պատճառի ու հիմունքի շաղկապներ: Օրինակ՝ **Քանի որ ուրիշ հյուրանոց չճարեցինք, ուրեմն բավարարվենք այս մեկով**¹:

Սակայն այս տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում «Զանգեցի, Բայց նա չպատասխանեց» նախադասությունը պետք է համարել բարդ ստորադասական, քանի որ առաջին բաղադրիչ նախադասության սկզբում կարելի ավելացնել զիջական որևէ շաղկապ (**թեև, թեկուզ, չնայած** և այլն), ինչպես՝ **Թեև զանգեցի, բայց նա չպատասխանեց**:

Մեր կարծիքով՝ հետևանքի շաղկապները (ուստի, ուրեմն, հետևապես, հետևաբար, այնպես որ) գտնվում են ստորադաս նախադասության մեջ, եթե ունենք հետևանքի ստորադաս նախադասություն (**Անձրևում է, ուստի պետք վերադառնանք**), և այս իրողությունը կանոնական է, և գտնվում են գլխավոր նախադասության մեջ որպես զուգադրական շաղկապի բաղադրիչ, եթե ունենք պատճառի կամ հիմունքի պարագա երկրորդական նախադասություն (**Քանի որ անձրևում է, ուստի պետք է վերադառնանք**):

Ստորադաս և գերադաս նախադասությունների կապակցման հարցում հարաբերյալների դերն այն է, որ ակնարկում են երկրորդական նախադասության իմաստը, կատարում են շարահյուսական այն դերը, ինչ որ ստորադաս նախադասությունը: Ինչպես նշվեց, որպես հարաբերյալ հանդես են գալիս հիմնականում ցուցական դերանունները, երբեմն՝ որոշյալ դերանուններ ու համապատասխան իմաստ արտահայտող բառակապակցություններ²:

Սակայն կան ստորոգելի ստորադաս նախադասությամբ կառույցներ, որոնցում որպես հարաբերյալ հանդես են գալիս **ոչ այլ ինչ, ոչ այլ որ** արտահայտությունները, իսկ կապակցող շաղկապն է՝ **եթե ոչ**-ը³: Օրինակ՝ **Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ աչքակապություն: Սա ոչ այլ որ է, եթե ոչ մեր հակառակորդը**:

Ինչպես գիտենք, գերադաս նախադասության մեջ որպես կանոն հարաբերյալը կարող է լինել կամ չլինել:

Հարաբերյալը պարտադիր է, երբ՝

1. հոլովով չի համաձայնում հարաբերականի հետ, և ինքն է հուշում ստորադաս նախադասության բնույթը, օրինակ՝ **Նեղացել էի նրանցից, ովքեր իրենց խոսքի տերը չեղան**:

2. ստորադաս նախադասության և դրա անմիջական լրացյալի միջև կան այնպիսի բառեր, որոնք կարող են լրացյալ կարծվել, օրինակ՝ **Սա այն տղայի գիրքն է, որ երեկ կորել էր**:

3. եթե ունենք ստորոգելի ստորադաս նախադասություն⁴:

¹ Տե՛ս նույն տեղում:

² **Աբրահամյան Ս.Գ.**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Ե., 2004, էջ 141:

³ **Տե՛ս Պատնասյան Ն.Ա.**, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Ե., 1961, էջ 72:

⁴ Տե՛ս **Աբրահամյան Ս.Գ.**, նույնը, էջ 150:

Անկանոնությունն պետք է համարել առանց հարաբերյալի ստորոգելի ստորադաս նախադասությունը, ինչպես՝ **Մա չէ, որ երեկ հայրենասիրությունից է խոսում: Դու չես, որ մտորեցնում էիր մեր հայրենակիցներին:** Հարաբերյալը կարող է չարտահայտվել նաև ստորոգելի ստորադասական ունեցող այնպիսի գլխավոր նախադասություններում, որոնց հանգույցը **համարել** վերացական բայն է: Օրինակ՝ **Ես կհամարեմ, որ գրպանիցս փող եմ կորցրել**¹:

Քննվող երևույթին հակառակ՝ կան դեպքեր, երբ հարաբերյալը բացառվում է:

Հարաբերյալը բացառվում է, եթե որոշիչ երկրորդական նախադասության որոշյալը անորոշ առումով է(**Ահա քեզ նորություն, որ կհետաքրքրի միայն քեզ**), կամ միակ հնարավորն է և երկրորդական նախադասությունից հեռացած չէ (**Նայիր, ահա մոտենում է հայրս, որ հենց նոր ժամանեց Մոսկվայից**)²:

Հետաքրքիր և անկանոն պետք է համարել այն երևույթը, որ հարաբերյալի առկայություն-բացակայությունը որոշիչ դեր է կատարում չափի և հիմունքի ստորադաս նախադասությունների բնույթի տարբերակման հարցում: Այսպես՝ «Նա **այնքան** խելոք չէ, ինչքան կարծում էինք» նախադասության մեջ հարաբերյալի առկայության դեպքում ունենք չափի պարագա ստորադաս նախադասություն, բացակայության դեպքում՝ հիմունքի պարագա³:

Ստորադաս նախադասությունների գերակշիռ մասը փոխարինում է գերադաս նախադասության բացակա կամ ձևականորեն առկա (հարաբերյալի դեպքում) որևէ անդամի, որով պայմանավորված՝ ստանում է համապատասխան անվանումը՝ որոշիչ ստորադաս, ուղիղ խնդիր ստորադաս, չափի պարագա ստորադաս նախադասություն:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ միայն ստորոգելի ստորադաս նախադասությունը փոխարինում է ոչ թե գերադաս նախադասության ստորոգյալին, այլ նրա մի մասին՝ ստորոգելիին, ուստի և կոչվում է **ստորոգելի ստորադաս նախադասություն**: Մակայն հանդիպում են նաև այնպիսի ստորադաս նախադասություններ, որոնք փոխարինում են գերադաս նախադասության բաղադրյալ ենթակայի մի մասին: Դա լինում է այն դեպքում, երբ գերադաս նախադասության ենթական բացառական հոլովով ստորադաս անդամ ունեցող բառակապակցություն է:

Բերենք օրինակներ:

Ուսանողներից նրանք, ովքեր մասնակցել էին ճամբարին, զոհ էին:

Պատգամավորներից նրանք, ովքեր չէին քվեարկել, ունեին իրենց պատճառները:

Շարադասությունը բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցության միջոցներից է. այն ընդգրկում է ոչ միայն

¹ Տե՛ս *Ջաքարյան Հ., Ավետիսյան Յու.*, նույնը, էջ 146:

² Տե՛ս *Ջաքարյան Հ., Ավետիսյան Յու.*, նույնը, էջ 141-142:

³ Տե՛ս *Աբրահամյան Մ., Գ.*, նույնը, էջ 190

գերադաս ու ստորադաս բաղադրիչների շարահասությունը, այլև այդ բաղադրիչների համապատասխան անդամների դիրքն ու դասավորության հաջորդականությունը: Նախ անդրադառնանք առաջինին:

Բարդ ստորադաս նախադասության շարահասությունը քննելիս ելակետ է ծառայում գերադաս բաղադրիչը, որի հանդեպ ստորադաս բաղադրիչը կարող է ունենալ երեք դիրք. այն կարող է նախորդել, հաջորդել գերադաս նախադասությանը կամ ընդմիջել այն: Լեզվական այս իրողությունը վերաբերում է բարդ ստորադասական նախադասությունների մեծագույն մասին: Սակայն սրանց կողքին կան պարտադիր շարահասություն ունեցող ստորադաս նախադասություններ, որոնք կա՛մ միայն նախորդում, կա՛մ միայն հաջորդում են գերադաս նախադասությանը:

Պարտադիր նախադաս են այն ստորադաս նախադասությունները, որոնք՝

1. կապակցվում են զուգադիր շաղկապներով, ինչպես՝ **Թեև ցուրտ էր, բայց շարունակում էին աշխատել: Ինչպես դեղնած տերևներն են փարվում ոտքերիս և խշխշում, այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում:**

2. կապակցվում են **թե չէ** շաղկապով, ընդ որում նշենք, որ այս շաղկապը նախադասության վերջում դրվող միակ ստորադասական շաղկապն է, օրինակ՝ **Մտավ թե չէ, սկսեց մեղադրել!**:

3. ունեն **եթե-ի** և **երբ-ի** գեղչում, ինչպես՝ **(Եթե) Աստված եք՝ փշրե՛ք նրանց բոլոր մոմերը: (Երբ)Լույսը բացվի՝ կգնանք:**

Ստորադաս նախադասությունները կարող են լինել նաև պարտադիր վերջադաս: Այդպիսիք են՝

1. **որ-** ի գեղչումով ստորադաս նախադասությունները, ինչպես՝ **Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես²:**

2. այն ենթակա ստորադաս նախադասությունները, որոնց գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտված է **թվալ, երևալ, մնալ, պատահել** և նման մի քանի բայերով կամ անվանական բաղադրյալ է (**անհայտ է, հայտնի է, հասկանալի է, զարմանալի է, լավ է, հաճելի է, հնարավոր է, ցավալի է, հնարավոր է, անսպասելի է** և այլն):

Օրինակ՝ **Թվում է, թե ամեն բան արդեն ասվել է: Զարմանալի է, որ այդ ճիվաղը դեռ կենդանի է:**

3. որոշիչ և բացահայտիչ ստորադաս նախադասությունները, որոնք նախադաս չեն կարող լինել, որովհետև պարտադիր հաջորդում են լրացյալին, ինչպես՝ **Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում է ձիու ողորկ մարմնին: Հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հագրոյի քոչը ելավ այս բարձր սարը³:**

¹ Տե՛ս **Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 283:**

² Տե՛ս **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., նույնը, էջ 141:**

³ Տե՛ս նույն տեղում:

Սովորաբար վերջադաս են լինում նաև ստորոգելի և ներգործող խնդիր երկրորդական նախադասությունները¹: Օրինակ՝ **Մեր ցանկությունն այն է, որ աշխարհում լինի կայուն խաղաղություն:**

Ինչ վերաբերում է բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների համապատասխան անդամների դիրքի ու դասավորության հաջորդականությանը, ապա պետք է նշել, որ որպես կանոն ստորադասական շաղկապները հանդես են գալիս ստորադաս նախադասության սկզբում (**Թե չէն բացառություն է**): Սակայն երբեմն, հատկապես ժողովրդախոսակցական ոճի ազդեցությամբ շաղկապից կամ հարաբերական բառից առաջ կարող են դրվել այլ անդամներ: Օրինակ՝ **Շոգը որ սկսվում է, աշխատել չի լինում: Արամին եթե բան պատահած չլինի, եկած կլինի**²:

Մասնագիտական գրականության մեջ ուղիղ և ներգործող խնդիրները կոչվում են **սեռի խնդիրներ**, քանի որ այդ խնդիրները ենթադրում են համապատասխանաբար ներգործական և կրավորական սեռերի առկայություն: Նույնը վերաբերում է նաև ուղիղ և ներգործող խնդիր ստորադաս նախադասություններին, որոնք պետք է լրացնեն գերադաս նախադասության մեջ առկա համապատասխանաբար ներգործական և կրավորական սեռերի բայերին:

Ս.Աբրահամյանը նշում է, որ ներգործող անուղակի խնդիր կարող են ունենալ նաև մի շարք չեզոք սեռի բայեր, ինչպես՝ **ամաչել, գոհանալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն: Օրինակ՝ **Արամը սարսափում է նրանից, որին առաջ իր բարեկամն էր կարծում: Մարդն ավելի նեղանում է նրանից, ումից ավելի շատ սպասելիքներ ունի**³:

Կարծում ենք՝ այս երկրորդական նախադասությունները ավելի մոտ են պատճառի պարագա երկրորդականներին: Սակայն Ս. Աբրահամյանը իրավացիորեն առանձնացնում է մի շարք չեզոք սեռի բայեր, որոնք կարող են ունենալ ներգործող խնդիր. դրանք համարժեք են կրավորական սեռի բայերին, ինչպես՝ **ընդունելություն գտնել- ընդունվել, վիրավորանք ստանալ- վիրավորվել, հավանության արժանանալ-հավանվել** (գործածական չէ) և այլն⁴: Բերենք օրինակներ: **Այդ առաջարկությունը ջերմ ընդունելություն գտավ (ջերմորեն ընդունվեց) նրանց կողմից, որոնց համար թանկ է խաղաղությունը: Նախագիծը հավանության արժանացավ (հավանվեց) նրանց կողմից, ովքեր մրցույթ էին հայտարարել:** Ակնհայտ է, որ այս դեպքում ևս ունենք անկանոնություն:

Ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասությունները ունեն երկու տեսակ՝ գոյականական անդամի լրացում և

¹ Տե՛ս **Աբրահամյան Ս., Գ.**, նույնը, էջ 150:

² Տե՛ս **Աբրահամյան Ս., Գ.**, նույնը, էջ 141:

³ Տե՛ս **Աբրահամյան Ս., Գ.**, նույնը, էջ 168:

⁴ Տե՛ս նույն տեղում:

բայական անդամի լրացում: Միանշանակ է, որ բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունները լրացնում են միայն բայով կամ իր կազմի մեջ բայական բաղադրիչ ունեցող անդամի¹:

Գերադաս նախադասության անվանական բաղադրյալ ստորոգյալը նույնպես կարող է ունենալ բայական անդամի լրացումներ: Այսպես, չափի պարագա ստորադաս նախադասությունները կարող են լրացնել ածական ստորոգելիի: Օրինակ՝ **Նա այնքան գեղեցիկ էր, որ անհնար էր չնայել:**

Հետաքրքիր է այն երևույթը, որ պարագա ստորադաս նախադասությունները կարող են լրացնել բայական անդամի լրացմանը դառնալով լրացման լրացում ստորադաս նախադասություններ: Այսպես, կան ձևի պարագային լրացնող նպատակի, չափի, պատճառի պարագա երկրորդական նախադասություններ: Բերենք օրինակներ: **Նա այդ ասաց հայերեն, որ իրեն չհասկանան: Աղջիկը այնքան գեղեցիկ երգեց, որ գրավեց բոլորի ուշադրությունը: Կինը շշուկով է խոսում, որովհետև բոլորը քնել էին:**

Այն, որ պարագա երկրորդական նախադասությունները կարող են լրացնել գոյականական անդամին՝ արտահայտված ոչ միայն բայով, այլև ածականով, նաև անվանական բաղադրյալ ստորոգյալի գոյականով արտահայտված ստորոգելիին, կարծում ենք, պետք է համարել անկանոնություն: Օրինակ՝

1. **Մա պատառտոված գիրք է, որովհետև անխնամ են վարվել հետը**(պատճառի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է բայով արտահայտված որոշյին):

2. **Մա հետաքրքրական գիրք է, որովհետև շատերն են կարդում**(հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է ածականով արտահայտված որոշյին):

3. **Մա տուն է, որովհետև այստեղ ապրողներ կան** (պատճառի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է գոյականով արտահայտված ստորոգելիի):

4. **Մա շինանյութ է, քանի որ այն օգտագործվում է շինարարության մեջ** (հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է գոյականով արտահայտված ստորոգելիին)²:

Երկրորդական նախադասությունները հաճախ ունենում են իրենց հոմանիշ դերբայական դարձվածները: Որոշակի կանոններով մեծ մասամբ հնարավոր է (կան չփոխակերպվող կառույցներ) դերբայական դարձվածով պարզ նախադասությունը վերածել բարդ ստորադասական նախադասության և հակառակը: Գործող այս ընդհանուր օրինաչափությանը հակասում են էական բայով կազմված բաղադրյալ անվանական ստորոգյալով բացահայտիչ, որոշիչ,

¹ Տե՛ս նույնը, էջ 160 և Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 312:

² Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., նույնը, էջ 161:

երբեմն էլ ենթակա, ստորոգելի երկրորդական նախադասությունները, որոնք փոխակերպվում են առանց դերբայական դարձվածի, որպես անվանական բառակապակցություն: Օրինակ՝

Ինքը, որ երդվյալ ուխտավոր է, պիտի դառնա մենակյացի կյանքով ապրող մի նահատակ: Ինքը՝ երդվյալ ուխտավորը, պիտի դառնա մենակյացի կյանքով ապրող մի նահատակ:

Վերջին պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի արձանիկ, որ անչափ հին է: Վերջին պեղումների ժամանակ հայտնաբերվել է անչափ հին մի արձանիկ:

Այս գիրքը կլինի նրա նվերը, ով ամենից ընթերցասեր է: Այս գիրքը կլինի ամենից ընթերցասերի նվերը:

Ինձ կփոխարինի նա, ով այս գործի ճշմարիտ նվիրյալն է: Ինձ կփոխարինի այս գործի ճշմարիտ նվիրյալը:

Մեր պատվիրակը նա է, ով այդ գործի մանրամասներին ամենից տեղյակն է: Մեր պատվիրակը այդ գործի մանրամասներին ամենից տեղյակն է¹:

Բարդ ստորադասական նախադասությունը և նրա փոխակերպված տարբերակ պարզ նախադասությունը իմաստով նույնական և հայերենի լեզվամտածողության դրսևորման երկու տարբեր ձևեր են. նրանք իրարից անկախ և իրար կողքի հավասարապես գոյակցում են լեզվում և չեն բացառում մեկը մյուսին: Փոխակերպման արդյունքում առաջացած դերբայական դարձվածը կատարում է նույն պաշտոնը, ինչ բնույթի որ եղել է երկրորդական նախադասությունը:

Անվիճելի է, որ դերբայական դարձվածի գերադաս անդամին լրացնող անդամները պետք լինեն բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ: Սակայն հանդիպել ենք մի հետաքրքիր իրողության, որը անկասկած անկանոն պետք է համարել: Եթե որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության գոյականաբար գործածված բայի, ունենում ենք որոշիչ պաշտոն կատարող դերբայական դարձված, որը լրացնում է բայի: Օրինակ՝ **Այդպես դատում են այն խաղացողները, որոնք ակտիվ մասնակցել են:** **Այդպես դատում են ակտիվ մասնակցած խաղացողները:** **Պարզևներից հրաժարվեցին այն նստածները,** **որոնք արդեն մեկ անգամ պարզև են ստացել:** **Պարզևներից հրաժարվեցին արդեն մեկ անգամ պարզև ստացած նստածները:**

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ յուրահատուկ կապակցություն պետք է համարել նաև ուրիշի ուղղակի խոսքի կապակցությունը հեղինակի խոսքի հետ: Հասկանալի է, որ այսպիսի կապակցության մեջ չեն գործածվում

¹ Տե՛ս *Ջաքարյան Հ., Ավետիսյան Յու.*, նույնը, էջ 185:

շաղկապներ, հարաբերական բառեր. կապակցությունը կատարվում է շարահարությամբ¹: Օրինակ՝

Կաթողիկոսը մոլեզունց, այլայլվեց մոռյլ լռության մեջ և գոչեց.

- **Պատրաստվեցե՛ք սխրագործության(Դ.Դ.):**

Այսպիսով՝ շարահյուսական անկանոնությունը հիմնականում արտահայտվում է բարդ ստորադասական նախադասություններում՝ կապված գերադաս նախադասության բացակայության դեպքում ստորադասի առկայության, ստորադասի՝ գերադաս նախադասության ոչ ենթադրելի բառին լրացնելու, գերադաս նախադասության մեջ պարտադիր հարաբերյալ ունենալու- չունենալու, ստորադաս նախադասության՝ գլխավորի բառակապակցությամբ արտահայտված ենթակայի մի մասին փոխարինելու, որոշ կառույցներում երկրորդական նախադասությունների կայուն շարադասության, գոյականին լրացնող պարագա և բային լրացնող որոշիչ երկրորդական նախադասությունների գոյության, երկրորդական նախադասության փոխակերպման արդյունքում դերբայական դարձվածի փոխարեն անվանական բառակապակցության առաջացման, գլխավոր նախադասության մեջ պարագա ստորադաս նախադասություն ունեցող պարագաների առկայության և մի շարք այլ հանգամանքների հետ:

Գրականություն

1. Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1974:
3. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, շարահյուսություն, երկրորդ մաս, Ե., 1975:
4. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975:
5. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
6. Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007:
7. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր ք, Ե., 1964:
8. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
9. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2009:

¹ Տե՛ս **Աբրահամյան Ս.Գ.**, նույնը, էջ 164:

10. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003:

11. Պառնասյան Ն.Ա., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Ե., 1961:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը:

ՀՏԴ 81.37

Հայոց լեզու

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱրՊՀ ակ. Ս. Արրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ,
Բ.Գ.Թ.

E-mail: margaryanlusine06@asu.am, margaryan.lusine@yandex.ru

**ԱՐՑԱԽԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՆՈՒՆ
ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Ակնաղբյուր բնականվան համանունությունը լեզվական փոխադրության բառապատճենման հետևանք է. Ասկերանի շրջանի **Ակնաղբյուրը**, Ղարաբուլաղ-ի, իսկ Հաղբյուրի շրջանի **Ակնաղբյուրը**, Աղբուլաղ-ի փոխադրություն վերանվանումներն են:

Ասկերանի շրջանի **Ակնաղբյուր** անունը գյուղի մեծ ու հիմնական, ընդերքից բխող **Ակն** աղբյուրանունից է առաջացել. իմաստային թարգմանությամբ ամրագրվել է օտարալեզու **Ղարաբուլաղ** անվամբ, ապա և անկախության շրջանում վերանվանվել **Ակնաղբյուր**:

Հաղբյուրի շրջանի **Ակնաղբյուր** բնակավայրի անվանումը մասնակի բառապատճենում է **Աղբուլաղ** անվան: Ենթադրելի է, որ ջրանունից չի առաջացել բնականունը. այն առավելաբար եկամուտ անվան ամրագրում է, ապա և անկախության շրջանում՝ թարգմանության հետևանք:

Բանալի բառեր՝ **Ակնաղբյուր**, **համանուն բնականուն**, **ստուգաբանություն**, **Ղարաբուլաղ**, **Աղբուլաղ**, **Հաղբյուրի շրջան**, **Ասկերանի շրջան**, **բառապատճենում**:

Լ. Մարգարյան

**ПО ВОПРОСУ ЭТИМОЛОГИИ ОМОНИМИЧНЫХ
ОЙКОНИМОВ АКНАХБЮР В АРЦАХЕ**

Омонимия ойконима Акнахбюр возникла вследствие лингвистического переноса – калькирования: Акнахбюр Аскеранского района является переименованием Карабулаха, Акнахбюр Гадрутского района – Агбулага. Название Акнахбюр

Аскеранского района произошло от Аkn - большого и основного водного источника, берущего свое начало в недрах земли. Смысловой перевод был закреплен за иноязычным названием Карабулах, который в период независимости был переименован в Акнахбюр. Название ойконима Акнахбюр Гадрутского района является частичным калькированием Агбулага. Предполагается, что он не произошел от названия гидронима, а является пришлым названием и в период независимости Арцаха был переименован в Акнахбюр.

Ключевые слова: Акнахбюр, омонимичный ойконим, **этимология,** Карабулах, Агбулаг, Гадрутский район, Аскеранский район, калька:

L.Margaryan

**ON THE ETYMOLOGY OF HOMONYMOUS OIKONYMS
AKNAKHBYUR IN ARTSAKH**

The homonymy of the oikonym Aknakhbyur is a result of linguistic transfer - calquing: Aknakhbyur of the Askeran region is the renaming of Karabulakh, Aknaghbyur of the Hadrut region - Agbulag. The name Aknakhbyur of the Askeran region comes from Akn - a large and main water source, originating in the bowels of the earth. The semantic translation was expressed in the foreign name Karabulakh, which was renamed Aknakhbyur during the period of independence. The name of the oikonym Aknakhbyur of the Hadrut region is a partial calquing of Agbulag. It is assumed that it did not come from the name of the hydronym, but was an alien name renamed Aknakhbyur during the period of independence of Artsakh.

Key words: Aknakhbyur, the homonymy of the oikonym, **etymology,** Karabulakh, Agbulag, Hadrut region, Askeran region, calquing.

Տեղանվանական համակարգում համանունությունը խրախուսելի չէ. այն հասցեն վերաճզորտելու պահանջ է առաջադրում, բայց և իբրև երևույթ անխուսափելի է, եթե համանունության առաջացման պատճառը պատմական պայմանների նույնականությունն է կամ բնաշխարհի նկարագրի ընդհանրությունը:

Ակնաղբյուր¹ բնականվան համանունությունը ծնունդ է լեզվական փոխադրության. Ասկերանի շրջանի **Ակնաղբյուրը**, **Ղարաբուլաղ-ի**, իսկ Հաղբյուրի շրջանի **Ակնաղբյուրը**, **Աղբուլաղ-ի** փոխադրություն վերանվանումներն են:

¹ ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին, ԼՂՀ 1998թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենքի /1998թ.դեկտեմբերի 12-ի ՀՕ-34, 2000թ. մարտի 10-ի ՀՕ-98, 2001թ. հունիսի 13-ի ՀՕ-150, 2003թ. մայիսի 15-ի ՀՕ-43, 2004թ. մայիսի 10-ի ՀՕ-106, 2005թ. մարտի 9-ի ՀՕ-174, 2006թ. հուլիսի 3-ի ՀՕ-296, 23.05.2007թ. ՀՕ-28, 2007թ. հունիսի 30-ի ՀՕ-41, 2008թ. ապրիլի 4-ի ՀՕ-7 օրենքների լրացումներով և փոփոխություններով/ Հավելված 2

Դառնանք առաջինին: **Ղարաբուլաղ-ը Գարաբուլաք, Կարաբուլակ** հնչատարբերակներով է վկայված: Ղ. Ալիշանի մոտ **Ղարապուլագ** է անվանված¹: Բ. Ուլուբաբյանն էլ նշում է, որ 1920թ. ապրիլին Դրոն, գալով Արցախ, իր նստավայրն էր դարձրել Վարանդայի **Ղարաբուլաղ** գյուղը²: Տեղանվանական բառարանում՝ բնականվան տեղեկանքում, տրվում է, որ նախկինում այն Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում էր, Քեռնդական գետով բաժանված էր երկու մասի, ու նաև նշվում է, որ այն համանուն հորդառատ աղբյուրի մոտ է գտնվում³: Համանուն աղբյուր ասելով՝ նկատի է առնվում գյուղի նշանավոր **Ակն** աղբյուրը: Հատկանշելի է, որ երբևէ այդ աղբյուրը **Ղարա** անվամբ չի կոչվել: Այն իր ծննդյան օրից ցայսօր **Ակն** էր կոչվում: **Ակնը** ընդերքից բխող, հորդառատ մեծ աղբյուր էր, ամռանը՝ սառը ջրով, ձմռանը՝ տաք: Գյուղի Ակն աղբյուրը բնակավայրի ջրային հիմնական պաշարն էր ապահովում, իսկ ձմեռային շրջանում նաև անասուններին ջրելու հիմնական վայրն էր: Ակը գտնելու և հունը փոխելու նպատակով աղբյուրը փորվել է⁴, ինչի հետևանքով ժամանակի ընթացքում ջուրը պակասել է, նաև տեսքով անշքացել, բայց շարունակում էր մնալ որպես գյուղի հիմնաղբյուր:

Բարբառում **ակն** անվանում են ընդերքից բխող աղբյուրները: Տեղանվանական հայտնի իրողություններից է, երբ ջրանունից բնականունն է ծնվում: Բնականաբար, ջրանունն ավելի հին է, քան բնականունը: Իսկ ջրանունը **Ակն** էր և է⁵: **Ակնաղբյուրի Ղարաբուլաղ** վերանվանումն էլ իրականում հայկական **ակն**-ի՝ անվան իմաստային թարգմանությունն է՝ **ստորգետնյա, ընդերքից բխող** նշանակությամբ:

Հայտնի է, որ **կարա** եզրույթը բազմանշանակ է: Այն ունի ինչպես **սև**, այնպես էլ **մեծ** նշանակությունները, նաև **ստորգետնյա** իմաստն ունի⁶ հատկապես աղբյուրների վերաբերմամբ գործածվելիս՝ ցույց տալով նրանց առաջացման պայմանները⁶:

Ղարաբուլաղ-ի դեպքում **սև աղբյուր** վերլուծությունն անիմաստ է: Մինչդեռ հաճախ է տեղանվան բաղադրիչների պարզագույն վերլուծությամբ մեկնաբանվում անվանումը: **Ղարաբուլաղի** ստուգաբանությունը

¹ Ալիշան Ղ., Արցախ, էջ 117:

² Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 229:

³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 3, Ե., 1986, էջ 524:

⁴ Համագյուղացիների վկայությամբ՝ կոլտնտեսության նախագահ Բաղդասար Ղարամյանի հանձնարարությամբ աղբյուրը փորվել է՝ ակը գտնելու նպատակով (Բ. Ղարամյանը ղեկավարել է համայնքը 1961-1971թթ.):

⁵ Ակնաղբյուրը մեր հայրենի գյուղն է:

⁶ Никонов В. А., Введение в топонимику, Изд. "Наука", Москва, 1965, стр.57.

փաստաթղթային աղբյուրներում տրված է օտարահունչ այդ բարդության բաղադրիչների բառական իմաստների վերլուծությամբ: Մերգեյ Մելքումյանը նշում է, որ գյուղանունն առաջացել է գյուղի մոտ գտնվող մեծ աղբյուրի անունից ու անորոշ հայտնում, թե, չգիտես ինչու, այն կոչվել է **Սև աղբյուր**¹: **Սև աղբյուր** մեկնությամբ է բնականունը նշում նաև Մակար Բարխուդարյանը²: Իսկ Թեմուր Ամիրջանյանի կարծիքով՝ բնակավայրի նախանվանումը եղել է **Վարարակն**³: Իբրև ճիշտ անվանաձև՝ Սլավա Սարգսյանը նշում է **Քարաղբյուր**⁴: Մինչդեռ փաստն այն է, որ այդ աղբյուրը երբևէ **Ղարա** կամ **Սև** անունով չի կոչվել: Այն միշտ **Ակն** է կոչվել ու եթե օտար **ղարա**-ով է թարգմանվել, ապա իր **առաջացման պայմանների**՝ ընդերքից բխելու և իր **մեծության** պատճառով: Առավել հավանական է, որ այս դեպքում տեղանիշ **կարա** համանուն միավորի մեկ այլ եզրն է անվանակոչման հիմք դարձել. **կարա**-ն ունի *նեղուց, անցք, ջրային տարածքի խորք* նշանակությունները: Ջրանուն հիմքով մի շարք այլ օտարանուն տեղանունների և մանրատեղանունների հիմք է դարձել հենց այս եզրը⁵: Եվ քննվող բնականվան դեպքում, որի ծագումն, անշուշտ, աղբյուրանունից էր, **ղարա**-ով փոխադրությունը պիտի ընկալել իր բազմանշանակությամբ ու ամենից առաջ *ստորգետնյա անցք, խորք* և *մեծ* իմաստներով:

Փաստորեն, գյուղի անվան մասին արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ գյուղանունը ջրանունից է առաջացել՝ թարգմանաբար և օտարալեզու՝ **Ղարաբուլաղ**, 1920-1962թթ. արխիվային փաստաթղթերում այն դեռևս օտարալեզու անվամբ է վկայված⁶: **Ակնաղբյուր** վերանվանման առաջարկ ներկայացվել էր 1988 թ.՝ Արցախյան շարժման զարթոնքի շրջանում: Այս անվանումը՝ որպես գյուղանուն, պատահական չէ, ու այս դեպքում այն տեղանվանական բարեհաջող գյուտ է:

Մյուս **Ակնաղբյուրի՝ նախկին Աղբուլաղի** մասին տեղանվանական բառարանում տրվող տեղեկանքում նշվում է, որ այն մտնում էր Դիզակի մեջ, որը կազմում էր Ելիզավետպոլի նահանգի Կարյազինոյի գավառի բաղկացուցիչ մասը: Բնակիչների նախնիները եկել են Ղարաղաղից՝ 1829 թ.:⁷

¹ Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 127:

² Բարխուտարեանց Ս., *Արցախ*, էջ 93:

³ Սովետական Ղարաբաղ, 8.12.1988, N 281:

⁴ Սարգսյան Սլ., *Արցախի բնակավայրերը*, «Հայ Էդիթ», Ե., 1996, էջ 51:

⁵ *Мурзаев Э. М., Словарь народных географических терминов, "Мысль", Москва, 1984, стр. 255-256.*

⁶ ԼՂՀ պետական արխիվ, ֆ.1, ց.1, գ. 17:

⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, *Մելիք Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 1, Ե.1986, էջ 166:*

Նշենք, որ նույնանուն գյուղակ, ավերակ իջևանատուն և լեռնանցք կար նաև Իրանում՝ Ղարադաղում: Մերգեյ Մելքունյանը բնականունը կապում է գյուղի արևելյան մասում՝ անտառում, գտնվող աղբյուրի անվանը, որը կոչվում է **Սպիտակ աղբյուր**: Ու նաև նշում, որ բնակիչները եկել են Պարսկաստանից¹: Մակար Բարխուդարյանցն էլ հաստատում է, որ «բնակիչք գաղթած են Ղարադաղից, հողն արքունի և անջրդի է: Սուկրատ Խանյանը նշում է, որ գյուղն ուներ Մեծ աղբյուր, որի գուռն ու շրջակա թասը սպիտակ կրաշաղախով էր պատված, որից էլ աղբյուրը ստացել է **Սպիտակ** անվանումը²:

Այն, որ **Սպիտակ աղբյուրից** է առաջացել գյուղանունը, և **Աղբուլաղը** պարզապես համարվում է աղբյուրի բառացի պարզագույն թարգմանություն, նշում են գրեթե բոլորը: Նշենք, որ **Աղբուլաղ** կարող էր նշանակել ոչ միայն սպիտակ աղբյուր, այլև ամենից առաջ՝ վերգետնյա ջրերից սնվող աղբյուր, որովհետև **աղ** բաղադրիչը **կարա**-ի հակառակն է, և աղբյուրները նշելիս այն գործածվում է իր մեկ այլ իմաստով, որով նշում է աղբյուրի առաջացման պայմանը: Հատկանշելի է նաև, որ նշյալ Սպիտակ աղբյուրն իսկապես սնվում է վերգետնյա ջրերից:

Եթե իսկապես գյուղանունը ջրանունից է առաջացել, ապա նշանակում է գյուղի նախանվանումը **Սպիտակաղբյուր** էր: Մինչդեռ քիչ հավանական է թվում այս մեկնաբանությունը, բացի այդ էլ, այդպիսի արձանագրություն չկա որևէ փաստաթղթում: Ինչպես արդեն նշեցինք, Ղարադաղում առկա էին նույնանուն բնակավայրեր: Քանիցս բռնագաղթվել է մեր բնակչությունը և բնակություն հաստատել տարբեր վայրերում, ապա և անվտանգ պայմաններ ստեղծվելու դեպքում վերադարձել իր տունը: Այսպես մեր տեղանուններն էլ թափառիկ են դարձել, ու մեր տեղանվանական համակարգում էլ փոխադարձաբար եկամուտ անվանումներն են ավելացել: Հնարավոր է՝ հայրենիք վերադարձած ու նոր բնակավայր հիմնած մարդիկ իրենց հետ բերել են այնտեղի՝ Ղարադաղի բնակավայրի անվանումը՝ **Աղբուլաղ**, որը նոր ժամանակներում վերանվանվել է **Ակնաղբյուր**: Այն, որ ջրանունից չի ծագել բնականունը, ակներև է, որովհետև աղբյուրի **սպիտակ** գույնն ի բնե չէր, և աղբյուրն էլ ինքնաբուխ չէր, այլ կառուցված: Ի տարբերություն Ասկերանի Ակնաղբյուրի՝ այս Ակնաղբյուրն արդեն նոր անվանակոչում է և այդ բնակավայրի անցյալի հետ կապվում է այնքանով, որքանով որ ջրանվանական խորհրդանշում է:

¹ Մելքունյան Ս. Ա., *Լեռնային Ղարադաղ*, Ե., 1990, էջ 263-264:

² Խանյան Ս., *ԼՂՀ վաստակավոր գործիչ, բ.գ.դ., պրոֆեսոր/ծնունդով՝ ակնաղբյուրցի/*:

Ակնադրյուր համանուն տեղանունների քննությամբ թե՛ անվան, թե՛ անվանադրի կենսագրությունն է բացահայտվում: Լևոն Հարությունյանը անվանադրումն իբրև իրողություն բնութագրում է. «Գտնված տեղանունը դիպուկահարի անվրեպ կրակոցի է նման, ու եթե նկատի ունենանք, որ անունն արարվել է մեր իսելամիտ նախնիների կողմից սրբազան պատասխանատվության զգացումով, խորիմաստությամբ ու ճշգրտությամբ, ապա նրա մեծագույն արժեքը ճանաչելի կդառնա»: Այդ պատասխանատվության հանձնառությունը պիտի ժառանգորդվի, որ պատմական ճշմարտությունն անվիճարկելի մնա:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 81`04

Հայոց լեզու

Նոանե ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հայ բանասիրության ֆակուլտետ, հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

E-mail: nranesargsyan@gmail.com

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

Հոդվածում անդրադարձ է կատարվում պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհման համակարգում միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի միջև եղած ընդհանրությունների, կատարված փոփոխությունների, առկա կապի բացահայտմանն ու ուսումնասիրմանը:

Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն խոնարհման համակարգ դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ արևմտահայերենը շատ իրողություններ ժառանգել է միջին հայերենից: Նշվում է, որ արևմտահայերենում պատճառական բայերի բուն հրամայականը կազմող **-ուր** վերջավորությունը ձևավորվել և արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենում: Այս վերջավորությունը առաջացել և կիրառություն է ստացել դեռևս վաղ միջին հայերենի շրջանում, որտեղ գրաբարյան **-ո** վերջավորությունը աստիճանաբար վերածվում էր հնարանության: **Ո>ու>ուր** անցումը բայական համակարգի տրամաբանական զարգացման արտահայտությունն է, ընդ որում՝ նշվում է, որ ր հնչյունի հավելումը կատարվել է արգելյական հրամայականի ր հնչյունի համաբանությամբ:

Պատճառական բայերի բուն հրամայականի հոգնակին արևմտահայերենում կազմվում է **-էք** վերջավորությամբ: Այս վերջավորության ամրակայումն ու կրավորաձև կամ ներգործաձև խոնարհմամբ չպայմանավորված համընդհանուր

գործածությունը առաջ է եկել միջին հայերենում: Գրաբարում կրավորական սեռի բայերը ստանում էին **-այք, -արուք**, իսկ ներգործաձև խոնարհման բայերը՝ **-էք**: Միջին հայերենում այս տարբերակումը վերացավ, և բուն հրամայականի հոգնակին կազմող միակ վերջավորությունը դարձավ **-էք-ը**: Արևմտահայերենը ժառանգել և պահպանում է նաև հոգնակի թվի՝ անցյալ կատարյալի հիմքից կազմության սկզբունքը:

Բանալի բառեր՝ պատճառական բայեր, բուն հրամայական, փոխանցումներ, խոնարհում, արևմտահայերեն, միջին հայերեն:

Н. Саргсян

**СВЯЗИ СРЕДНЕАРМЯНСКОГО И
ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКОВ В СИСТЕМЕ
ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ КАУЗАТИВНОГО
ГЛАГОЛОВ**

В статье рассматриваются выявление и изучение существующей связи и изменения, общности языковых систем среднего армянского и западноармянского языков в системе повелительного наклонения каузативного глаголов. Рассматривая систему наклонения Грабар, средний армянский и западноармянский становится очевидно, что западноармянский унаследовал многое от среднего армянского. Отмечается, что окончание **-ըք**, составляющее повелительное наклонение каузативных глаголов, было сформировано и передано западноармянскому языку в среднеармянском языке. Это окончание возникло и получило применение еще в период раннего среднего армянского языка, где грабарское окончание **-ը** постепенно превращалось в археологию. Переход **n>ni>ըք** является выражением логического развития глагольной системы, в то же время отмечается, что добавление звука **ը** было выполнено в сочетании со звуком **ը** отрицательного повелительного наклонения.

В западноармянском языке повелительное наклонения множественного числа составляется с окончанием **-էք**. Укрепление и повсеместное употребление этого окончания появилось в среднеармянском языке. Это применение больше не было обусловлено пассивным или активным наклонениям. В Грабаре пассивные глаголы были образованы с помощью **-այք, -արուք**, а действительные **-էք**: В среднеармянском языке эта дифференциация исчезла, и единственным окончанием, составляющим множественное число повелительного наклонения, стал **-էք**. Западноармянский язык унаследовал и сохраняет также принцип формирования множественного числа из основ прошлого совершенного.

Ключевые слова: каузативные глаголы, повелительное наклонение, связи, наклонения, западноармянский язык, средний армянский язык.

N. Sargsyan

**MIDDLE ARMENIAN-WESTERN ARMENIAN
TRANSITIONS IN IMPERATIVE MODE OF CAUSATIVE
VERBS**

The article discusses the changes, identification and study of the existing connection, commonalities between the language systems of the Middle Armenian and Western Armenian languages in the system of imperative mode of causative verbs. Considering the conjugation system of Grabar-Middle Armenian and Western Armenian, it can be noted that Western Armenian inherited many realities from the Middle Armenian language. It is noted that the ending -ուք, which makes up the imperative mood of causative verbs, was formed and transmitted to the Western Armenian language in the Middle Armenian language. This ending originated and was used in the period of the early Middle Armenian language, where the Grabar ending -n gradually turned into archaeology. The transition n>ու>ուք is an expression of the logical development of the verb system, at the same time, it is noted that the addition of sound ու was performed in combination of sound ու of negative imperative.

The plural form of imperative mode is formed with ending -էք in Western Armenian. Strengthening and universal use of this ending was appeared in the Middle Armenian language. This application was no longer conditioned by passive or active mode. The passive verbs were formed with -այք, -արուք, and the actives -էք in Grabar. This differentiation disappeared in the Middle Armenian language and the only ending that makes up the plural imperative mode became -էք. The Western Armenian language has inherited and also retains the principle of the formation of the plural from the foundations of the past perfect.

Key words: *causative verbs, imperative mode, transitions, conjugation, Middle Armenian, Western Armenian.*

Լեզվի զարգացման ողջ ընթացքում բայի խոնարհման համակարգը կառուցվածքային, իմաստային բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվում, ի հայտ են գալիս կազմության նոր միջոցներ: **Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն** խոնարհման համակարգը դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ զարգացման այս շրջայում արևմտահայերենը շատ իրողություններ ժառանգել է միջին հայերենից, որտեղ գրաբարյան ձևերը ենթարկվեցին փոփոխությունների: Այս երևույթը տեսանելի է անգամ խոնարհման համակարգի որևէ հատվածն ուսումնասիրելու դեպքում: Պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհումը ևս ցույց է տալիս, որ արդի արևմտահայերենում ամրակայվել են միջին հայերենում ձևավորված և առավել գործուն ձևերը: Նշված իրողությունը թեև վկայված է լեզվաբանական տարբեր աշխատություններում, բայց առանձին ուսումնասիրության չի արժանացել ի հայտ բերելով **միջին հայերեն-արևմտահայերեն** լեզվական համակարգերի սերտ կապը:

Եզակի թիվ: Պատճառական բայերը արևմտահայերենում բուն հրամայականի եզակին կազմում են *-ուր* վերջավորությամբ: Հրամայականի կազմության այս վերջավորությունը արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից:

-ուր ձևության գործածությունը նկատելի է վաղ միջին հայերենի շրջանից, որտեղ զուգահեռ կիրառվում էին նաև պատճառական բայերի գրաբարաձև կազմություններ: Գրաբարում այս բայերը հանդես էին գալիս *-ն* վերջավորությամբ, որն առաջանում էր պատճառական *-ուցան*- մասնիկից՝ նախ *-ան*- ածանցի անկման, ապա *-ոյց* ածանցի շեշտմամբ *յ, ց* հնչյունների դուրս ընկնելու արդյունքում, օրինակ՝ *ուսոյց-ուսո՛ւ, վազեցոյց-վազեցո՛ւ*: Ընդ որում՝ պատճառական դառնալիս մյուս լծորդությունների բայերը վերածվում են *ե* լծորդության և խոնարհվում *ե* լծորդության ածանցավոր բայերի օրինակով: Միջին հայերենի շրջանում հնաբանության վերածվող գրաբարյան այս ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում էին *-ուր* վերջավորությամբ նոր կազմություններին: Այս շրջանում *-ուր* վերջավորության ձևավորման և տարածման գործընթացը բայական համակարգի տրամաբանական զարգացման և փոփոխության արտահայտությունն է: *Ո>ու>ուր՛* անցումը դիտարկելիս նշվում է, որ պատճառական բայերի բուն հրամայականի վերջում *ր* հնչյունի հավելումը պայմանավորված էր արգելական հրամայականի *ր* հնչյունի համաբանությամբ:

Ը հնչյունի հավելումը Մ. Աբեղյանը բացատրում է հնչյունների ավելացման հոգեբանական «անալոգիայով», «այն է՝ որոշ բառերի և բառաձևերի մեջ ավելանում է մի հնչյուն ուրիշ բառերի և բառաձևերի նմանությամբ և նույնիսկ միևնույն բառի մեջ եղած մի հնչյունի ազդեցությամբ»²: Հոգեբանական գործոնից զատ՝ ավելի մեծ դեր կարող են ունենալ «տվյալ լեզվական համակարգին բնորոշ հնչարտաբերական նորմաների միտումները»³:

-ուր վերջավորությամբ կազմությունները շատ արագ տարածվեցին, թեև առաջին ենթաշրջանում զուգահեռ շարունակում էին կիրառվել գրաբարյան *-ն* վերջավորությամբ ձևերը: Հաճախ նույն հեղինակի երկերում երկու տարբերակն էլ կարելի է գտնել, ինչպես՝ *Եւ ՚ի շքի չորացուր, և տուր աղցած և մաղած մի մթխալ՝ քաղցր նոան ջրով և խիարի ջրով անօթեց (ՄՀ, ՋՄ, էջ 43): Ջրով*

¹ Ուր-ի առաջացման և ձևավորման հարցին անդրադառնալիս Յ. Կարստը գրում է, որ պատճառական բայերը կիլիկյան հայերենում ունենում են *ո* կամ *ոյ* վերջավորությունը, որը, սակայն, դասական լեզվի հետ սոսկ տառագրական նմանություն ունի, որովհետև հին *ո-օ* հնչյունը կիլիկյան հայերենում գնում է դեպի *ս* (*ու*): Այս *ո* վերջավորությամբ ձևի կողքին երևում է արդեն *ու* վերջավորությամբ ձևը, այնպես որ այդ դեպքում նոր հայերենի համար ընդհանուր *ո-օ>ու-ս* փոփոխությունն առկա է արդեն կիլիկյան հայերենում: Տե՛ս Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 317-318:

² Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 101:

³ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 191:

եփե. պարզե, և սնուցած մանուշակով **քաղցրացո**. և ամեն օր սակաւ սակաւ խմել տուր (ՄՀ, ՋՄ, էջ 54): Հրամայականի՝ պատճառական բայերի -ուր վերջավորությունը համընդհանուր տարածում ստացավ միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում: Ուշ միջնադարի և վաղ աշխարհաբարի շրջաններում արևելյան բարբառներում կատարվեց նաև հնչյունների դրափոխություն, և պատճառական բայերի բուն հրամայականը սկսեց կազմվել -րու վերջավորությամբ: Կազմության այս ձևը ամրակայվեց արևելահայերենում, իսկ արևմտահայերենը մինչ օրս պահպանում է միջին հայերենում կիրառվող -ուր վերջավորությամբ տարբերակները (հմմտ. *վազեցո՛ւր-վազեցրո՛ւ, խօսեցո՛ւր-խոսեցրո՛ւ* և այլն):

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Տես, որդեակ, մի մոռանար զսէր իմ, այլ շրթամբք քովք սիրով միշտ համբուրեա զիս, եւ ի սենեակս մտաց քոց բնակեցո զիս (ԿՄ, ԳՀ, էջ 74):
Խաղացո՛ ջուր կենդանիդ հ՛ոստրս սրբոսիս, վոր կակղանամ (ՖԺ, էջ 201):
Վաստակէ՛ եւ աճեցո՛, որ վճարէ գտուողն աստուած (ԿԵ, էջ 151): Ապա ա՛ռ իւր կաթնէն. ՚ի յառաջին օրն տուր կէս լիտր, եւ հետէն յաւելցուր ի՛ կաթն ըստ ուժոյն հիւանդին (ՄՀ, ՋՄ, էջ 41-42):

Արևմտահայերեն:

Սորվեցո՛ւր զաւակներուդ պաշտպանել մեր ցեղի օրէնքները անգիր (Վ. Թեքեան): Մի՛ կարդար կորսնցո՛ւր// կորսնցո՛ւր ձայնդ (ԳՊ, Մանտր., էջ 45):
Ծանօթացուր ինձի քոյրդ, իմ կարգիս զայն ծանօթացնեմ բարեկամիս (ՄՊ, ԵԼԺ, էջ 45):

Կան նաև պատճառակերպ բայեր, որոնք թեև պատճառական ածանց չունեն, բայց խոնարհվում են այդ բայերի օրինակով՝ *հարցնել-հարցո՛ւր, ցուցնել-ցուցո՛ւր* և այլն: Այս կազմությունները գործածական են եղել նաև միջին հայերենում, ինչպես՝ *Թէ՛ «Գնա՛, դու շատ մի ասել, // Գնա՛, ցուցու քո յագգէն, // Որ մեռել // ու դարձել էլ էլ // ու դարձել էլ էլ» (Հայրեններ)²: Հետ մի ցուցու զքո տեսդ աղվոր, // Հաւսար ծագէ յերկիր բոլոր (ԿԵ, էջ 120):*

Հատկանշական է, որ *ցուցու՛ր* բայաձևի փոխարեն կիրառված է *ցուցու* տարբերակը: Հնարավոր է, որ *ր* հնչյունը մաշվել-ընկել է կամ տվյալ հեղինակի խոսքային առանձնահատկությունն է: Միջին հայերենում գտել ենք նաև հնչյունափոխված *ցրցուր/ցրցու* տարբերակը՝ *Արէկ զայս ալէնս ի ժուռ, բեր ցրցո՛ւ զէտ քեզ մէկ մի ալ (Հայրեններ, էջ 39)*, որի գործածությունը նկատվում է նաև արդի արևմտահայերենում՝ *.... Մամային քովէ՛ն գողցար // չէ՛ իմինիս է// ցցո՛ւր (ԲԲ, էջ 53):*

¹ <http://www.grakanter.am/archives/11169>:

² Հայրեններ,

<https://digilib.aua.am/book/2350/2800/20970/%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A7%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>:

Հետաքրքիր դրսևորումներ ունի *գալ* բայը, որի հրամայականը ևս կազմվում է *-ուր* վերջավորությամբ: Գրաբարում *գալ* բայն ունեւր հրամայականի *ե՛կ* ձևը, որը, վաղ միջին հայերենի շրջանում միանալով *յառնել* բայի հրամայականի *արի՛* ձևին, հանդես էր գալիս *արիե՛կ*, *արե՛կ* տարբերակներով՝ *Հիւանդ եմ ի քո սիրու, ա՛ն խընձոր արե՛կ զիս ի տես*,// *Արե՛կ նի՛ստ ի բարձս ի վեր, ձեռքըդ տա՛ր ու զիմ սիրտըն տե՛ս* (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 132): *Ի դէմս է՛ր մայր մտնես*:// *Արե՛կ աչերուս իմ լոյս* (ԿԵ, էջ 161):

Երկրորդ ենթաշրջանում բուն հրամայականը սկսեց կազմվել պատճառական բայերի օրինակով: Ի հայտ եկան *եկո՛ւ*, *եկո՛ւ*, ապա նաև *եկո՛ւր* տարբերակները¹, որոնցից ամրակայվեց, ապա արևմտահայերենին փոխանցվեց *եկո՛ւր* բայաձևը, իսկ արևելահայերենը, ի տարբերություն արևմտահայերենի, պահպանեց գրաբարյան *ե՛կ* տարբերակը, թեև գործածական է նաև *արի՛* բայաձևը²:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Եկու՛ տանելու ցուցնեմ, տանելու զըլլին զարնելո՛ւ (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 142): *Թէ վարդ ես նե՛ վար եկո՛ւ*, թե՛ օտար ծաղիկ նա գընա՛ (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 134): *Եկո՛ւ քեզի նուռ մի տամ, կտրե՛ տե՛ս քանի՞ հատ ունի*:// *Ամէն հատի պագ մի տուր, աւելին հարամ թէ պիտի* (Ն. Քուչակ, ՀԲ, 198): *Եկո՛ւր, որ մէկ նաւ նըստինք*,//*Նաւն ի նաւ, ծովըն ի գընաց* (Հայրեններ, էջ 81): - *Եկո՛ւր նշանով ցոյց տամ, որ գըտնես դուր խարիպիս* (Ակնա հայրեններ, ՀԲ, էջ 435):

Արևմտահայերեն:

Գրիգոր *եկուր* տոնտուրմա ուտելու երթանք (ՔԲ, էջ 53): - *Շաւարշ, եկո՛ւր նայե, շո՛ւտ եկուր, կատուն չորս հատ ձագ բերեր է, ի՛նչ անուշիկ ձագեր ...* (ՄՊ, ԵԼԺ, էջ 289): - *Եկո՛ւր այդ բաներու արժանիքին մասին չվիճինք, մա՛նաւանդ որ այդ բոլորը քու պարտեզիդ ցանկապատէն անդին տեղի ունեցող փոփոխություններ են* (ԱՀ, ԱՕՄ, էջ 114):

Այսպիսով, կարող ենք ասել, որ պատճառական բայերի բուն հրամայականի եզակի թվի կազմության առանձնահատկությունները արևմտահայերենը ամբողջությամբ ժառանգել ու պահպանում է միջին հայերենից:

Հոգնակի թիվ: Արևմտահայերենում պատճառական բայերի հոգնակին բուն հրամայականում կազմվում է մնացած բայերի օրինակով՝ անցյալ կատարյալի հիմքին –*էք* վերջավորության ավելացմամբ: Կազմության այս սկզբունքը արևմտահայերենին նույնպես փոխանցվել է միջին հայերենից: Առհասարակ, եզակի թվի կազմության միջոցների հետ համեմատած՝ միջին հայերենում հոգնակի թիվը պարզեցվեց, և կազմության մեկ ձևույթ մնաց՝ -*էք* ձևույթը:

¹ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 350, 400:

² Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ *արի՛*, *արե՛ք* ձևերը բնորոշ են ժողովրդական լեզվին, տես՝ *Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004, էջ 323:*

Գրաբարում բուն հրամայականի հոգնակի թիվը կազմվում էր *-էք, -այք, -արուք* ձևությոներով: Այս ձևությոներն ավելանում էին անցյալ կատարյալի հիմքին, որը, ըստ լծորդության և եղած ածանցների, կարող էր լինել արմատական և ցոյական: *-էք* ստանում էին ներգործաձև խոնարհման բայերը, իսկ կրավորաձև խոնարհվելիս բային ավելանում էին *-այք* և *-արուք* վերջավորությունները: Միջին հայերենում *-էք*-ը, ի տարբերություն գրաբարի, ավելանում էր բոլոր բայերին՝ անկախ սեռից: Պատճառն այն էր, որ միջին հայերենում կրավորաձև և ներգործաձև խոնարհման տարբերակումները վերացել էին: *-Այք* և *-արուք* ձևությոները այլևս չէին կիրառվում կրավորականության իմաստ արտահայտելու համար: Կորցնելով իրենց այդ հատկանիշը՝ միջին հայերենի առաջին ենթաշրջանում իրենց տեղը զիջեցին առավել կարճ ու շփոթ չառաջացնող տարբերակին՝ *-էք* ձևությին, քանի որ *-այք*-ը, լինելով նաև անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքի վերջավորություն, համանունություն էր առաջացնում բուն հրամայականի և անցյալ կատարյալի համապատասխան ձևերում, հմմտ. *հեռացայք* և *հեռացա՛յք*: Միջին հայերենում ընդհանուր առմամբ պահպանվեց գրաբարի՝ անցյալ կատարյալի հիմքին հոգնակերտ մասնիկի հավելմամբ հրամայականի հոգնակի թվի կազմության սկզբունքը:

Միջին հայերենի ուշ շրջանում *Ում* ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների մոտ առկա են արմատական՝ ոչ ցոյական հիմքով կազմություններ, այն բայերի համար, որոնց անցյալ կատարյալի հիմքը ցոյական էր, ինչպես *Յնծութեամբ և խնդութեամբ խմէ՛ք սիրով միաբա՛նական, // Եղբայրք պատուական (ՆՀՏ, էջ 76): Ա՛յ եղբայրք, կպէք գինոյ գաւէն, // Ասէք «Ա՛յ դարտաշ, իչտում սանայ» (ՆՀՏ, էջ 88):* Այս կազմությունները լայն տարածում գտան արևելահայերենում, և այժմ էլ կիրառվում են ցոյական հիմքով կազմություններին զուգահեռ՝ հաճախ առավել մեծ գործածականություն ունենալով: Այսպիսի կազմությունները տարածում չգտան արևմտահայերենում: Այն, ի տարբերություն արևելահայերենի, պահպանել և մինչ օրս գործածում է *է* և *ի* լծորդության բայերի հոգնակի թվի՝ ցոյական հիմքից կազմությունները:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն:

Չաստուած առ ձեզ քաղցրացուցէք, // Յարքայութիւնն մխիթարուէք (Ա. Խարբերդցի):

Արևմտահայերեն:

Միօրինակութենէ դուրս գալու մասին մտածեցէք, զարմացուցէք ձեր շրջապատը ...²: Արիւնները կը պոռա ն// Լռեցուցէ՛ք եթէ կրնաք (Վ. Թեքեան)³:

¹ <https://digilib.aul.am/book/125/125/1230/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>:

² <https://www.aztagdaily.com/archives/468907>:

³ <https://granish.org/im-erkirs-tkhur-e/>:

Առկա փոփոխություններն ու ընդհանրությունները առավել ակնառու դարձնելու համար ներկայացնենք պատճառական բայերի վերջավորում-թյունները բուն հրամայականով խոնարհվելիս գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում՝

գրաբար		միջին հայերեն		արևմտահայերեն	
<i>եզ. թիվ</i>	<i>հոգ. թիվ</i>	<i>եզ. թիվ</i>	<i>հոգ. թիվ</i>	<i>եզ. թիվ</i>	<i>հոգ. թիվ</i>
- n	-է՛ք	- n /n՝ iր	-է՛ք	-n iր	-է՛ք

Պատճառական բայերի բուն հրամայականով խոնարհման համակարգի դիտարկումը, բերված բնագրային օրինակները փաստական նյութ են ևս մեկ անգամ ընդգծելու արևմտահայերենի և միջին հայերենի լեզվական համակարգերի ընդհանրությունները: Միջին հայերենի բայական համակարգն իր հիմնական գծերով փոխանցվել է արևմտահայերենին, և այս առումով կարող ենք ասել, որ արևմտահայերենը միջին հայերենի անմիջական ժառանգորդն է ու շարունակողը:

Գրականություն

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004:
4. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002:
5. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Համառոտագրություններ

ԱԾՄ – Ապրող ծառ մը
 ԱՀ – Ա. Հայկազ
 ԳՀ – Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ
 ԳՊ – Գրիգոր Պըլտեան
 ԵԼԺ – Երկերու լիակատար ժողովածու
 ԿԵ – Կոստանդին Երզնկացի
 ՀԲ – Հայրեններու բուրաստանը
 Մանտր. – Մանտրաներ
 ՄՀ – Մխիթար Հերացի
 ՄՊ – Մովսես Պչաքճեան
 ՆՀՏ – Նաղաշ Հովնաթան, Տաղեր
 ՋՄ – Ջերմանց Մխիթարութիւն
 ՎԱ – Վարդան Այգեկցի

ՔԲ – Քրիստիան Բատիկեան

ՖԺ – Ֆրիկ, Ժողովածու

Աղբյուրներ

Այգեկցի Վ., Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, Ե., 1998:

Երզնկացի Կ., Տաղեր, Ե., 1962:

Հայկազ Ա., Ապրող ծառ մը, Ե., 2012:

«Հայրեններ, անտունիներ», Վ., 1997:

«Հայրեններու բուրաստանը», Փ., 1940:

Հերացի Մ., Ջերմանց Մխիթարութիւն, Վ., 1832:

Հովնաթան Ն., Տաղեր, Ե., 1983:

Պըլտեան Գ., Մանտրաներ, Ե., 2010

Պչաքճեան Մ., Երկերու լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 2013:

Ֆրիկ, Ժողովածու, Ե., 1937:

digilib.aua.am

granish.org

www.aztagdaily.com

www.grakantert.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 82-9Հայ գրականություն**Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ****ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.****E-mail: nare-luys@mail.ru**

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԴՐԱՄԱՆ ՎԱՇԵ ՀԱՅԿԻ «ՀԱՅՐԵՆԻ ԾԽԱՆ» ՀԻՆԳՀԱՏՈՐՅԱԿՈՒՄ

Վ. Հայկի «Հայրենի ծխան» գրքի հինգ հատորներն էլ գրված են բարձր արվեստով, կարտոտի ու անանք թախծի խորունկ ապրումներով, որոնց մեջ գեղարվեստական տեքստի մտահղացման նախահիմքը գերազանցապես ոչ թե վիպական պատմությունն է, այլ քնարական զգացմունքը, իսկ եթե առկա էլ է վիպական բաղադրիչ, ապա հիմնականում արտահայտված է վերապրումի միջոցով: Իր ստեղծագործության մեջ Վահե Հայկը համադրեց բանաստեղծական մտածողությունն ու իրապաշտական վիպականությունը, հոգեբանական ներթափանցումն ու իմացական դատողականությունը, գեղարվեստի ազգային առանձնահատկություններն ու եվրոպական չափանիշները: Հոգեբանական նուրբ ու խորունկ վերլուծությունները, կենսահիմացական բարձր մակարդակն ու պատկերակերտման ինքնատիպ արվեստը Վահե Հայկի արձակի գեղարվեստական տարածությունը դարձնում են գրական նոր ու իսկատիպ աշխարհ՝ ուղեծիր նշմարող յուրահատկություններով: Մի կողմից Վահե Հայկը բարձր ներշնչանքով ստեղծում է հայրենի եզերքի գեղարվեստական պատկերը, վիպական հստակ ոճով ներկայացնում ցեղասպանության ու բռնագաղթի որոշակի դրվագներ, մյուս կողմից՝ կերպավորում տարագիր հայությանը՝ սոցիալ-հոգեբանական խնդիրներով, դրամատիկ իրավիճակներով, որոնք երբեմն առաջ են գալիս տոհմիկ ու նոր սերունդների հոգեբանական հեռացումից և օտար բարքերի ներազդեցությունից:

Բանալի բառեր՝ կարոտացավի ծուխ, բարձր ներշնչանք, վերապրում, հոգևոր ու կենսաբանական կապ, բնապատկերայնություն, հոգեվերլուծություն, տարագիր հայություն, հոգեբանական հեռացում, օտար բարբերի ներազդեցություն:

Н. Ованесян

**ДРАМА НАЦИОНАЛЬНОЙ СУДЬБЫ В ПЯТИТОМНИКЕ
ВАГЕ АЙКА «РОДНОЙ ДЫМ»**

Все пять томов книги В. Айка «Родной дым» написаны с высоким искусством, глубоким чувством тоски и неумолимой грусти, в которых на основе художественного текста лежит не вымышленный рассказ, а лирическое чувство, и наличие вымышленной составляющей, в основном выражается через выживаемость. В своем творчестве Ваге Айк сочетал поэтическое мышление и реалистический вымысел, психологическую проницательность и когнитивное суждение, национальные особенности искусства и европейские стандарты. Тонкий и глубокий психологический анализ, высокий уровень биоопознания и уникальное искусство изображения делают художественную прозу Ваге Айка новым и подлинным литературным миром с отличительными особенностями.

С одной стороны, Ваге Айк с высоким вдохновением создает художественный образ родного края, представляет отдельные эпизоды геноцида и депортации в четком эпическом стиле, с другой стороны, изображает депортированных армян с социально-психологическими проблемами, драматическими ситуациями, которые порой возникают от психологического удаления родов и новых поколений и от влияния чужих нравов.

Ключевые слова: ностальгический дым, высокое вдохновение, выживание, духовная и биологическая связь, пейзаж, психоанализ, депортированные армяне, психологическое удаление, влияние чужих нравов.

N. Hovhannisyán

**THE DRAMA OF NATIONAL DESTINY IN THE VAHE
HAYK'S FIVE-VOLUME "NATIVE SMOKE"**

All five volumes of V. Haik's book "Native Smoke" are written with high art, a deep sense of longing and inexorable sadness, in which the literary text is based not on a fictional story, but on a lyrical feeling, and the presence of a fictional component is mainly expressed through survival. In his work, Vahe Hayk combined poetic thinking and realistic fiction, psychological insight and cognitive judgment, national peculiarities of art and European standards. Subtle and deep psychological analysis, a high level of bio-knowledge and the unique art of the image make the artistic prose of Vahe Hayk a new and authentic literary world with distinctive features.

On the one hand, Vahe Hayk creates an artistic image of his native land with high inspiration, presents individual episodes of genocide and deportation in a clear epic style, on the other hand, depicts deported

Armenians with socio-psychological problems, dramatic situations that sometimes arise from the psychological removal of childbirth and new generations and the influence of other people's morals.

Key words: *nostalgic smoke, high inspiration, survival, spiritual and biological connection, landscape, psychoanalysis, deported Armenians, psychological removal, the influence of other people's morals.*

1930-1970 թթ. Սփյուռքում լույս տեսան Վահե Հայկի «Հայրենի ծխան» պատմվածքների ժողովածուի հինգ հատորները: «Հայրենի ծխան» գրքի առաջին հատորի առթիվ Վահե Հայկին հղած նամակում Հակոբ Օշականը գրում է. «...Լաւագոյն տպաւորութիւն մը պահած եմ, ջերմ, հաղորդական արձակ մըն է ձերինը այդ էջերուն մէջ, նրբացած եւ մշակուած, ինքնատպութեան գորաւոր ցոլքերով եւ բանաստեղծական հարուստ աւիշով»¹: «Հայրենի ծխանը» որպէս սփյուռքահայ արձակի նոր հայտնություն, գրաքննադատական անմիջական արձագանքների է արժանանում համահայկական տիրույթում՝ ի հայտ բերելով գրողի ստեղծագործական անհատականությունն ու նորարարությունը. «...Անոնց ընթերցումը ինձի բերաւ ինքնատիպ եւ թարմ տաղանդի մը յայտնութիւնը, տաղանդի մը որ գտած է իր ուրոյն գոյնն ու յատուկ ոճը: Դուք այս գործով կը միանաք Խարբերդի մեծ գրագէտներուն, որոնց գործն է որ կը շարունակէք»², - նկատում է Արշակ Չոպանյանը:

Իր ստեղծագործության մեջ Վահե Հայկը համադրեց բանաստեղծական մտածողությունն ու իրապաշտական վիպականությունը, հոգեբանական ներթափանցումն ու իմացական դատողականությունը, գեղարվեստի ազգային առանձնահատկություններն ու եվրոպական չափանիշները: Հոգեբանական նուրբ ու խորունկ վերլուծությունները, նշանակետային դատողությունները, կենսաիմացական բարձր մակարդակն ու պատկերակերտման ինքնատիպ արվեստը Վահե Հայկի արձակի գեղարվեստական տարածությունը դարձնում են գրական նոր ու իսկատիպ աշխարհ՝ ուղեծիր նշմարող յուրահատկություններով: Մի կողմից Վահե Հայկը բարձր ներշնչանքով ստեղծում է հայրենի եզերքի գեղարվեստական պատկերը, վիպական հստակ ոճով ներկայացնում ցեղասպանության ու բռնագաղթի որոշակի դրվագներ, մյուս կողմից՝ կերպավորում տարագիր հայությանը սոցիալ-հոգեբանական խնդիրներով, դրամատիկ իրավիճակներով, որոնք երբեմն առաջ են գալիս տոհմիկ ու նոր սերունդների հոգեբանական հեռացումից և օտար բարքերի ներագդեցությունից:

«Հայրենի ծխան» գրքի հինգ հատորներն էլ գրված են բարձր արվեստով, կարոտի ու անամոք թախծի խորունկ ապրումներով, որոնց մեջ

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Ա., Ֆրեզնո, 1930, էջ 5:

² *Նույն տեղում:*

գեղարվեստական տեքստի մտահղացման նախահիմքը գերազանցապես ոչ թե վիպական պատմությունն է, այլ քնարական զգացմունքը, իսկ եթե առկա էլ է վիպական բաղադրիչ, ապա հիմնականում արտահայտված է վերապրումի միջոցով: Սա ինքնին ենթադրում է նաև պատումի ենթակայական բնույթ, հեղինակի ներկայություն, ինչը հատկանշական է մանավանդ ամերիկահայ կյանքն արտացոլող պատմվածքներին և հայրենի երկիրը կերպավորող քնարական պատումներին:

Հայրենի ծխանը Վահե Հայկի գրական աշխարհում շարունակում է ծխալ, բայց դա արդեն կարոտի ու ցավի ծուխ է, քանի որ իրականության մեջ մարած է ծննդավայրի ծուխ ծխանին: Կորսված է այլևս հայրենի երկիրը, բայց անկորնչելի է նրա հոգևոր պատկերը: Իրական հայրենիքը փոխակերպվում է հոգևոր հայրենիքի, դառնում կյանքի հենակետ ու ոգու միջնաբերդ ամերիկյան աշխարհում:

Գեղարվեստական նուրբ ու խորահույզ պատկերով է բացվում «Հայրենի ծխանի» առաջին գիրքը՝ «Այգին ու այգեկութը»: Պատկերակերտման արվեստով և վերհուշի քնարական եղանակով այն ամբողջովին թողնում է բանաստեղծական արձակի տպավորություն: Այգին կորսված հայրենի եզերքի մի պատկերն է՝ հիշողության մեջ ապրող, փթթող ու հասնող կյանքով: Այգեկութի գունագեղ ու խնդապատկեր նկարագրության մեջ բնաբուխ ու տաք կարոտ կա, որ խոսքին հաղորդում է էլեգիական թախիծ: Այգեկութի պատկերը անդրադարձնում է նաև տոհմիկ արևմտահայ կենցաղի ու արարումի մշակույթը. «Հնուց մնացեր էր մեր այգին, բամպակ մագերով մամիկի մը պէս որ աղօթքի նմանող աղուոր խօսքեր կ'ունենայ շրթունքներուն վրայ եւ գրպանին մէջ անոյշ բաներ անպակաս:

Հայրս չէր յիշեր անոր պատմութիւնը: Մեր պապերը եկեր անցեր էին անոր վրայէն, տղու մը պէս խաղցեր՝ անոր հետ, փորեր էին հողը, խնամեր էին գայն, մանկական աղապատանքով գուրգուրացեր էին անոր վրայ, ջուրի տեղ խմեր էին անոր գինին, հոն վառեր իրենց սերն ու երիտասարդութիւնը եւ նո՛յն այդ հողերուն վրայ կքելով իրենց շինականի առոյգ հասակը, օր մըն ալ թողուցեր ամէ՛ն բան...»¹ («Այգին ու այգեկութը»):

Խորունկ, բայց զուսպ զգացմունքայնությունն ու բանաստեղծական մտածողությունը Վ. Հայկի կարոտի արձակի բևեռներն են: Իրական տպավորությունները, իրական հուշերը գրողի պատմվածքներում դառնում են քնարական վերհուշ: Վ. Հայկի արձակը բանաստեղծական է ոչ միայն պատկերային համակարգով, այլև զգացական-իմաստային խտացումներով. «Այգեկութի՝ օրեր, ուր Աստուածածինն ալ կուգար, օրհնութիւն կը թափեր դաշտերուն ու ճամբաներուն վրայ. այգին կը քաղցրանար ու կը ծանրանար, իր հասունութեան ամենէն հեշտագին ու տարփահրաւէր օրերուն կը հասներ:

¹ Նույն տեղում, էջ 7:

Ու կը կթէին այգի՛ն, կը քաղէին թուփերուն կաթը, մանուկի մը պէս որ դեռատի ծիծի մը փակած կը ծծէ...:

Մենք բոլորիկ ոտքերով լաճեր, տեսնէիք մեզ, խաղողի լեփլեցուն կողովներ մեր գլխուն, երբ կը վազէինք իրարու ետևէն հեւիհեւ ու խնդապատառ: Շուտով հասաւանին վրայ ճերմակ ու սեւ ողկոյգներու խայտաբղետ բլրակ մը կը բարձրացնէինք, ապա ուռիի ճիւղերով հիւսուած գլանաձեւ կողովներու մէջ կը լեցնէինք ու բարի աչքերով էջերուն բեռցած կը տանէինք տուն»¹:

Մի կողմից Վահէ Հայկը բարձր ներշնչանքով ու գեղարվեստական ինքնատեսակ ոճով վերստեղծում է հայրենի եզերքի առարկայական ու ոգեղեն պատկերը, մյուս կողմից՝ հեռագայությամբ նկարագրում խաթարված ու կորսված երկիրը. «Հիմա լքուած է ան, մեր այգին, ինչպէս բոլոր այգիները, գարունն ալ աշունն ալ այրի ու խոպան: Ոչ ծերունիի մը քրտինքը կը բեղմնաւորէ զայն եւ ո՛չ ալ մանկական աղաղակ մը կենդանութիւն կը թափէ հոն...:

Անոնք չկան ա՛լ, այգին ալ չկայ, իմ սիրտս միայն մնաց այդ օրերէն եւ հոգիներէն փթթած փշրանքի մը պէս որ արցունքով կը կանչէ այգին, մանկութիւնը ու անոնց կապուած հեքիաթները»²:

Վահէ Հայկը, ինչպէս կարոտի գրականության մյուս գրողները, բոլոր երակներով կապված է հայրենական հողին: Դա ն՛ գգացական-հոգեկան կապ է, ն՛ կենսաբանական-արյունակցական: Եվ այդ ոգեղեն ու կենսաբանական կապն այնքան ուժգին է, որ հասնում է հեռագագացության: Կարոտը, թախիժն ու հայրենի երկրի վերագտնման ու վերակենդանացման բաղձանքը փոխլրացնում են իրար Հայկի պատմվածքներում. «Հին լեռներուն ցնձագին ձիւնը փշրէի մեր երդիքներուն. գիշերն երկարէի մեր գինիի սեղաններուն վրայ, փարջեր գլգլային մեր կուրծքերն իր վար, կապանքը քակւէր, ծանրութիւնը փետուր մը դառնար, վիշտը փշրուէր մեր ձեռքերուն մէջ ձիւնէ գնդակի մը պէս...:

Տայի ր ինձի, ի՛նչ կըլլար, տայիր ինձի իմ ծաղկուն պատմուճանիս եւ կարմրով կռշիկներու օրերը, եւ կամ հին, օրհնուած սեղանէդ գաւաթ մը գինի որ գիս մանկացնէր պահիկ մը միայն...»³ («Սրբոյն Յակոբայ»):

Վահէ Հայկի կարոտի արձակում ներքին մենախոսությունը կամ լուռ հաղորդակցումը հայրենիքի հետ երկրորդական գծում են թողնում վիպական հետևողական շարադրանքը՝ այդ առումով ևս դրսևորելով քնարական արձակի հատկություններ: Հայրենի եզերքի կորսված գեղապատկերի հետ գրողի կարոտի պատմվածքներում մշտառկա է ցեղասպանության և բռնագաղթի վերապրումը: Քնարական մեղմ շնչով ու ողբերգականությամբ առանձնանում են «Ո՛ւր գացիր, Վարպե՛տ», «Իմ գարունս, իմ սէրս» պատմվածքները. «Ո՛ւր գացիր, Վարպե՛տ, ո՞ր ճամբաներէն անցար, ո՞ր քարերուն ու ծառերուն ըսիր

¹ Նույն տեղում, էջ 13:

² Նույն տեղում, էջ 14, 15:

³ Նույն տեղում, էջ 42:

վերջին խոսքը, ո՞ր հորիզոնին նայեցար վերջին անգամ, մօտեցա՞ր արդեօք Մայրենի Հողիդ՝ որուն Երազը պաշտեցիր որպէս Աստուած եւ ծնրադրեցիր անոր դաբիրներուն իբրեւ քուրմ եւ իբրեւ յախտենական ուխտատուր...

Լսեցի՞ր հայրենի հովերուն ու գետերուն ալիքները որ հազար հազար կոյսերուն ու մանկիկներուն աղաղակները շալկած՝ եկան այրելու, ա՛խ, բիր անգամ խոցոտ օրհասականի ականջներդ...»¹ («Ո՞ւր գացիր, Վարպետ»):

Հիշողությունը Վահե Հայկի կարոտի արձակում դառնում է հոգեբանական ներքին հաղորդակցություն հայրենի երկրի հիշատակների հետ, դառնում է մտերմության ձև ու կենսակերպ. «Բոլոր սիրտերը իրենց ճառագայթներուն գերեզման եղան... Հիմա ծովեր ու լեռներ կը բաժնեն զիս մեր դաշտերէն, սիրական բլուրներէն, ուր ապրեցայ տարիներ, Կուժկոյրուկ ու Բամբոս փնտռելով, թիթեռնիկներ հալածելով ժպտագին, ու աւելի ետք՝ սէրերուս ետեւէն վազելով հեւ ի հեւ... Անոնց յիշատակը իմ միակ մտերմութիւնն է. անոնց հետ եմ ամէն օր...»² («Իմ գարունս, իմ սէրս»):

Պատումի նրբագիծ անցումներով Վահե Հայկը գեղարվեստականորեն ի մի է բերում հայրենի բնաշխարհի պատկերն ու ժողովրդի ճակատագրի ողբերգականությունը:

Վահե Հայկի արձակում հայրենի ծխանի ծուխը շարունակվում է ոչ միայն բնապատկերներում ու կենսապատկերներում, այլև մարդկանց հոգիներում: Բնապատկերայնությունն աստիճանաբար իր տեղը զիջում է մարդկային հոգեբանության պատումին՝ բացահայտելով հայրենագրկված ու տարագրության դատապարտված հայության մնացորդաց սերնդի ներքին դրաման: Այդ մարդկանց հոգում անթեղված կարոտի կրակը բռնկվում է յուրաքանչյուր ազդակից, վերստին բացում հիշողության մինչև վերջ չսպիացած վերքը: Ֆիզիկապես օտար երկրում՝ նրանք հոգեպես անհաղորդ են շրջապատին, ապավինում են մենությանը, իրենց կորսված հոգևոր կյանքը վերագտնում հայրենական հիշատակների հանդիպադրվելիս. «Ծերունին կուլայ մանկական արցունքներով: Բնագաւառի ամենէն անոյշ հիշատակներուն բոյրովը օժտուած հայկական բարբառը անոր ականջներուն մէջ կ'իյնայ անիմանալի սրբութեան մը պէս, հո՛ւ, օտա՛ր եւ ցուրտ բարձրագաւառի մը ծերպերուն մէջ կորսուած տնակի մը կտուրին տակ, ուր հայրենի ծիծեռանկի մը թենն ու փետուրը, անոր հովերէն փոքրիկ շունչ մը անգամ երեւակայել անհնարին երազ մը պիտի ըլլար»³ («Հայր»):

Օտարության մեջ տասնյակ տարիներ լռամփոփ ապրած ծերունու համար բախտի իսկական անակնկալ է իր տան մեջ պատահական հայի հյուրընկալումը, և ներսում զսպված, խտացված հույզերն ու մտովի վերապրված

¹ Նույն տեղում, էջ 53:

² Նույն տեղում, էջ 64:

³ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Գ., Բոստոն, 1947, էջ 50:

հիշողությունները ճեղք են տալիս՝ շարժանկարի պես երևակելով անցյալը, որ նրա ներքին կյանքն է. «Ծերունին տակաւին խորասուզուած է: Ամբողջ անցեալի մը ժապատէնը կը քակուի իր փոքրիկ ուղեղի պաստառին վրայէն եւ ինք անոր միակ հանդիսատեսը կ'անցնի տեսարանը տեսարան, առանց անոնց վերջաւորութիւնը գտնել կարենալու....»

Թերեւս *հայու կարօտն* է որ անոր յոգնած մարմնոյն մէջ կը խլրտի, հնամաշ մկաններն ու ոսկորները կը պրկէ, սրտէն բոցեր արձակել կուտայ, չարչարագին խաչելութեան մը վաղորդայնին՝ յարութիւն մը տեսնելու ըղձանքով առլցուն»¹:

Տարագիր հայի հոգեբանության տիպավորումը Վ. Հայկի ստեղծագործության հիմնագծերից է: Գրողը պատկերում է կարոտախտի ներհոգեկան բնեռացումներով կամ ընկճախտով տառապող հերոսների, որոնցից է նաև Գար Ամուն «Հողի սեր» պատմվածքում. «ԳԱԲ ԱՄՈՒՆ կուլար: - Ինչո՞ւ կուլաս Գար Ամու: Ծերունին չի պատասխաներ, խոսելու ճիգ մը կ'ընէ բայց որոշապես բան մը կ'արգիլէ զինք: Լացը պուկն է կպեր եւ չի թողուր որ բառերը սովորական օրերու նման դուրս գան ազատ ու անկաշկանդ եւ իր ներսի դին լեցուած յուզումն ու զգացումները պարպեն....»

Հեռաւոր Հայաստանէն Հայ զինուորական մըն է եկեր Ամերիկա...»² («Հողի սեր»):

Վահե Հայկը հրաշալի նկարագրող է: Հոգեբան գրողը փոքր կտավի վրա ներկայացնում է մարդկային դրամատիկ պատմություններ, ստեղծում ամբողջական կերպարներ: Գար Ամուն յոթանասունն անց գաղթական ծերունի է: Ամերիկյան կյանքը չի կարողացել նրա մեջ սպանել «յամառ հայր». «Օտարօտի գաւակներ ժնցնելու վախէն՝ տուն տեղ չէր եղեր, ազգականներու շուքերուն տակ ալ չէր ուզեր վայրկեան մը նստիլ եւ ո՛չ ալ օտարի մը ձեռք երկարել: Ինք բաներ ու ինք կերեր էր: Գործարաններուն մէջ կամ այգեստանին վրայ քամեր էր իր կեանքը, ծերութեան օրերուն, ըսես, մարմինը օտար գերեզմաններու մէջ փտտեցնելու վախէն սարսափահար՝ մահուան նայեր էր խժոռ աչքերով, ամէն օր սպասեր էր որ հայրենի հողերուն վերադառնայ ինք եւ անոր որպէս հարազատ մէկ բրդոնը խառնուի եւ նոյնանայ պապենական հողերուն...»³: Հայաստանից Ամերիկա եկած հայ զինվորականի ներկայությունը, ապա նրա հետ մի քանի խոսք փոխանակելը խորհրդավոր գորություն է հաղորդում Գար Ամուի ծերացած մարմնին՝ կերպավորելով նաև հոգին. «Հայրենի հողը, ինչքան ալ հեռի իրմէն, եկեր նոյնացեր էր իր էութեան: Ինք անոր մէջն էր ա՛լ եւ Ան՝ իր մեջ....»⁴:

Աքտրական հայի տիպական կերպար է նաև Վարդանը՝ «Առ մահիճդ ու քալէ» պատմվածքի հերոսը: Վահե Հայկի տաղանդը փայլում է ն՝

¹ Նույն տեղում, էջ 51:

² Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Դ., Նյու Յորք, 1954, էջ 135:

³ Նույն տեղում, էջ 136-137:

⁴ Նույն տեղում, էջ 138:

հոգեվերլուծական, և՛ նկարագրական, և՛ պատմողական արվեստում: Այստեղ տարագիր հայի կյանքն է՝ սոցիալ-հոգեբանական խնդիրներով, գոյաբանական մաքառումներով, հայրենի եզերքի երագներով ու նաև՝ ցեղասպանության և բռնագաղթի մտալուկ հիշողություններով. «Օերունի հայր, մայր, կայտառ, բանուոր եղբայրներ, կարմիր երեսներով ամօթխած քոյրեր՝ ուրիշ հագարներու հետ քշուեր, տարուեր էին: Տարիներէ ի վեր անոնցմէ խապրիկ մը չկար, շշունջ մը չէր լսուեր:

Միայն իր կինն ու երեք զաւակներէն ամենէն փոքրը կրցեր էին սակաւաթիւ բախտաւորներու հետ կեանքի նեղ եւ փշաթել շրջապատին մէջ մնալ եւ անանուն տանջանքներ ապրելէ, բոպիկ, կիսամերկ՝ հագարաւոր մղոն քալելէ յետոյ զալ եւ ինչալ բարեսիրտ երկրի մը նաւահանգիստը, Փաթրաս»¹ («Առ մահիճոյ ու քալէ»):

Վարդանի հիշողությունները, մտածումները, երագանքները գամված են հայրենի գյուղին, կորուսյալ կամ անհայտ հարագատներին: Տարիներով գործատանը և այգեստանում ծանր աշխատանքներ կատարելով՝ Վարդանը գումար է կուտակում՝ բռնագաղթից հետո Հունաստանում հայտնված կնոջն ու զավակին իր մոտ՝ Ամերիկա բերելու, բայց «Ամերիկայի մէջ անսիրտ օրէնք մը կար», որ «անգիտակցօրէն բարբարոսին կը գործակցեր եւ թոյլ չէր տար որ բռնութեամբ իրարմէ զատուած ընտանիքի մը անդամները կրկին քով քովի գային»²: Վարդանը վատնում է տարիներ ի վեր վաստակած ամբողջ գումարը, մեկը մյուսի հետևից աղերսագրեր գրում, բացատրում ցեղասպանություն, բռնագաղթ, հարագատների կորուստ, բայց ամերիկյան օրէնքը բացառություն չի ճանաչում: Գրողը ամերիկյան միջավայրի և Վարդանի հիմնախնդրի հանգույցը լուծում է մարդասիրական գաղափարով: Վարդանին պատուհասած ծանր փորձությունը (աշխատանքի պահին վթարվում է տրակտորը, և նա ստանում է կոտրվածքներ) իսկական բարեբախտություն է դառնում նրա համար: Վարդանին բուժող ամերիկացի բժիշկը, լսելով նրա կյանքի պատմությունը, անակնկալ է անում Վարդանին՝ լուծելով ընտանիքին վերագտնելու խնդիրը:

Տարագիր հայության դրամատիկ ճակատագրերի պատկերներում Վահե Հայկը մի կողմից ներկայացնում է անցյալի հիշողությունների խուժումը և գոյաբանական դժվարությունները, մյուս կողմից ցույց տալիս արևմտահայ մնացորդաց սերնդի և նրանց զավակների՝ ամերիկահայ նոր սերնդի հոգեբանական անջրպետը: Այս առումով ուշագրավ են «Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած», «Կաթիղ փարան չի մոռնաս, մամա՛», «Վերը Աստուած կայ, Կարապէ՛տ» և այլ պատմվածքներ: Ամերիկյան միջավայրը ներագրում է նոր սերնդի հոգեբանության վրա, դարձնում հայ հոգուն անհարագատ: Նրանք անտարբերությամբ կառավարական նպաստի կամ տարեցների տան խնամքին

¹ Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Գ, էջ 187:

² Նույն տեղում, էջ 188:

են թողնում իրենց ծնողներին: «Կաթիղ փարան չմոռնա՛ս, մամա՛» պատմվածքում նպարավաճառ որդին զայրանում է՝ հանդիմանելով նպաստով մի կերպ ապրող ծեր մորը, որ ամբողջովին չի վճարում իր խանութից գնած նպարների դիմաց: Հոգեբանական տպավորիչ գույներով է գրողը նկարագրում հայ մամիկի կերպարը՝ բացահայտելով հին սերնդի ներքին դրաման:

«Վերը Աստուած կայ, Կարապե՛տ» պատմվածքում որդիները տարեցների խնամքի տուն են հանձնել իրենց ծեր հորը՝ մոռանալով նրա գոյության մասին: Վահե Հայկը հոգեբանական նուրբ վերլուծություններով ներկայացնում է հոր սպասումները, կարոտներն ու տազնապները, նրա հոգատարությունը հակադրում որդիների անտարբերությանը, ինչն այս պարագայում այլասերման, օտար բարքերից ստացական հատկանիշների ձեռքբերման յուրովի դրսևորում է:

«Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած» պատմվածքում սիրակարոտ մայրը, հազար ու մի դժվարություններ հաղթահարելով, գալիս է Ամերիկա՝ իր միակ որդուն տեսության: Հայ մամիկի ավանդական կերպարը ջերմությամբ է լցնում որդու՝ Արտաշեսի տունը, թռռնիկները հոգեպես կապվում են նրա հետ, յուրացնում ազգային հատկանիշներ: Այդ ամենին դիմադարձում է ամերիկյան կենսակերպով ապրող հարսը: Նա դժգոհում է, չի ուզում այլևս իրենց տանը տեսնել ամուսնու մորը, մի օր էլ հյուրերի ընդունելությունից առաջ նրան ուղարկում է կառատուն՝ ամաչելով մամիկի ներկայության համար: Ցուրտ կառատանը մնալով ամբողջ գիշեր՝ ծեր մայրը հիվանդանում է և մահանում:

Հարսի վատասերված, քաղքենի կերպարին պատմվածքում հակադրվում են որդին և թռռնիկները. «-«Հին»ին ներքին ոգին ազնիւ եւ բարձր է, տառապանքի եւ ամեն զրկանքի կուրծք կուտայ, ընտանիք եւ սերունդներ կ'ապրեցնէ անձնուիրութեամբ, առանց հաշիւի,- ասում է Արտաշեսը՝ ի պատասխան կնոջ դատումների: - «Նոր»ին արտաքինը միայն ջնարակուած է, փոքրիկ հովի մը անգամ չի դիմանար: «Հին»ը կը նայի սրտի՛ն, միջուկի՛ն, «Նոր»ը՝ կճեպին ու փոճոկին միայն»¹ («Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած»):

Վահե Հայկը խոր ցավով է պատկերում նոր սերնդի նահանջը ազգային հոգեբանությունից: Նրանք այլևս ամերիկացի են կենսակերպով և մտածողությամբ:

Եթե ընդհանրության մեջ քննելու լինենք Վահե Հայկի ստեղծագործության պատմահոգեբանական նախահիմքերը, պիտի փաստենք, որ ցեղասպանությունը և հայրենիքի կորուստն են նրա արձակի նախադրյալը: Մի կողմից Վ. Հայկը խոր դիտողականությամբ ներկայացնում է մնացորդաց սերնդի՝ ցեղասպանության և պատմական հայրենիքի կորուստի դրամատիկ ու ողբերգական վերապրումները, անհայրենիք ճակատագրի դատապարտվածությունը, օտար միջավայրում կեցության հիմքեր գտնելու

¹ *Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. 7, էջ 183:*

մաքառումները, մյուս կողմից՝ գեղարվեստական բարձր ոճով շարադրում ցեղասպանության և բռնագաղթի որոշակի անմիջական դրվագներ, պատմություններ, վկայություններ: Այս առումով առանձնանշելի են «Ապառիկները», «Երկիր դրախտավայր», «Կարմիր կակաչներ», «Կայծ մը... եւ անապատի Ռուբենը», «Վանքն ու վանահայրը», «Պատանի Կարօն» և ուրիշ պատմվածքներ:

Փոքր կտավի վրա համապատկերայնության մակարդակի հասած պատմվածք է «Ապառիկները»: Վահե Հայկը ոչ միայն էմոցիոնալ խտացումների, պատմողական-նկարագրական ճշմարիտ արվեստի, այլև մանրապատկերի ու համապատկերի անմիջական հարաբերակցության վարպետ է:

Ցեղասպանության զոհ դարձած հայ փաստաբանի կինը դերձակուհու կերպարանքով, վտանգելով իրեն, մտնում է կոտորածի օրերին հայուհիներին բռնի կնության առած թուրքերի բնակարաններ՝ կազմակերպելու նրանց փախուստը: Հայ կնոջ անվեհեր կերպարի կողքին գրողը մանրակերտում է թուրքի կերպարը՝ ցույց տալով նրա կենսաբանական հոգեբանությունը, հակամարդու հատկանիշները. «Սպաննել ծնո՛ղք, եղբայր, քո՛յր, ամուսին, զաւա՛կ, ազգակա՛ն եւ ազգակի՛ց, արեւին տակ այրել, մրրկել մնացողները, կաթիլ մը ջուրի համար արձակուած աղեկեզ պաղատանքն անգամ չլսել, անօթութեան կրակէ շապիկը հագցնել եւ ամենօրեայ խաչերով բեռնաւորել արդէն անկրելի տառապանքը, ապա, կանանոցներու գնտանը նետել հայուհիները եւ ըսել որ «ամուսնացան իրենց կամքով եւ հաճութեամբ»...»¹ («Ապառիկները»):

Վահե Հայկի պատմվածքներում թուրք կինը ավելի վտանգավոր է ու ռիսկալ, քան նույնիսկ տղամարդը: Փաշայի մայրը, որ հայուհու ու նրա փոքրիկ զավակի կյանքը դժոխք է դարձրել, հարձակվում է դերձակուհու վրա «ջնագայլի մը պէս», գիշատիչ մագիլներով կատաղի մոլուցքով փորձում խեղդել նրան: Ապա դերձակուհուն հանձնում են թուրքական դատարան, ուր չարչարանքների ենթարկվելուց հետո նա աքսորվում է մահվան անապատներ: Բայց դերձակուհին չի ընկրկում: Զինադադարից հետո նա վերադառնում է քաղաք ամերիկացիների օժանդակությամբ գտնում և ազատում դեռատի հայուհուն ու նրա զավակին:

Խոր տպավորություն է գործում «Կարմիր կակաչներ» պատմվածքը՝ սիրտ կեղեքելու չափ ողբերգական ու ճնշող: Այստեղ գրողը ևս պատկերում է թուրք կնոջ գիշատիչ տեսակը, ով իր մաղձն ու կատաղությունը թափում է երկու անպաշտպան հայ որբերի վրա: Երեխաների հայրը սպանվել էր մինչև տարագրությունը, մայրը՝ մահացել, կոտորածներից ու բռնագաղթից ի վեր նրանք ապրում են գյուղի թուրք աղայի տան ախոռում՝ անասունների կողքին, վարժված կյանքի դառնություններին. «Բոլորն ալ, մանաւանդ երբ Ադան

¹ Վ. Հայկ, Հայրենի ծխան, հ. Գ, էջ 155:

բացակայ ըլլար, կը չարչարէին, կը տանջէին հայու փոքրիկները եւ անոնց ուժէն վեր ծառայութիւններու կը լծէին՝ տեսակ մը անգութ եւ չարասիրտ հրճուանքով»¹ («Կարմիր կակաչներ»):

Երբ մեռնում է աղայի հիվանդ որդին, երեխաների տառապանքն ու զրկանքներն ավելի են խորանում: Թրքուհին գիշատչի մոլուցքով հարձակվում է անմեղ երեխաների վրա միայն այն բանի համար, որ նրանք ողջ են, իսկ իր երեխան՝ մեռած: Սարսափահար, մատնված քաղցի՝ երեխաները ապրում են դողդողալով, հիվանդ, գառանցանքների մեջ, առանց չնչին ուշադրության: Ի վերջո, թրքուհին աստրճանակով սպանում է հայ որբերին՝ այդպես հագեցնելով արյան ծարավը:

Վահե Հայկը անամոք ցավով է պատկերում ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով որբության դատապարտված հայ երեխաների ողբերգությունը: Ցնցող են այն դրվագները, որոնցում պատկերված են քույր և եղբոր հոգեկան սարսափներն ու տառապանքները, նույնիսկ նրանց մահվան պատկերն այնքան ճնշող չէ, որքան տառապալից կյանքի նկարագրությունը:

Հայ որբերի ճակատագրի թեման շարունակվում է նաև այլ պատմվածքներում: «Երկիր դրախտավայր» պատմվածքում փոքրիկ հերոսի Արսենի ճակատագրով գրողը ներկայացնում է արաբական անապատներում բարեսիրտ արաբների կողմից հայ երեխաներին իրենց պատահական խնամքի տակ վերցնելու և մահից փրկելու դրվագներից մեկը: Այլ դարձած գառնարած Արսենը ծանոթանում է իր նման որբ երկու հայ քույրերի հետ, ովքեր որբերի հավաքագրմամբ զբաղվող հայ գործիչներին հայտնում են նրա գտնվելու վայրը, և Արսենը ևս տեղափոխվում է հայկական որբանոց, ուր վերագտնում է իր կորուսյալ ինքնությունը: Ճակատագրական անակնկալները շարունակվում են, և տարիներ հետո, երբ Արսենը հայրենադարձվում է Խորհրդային Հայաստան, սիրահարվում է հայրենադարձ մի աղջկա, ով, պարզվում է, երկու քույրերից կրտսերն է: Վերածնված երկու հայ որբերի միավորումը խորհրդանշական իմաստ է ձեռք բերում. «Անոնց նահատակուած ծնողները, կը թուէր թէ հրեշտակներու թելերով սուրացեր եկեր էին հոն եւ կը փսփսային անպատում երջանկութեամբ, այսպէս, «-Փառք քեզ, Հայաստան, Երկիր դրախտավայր, հազար անգամ փառք քեզ... Հիմակ այլեւս մեր անթաղ ոսկորները կրնան հանգչիլ հեռաւոր ձորերու եւ անապատներու անանուն խորշերուն մէջ...»²:

Վահե Հայկի արձակին բնորոշ խոր ներագդեցությունը դրսևորվում է նաև ցեղասպանությունից և աքսորից հետո հայ որբերի հավաքագրման թեմայով գրված պատմվածքներում: Էմոցիոնալ ներգործությամբ առանձնանում է «Կայծ մը... եւ անապատի Ռուբէնը» պատմվածքը: Հայ մայրը իր երեքամյա տղայի հետ, տևական քաղցից ու ծարավից ուժասպառ, արնահոսող վերքով կտրում-

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Դ, էջ 129:

² **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Դ, էջ 79:

անցնում է անապատը՝ հասնելով արաբական գյուղ: Օրեր առաջ նա հազիվ էր փրկվել անապատի կոտորածից՝ գիշերը դիակների միջից դուրս սողոսկելով: Ջավակին կրծքին սեղմած՝ դաշունահար թևով նա հևասպառ փախել է անապատով և, հասնելով արաբաբնակ գյուղ, ուժահատ փլվել ճանապարհի եզրին:

Վահե Հայկի պատմվածքներում առկա է երախտագիտության զգացում այն արաբների հանդեպ, ովքեր մահից փրկել են հայ որբերի՝ խնամքի տակ վերցնելով նրանց: Հայ մայրը, գյուղ չհասած, նկատում է արաբ կանանց, ովքեր ուտելիք և ջուր են տալիս իրենց, և ավանդում հոգին: Հաջորդ օրը երեխայի լացի վրա արաբները գտնում են նրանց և երեխային գյուղ տանում: Արամը դառնում է խաշնարած Ալի՝ իր նման բազմաթիվ հայ որբերի պես, և այդպես հինգ-վեց տարի, մինչև որ Հալեպում և Բեյրութում գործող Հայ բարեգործական միության գործիչների կողմից հայտնաբերվում և տեղափոխվում է որբանոց: Ռուբեն Հեյրյանը շրջում է գյուղեգյուղ, վրանից վրան, հավաքագրում հայ որբերին, տեր կանգնում նրանց ճակատագրին՝ առատորեն վարձատրելով խնամարկու արաբներին: Հուզիչ է նկարագրված որբի ինքնության բացահայտման պահը. «- Կը յիշե՞ս որ օր մը մայրիկդ քեզ գրկելով մեծ բազմութեան մը հետ քալեց երկա՛ր, երկա՛ր ճամբաներ... անօթի, ծարաւ մնացիք, դուն լացիր...աղաչեցիր... Մայրիկդ քեզ գրկելով փախաւ հոս հասաք...»

Բոլորին պատմությունն ալ գրեթե այսպես էր....

- Դուն հա՛յ ես... անունդ Սարգի՛ս է, Արա՛մ է...

Ալին մեկէն փղձկեցաւ եւ բարձրաձայն լաց մը ձգեց...

Նահատակ մայրիկին անթեղած կայծը անոր մատաղ սրտին մեջ բռնկած էր եւ հրդեհի մը վերածուած:

Անապատի Ռուբենը շահած էր եւ Ալին՝ փրկուած»¹:

Ցեղասպանության և բռնագաղթի ժամանակ հարազատների կորուստի և վերագտնման թեմայով առանձնանում է նաև «Երկու մայր, մեկ գաւակ» պատմվածքը: Արամը տարիներ շարունակ մորը փնտրելու հետքերով Խորհրդային Հայաստանից գնում է Պոլիս և վերագտնում նրան ծերանոցում: Ցեղասպանության օրերի ուշագրավ պատմվածքներից են նաև «Վանքն ու վանահայրը», «Պատանի Կարոն»: Բռնագաղթից առաջ փոքրիկ Կարոն սպանում է իրենց տուն խուժած չեթենների, ովքեր փորձում էին բռնաբարել իր երկու փոքրիկ քույրերին, և մոր ու քույրերի հետ միանում աքսորի տարվող համազյուղացիներին: Հերոսական դիմադրության մի այլ պատմություն է «Վանքն ու վանահայրը»: Վանահոր հերոսական կեցվածքի և խոհեմության շնորհիվ փրկվում են վանքն ու հոգևորականները:

Վ. Հայկի «Հայրենի ծխանը» գեղարվեստական մեծ նվաճում է՝ ստեղծված ճշմարիտ ներշնչումով: Այդ անկեղծ ոգեշնչումն առկա է նաև Խորհրդային

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Ե, Բեյրութ, 1970, տպ. Տոնիկեան, էջ 35:

Հայաստան ուխտագնացությունների առթիվ գրված քնարական պատկերներում, ինչպես՝ «Նուիրական այցը», «Դո՛ւք, սրբութիւնք հայրենի»: Ինչի մասին էլ գրում է Վ. Հայկը, գրում է խոր հուզականությամբ, գեղարվեստական բարձր ճաշակով, մեղմ ու հանդարտ պատումով, սրտահույզ տրամադրությամբ: «Հայրենի ծխանը»՝ իր հինգ հատորներով, հիրավի, հայ արձակի անմոռանալի արժեքներից է:

Գրականություն

1. **Հայկ Վ.**, Հայրենի ծխան, հ. Ա., Ֆրեզնո, 1930:
2. **Հայկ Վ.**, Հայրենի ծխան, հ. Գ., Բոստոն, 1947:
3. **Հայկ Վ.**, Հայրենի ծխան, հ. Դ., Նյու Յորք, 1954:
4. **Հայկ Վ.**, Հայրենի ծխան, հ. Ե, Բեյրութ, 1970:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82-9

Հայ գրականություն

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.

E-mail: nare-luys@mail.ru

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԵՐԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՌԿԱ ՎԵՐՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱՐՈՏԻ ԱՐԶԱԿՈՒՄ. ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ, ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿՅԱՆ

Հորվածում քննվում են կորուսյալ իրականության երազային և առկա վերընկալումները Շավարշ Նարդունու և Բենիամին Նուրիկյանի ստեղծագործություններում: Նարդունու ստեղծագործական աշխարհայացքի ամենաբնորոշ հատկությունը երազն է, հոգեբանական որոնումը, տարագրության մեջ հայրենականի հայտնաբերման հոգևոր ձգտումը, ինչը և դառնում է աքսորը իմաստավորելու ներքին միտում: Վերհուշի մեջ առարկայացող հեռավոր ծննդավայրը Նարդունու գեղարվեստական աշխարհում կյանքի կորուսյալ դրախտն է, առօրյա ընթացքն ու հոգեբանական անհանգրվանությունը լցնող հոգևոր եզերքը: Երականության մեջ կորուսյալ հեքիաթի վերագտնումը՝ որպես հոգեբանական անվերջ որոնում, դառնում է Նարդունու կարոտի արձակի ներքին շարժիչ ուժը:

Հետվում թողլքված արևմտահայ գյուղի ոգեղեն պատկերը Բենիամին Նուրիկյանը վերստեղծեց իրապաշտական գեղագիտության սկզբունքներով՝ շարունակելով արևմտահայ ռեալիստական փոքր արձակի ավանդույթները, միաժամանակ պահպանելով իր ստեղծագործական ինքնատիպությունը, տեսածի ու զգացածի անհատականությունը: Նուրիկյանի արձակը սփյուռքահայ կարոտի գրականությունը համալրում է մի նոր գեղագիտությամբ, որ գալիս է ի իրականությունից՝ այդ իրականության մեջ հայտնաբերելով բանաստեղծականությունը և բանաստեղծականության մեջ չկորցնելով իրականությունը:

Բանայի բառեր՝ կորուսյալ ծննդավայր, տարագրություն, բանաստեղծական արձակ, խոսքի զգացմունքային խտություն,

վերնուշ, հոգեբանական որոնում, գաղափարապաշտություն, իրապաշտություն:

Н. Оганесян

**ПРИЗРАЧНОЕ И РЕАЛЬНОЕ ПЕРЕВОСПРИЯТИЕ
ПОТЕРЯННОЙ РОДИНЫ В ЗАПАДНОАРМЯНСКОЙ
НОСТАЛЬГИЧЕСКОЙ ПРОЗЕ: ШАВАРШ НАРДУНИ,
БЕНИАМИН НУРИКЯН**

В статье рассматриваются призрачность и настоящее в восприятии потерянной реальности в произведениях Шаварша Нардуня и Бениамина Нурикяна. Наиболее характерной чертой творческого мировоззрения Нардуня является мечта, психологический поиск, духовное стремление к выявлению патриотического в хронике, что и становится внутренней тенденцией осмысления изгнания. Отдаленный родной дом, возникший в памяти – потерянный рай жизни в художественном мире Нардуня, заполняющий повседневную рутину и психологические волнения.

Возвращение потерянной сказки в реальность как бесконечный психологический поиск становится внутренней движущей силой ностальгической прозы Нардуня.

Оставленный вдалеке духовный образ западноармянского села Бениамин Нурикян воссоздал по принципам реалистической эстетики, продолжая традиции маленькой западноармянской реалистичной прозы, сохраняя при этом свою творческую оригинальность, индивидуальность увиденного и ощущаемого. Проза Нурикяна пополняет литературу ностальгии армян диаспоры новой эстетикой, исходящей из ее реальности, обнаруживая поэтичность в этой реальности и не теряя реальность в поэтике.

Ключевые слова: *потерянная родина, хроника, поэтическая проза, эмоциональная насыщенность речи, воспоминания, психологический поиск, идеализм, реализм.*

N. Hovhannisyan

**THE DREAM AND THE PRESENT IN THE PERCEPTION OF
THE LOSS OF FAMILY HOME IN PROSE OF LONGING OF
THE ARMENIAN DIASPORA. SHAVARSH NARDUNI,
BENJAMIN NURIKYAN**

The article deals with the dream and the present in the re-perception of the lost reality in the works of Shavarsh Narduni and Benjamin Nurikyan. The most characteristic feature of Narduni's creative worldview is a dream, a psychological search, a spiritual desire to discover the patriotic in deportation, which becomes an internal tendency to comprehend exile. The remote home that came to mind is the lost paradise of life in the artistic world of Narduni, a caring land that fills the daily routine and psychological unrest. The return of the lost fairy tale to reality as an endless

psychological search becomes the internal driving force behind Narduni's longing prose.

BeniaminNurikyan recreated the spiritual image of the Western Armenian village left in the distance according to the principles of realistic aesthetics, continuing the traditions of small Western Armenian realistic prose, while maintaining his creative originality, the individuality of what he saw and felt. Nurikyan's prose complements the literature of the longing of the Armenians of the Diaspora with a new aesthetics that comes from its reality, revealing poetry in this reality and not losing reality in poetics.

Key words: *lost homeland, chronicle, poetic prose, emotional richness of speech, memories, psychological search, idealism, realism.*

Կորուսյալ իրականության երազային վերընկալումը Շավարշ Նարդունու արձակում: Արձակի բանաստեղծական որակ, խոսքի զգացմունքային խտությունն ու ոգեշունչ ընթացք. ահա այն հիմնական հատկությունները, որ բնորոշում են Շավարշ Նարդունու ստեղծագործության ընդհանուր դիմագիծը: Նարդունու շնորհիվ հայ գրականության մեջ արձակ բանաստեղծությունն ու հեքիաթը՝ որպես կորուսյալ ծննդավայրի երազային վերընկալման զուգահարմար ժանրեր, գեղարվեստական նոր հատկանիշներ են ձեռք բերում՝ ազգային ու եվրոպական գեղագիտության համադրությամբ հասնելով ինքնատիպ որակի:

Նարդունու ստեղծագործական աշխարհայացքի ամենաբնորոշ հատկությունը երազն է, հոգեբանական որոնումը, տարագրության մեջ հայրենականի հայտնաբերման հոգևոր ձգտումը, ինչը և դառնում է աքսորը իմաստավորելու ներքին միտում. «Նարդունի եղաւ առաջիններէն, որ Սփիւռքն ու Սփիւռքեան կեցութիւնը ընկալեց իբրեւ հայ մարդու մնայուն ԱՔՍՈՐՆ ու ԱՔՍՈՐԱՎԱՅՐԸ, նկատում է սփյուռքահայ գրագետը: -Ապրեցաւ այն կրկնակ գիտակցութեամբ, որ՝

- մէկ կողմէ խուսափում չունի, այլեւ ճակատագրուած է ապրելու Սփիւռքի մէջ, համարկուելու Սփիւռքեան միջավայրին հետ եւ Սփիւռքահա յ ըլլալու,

- իսկ միւս կողմէ՝ աշխարհի մեծ ու փոքր վայելքներուն, ձանձրոյթներուն, ցաւերուն ու հեշտանքներուն մէջ տեսնելու եւ միշտ փնտոելու հայրենին ու հայեցին՝ իբրեւ ծննդավայր, յիշողութիւն եւ, մանաւա՛նդ, ժառանգութիւն»¹:

Սփյուռքահայության ճակատագրի և հայրենիքի կորստի տագնապահարույց ու ողբերգական հարցադրումները Նարդունին բարձրաձայնեց ոչ միայն՝ գեղարվեստական արձակով, այլև հրապարակագրությամբ՝ բանախոսություններով հանդես գալով նաև սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում. «Օտարները երբևիցէ պիտի կարենա՞ն հասկնալ թէ ի՛նչ կը

¹ «Ազատ օր», **Նարդունի Շ.**, *Սփիւռք կոչուած ԱՔՍՈՐԻՆ եւ Սփիւռքահայու ՏԱԳՆԱՊԻՆ սրտաբուխ «բաներ»-ն ու «մեղեղիներ»-ը*, 2018, 13 փետրվար:

նշանակել գրագետ դառնալ և իր ժողովուրդին ներկայութեան կարոտն ունենալ: Պատմութեան գրքերը կրնան ցոյց տալ նման կացութիւն մը իբրեւ նախընթաց, ուր կ'զտնուի հայ գրագետը որ իր ժողովուրդը կը փնտռէ»¹, - ասում է Նարդունին սփյուռքահայության ինքնության պահպանման, կորուսյալ հայրենիքի և ցեղասպանության պահանջատիրության, հայության հավաքական ուժի գաղափարանշման հստակ շեշտադրումներ անելով:

Երազը, որ Նարդունու գեղարվեստական արձակի ներքին առանցքն է, հրապարակագրության մեջ փոխակերպվում է պահանջատիրության: «Մեր հողերը, մեր հողերը» հրապարակախոսական աշխատության մեջ Նարդունին հանդես է գալիս ամբողջական Հայաստանի պահանջատիրությամբ՝ ահագանգելով առկա սպառնալիքները, որոնք վտանգում են սփյուռքահայության ինքնությունը. «Այլապէս, սիրելի հայրենակիցներ, չի դիմանար Հայութիւնը, չի մնար արտասահմանը ընդ երկար: Ես ման եկայ ամբողջ Հայկական Արտասահմանի մեջ, Արեւելքէն Արեւմուտք, ու տեսայ թէ Հայութեան Արեւը մայր կը մտնէր քանի կ'ընթանայի դէպի Արեւմուտք: Եւ այսօր կրնամ ձեզի ասել, թէ աւա՛ղ, Արեւմուտքը Հայութեան արեւմուտքն է»²: Ռուս-թուրքական համագործակցության արդյունքում ունեցած մեր ազգային կորուստների հարցադրումներով Նարդունին հանգում է իր գլխավոր ասելիքին. «Բայց անօրինակ ողբերգութենէ մը ետք՝ մոռնալ մեր պատմութեան ձայնը եւ հրճուիլ այն նոր պայմաններով, զորս կը վայելէ արեւելեան հայկական այս անկիւնը, այսօրուան Հայաստանը, անպատիւ ուրացում մըն է, - **արեւմտահայութեան բնաջնջումը կամ արեւմտեան Հայաստանի պարպումը չի կրնար վարձատրուիլ արեւելահայութեան կազմած պետութեամբ**»³ (ընդգծումը Շ. Ն.):

Նարդունու ազգային կյանքի հրապարակախոսական բուռն դատողությունները գեղարվեստական արձակում դառնում են արքայական հոգու նրբաթախիժ ապրումներ, երբեմն էլ՝ զգացմունքային բռնկումներ: Վերհուշի մեջ առարկայացող հեռավոր հայրենիքը Նարդունու գեղարվեստական աշխարհում կյանքի կորուսյալ դրախտն է, առօրյա ընթացքն ու հոգեբանական անհանգրվանությունը լցնող հոգևոր եզերքը: Իրականության մեջ կորուսյալ հեքիաթի վերագտնումը՝ որպէս հոգեբանական անվերջ որոնում, դառնում է Նարդունու կարոտի արձակի ներքին շարժիչ ուժը: Երազը՝ հոգեբանական բոլոր դրսևորումներով, գեղարվեստական տարածություն է ձեռք բերում «Մեղեդիներ, ր, մեղեդիներ» (1933), «Բանէ՛ր, բանէ՛ր, ի՛նչ բաներ» (1942) գրքերում: Կորուսյալ ծննդավայրը այդ գրքերում միաժամանակ և՛ խորհրդածության խորան է, և՛ հոգևոր ներշնչարան ու աղոթարան:

¹ Նարդունի Շ., *Գրագետը, որ իր ժողովուրդը փնտռելու էլած է*, Թեհրան, 1954, «Այլք» տպարան, էջ 22:

² Նարդունի Շ., *Մեր հողերը, մեր հողերը*, Բեյրութ, 1967, «Համազգային» տպարան, էջ 15:

³ Նույն տեղում, էջ 17:

Հոգեկան բռնկման բանաստեղծական պատկերներ են «Հաւ մը կ'երգէր», «Օոցիկը-բաց», «Հարսին աղբիւրը» ստեղծագործությունները, որոնց մեջ անդրադարձվում է կորուսյալ ծննդավայրի՝ Արմաշի երազային պատկերը. «Ահա, մեր լեռներն են, պարուրուած մշուշի մը մէջ, որ պատրանքը կուտայ աղջկան մը մերկութեան: Ահա, մեր ջուրերն են, որ ջահերու նման կը փշուրին բլուրներն ի վար....

Մեր տունէ՛րը, ճերմակ ծեփով ու կարմիր տանիքներով, վարդաշատ փեղկերով ու առատողկույզ սարփինայով, մեր տունէ՛րը, մանանայի պէս սպիտակ ծուխով եւ երկինքի պէս կանանչ գոտիով....

Ո՞վ իսկեց մեզմէ այս հրաշալի կեանքը»¹ («Հաւ մը կ'երգէր»):

Նարդունու արձակ բանաստեղծություններն ու հեքիաթները հատկորոշվում են նաև նրանով, որ նրանց մեջ առօրյա երևույթը դառնում է կորուսյալ ծննդավայրի կամ հայրենիքի վերհուշի ու ոգեկոչման ազդակ: Առօրեականի ու հոգեկանի, աքսորի և ծննդավայրի գուգորդությունները՝ արտաքին նմանության և ներքին հակադրության ընկալումներով, գեղարվեստական ուրույն պատկերների են վերածվում «Վարունգով խնջոյք», «Հաւ մը կ'երգէր», «Ես ի՛նչպէս կու՛տեմ դեղձը», «Կուտը ձեռքս մնաց» և այլ ստեղծագործություններում: Տարագրության մեջ հավի ձայնը, վարունգը կամ դեղձը դառնում են հոգեկան բռնկման առիթ՝ արտաժայթելով աքսորական հոգու խորքում կուտակված կարոտն ու ցավը. «Չկա յ գիւղս, մինչ հոգույս մէջ կը վառի կարօտը, որ զիս կը տանի հայրենիքին նոյնիսկ ստամոքսի ճամբով»² («Վարունգով խնջոյք»): «Ո՛ տայր ինձ զծուխն ծխանի» ստեղծագործության մեջ, վերհիշելով աքսորի ճանապարհը, Նարդունին գրում է, որ «Անօթութիւնը եւ թուրքին սարսափը չէին կրնար այնքան խորտակել զիս, որքան կարօտը տունին»³:

Կոտորածի և աքսորի նարդունիական վերապրումներում դիմադարձ են վերագտնումի ու հայրենադարձի տարակույսն ու հավատամքը. «-Մեռա՛ւ, մեռա՛ւ, իմ ամբողջ գիւղս մեռաւ,- կրկին հիշում է Նարդունին: -Իմ գիւղս ալ ձեզի պէս, ամէն տարի ապրիլ ամսուն, առաւօտեան երկինքին պէս կը փրփրէր ու կը ծաղկէր: Գետերու պէս լերան կանանչութիւնը կը թափէր մեր տուներուն վրայ: Ճամբաները Աստուածամօր ոսկեգօտիին պէս կը փայլէին գիւղին մէջքին: Բայց ապրիլեան այսպէս աղուոր առաւօտ մը բարբարոսը եկաւ, քանդեց գիւղ ու տուն, սպանեց հարսն ու մանուկը, երիտասարդն ու ծերունին...»⁴ («Թագաւորը մեռաւ, կեցցէ թագաւորը»): Ու հեքիաթի նշենին մխիթարում է սգավոր տղային՝ ասելով, որ «կուգայ գարունը, եւ վերստին կծաղկի գիւղը... Գնա ջրվիժելու ժողովուրդիդ ցանկութիւնները վրիժառու»⁵:

¹ Նարդունի Շ., Բաներ՛, բանե՛ր, ի՛նչ բաներ, Փարիզ, 1942, գրատուն Պարսամեան, էջ 61:

² Նույն տեղում, էջ 25:

³ Նույն տեղում, էջ 187:

⁴ Նույն տեղում, էջ 52:

⁵ Նույն տեղում:

Նմանօրինակ քնարական պատկերներից են «Գիւղիս սուգը», «Երագիս մեջ տեսայ Հայաստանը» և այլն: Օննդավայրի կորստի ցավը, հայրենագրկվածի կարոտախտն ու վերադարձի երագը փոխյրացնում են իրար Նարդունու գրվածքներում. «Գիւղիս կ'երթամ... Գիւղէն դուրս ելլող ճամբաներուն բերանը, իմ տունս ինձի կը սպասէ»¹ («Գիւղիս սուգը»): Որոշ ստեղծագործություններում երագին փոխյրացնում է երդումը, և «Հայաստան, ամէն բանէ վեր» գաղափարը Նարդունու ստեղծագործություններում ձեռք է բերում հանգանակային արժեկշիռ: «Աստուածաշնչական ահեղ երդումով» գրողը մեկ անգամ չէ, որ ուխտ է անում. «-Թող լեզուս քիմքիս կալի ու չդառնայ բերնիս մէջ՝ եթէ ես մոռնամ քեզ, Հայաստան»² («Երագիս մէջ տեսայ Հայաստանը...»): Աստվածաշնչյան այդ սաղմուսը նա բնաբան կարգեց նաև «Գիւղիս սուգը» արձակ բանաստեղծությունը, երդումի և ուխտի խոսքը հնչում է այլ գործերում ևս:

Այսպիսով՝ կարոտն ու ցավը, երագն ու ուխտը դառնում են Նարդունու գեղարվեստական արձակի հիմնական շաղախը, որի շուրջ կառուցվում է խոսքի էմոցիոնալ ընթացքը:

Կորուսյալ իրականության առկա վերընկալումը Բենիամին Նուրիկյանի արձակում: Հեռվում թողլոված արևմտահայ գյուղի ոգեղեն պատկերը Բենիամին Նուրիկյանը վերստեղծեց իրապաշտական գեղագիտության սկզբունքներով՝ շարունակելով արևմտահայ ռեալիստական փոքր արձակի ավանդույթները, միաժամանակ պահպանելով իր ստեղծագործական ինքնատիպությունը, տեսածի ու զգացածի անհատականությունը: «Այգեկույթ» (1937), «Պանդուխտ հոգիներ» (1958), «Կարոտ հայրենի» (1978) գրքերում Նուրիկյանը նկարագրական արվեստով վերակենդանացնում է կորուսյալ ծննդավայրը՝ Խարբերդի Հյուսեյնիկ գյուղը՝ իրական պատկերներով և իրական հերոսներով ներկայացնելով այն կյանքի հարականոն ու բազմաշարժ ընթացքի մեջ:

Նուրիկյանի արձակը սփյուռքահայ կարոտի գրականությունը համալրում էր մի նոր գեղագիտությամբ, որ գալիս էր իր իրականությունից՝ այդ իրականության մեջ հայտնաբերելով բանաստեղծականությունը և բանաստեղծականության մեջ չկորցնելով իրականությունը: Ահա գյուղանկարի դրվագներից մեկը, որով հատկորոշվում է Նուրիկյանի արվեստը. «Գիշեր է դեռ. ամառ գիշեր: Օդրիթները կ'երգեն, գորտերը կը կոկոսն մէկ բերնով, մէկ եղանակով: Գիշերահաւը կուլայ մերթ ընդ մերթ: Եւ գիւղը իր հողէ տանիքներուն վրայ՝ լուսունկային պաղած աչքին տակ՝ անուշ-անուշ կը քնանայ:

Դէմ-լուսուն՝ աքաղաղին կանչն է որ սուր դանակի մը պէս գիշերին կողը կը պատռէ յանկարծ: Մութը կամաց-կամաց իր սեւ թելերը կը վերցնէ գետնին երեսէն: Օդրիթները կը լռեն մեքենաբար, գորտերը կը պապանձին: Գիշերեհաւը կը կտրէ իր ապուշ լացը եւ ծառի մը մութ խոռոչին մէջ կը ծուարի, կը քնանայ:

¹ *Նարդունի Շ., Մեղեդիներ, մեղեդիներ, Փարիզ, 1933, էջ 70:*

² *Նարդունի Շ., Բաներ, բաներ, ինչ բաներ, էջ 96:*

Աքլորը կը կանչէ նորէն, այս անգամ աւելի ուժով, աւելի երկար ու գալարուն ձայնով մը:

Ի՞նչ հրաշք է արդեօք, որ արքորին լեզուն հեռաւոր արեւին հետ կը կապէ:

- Կուգա՛մ, կը փսփսայ արեգակը:
 - Հրամանեցէք, կը պատասխանէ արքադարը:
 - Բարի լոյս, բարի Քրիստոս, կը մրմնջեն գեղջուկ բերանները¹ («Գիւղի ձայներ»):

Գյուղը Նուրիկյանի արձակում ոչ թէ անհետացած եզերք է՝ առարկայական ու հոգևոր իմաստով, այլ ապրող և կյանքի շարժման մեջ կերպավորվող ինքնակա գոյություն: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ գեղարվեստական ժամանակը Նուրիկյանի գյուղանկարային արձակում ոչ միայն հիշողության խորքերից բացվող անցյալն է, այլև շարունակական ներկան: Նաև այստեղից այն անմիջականությունն ու կենդանությունը, շարադրանքի անպաճույճ եղանակը, որոնցով բնորոշվում է Նուրիկյանի արվեստը: Բնորոշ մի պատկեր է «Թուփո դալար» պատմվածքը. «Խաչ է. այգեկույթին հին տօնը: Գեղն ամբողջ, մեծով-պզտիկով, փեշերը գօտին զարկած՝ այգեստան կը վազէ: Այգիները, ուր ամառն ամբողջ պահապանին մենաւոր կանչը արձագանգեր է ազատ, նոր կեանքով կը խայտան հիմա: Հոն՝ բաց արեւին տակ՝ քրտինքոտ աշխատանքն ու սրտաբուխ վայելքը թեւ թեւի տուած կը պարեն...»

Հոս քանի մը տղաք նապաստակ մը կը հալածեն: Անասունը, սարսափէն մտրակուած, ականջները ցից՝ եւ անհաւասար սրունքներուն բոլոր ուժն ու ճկունութիւնը լարած՝ բլուրն ի վեր կը սուրայ ճինի պէս, կամ ձորի մը յատակը կը գլտորուի շուարած²:

Մարդու և բնաշխարհի անխաթար համակեցություն, գյուղական կյանքի արտաքին խճանկարներ, մարդկային տեղական հոգեբանության մանրապատկերներ՝ առանց խորքային բացահայտումների, կտրուկ ու սրընթաց եղանակով: Նուրիկյանի արձակը գրեթե չունի այուժեի զարգացման ընթացք, պատմվածքը կամ մանրապատումը առավելապես միտված են ստեղծելու գյուղի և գյուղաշխարհիկ կյանքի խոսուն պատկերը, այդտեղ գրեթե չկան նաև կերպարներ, կան գերազանցապես հերոսներ, ովքեր ամբողջացնում են գյուղի և գյուղացու ազգային հոգեբանության դիմապատկերը: Պարզ ու բնաբուխ, բայց միշտ պատկերավոր ու գունագեղ ոճով՝ Նուրիկյանը հայրենի գյուղը կենդանագրում է պատանեկան տպավորությունների հետադարձ ու հասուն վերընկալումներով՝ բոլոր դեպքերում պահպանելով պատկերի կամ երևույթի իսկատիպությունը: Ահավասիկ մի պատկեր «Հայրենի կաղանդ» պատմվածքից. «Կաղանդին օրը գյուղը անպատճառ նոր հարսի պես ձերմակ կը հագներ, ճեփ-ճերմակ: Հարթ ու ցածկեկ տանիքները մինչև իրենց պոկունքը ձյունի թանձր,

¹ *Նուրիկյան Բ., Այգեկույթ, Նյու Յորք, 1937, էջ 84:*

² *Նույն տեղում, էջ 88:*

միակտուր վերմակներ կը քաշեին... Ծառերն ու թուփերը ձյունով ու եղյամով կը ծածկվեին, նոր ձևեր կառնեին ու կաղվորանային, կը մեծնային... Իրիկունը ամեն տուն կաղանդի ճոխ սեղան մը կը շտկեր տաքուկ քուրսիին կամ թոնրին վրա, որուն շուրջ կը բազմեին բոլոր տնեցիք: Տանտիկինը, միշտ ոտքի վրա, գլուխը քերելու ատեն իսկ ունեցած չէր էն օրը: Տուն-տեղ ավլեր, շտկեր էր: Բայց կաղանդի սեղանին պատրաստությունը իր մեծագույն հոգն եղած էր: Հոն, սեղանին վրա էին մառանին բոլոր բարիքները, գոր աշունը ի՛նչ խնամքով տեղավորեր էր հողե պուտուկներու և մեծփոր բողոներու մեջ»¹:

Գյուղանկարներ ու բնապատկերներ, հայրենի տան հարկի ներքո հասակ առնող մանկություն և մանկան աշխարհընկալման պայծառ աչք, ազգային տոներ ու ավանդույթներ, գյուղական կենցաղ, կալ ու աշխատանք, լեռներ ու աղբյուրներ, դաշտ ու արտ, դպրոց և եկեղեցի, գյուղական շուկա. ահա մանրամասների մեջ ամբողջացող գյուղի համապատկերը, և ինքը՝ գրողը՝ որպես այդ ամենի մասնիկ: Ապրող գյուղի գեղարվեստական համապատկերը միայն մի քանի տեղ ձեռքովում է կոտորածի և կորուստի ապրումներով («Ու՛ր զարնեմ բահս...», «Ծակ դույլը», «Ոստ մը միայն», «Աղբյուրները»): «- Բահդ ժի՛ր զարկ, տղաս,- կըսե հայրս, եղանակով մը, որ ցավոտ է և բամբակին կակդությունն ունի: - Բահդ ժի՛ր զարկ: Մեծ հայրդ մինակ չէ այս հողին տակ: Կյուլխասենց Պետրոս աղբոր հետ մեկտեղ թաղեցինք զինք, 95-ի դեպքին...»

Հայրս՝ մեկ կողմ դարձած՝ իր աչքերուն թացությունը կը շփե դողացող մատվրներով, մինչ ես ճակտիս քրտինքին դեռ խոնավ հետքերը կը սրբեմ զպունիս թևովը: Ու գետնին խոտը սեփ-սև կերևա աչքերուս....

Մեռելներուն նոր օրն է այսօր: Արևին հետ դուրս կը թռիմ անծանոթ գերեզմաննոցի մը կարտտեն մտրակված: Ըսե՛, հա՛յր, բահս ու՛ր զարնեմ այս անգամ, և ու՛ր տնկեմ թուփի մատղաշ շթիլ մը, որուն շուքը քու և մորս մասունքին վրա իյնա»²:

Ահավասիկ երկու պատկեր ևս՝ անհետացած գյուղի հեռավոր հիշատակների կարտտի ու ցավի առթումով. «Կըսեն ինձի՝ թե մեր թաղին աղբյուրը, զինք հոգացող ձեռքերեն զրկված, իր վերջին արցունքը լացեր ու ցամքեր է ճարահատ: Բայց Տևե տամին իր գույգ աղբյուրներով կը հոսի դեռ, գյուղացիին համբերանքին պես անսպառ...»³ («Աղբյուրները») կամ «Կը պատմեն ինձի թե հայրենի տանս ավերակներուն վրա մեր հին որթատունկն է, որ, միս-մինակ ու գլխահակ, իր մեկնող սիրելիներուն անվերադարձ բաժանումը կը սգա ու փախչող հովերուն իր ցավագին զրկանքն ու կարտտները կը փսփսա հիմա...

¹ *Նուրիկյան Բ.*, Պանդուխտ հոգիներ, Ե., Հայպետհրատ, 1958, էջ 89, 92:

² *Նույն տեղում*, էջ 70, 71:

³ *Նույն տեղում*, էջ 97:

Ու ինձի, տարագրի տխուր մենությանս մեջ, տղայությանս կորսված օրերեն չոր ոստ մը միայն կա ու կը մնա որպէս իրական, անգին հիշատակ»¹ («Ոստ մը միայն»):

Թախիժն ու կարոտը՝ որպէս ներքին շարժիչ ուժ, ինչպէս նկատեցինք, Նուրիկյանին տանում են անհետացած գյուղը ոչ թէ ռոմանտիկական, այլ ռեալիստական արվեստով կենդանագրելու ճանապարհով: Առաջին իսկ ստեղծագործություններից սկսած՝ ծննդավայրը բացվում ու աստիճանաբար ամբողջանում է պատմվածքի, նորավեպի և մանրապատումի ժանրերով, գյուղի և գյուղացու կյանքի մանրապատկերներով: Գյուղը՝ իր ներքին կյանքով, մի կողմից, տարագրության միջավայրը՝ մյուս կողմից, դառնում են Նուրիկյանի գրական աշխարհի դիմադարձ ասփերը, որոնց միջև արևմտահայ մարդն է՝ իր հոգեաշխարհով ու կենսակերպով: Պանդխտության դրամատիզմի սրտահույզ պատկերներ են «Հեղ մըն ալ կարդա», «Մարդիկ, հասարակ մարդիկ», «Կաթիլ մը յուղ Ս. Մեսրոպէն», «Հաճի մայրիկ» պատմվածքները, որոնց մեջ հոգեբանական ներթափանցումը և ապրումը գերազանցում են նկարագրական պատկերին:

Ինչի մասին էլ գրում է Նուրիկյանը, գրում է պարզ ու թեթև, սեղմ ու դիպուկ ոճով, գունեղ նկարագրականությամբ: Ժամանակային ու տարածական հեռավորությունը անհետացած աշխարհի տպավորություններից ջնջում է առօրեական գույներն ու գծերը, և ամեն ինչ պատկերանում է անսովոր պայծառությամբ. «Նուրիկեան ինքնուրոյն է, - նկատում է սփյուռքահայ քննադատ Հ. Գոյումջյանը, - անոյշ ոճով մը որ արեւին տակ հասունցած պտուղներու համն ունի: Պարզ ըլլալու առաքինութիւնը միակ շնորհը չէ իր լեզուին: Հակառակ իր համեստ ու անպաճոյճ տարազին իր գրականութիւնը լեցուն է ըզմայլելի խորհուրդներով ու գիտերով: Նուրիկեան գիտէ իր ընթերցողները առաջնորդել անկոխ ճամբաներէ ու զանոնք դնել անակնկալներու առջեւ»²:

Նուրիկյանի գեղարվեստական աշխարհը՝ կարոտի և հիշողության մեջ վերապրող ծննդավայրի կերպավորման արվեստով ու բնաշխարհիկ կենսահայացքով, հարազատության եզրեր ունի Համաստեղի և Բակունցի ստեղծագործական աշխարհայացքի ու գեղագիտության հետ: Սակայն պետք է նկատել, որ Նուրիկյանի արձակը պատերակերտման և աշխարհընկալման առումով չի հասնում այն նվաճումներին, որոնք առկա են Բակունցի և Համաստեղի արվեստում: Ահա բնորոշ մի պատկեր՝ համաստեղյան ու բակունցյան հարազատության եզրերով. «Գարուն է. իմ գյուղիս գարունը. չոր քարերն անգամ կանանչ խոտ մը կը կրեն կուրծքերնուն վրա: Բնության հետ գյուղն ալ կարթըննա, աչքերը կը ճմրթկէ ու նոր սրտով իր նոր աշխատանքին կը լծվի: Դաշտ ու այգի բաց գիրկով կողջունեն գյուղացին և իրենց լեցուն ծոցին բերքն

¹ Նոյն տեղում, էջ 169:

² Գոյումջյան Հ., Բենիամին Նուրիկեան և իւր գրականութիւնը, «Արև», Կահիրե, 1949, 20 օգոստոսի, թ. 9327:

ու բարիքը կը շռայլեն անոր: Ի՞նչ արտաբուխ նվիրում է այս, որ Նոյի օրերեն ասդին հողն ու մարդը իրարու կը կապե, կը նույնացնե»¹ («Գյուղանկար»):

Ահավասիկ մի պատկեր ևս, երբ պատկերային համեմատության հիմքը դարձյալ մարդու և բնաշխարհի միասնական գոյության աշխարհըմբռնումն է. «Գետնեն թեթև գոլորշի մը կը բարձրանար. հողն էր որ կարտաշնչեր կարծես քնեն նոր արթնցող հսկա գոմեշի մը պես»² («Եթե կաթողիկոս ըլլայի»):

Գեղարվեստական ընդհանրություններ կարելի է նկատել նաև Նուրիկյանի, Թլկատինցու և Ռուբեն Զարդարյանի ստեղծագործությունների միջև: Առաջին պարագայում դա անշպար բնականությունն է, խորհրդածական և իմաստասիրական խորասուզումների ձգտման բացակայությունը, խոսուն նկարագրականությունը, երկրորդ պարագայում՝ ոճի հղկման բծախնդրությունը: Բոլոր դեպքերում, սակայն, Նուրիկյանը պահպանում է ստեղծագործողի իր անկախությունն ու ինքնատիպությունը:

Նուրիկյանի կարոտի արձակում ևս, ինչպես Նարդունու մոտ, կա կորուսյալ ծննդավայրը վերագտնելու ճանապարհի հույսը: Հույսը դառնում է ճանապարհի վերջնակետ՝ անկախ կորուսյալ իրականության երազային և առկա վերընկալումներից. «- Արդյոք օր մը պիտի տեսնե՞սք Հայաստանը, իրական Հայաստանը:

- Պատերազմեն հետո, երբ դուռները բացվին մեր երկրին, ու մեր հողերը լայննան... Պատերազմեն հետո»³ («Պանդուխտ հոգիներ»):

Գրականություն

1. «Ազատ օր», 2018, 13 փետրվար:
2. **Նարդունի Շ.**, Գրագետը, որ իր ժողովուրդը փնտռելու ելած է, Թեհրան, 1954, «Ալիք» տպարան:
3. **Նարդունի Շ.**, Մեր հողերը, մեր հողերը, Բեյրութ, 1967, «Համազգային» տպարան:
4. **Նարդունի Շ.**, Բանե՛ր, բանե՛ր, ի՛նչ բաներ, Փարիզ, 1942, գրատուն Պարսամեան:
5. **Նարդունի Շ.**, Մեղեդիներ, մեղեդիներ, Փարիզ, 1933:
6. **Նուրիկյան Բ.**, Այգեկութք, Նյու Յորք, 1937:
7. **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, Ե., 1958, Հայպետհրատ:
8. «Արև», Կահիրե, 1949, 20 օգոստոսի, թ. 9327:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, էջ 76 :

² *Նույն տեղում, էջ 106:*

³ *Նույն տեղում, էջ 212:*

ՀՏԴ 82.09

Գրականություն

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուրնալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ. «ԲԱՌԱՍԽԱԼ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մտամբուլահայ ժամանակակից գրող Ռոպեր Հատտեճյանը իր ստեղծագործությամբ Մփյուռքի գրականության մեջ հիմնավորեց հոգեվերլուծական փիլիսոփայական մեթոդը, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման, ինչպես նաև ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը: Միաժամանակ նրա ուղենշած գոյութենապաշտական մտածողության սնուցող զարկերակը անսահման հույսն է, ինքնաբացահայտման և ինքնահաստատման հասնելու ճանապարհին դրսևորած հզոր կամքն ու ձգտումը:

Նրա առաջին «Բառասխալ» խորագրյալ պատմվածքների ժողովածուն, որին անդրադարձել ենք հողվածում, կրում է հեղինակի ստեղծագործությունը անհատականացնող ազդեցիկ շտրիխը՝ մտաերևակայական կերպավորումը, մտածողության կարևորումը:

Բառասխալը՝ չհասկացված լինելը կամ սխալ հասկացվելը, ըստ հեղինակի, հաճախ տեղիք է տալիս մարդկանց միջև հարաբերությունների սրման կամ խզման: Այսինքն՝ կյանքում ամեն երևույթ կամ խոսք ունի դիտարկման և հասկացվածության խիստ ենթակայական մոտեցում: Այս ընդհանրությունից էլ բխում է պատմվածքները միավորող մյուս առանցքը՝ նրանց հոգեբանական բնույթը: Մարդու, նրա հոգեկերտվածքի և հասարակության փոխներգործությունների քննությունը Հատտեճյանի համար զուտ տեսական ուսումնասիրություններից բխող մտացածին մտորումների արդյունք չէ, այլ իրական առնչությունների և վերլուծությունների հիմնավորում:

Բանալի բառեր՝ հոգեվերլուծական մեթոդ, պարադոքսալին հարցադրում, հոգեբանական մտահանգում, հոգեբանական պայմանականություն, կենսական զգայունություն, կերպավորման առանձնահատկություն, ինքնահայեցում, ներանձնացում, նախաստիպ, հոգեկերտվածք, ինքնաորոնում, հոգևոր ավանդներ, գոյութենապաշտական գրականություն:

М.Балаян

РОПЕР АТТЕЧЯН И ЕГО СБОРНИК “БАРАСКХАЛ”

Современный стамбульский писатель-армянин Ропер Аттечян своим творчеством в диаспоральной литературе обосновал психоаналитический философский метод, рамки исследования которого охватывают поиск формулы разрыва между внутренним миром и средой человека, а также стремление к достижению гармонии. В то же время питающим пульсом его ориентированного экзистенциалистического мышления является безграничная надежда, а также сильная воля и стремление, проявленные на пути самоутверждения.

Его первый сборник рассказов под названием «Барасхал /Ошибка/», к которому мы обратились в данной статье, несет в себе влиятельную черту, олицетворяющую творчество Аттечяна: образную характеристику и важность мышления.

Ошибка - непонимание или неправильное понимание, по мнению автора, часто приводит к обострению или разрыву отношений между людьми. То есть каждое событие или слово в жизни имеет строго подчиненный подход к его наблюдению и пониманию. Из этой общности и вытекает другая ось, объединяющая рассказы - их психологический характер. Для Аттечяна исследование взаимодействия человека, его менталитета и общества является не результатом воображаемых размышлений, возникающих из чисто теоретических исследований, а обоснованием реальных отношений и анализов.

Ключевые слова: психоаналитический метод, парадоксальный вопрос, психологическое умозаключение, психологическая условность, жизненная чувствительность, специфика образа, интроспекция, интроверсия, прототип, менталитет, самопоиск, духовные традиции, экзистенциальная литература.

М. Balayan

ROPER HADDEJYAN'S LITERARY ENTRY: COLLECTION “BARASKHAL”

The modern Istanbul Armenian writer Rober Haddejyan, through his work in the Diaspora literature, justified the psychoanalytic philosophical method, the scope of research of which covers the search for a formula for the gap between the inner world and the human environment, as well as the desire to achieve harmony. At the same time, the feeding pulse of his existentialist-oriented thinking is boundless hope, as well as a strong will and aspiration manifested on the path of self-affirmation and self-affirmation.

His first collection of short stories called "Baraskhal / Mistake", which we have addressed in this article, carries an influential trait that embodies Haddejian's work - that is figurative characterization and the importance of thinking.

Mistake - not-understanding or misunderstanding, according to the author, often leads to aggravation or rupture of relations between people. That is, every event or word in life has a strictly subordinate approach to its observation and understanding. From this generality follows another axis that unites the stories - their psychological character. For Haddejian, the study of interactions between a human, his mentality and society is not the result of imaginary reflections arising from purely theoretical research, but the justification of real relationships and analyses.

Key words: *psychoanalytic method, paradoxical question, psychological inference, psychological convention, life sensitivity, image specificity, introspection, introversion, prototype, mentality, self-search, spiritual traditions, existentialist literature.*

Ռուպեր Հատտեճյանը՝ սփյուռքահայ ժամանակակից նշանավոր գրողն ու հրապարակախոսը, թատերգակը և գրաքննադատը, տարեգիրն ու իմաստասերը, «Մարմարա» հայերեն թերթի բազմափորձ խմբագիրը, ծնվել է 1926-ին, Կ.Պոլսում և իր գիտակցական ողջ կյանքում կարևորել ստեղծագործ աշխատանքը հայ մտքի, լեզվի և գրականության բնագավառում: Այս առումով Ռ. Հատտեճյանի ստեղծագործական կյանքը մի ամբողջ հանրագիտարան է, որ ներկայացնում է Կ.Պոլսի գրական և մշակութային օջախի վերհառնումը, շնչավորումը և ծաղկումը. խոստովանենք, որ 20-րդ դարասկզբի աղետից ու գլխատումից հետո այս գրական օջախի վերընձյուղումը անհրաժեշտ և բնական պայման էր, որը և եղավ մեծ ջանքերի գնով, հաճախ՝ զոհողություններով ու միշտ՝ նվիրումով:

Ռ. Հատտեճյանը շնորհակալ է նախախնամությանը, որ հենց այդ քաղաքն է սահմանել իր համար որպես ծննդավայր ու ապրելավայր, և ողջ կյանքը դարձրել է անխոնջ նվիրում՝ 1967-ից ստանձնելով «Մարմարա» հայերեն օրաթերթի խմբագրապետի պաշտոնը, անշեղորեն կատարելով իր՝ հայ համայնքը համախմբելու, շնորհալի մարդկանց ոգեշնչելու առաքելությունը, շարունակելով Հակոբ Պարոնյանի, Մատթեոս Ջարիֆյանի, Միսաք Մեծարենցի, Գրիգոր Ջոհրայի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և Պոլսում ապրած մյուս մեծերի կիսատ թողած գործը:

«Ռ. Հատտեճյանի մեջ դեռ վաղ հասակից ամուր էր «նստած» պատասխանատուության զգացումը ոչ այնքան շրջապատի, հասարակութեան, ոչ այնքան աւանդական կեցութեան, որքան իր առջև, իր խղճի դիմաց: Անդով աշխատանքը կեանքի ճանաչում է, մարդկանց հետ շփում, հարաբերութիւնների մեջ գործարար և հոգեւոր սահմանների բարոյական գատորոշում»¹:

¹ Դանիելեան Ս., Ռուպեր Հատտեճյան. ներաշխարհի գեղարուեստական քննություն, 1996, էջ 24:

Մեփական աշխարհայացքի ձևավորման ասպարեզում լեզուների իմացությունը և բնագրով իր նախասիրած գրականությունն ընթերցելը կարևորելով՝ Հատտեճյանը միաժամանակ կարողացավ համատեղել ուսումնառությունը համալսարանում և աշխատանքը հոր առևտրական գրասենյակում: Մակայն ի սկզբանե նա երբեք ստիպողաբար կամ պարտադրանքով ընթերցող չեղավ, նա կարդում էր այն, ինչ հոգեհարազատ էր իրեն, ինչ կարևոր էր համարում «մտքի մարդ» լինելու համար:

«Մտքի մարդը ինձի համար թելերուն տակ գիրք պտըտցնող, բանախօսութիւններու յաճախող մարդը չէր: Մտքի մարդը այն էր, որ կը մտածէր բոլոր երեւոյթներուն դիմաց. մտածումով կ'ապրէր. երեւոյթներուն ետին թաքնուածը տեսնել կը ջանար: Մտքի մարդը այն էր, որ առանձին սենյակի մը մէջ ալ կը շարունակէր մտածել կեանքի երեւոյթներու մասին եւ իր մտածումները կը մշակէր իր ներաշխարհին մէջ, անոնցմէ շէնք մը կառուցանելու հեռապատկերով»¹, - բնորոշել է Ռ. Հատտեճյանը:

Հատտեճյանը միշտ իր համար արդեն ուղենիշ դարձած սարտրյան աշխարհայացքի և մտածողության տեսանկյունից է դիտարկում հասարակական և մարդկային փոխհարաբերությունները: Եվ նրա գրական մեթոդի ակունքը կենսական պահանջներից բխող հրամայականն է. հոգու տառապանքից սկզբնավորվող հույսը: Գոյատևելու կամքը և փրկվելու հավատը ստեղծում են մի տարօրինակ աշխարհ, որտեղ անխուսափելի է դառնում իրականի և երևակայականի բախումը:

Ռ. Հատտեճեանը Սփյուռքի գրականության մեջ ամուր հիմքերի վրա դրեց ժամանակակից եվրոպական գրականության մեջ հիմնավորված գեղարվեստական մի մեթոդ, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման և ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը:

Հանգամանքների բերումով իրավամբ «հայ գրականության պարտեզի բազմամյա մշակ» անվանյալ Ռ. Հատտեճյանը ստեղծագործելու առաջին փորձերը կատարել է թուրքերենով, սակայն երջանիկ պատահականությամբ նրա առաջին տպագիր գործը լույս տեսավ հայերենով: «Հայ գրականութիւնը ի՞նչ շահեցաւ, չեմ գիտեր, բայց գիտեմ, թէ է՛ս շահեցայ հայ գրականութիւնը...»², - խոստովանում է Ռ. Հատտեճյանը:

«Բառասխալ» պատմվածքը հիմք դարձավ, որ նույն խորագրի տակ հետագայում ամփոփվեն տարբեր պարբերականներում հրատարակված 19 պատմվածքները:

¹ **Յակոբեան Մ.**, *Անվերջակէտ գրոյց մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, 2013, էջ 57:*

² «Սան», *Իսթանպուլ, թիվ 1-2, Իսթանպուլ, 1968 թ., էջ 39:*

1972-ին լույս տեսած «Բառասխալ» ժողովածուն ընծայագրված է Զարեհ Խրախունուն:

Բառասխալը՝ չհասկացված լինելը կամ սխալ հասկացվելը, հաճախ տեղիք է տալիս մարդկանց միջև հարաբերությունների սրման կամ խզման: Այսինքն՝ կյանքում ամեն երևույթ կամ խոսք ունի դիտարկման և հասկացվածության խիստ ենթակայական մոտեցում: Այս ընդհանրությունից էլ բխում է պատմվածքները միավորող մյուս առանցքը՝ նրանց հոգեբանական բնույթը: Դա Հատտեճյանի արձակը բնորոշող կարևորագույն հատկանիշն է: «...Երբ կարդաք Հատտեճեանին գործերը, չենք կարծեր, որ հանդիպիք նոյնիսկ մեկ էջի, ուր ան հոգեբանական վերլուծումի ենթարկած չըլլա մարդկային այս կամ այն արարքը»¹:

Հատտեճյանի ստեղծագործությունը անհատականացնող մյուս ազդեցիկ շտրիխը նրա մտաերևակայական կերպավորումն է, մտածողության կարևորումը:

«Փիլիսոփայական մտածումէ ախորժող ռեւէ անձ եթէ փոքր ճիգ մը ընէ, պիտի տեսնէ իրերուն ո՛չ թէ ճակատին վրայ եղածը, այլ անոնց ետին մնացածը, այլ խօսքով այն, որ ինքզինք անմիջապէս չի մատնէր, այլ կը սպասէ, որ մարդկային մտածողութիւնը քիչ մը ներս թափանցէ հոնկէ, զայն մէջտեղ հանելու համար»², - այսպիսի տեսակետ ունի Ռ. Հատտեճյանը՝ մարդկանց և իրերի փոխհարաբերությունների մասին: Ըստ Հատտեճյանի՝ բոլոր մարդիկ խոցելի են, քանզի մահկանացու են և ստիպված են մահվան ողբերգության զգացողությունը և ապրումները քողարկել հեզնանքի և ժպիտի դիմակի տակ:

«Բառասխալ» ժողովածուի առաջին պատմվածքում, որ վերնագրված է «Գլխու ցավէ դէպի գիտական տեսութիւն», իր առանձնության մեջ տառապող մարդն է, որ միշտ չհասկացված լինելու մտավախություն ունի: Պատմվածքի փիլիսոփայական խորքը սովորական կյանքով ապրող մարդու՝ առօրյա հոգսերից ազատվելու անհնարինությունն է: Իր բոլոր օրերում՝ աշխատանքի թե հանգստի ժամերին, մարդը տառապում ու երկմտում է. իրականում նա գիտակցորեն կրում է իր բաժին հոգսը, ինչպես տանջող գլխացավ, կարող է ազատվել դրանից, սակայն նաև չի կարող, որովհետև այդ հոգս-գլխացավը իրենն է, իրեն ապրեցնողն է, իր կյանքի խորհուրդն է, «գիտական տեսութիւնը»:

Փիլիսոփայական եզրահանգում կարելի է տալ նաև ժողովածուի մյուս՝ «Գրականութիւն» վերնագրով պատմվածքին: Հերոսը մի գիշեր որոշում է զբաղվել ստեղծագործական աշխատանքով՝ «գրականութիւն ընել», ինչպես գրում է Ռ. Հատտեճյանը: Արդյունքում թղթի վրա տարվում են կետեր, գծեր, նկարվում են շրջանակներ, իսկ սեփական երևակայությունը մարդուն հասցնում է նրան, որ այդ ամենը նշանակություն ունի, միայն պետք է հասկանալ: Այս պատմվածքը իր խորքում ներկայացնում է Հատտեճյանի հեղինակի անփոփոխ կարծիքը. գրողը իր

¹ Թորանեան Թ., *Սմբողջական գրագետը. Ռոպեր Հատտեճեան, Հայկպ, 2002, էջ 14:*

² Շառոյեան Լ., *Հաւերժօրէն սիրելի մերին Պոլիսը, Իսթանպուլ, 2003, էջ 125:*

ստեղծած գրականությամբ պետք է ընթերցողի հետ խոսել կարողանա, որովհետև նրա համար է գրում: Եվ եթե ոմանք «գրականություն ընելը» լուրջ գործ չեն համարում, Ռ. Հատտեճյանը նման մարդկանց համար իր այս և շատ ուրիշ գրվածքներում ունի բազում զավեշտալի լուծումներ:

«Բժիշկը խենդ մը կ'ուզէ» պատմվածքի հանգույցը դարձյալ բառասխալն է: Հատտեճյանը այս պատմվածքում ստեղծել է քսաներկուամյա երիտասարդի կերպար, որն ունի իր աշխարհը, հետաքրքրությունները, հայացքները և նպատակները: Նա ինքը իրեն երջանիկ մարդ է համարում, և այդ երջանկությունը իր մեջ է, իր ներաշխարհում:

Հոգեբանական մեկ այլ կարևոր պահ է հարևան տարեց ամուրիի մոտ նորաթուխ հոր հպարտ ու ինքնավստահ պահվածքը. նա միանգամից ավելի տարիքոտ ու ավելի լուրջ էր դարձել («Հօր մը առաջին օրը»): Կյանքը շարունակվում է, ժամանակի մեջ իրար հաջորդող երկու վայրկյանները մեկը մյուսի շարունակություն են, սակայն տարբեր իրենց բովանդակությամբ: Մի փոքրիկ, դեռևս անանուն գոյություն փոխում է աշխարհը, նոր շունչ ու գույն հաղորդում:

Վերջին երկու պատմվածքները ներկայացնում են մարդու հույզերը, զգացմունքները, երջանիկ լինելու գիտակցությունը. մի դեպքում մարդն իր մեջ, իր հետաքրքրությունների ու երազանքների շրջանակում է գտնում երջանկության բանաձևը, մյուս անգամ՝ իր շրջապատից եկող դրական ազդակներից է ոգևորվում, տոգորվում լավատեսությամբ և պատասխանատվությամբ: Հատտեճյանական բոլոր հերոսներին հատուկ է ներանձնացումը, նույնիսկ ամբոխի մեջ առանձին և յուրօրինակ լինելը: Սակայն հաճախ այդ առանձնությունն այնքան ապրված ու զգայական է ներկայացվում, այնքան համոզիչ և իրական, որ թվում է՝ յուրաքանչյուրի կյանքում այդպես զգալն ու արտահայտվելը պարտադիր պայման է, անխուսափելի ապրում: Նման տրամադրություն է բերում «Օերունիի մը օրագիրը» պատմվածքը: «Մինչդեռ տարիք մը կայ,- խորհում է ութսունմեկամյա ծերունի հերոսը,- ուրկէ վերջ մարդ կը վերածուի ամայի եւ անպտուղ կղզիի մը»¹:

«Օերացանք, ըսել է՝ եկանք, հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարհի ծերին...»²,- կարծես հենց Հատտեճյանի այս հերոսի մասին են ասված Ավ. Բասակյանը ծերունի հերոսի՝ Օհան ամու խոսքերը:

Կյանքի և մահվան փիլիսոփայությունը հաճախ է դառնում հատտեճյանական մտածումի քննության առարկան: Այսպիսի մի յուրօրինակ հոգեբանական մտորում է «Ես իմ մահէս առաջ եւ վերջը» պատմվածքը: Մարդու հոգեբանությանը հատուկ է մի հետաքրքիր հանգամանք. ուրիշներին պատահող դժբախտությունը չի կարող կատարվել իր հետ: Հատտեճյանը փիլիսոփայորեն դիտարկում է

¹ *Հատտեճեան Ռ.*, *Բառասխալ, Իսթանպուլ, 1972*, էջ 159:

² *Բասակյան Ավ.*, *Երկեր, Երևան, 1987*, էջ 531:

երևույթի հակառակ կողմը. Իսկ ի՞նչ կլինի մարդու հետ, եթե նա միշտ մտածի մահվան մասին: «Մարդ ամեն օր քիչ մը կը մեռնի»¹, - խորհում է Հատտեճյանը և զարգացնում այն միտքը, որ ամեն օր մահվան մասին խորհող և մահվան փիլիսոփայությունը ըմբռնած մարդը ի վերջո ձանձրանում, հոգնում է մեռնելուց:

Իր խորքում փիլիսոփայական նույնպիսի բազմաշերտ հարցադրում ունի «Երագ» պատմվածքը. արդյո՞ք մարդը կարող է ապրել միաժամանակ երկու աշխարհներում՝ իրական ու երևակայական, և այդ դեպքում կարո՞ղ է ինքը իրեն երջանիկ զգալ: Պետք է նկատել, որ Ռ. Հատտեճյանի պատմվածքներում հաճախ երազները դառնում են հերոսների կողմից վճռական որոշումներ կայացնելու կարևոր ազդակներ:

«Տաղանդաւոր գործի մարդ մը» պատմվածքի հերոսը՝ Հակոբը, որը, երագում իր պարտապանի՝ Մարկոսի մահը տեսնելով, ետ է պահանջում երկուստեք շահավետ գործարքի համար նրան տված գումարը: Հեղինակը ճշտորեն ներկայացնում է Հակոբի տրամաբանությունը. «Իսկական գործի մարդը ան է, որ դրամը տեղ մը տեղավորելէ վերջ գիտէ նաեւ զայն ճիշդ ժամանակին հոնկէ քաշել»²: Եվ զավեշտալին այն է, որ այդուհետ Հակոբը իր «բարեկամի» մահվանն է սպասում (նա համառորեն չէր մեռնում) և ամեն առավոտ սրտնեղությամբ հաշվում դարակում դրված դրամը, որը երբեք չէր ավելանում:

«Ռ. Հատտեճեանի հերոսներից շատերը արդէն մահուան սպասող անհասներ են («Երագ», «Մերունիի մը օրագիր» և ուրիշներ), ինչը հոգեբանական-փորձարարական ապրումած զգայութեան գեղարուեստական քննութեան կայունացած կառոյց է,- գրել է Ս. Դանիելյանը գրողին և նրա ստեղծագործությունը ներկայացնող մենագրության մեջ:- Պատմուածագիրը իրական կեանքի շարժումը ուսումնասիրում է կեանքի յորձանուտից կտրուած շերտով, ուր շարժումը պայմանական վիճակ է դառնում»³:

Հետաքրքիր ու խորքային լուծում ունի «Երկինքը պարապ է» պատմվածքը: Մարդը նույն երևույթը կարող է դիտարկել տարբեր տեսանկյուններից և տալ միանգամայն հակասական գնահատականներ: Մարդը և միջավայրը փոխկապակցված են իրար և կրում են մեկը մյուսի ազդեցությունը, և իրերի բնությունը բնութագրվում է մարդու տրամադրությամբ: «Մարդիկ երջանիկ են եւ գոհ իրենց աշխարհէն...Անոնք չեն խորհիր երկինքին մասին եւ այնպէս մը կ'ապրին, որ իբրեւ թէ Աստուած գոյութիւն չունի»⁴:

«Աստված գոյություն չունի» նիցճեական հայտնի արտահայտությունը երկար տարիներ չարչրկում է փիլիսոփայական միտքը և, ընդհանուր առմամբ, մեկնաբանվում է որպես մարդկային ընդունված արժեքների մերժում և

¹ **Հատտեճեան Ռ.**, *Բառասխալ, Բարբանայուլ*, 1972, էջ 94:

² *Նույն տեղում*, էջ 109:

³ **Դանիելեան Ս.**, *Ռոպեր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն*, *Բարբանայուլ*, 1996, էջ 64:

⁴ **Հատտեճեան Ռ.**, *Բառասխալ, Բարբանայուլ*, 1972, էջ 61:

հավատքի հիմնական համակարգի վտանգում: Հատտեճյանի փիլիսոփայական ընդհանրացումը գոյութենապաշտական տեսակետներից հասնում է նրանց սկզբնավորման եզրահանգումների՝ նիցժեական տեսության ձևակերպումների յուրօրինակ մեկնաբանությանը. այն է՝ եթե Աստծո տեղը պարապ է, ապա վտանգված է հասարակության ողջ բարոյականությունը, նաև մարդու ու մարդկայինի գոյությունը:

Իրականության նկատմամբ մարդու ներգայական աշխարհի ընդվզումն է պատկերված «Դավթեանին մնացեալ օրերը» պատմվածքի մեջ:

Քառասունամյա Գնել Դավթյանը մի օր հասկանում է, որ ինքն այլևս չի հասցնում կատարել նախատեսած գործերը: Եվ կյանքի խելահեղ ընթացքի զգացողությունը դառնում է ներքին համոզմունք, վերածվում տառապալից ընդվզումի, անօգուտ պայքարի և հուսալքման. «Այլևս հասկցած է, որ եթե մեռնի, կեանքէն կշտացած, իր ծրագիրները ամբողջովին իրագործած պիտի չըլլան տակաւին...»¹:

Իսկ ինչպե՞ս պետք է զգա ժամանակի ուժը՝ որևէ նպատակ չունեցող մարդը: Նրա համար կյանքը պարզապես նկար է, նատյուրմորտ՝ կազմված ծանոթ իրերից, որոնք միշտ նույն դիրքում են, նույն անգործության մեջ անշարժացած: Հենց այսպես է ընկալում կյանքը «Առանց նպատակի» պատմվածքի անանուն հերոսը: Սակայն այս միապաղաղ իրականության մեջ կա ամենակարևորը՝ Մտածումը, որը ուր որ է պետք է ամբողջացնի ցաքուցրիվ պատկերը, խոհի պատառիկները: «Առանց նպատակի» պատմվածքի կարծես տրամաբանական շարունակությունն է «Այսպես լավ է» ստեղծագործությունը: Այս հերոսն էլ նպատակ չունի, բայց երբեք անհանգիստ ու մտահոգ չէր, հակառակը՝ նրա համար ամեն ինչ իր ձևի և բովանդակության մեջ լավ է, և ինքը գործում էր առանց նպատակի՝ հանձնվելով պատահարների, անակնկալ դիպվածների:

«Բառասխալ» ժողովածուում ներառված են պատմվածքներ, որոնցում գավեշտն ու երևակայությունը միախառնված են իրականությանը, և թվում է՝ կյանքը հենց խաղ է՝ մարդկային բազմաթիվ ճակատագրերով ու հարաբերություններով: Խաղի երևակայական ըմբռնումը պայմանականորեն տեղադրվում է կենսական զգայունության հարթակներում:

«Խենդի պատմութիւն» ստեղծագործության հերոսը փորձում է վերափոխել աշխարհը, կարգավորել մարդկանց կյանքն ու նրանց հարաբերությունները: Մտածում է վերափոխման մի եղանակ, որ ամբողջությամբ հենվում էր մարդկային երևակայության, ինքնաներշնչման ու հավատի վրա: Թվում է՝ ամեն ինչ հրաշալի ստացվում է, սակայն բավական էր, որ սասանվեր մարդու հավատը, և փլուզվում է շենքը, խաղն ընկալվում է որպես ծաղր, դառնում անկառավարելի, և ավելանում է ևս մի խենթ, որը հանդգնել էր խաղատախտակին դնել մարդկային զգացմունքները:

¹Նույն տեղում, էջ 197:

Մյուս ստեղծագործությունը, որտեղ «խաղի կանոնները» գործում են իրականությանը ճիշտ հակառակ պայմաններով «Ես իմ ճակատագրիս հետ գլուխ գլխի» պատմվածքն է:

Մարդիկ հաճախ ձգտում են արտահայտվելու, պատմելու իրենց կարիքների մասին, փորձում են դրանցից ազատվել՝ ուրիշների խորհուրդները լսելով: Սակայն այս խաղն ունի կանոններ, որոնցից կարևորն է անկեղծությունը, ապա՝ վերլուծությունը, մտածողությունը, համոզելը և նման կարևոր պայմաններ, որոնցից ոչ մեկը իրականում չափելի չէ և չի կարող վճարվել: Եվ վերջում անխուսափելի է լուծումը. «Բոլորն ալ գացին առանց օգտակար ըլլալու, և զիս թողուցին իմ ճակատագրիս հետ գլուխ գլխի»¹: Ակնարկը առավել քան թափանցիկ է. մտերիմների խորհուրդները ոչ մի պարագայում վճարող ու վերջնական չեն. մարդն ինքն է իր ճակատագրի տերը:

Հատտեճյանի գրչին բնորոշ է հակադարձ բևեռի միջից ներկայացնել իրականությունը, և եզրահանգումն էլ ստացվում է մարդկային տրամաբանությունից և սպասելիքներից բեկված աներևակայելի և զարմանալիորեն ցանկալի գույներով ու խտացումներով:

Հետաքրքիր հոգեբանական մտահանգում ունի ժողովածուի թերևս ամենազավեշտալի ու ֆանտաստիկ պատմությունը՝ «Համաճարակ» պատմվածքը, որի դիպաշարը որքան անիրական, նույնքան էլ հնարավոր է ու պատճառաբանված: Գրականության մեջ երբևէ ներկայացված ամենաերևակայական պատմությունները հաճախ դարձել են իրականություն: Ու՞ր է տանում կյանքի ինտելիգենտ առաջընթացը՝ համատարած զբաղվածությամբ, թե՞ անխուսափելի ձանձրույթի: Ձանձրույթը բերում է հոգնություն, ապա՝ անտարբերություն, որին հետևում է անպատասխանատվությունը: Եվ աղետալին այն է, որ այն վարակիչ է, և վերածվում է համաճարակի: Այս ամենն ունի տրամաբանական մի եզրահանգում. ուրեմն ինչու՞ չի կարող զալ մի ժամանակ, երբ ներկա քաղաքակրթությունը ձախողվի, և մարդիկ ձանձրանան մարդու նման ապրելուց, ցանկանան վերադառնալ նախկին անասնական անքաղաքակիրթ կյանքին՝ հանգիստ ու անհոգ ապրելու համար:

Իր պարադոքսալին հարցադրմամբ ու նույնքան պարադոքսալին ավարտով յուրօրինակ «բառասխալ» է ժողովածուի վերջին՝ «Բախտի մեքենայ մը» խորագրով պատմվածքը:

«Հետազոտության» արդյունքում պարզվում է, որ որոշ մարդկանց մարմնում՝ ինչ-որ տեղ, գոյություն ունի թաքնված մի օրգան՝ «բախտի մեքենա», որը անորսալի է, թափանցիկ: Անորսալի է, քանզի այդպիսի օրգան ունեցողները ապրում են մինչև խոր ծերություն, և այդպիսիներին, բնականաբար, դիտարկելու անհրաժեշտություն չի լինում, և «բախտի մեքենան» իրեն լրիվ սպառած է լինում:

¹ Հատտեճյան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972, էջ 220:

Իսկ երիտասարդ տարիքում մեռնողները այդպիսի մեքենա չեն ունենում. սա է «հետագոտող խմբի» եզրակացությունը:

Մինչ պատմվածքի հերոսը՝ Մուշեղ Մաշայանը, բոլորովին անտեղյակ իրեն հետևող մարդկանց փորձարարական որոշումներին ու եզրակացություններին, վայելում էր հաջողակի և հաղթողի փառքը, խումբը որոշում է «գիտութեան առաջընթացին համար» պետք է գոհել քսանվեցամյա երջանիկ ու բախտավոր մարդուն՝ «ապացուցելու համար իր բացառիկ բախտաւորությունը, իր բախտային գործարանին անուրանալի գոյութիւնը»¹:

Ժողովածուի ընդհանրական-ամբողջական կերպարը ժամանակակից մարդն է՝ ներաշխարհի հոգեկան բարդ շերտերով. մերթ ընդվզումը, մերթ համակերպումը, մերթ աշխարհը վերափոխելու ուղիների տենդագին որոնումները, մերթ ձանձրույթն ու մենության տառապանքը ամենախորքային վերլուծություններով ու տողատակերով միահյուսվում ու ստեղծում են մարդու հոգեկան աշխարհի ապրումներն ու զգայությունները:

«Բառասխալ» ժողովածուն հայ արձակուրդ ուրույն տեղ ապահովեց Հատտեճյան պատմվածագրի համար: Նա իր ստեղծած կերպարների միջոցով փորձեց տեղորոշել կյանքի և մահվան սահմանները, ներկայացնել մարդկային բարդ փոխհարաբերությունները, մտածողության և երևակայության անչափելի ու անճանաչելի լինելը:

Գրականություն

1. Հատտեճեան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972 թ.:
2. Դանիելեան Ս., Ռոպեր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996 թ.:
3. Թորանեան Թ., Ամբողջական գրագետը. Ռոպեր Հատտեճեան, Հալեպ, 2002 թ.:
4. Յակոբեան Մ., Անվերջակետ գրոյց մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, 2013 թ.:
5. Հատտեճեան Ռ., Գրական գործունեութեան 40-ամեա հանգրուանին, Իսթանպուլ, 1987 թ.:
6. Շառոյեան Լ., Հաւերժօրէն սիրելի մերին Պոլիսը, Իսթանպուլ, 2003 թ.:
7. Իսահակյան Ավ., Երկեր, Երևան, 1987թ.:
8. «Ման», թիվ 1-2, Իսթանպուլ, 1968 թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹Հատտեճեան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972, էջ 230:

ՀՏԴ 82-9

Բ-20

Հայ գրականություն

Զինափղա ԲԱԼԱՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուրնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.

E-mail: zinaida.54@bk.ru

ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆԴՅԱՆՑԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ» ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵՐԸ

XIX դարի հայ գրականության ընդհանուր համապատկերին, Արցախի թեման ներկայացնող բազմաբնույթ աղբյուրների մեջ, իր արծարծած թեմաներով, ներկայացրած ազգային գաղափարակառույցով, հետապնդած հիմնախնդրով, առաջադրած ծրագրով առանձնանում է Առ. Կոստանդյանցի «Պատմություն Արցախի» բարձրարժեք գիրքը, որն իր մեջ ամփոփում է երկու ձեռագիր (թիվ 7822 և թիվ 7823): Հեղինակը շուրջ 20 տարվա ընթացքում է ավարտին հասցրել այդ մատյանները:

Հոգևոր առաքինություններով պսակյալ Գոչավանքի վանահայր պատմիչի՝ Առ. Կոստանդյանցի գրքի սահմոկեցուցիչ նկարագրությունները ներկայացնում են հայրենի Դիզակ գավառի քաղաքական կյանքի մտայլ, ողբերգություններով լի նկարագիրը, վիպապատմական երանգներով, մեծ ցավով զծում ժամանակի անբարո ղիմագիծը, հատկանշում Արցախի մելիքների մաքառող ոգին:

Հանուն հայրենիքի փրկության հեղինակը ոգեկոչում է նրանց հերոսական պայքարի ելակետը՝ բազում անհավատալի դրվագներ վկայակոչելով, ցույց տալիս արցախցու կամային անգերազանց հատկանիշները, ազատասիրելու խիզախ բարքը, խառնվածքային ինքնատիպ, աստվածային գծերը, փառաբանում ազգային ավանդույթները պահպանելու հզոր, գերմարդկային կամքը, արտասուքով փաստում խաբեության, դավաճանության, մատնության, հավատափոխության զոհ դարձած հերոսական այրերի վախճանը, բացում

արցախցիների ճակատագրի՝ արյունարբու թշնամիների վայրագություններից հասած դժբախտությունների գիրքը :

Առ. Կոստանդյանցի «Պատմություն Արցախի»-ն արդիական հնչեղությամբ արարված, գիտական ամուր ատաղձով շաղախված անբեկանելի այցեքարտ է՝ սաստող ներկային՝ դասեր առնելու անցյալից՝ ապագային ուղղված, չկրկնելու անցյալի վրիպումները, սխալները, երբեք և ոչ մի պարագայում հավատավոր չլինել յիսակալ թշնամու հանդեպ, հոգով, մտքով, ոգով, զենքով գորեղանալ՝ թշնամիներին քայլ առաջ չթողնելու անբեկանելի ու հզոր երդումով հաստատված:

Հազար տեղերից, հազար կողմերից, հազար դարերով Հայրենիքի խոցոտված մարմինը, վիրավոր հոգին բուժել, սլացող ոգին պաշտել-պահպանել, անհաղթելի, հզորագոր, հավերժական դարձնել հայն ու Հայաստանը:

Բանալի բառեր՝ Մելիք Ավան, բերդամրոց, մելիք Վելիջան, Ցոր, մայրաբերդ, Արցախի լեռներ, ձեռագրեր, Արու Մուսե:

3. Баяян

ЛИТЕРАТУРНЫЕ ССЫЛКИ К КНИГЕ АПОСТОЛА КОСТАНДЯНЦА "ИСТОРИЯ АРЦАХА "

В общем контексте армянской литературы XIX века, в различных источниках, представляющих тему Арцаха, с упомянутыми темами, с представленной национальной идеологической структурой, исследуемой проблемой, предложенной программой, выделяется ценная книга Апостола Костандянца "История Арцаха", в которой обобщены две рукописи (№7822 и №7823). Автор работал над этими книгами около 20 лет.

Книга монаха-историка Гтчаванка, обладающего духовными добродетелями Апостола Костандянца, представляет собой мрачное описание политической жизни его родной провинции Дизак. Автор, используя традиционные художественно-исторические мотивы, с большой болью описывает безнравственный облик времени, характеризует боевой дух меликов Арцаха.

Во имя спасения родины автор призывает их к отправной точке героической борьбы, приводя множество невероятных эпизодов, где проявляются негнущаяся сила воли арцахцев, мужественный характер, уникальный темперамент, божественные черты, прославляет национальные традиции и описывает прекрасные родные края, мощную, сверхчеловеческую волю сохранения национальных традиций. Со слезами описывая гибель героических мужчин, ставших жертвами обмана, предательства, вероотступничества, автор открывает книгу о несчастных судьбах арцахцев, вызванных зверствами кровожадных врагов.

"История Арцаха" Апостола Костандянца - это неоспоримая визитная карточка, созданная в современном звучании, окутанная прочной научной плотью, заставляющая извлекать уроки из

пережитого, не повторять ошибок прошлого, никогда и ни при каких обстоятельствах не верить в закланного врага.

Автор призывает исцелить веками растерзанную плоть Родины, ее душу, израненную в тысячи местах, поклоняться и сохранять стремительный дух, сделать армян и Армению непобедимыми, могучими, вечными.

Ключевые слова: *Мелик Аван, крепость, Мелик Велиджан, Цор, майраберд, горы Арцаха, рукописи, Абу Мусе.*

Z. Balayan

LITERARY REFERENCES TO ARAKEL KOSTANDYANTS'S BOOK "HISTORY OF ARTSAKH"

In the general context of the Armenian literature of the 19th century, in various sources representing the theme of Artsakh, with the topics raised by him, represented by the national ideological structure, pursued by the problem, proposed by the program, the most valuable book by A. Kostandyants "History of Artsakh" stands out, in which two manuscripts are summarized (No. 7822, No. 7823). The author completed these books in about 20 years.

The monk-historian Gtchavank, who possesses strong virtues, presents how in the book of A. Kostaryants the gloomy image of the political life of his native province of Dizak is presented with horrifying descriptions, the description is full of tragedies, with novelistic nuances, paints the immoral appearance of the time with great pain, characterizes the fighting spirit of the meliks of Artsakh.

The author recalls the beginning of their heroic struggle to save the Motherland, cites many incredible episodes, shows the unbending strong-willed qualities of the people of Artsakh, valiant morality, peculiar temperamental, divine features, to glorify national traditions and describes the beautiful native lands, the powerful, superhuman will to preserve national traditions, notes with tears the death of heroic widows who became victims of deception, betrayal, apostasy, opens a book about the misfortunes of the fate of the people of Artsakh, caused by the atrocities of bloodthirsty enemies.

"History of Artsakh" by A. Kostandyants is an indestructible visiting card, created with a modern sound, mixed with a solid scientific tree, pronouncing the present, learning from the past for the future, not repeating the mistakes of the past, never being loyal to a hostile enemy, fortified by spirit and weapons, confirmed by an unbreakable and powerful oath not to let the enemies take a single step forward.

To heal the wounded body of the Motherland, the wounded soul from thousands of places, thousands of sides, thousands of centuries, bow down and preserve the impetuous spirit, make the Armenians and Armenia invincible, powerful, eternal.

Key words: *Melik Avan, fortress, Melik Velijan, Tsor, mayraberd, mountains of Artsakh, manuscripts, Abu Muse.*

Առ. Կոստանյանցի «Պատմություն Արցախի» արժեքավոր գիրքը (երկու ձեռագիր մատյանների՝ թիվ 7822, 7823-ի համարակալությամբ պահպանված)

թեև հայտնվել է գրական մշակների, ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, բայց միմիայն հղումներ կատարելու կարգով: Այս տեսանկյունից մեր քննությունը կարելի է գրականագիտական առաջին անդրադարձը համարել հայ գրականության պատմության մեջ:

Ստեղծագործող անհասների համար կարևոր առանցքային գործոններ են հանդիսացել թե՛ ծննդավայրը, թե՛ պատմաաշխարհագրական, մշակութային, տեղագրական միջավայրը, թե՛ հոգևոր կենտրոնները, որտեղ աշխատել, տքնել են (Մ. Խորենացու, Ա. Լաստիվերտցու, Գր. Նարեկացու, Կ. Գանձակեցու և գրական այլ մեծերի օրինակները վառ ապացույցներ են և կարելի է շարունակել շարքը) հայ գրականության, մշակույթի մեծերը, նվիրյալները, որոնցից մեկն էլ XIX դարի երկրորդ կեսերին հայ գրականության մեջ եռանդուն կերպով հանդես եկած Առաքել Վարդապետ Կոստանյանցն է: Նրանց համար վերողիտված առաջնահերթ ու կարևորագույն օղակները սնուցող տարր են հանդիսացել իրենց երկերը գրելու ժամանակ:

Հեղինակի ծննդավայր Արցախի պատմական **Դիզակի Թաղուտ գյուղը** և իր համար հոգևոր կենտրոն դարձած **Գուչավանքը՝ սրբակրոն կյանքով ապրելու հոգևոր կենտրոնը**, բազմաթիվ ձեռագրեր տքնանքով հայթայթելու, արտագրելու, վիմեղեն արձանագրություններ վերծանելու, հոգևոր ու մանկավարժական աշխատանք կատարելու, ձեռնասուն մանկանց ուսուցանելու ժամանակ եղել են նրա հզոր ներշնչարանները, և միաժամանակ՝ երկուստեք, իր անգուգական, հերոսական, վեհ ու ասքակիր հայրենիքի ու նրա անվեհեր, նվիրյալ զավակների վաստակը գնահատելու, ողբերգական ճակատագրի մասին պատմություններ հյուսելու տեսանկյունից՝ հոգու ազնվակիր շաղախը, մտախառնվածքի բարոյական, քաղաքացիական ամուր ելակետը և հայրենական քաղաքական շահերից բխող զուգադիր, գաղափարակիր երկբևեռները:

XIX դարի համապատկերին, **հոգևոր այդ հզոր հուշարձանի՝ Գուչավանքի** մշակութային դերն ու նշանակությունը բացահայտելու համար, ընդհանրության մեջ՝ որպես օրինակ, վկայակոչելով և առանձնադիտելով Կոստանյանցի անցած ուղին, նրա կողմից դրսևորած ստեղծագործական և հոգևոր ամուր կապը վանքի հետ, նրանից ստացած անբացատրելի լիցքերը հասկանալու համար, փորձենք մի փոքր քննություն կատարել **Գուչավանքի** հետաքրքիր նկարագրի շուրջ, որը «Պատմություն Արցախի» երկասիրության անձնավորված առաջնահերթ կերպավորումներից մեկն է հանդիսանում :

Արցախ, Դիզակի գավառ, Գուչավանք, Գոիչ (Գուչա) վանք...

Հին ժամանակներից սկսած ԼՂԻՄ-ի Հաղործի շրջանի մեծ մասը՝ Մարտունու շրջանի հետ միասին, **Մյուս Հարթանդ** անունով է կոչվել՝ որպես Արցախի 12 նահանգներից մեկը:

Տեղադրությամբ, **Բերդաձորի** մեջ մտնում էին Դիզափայտի արևմտյան փեշերին գտնվող գյուղերը, որոնք Հաղործի շրջանի լեռնային մասն էին կազմում, իսկ հարավային մասում փոփոխվում էր՝ **Պարզկանք գավառի** մեջ:

Հիմնականում Հաղործի շրջանի (մելիքության ժամանակներում՝ Դիզակի գավառի) մասին է հյուսված Գտչավանքի վանահայր՝ Առաքել վարդապետ Կոստանդյանցի՝ գրականագիտական, հայագիտական, արցախագիտական, պատմագիտական մտքի եզակի արժեք ունեցող «Պատմություն Արցախի» գիրքը:

Իշխանագետի գեղատեսիլ հովտի տարբեր կողմերում փոփոխված էին **Տողաձորի անկրկնելի և ինքնատիպ հուշարձանները՝ Ջրակուս (դեպի աջ), Մարիամաձոր, Ծակուռի, Թաղուտ, Հակակու, Հողեր, Հախուլու (Հարթաշեն), Էդիլու (Ուխտաձոր), Խրմանջուղ (Ծաղկավան), Աղբուլաղ (Ակնաղբյուր), Քյուրաթաղ կամ Դուդուկչի** հայկական գյուղերը, իսկ ձորագետի մյուս ափին՝ **Ազոխ, Դրախտիկ, աջից՝ Մեծ-Թաղար, հարավային կողմում՝ Տումի** գյուղերը: Թվարկվածների կենտրոնական մասում **Տողասարը (Քթիշ բերդը)** կամ **Ճգնավորի լեռն** է փոփոխված, արևելական շրջանում **մելիքանիստ Դող-Տող բերդավանը**, դեպի հարավ ևս փոփոխված ունենալով նշանավոր **Գտչավանքը՝ Մոխրենեսի** հարևանությամբ:

Այդ չքնադագեղ հովտում, մարդկային հանճարի շռայլանքով արարված և նվիրվածությամբ տեղադրված է եկեղեցական կառույցների մի համակարգ, որի անվանացանկում առինքնող անունների շարքը համալրում են չորս ուղղություններով սփռված հետևյալ հոգևոր սրբատեղիները՝ **Օխտը (յոթ) դռնի վանքը, Կատարովանքը, Գորոզ բերդը, Կարմիր եկեղեցին, Ճոխտ պորվածառի վանքը, Սրխաթուն, Կախան, Նոնեգա եկեղեցիները, Կաքավավանքը, Ծաղկավանքը, Ճվավանքը, Յոթ-խաչ վանական համալիրը՝ դիմացն ունենալով Գտիչ-Քթիշ բերդ-ամրոցը, որը IX դարում եղել է հերոսական Եսայի Ապու-Մուսեի նստավայրը, X դարում՝ Դիզակի թագավորանիստ կենտրոնը:** Հոգևոր այդ հուշարձանների թագն ու պսակը, ամենայն իրավամբ, պետք է համարել **Գտչավանքը:**

Ըստ վավերական հավաստի աղբյուրների, հնագույն ժամանակներից եկող պատմություն ունի **Գտչավանքը:**

Ըստ Մ. Կադանկատվացու հիշատակության, **VIII դարսկզբին** տեղի ունեցած **Պարտավի եկեղեցական ժողովի** մասնակիցների թվում նշված էր նաև **«Գտավանքի տանուտերը»¹**:

XIII դարում՝ Դիզակի Մելիք-Ավանյան մելիք Ավան-Եզանի իշխանության ժամանակաշրջանում, Գոչավանքը հասնում է իր զարգացման նախադեպը չունեցող գազաթնակետին: Բազմաթիվ վիմեղեն արձանագրությունները՝ փորագրված վանքի շենքերի տարբեր մասերում, շատ խոսուն են, հարուստ և բազմաբնույթ տեղեկություններ են պարունակում իրենց մեջ:

Ժամանակների հոսքում, վանքն ու վանքապատկան տարածությունները, բազում թշնամյաց հարձակումներից ենթարկվել են թալանի, ավերումների, կործանման, բայց տարբեր ժամանակներում՝ հոգևոր և աշխարհիկ գործիչների, բարերար-նվիրյալների կողմից՝ կառուցումների ու նվիրատվությունների մակարդակով, տրվել են նորոգման, բարգավաճման: Այս և այլ կարգի երևույթների մասին հարուստ անդրադարձներ ենք նկատում Առ. Կոստանդյանցի **«Պատմություն Արցախի»** երկասիրության մեջ, որով այն ձեռք է բերում եզակի, խիստ գիտական արժեք:

Որպես մշակութային անկրկնելի կոթող, այն կառուցված է գեղատեսիլ բնության գրկում՝ կատարողական բարձր արվեստով շաղախված, հայոց հանճարի ինքնատիպ երանգներով ու ճարտարապետական ուրույն ոճով և առանձնահատկություններով առանձնադիտված, իր հիմքում դառնալով Արցախի միջնադարյան մշակույթի բացառիկ կոթողներից մեկը, որին փայլ ու աստվածային կազմվածք է տալիս մի կողմից **դեղնագույն, սրբատաշ քարերի** (որով կառուցված է **Գոչավանքի համալիրը**) վիմեղեն հարմոնիան, մյուս կողմից՝ չորս կողմ սփռված բնության ոգեղեն աուրան, որոնք՝ բոլորով հանդերձ, ներդաշնակություն են կազմում անձեռակերտ բնության գաղտնաբաններում, իսկ այդ զարմանահրաշ սլացքների ոգին ու միտքը շարժողը՝ առաջին հերթին, երկրի դպիր-տերերն են, լուսավոր հայրենապահները, ձեռագրեր-վարքամատյաններ ստեղծող հանճարաշուրթ այրերը:

Նրանք, իրենց վերապահված ասացող լռությանն ունկնդիր՝ առաջնորդվելով հայրենիի դառն ու դժար ճակատագրի էջերից ոչինչ և ոչ մի հյուլե բաց չթողնելու նախապայմանով՝ դրանք իրենց պատմություններում գետեղելու, դարերին հանձնելու դժվարահաճ միակամությամբ լեցուն՝ վստահ են, որ հետագա

¹ Տե՛ս **Մովսես Կադանկատուացի**, *Պատմություն Աղուանից աշխարհի*, Թիֆլիս, 1912, էջ 233:

կասկածամիտ ժամանակների սրբակրոն նվիրյալները կլինեն իրենց վաստակը դարերին ու երկրի իսկական տերերին հանձնող երդմնամիտ երախտավորները ... :

Սյդուհանդերձ, Լեոն հոգևոր կենտրոնի արվեստական դիմահարդարումը համեմատում է Բագրատունյաց թագավորական տան կառուցողական ոճի հետ՝ դիտելով. «Առհասարակ ներքին ու արտաքին կողմերից Գուչավանքի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը»¹ :

Աշխարհագրական և պատմական լանդշաֆտի անկրկնելի գուգադրությամբ փռված, տեղագրական դիրքով առինքնող, գեղագիտական վրձնաշարժերով տեսանելի, ժամանակների հարահոսքերում խորին լռությամբ կանգուն ու ասացող երանգներով լի, երբեմնի իշխանական ու արքենի տրվածքներով երիզված Արցախամուր (Բուզանդ) աշխարհի Դիզակ գավառի **Տողասարի** կամ **Ճգնավորի լեռան** թիկունքին թիկնած, հյուսիսարևմտյան լանջի գոգավոր տեղանքում, ստվերախիտ անտառների գրկում, հեռվից նշմարվում է **Գուչավանքի գմբեթը**, ավելի մոտիկից՝ իր վաղեմի վեհությամբ՝ դարահեծ խոհերին մերձ լաբիրինթում, աշխարհի հետ տալիք ու առնելիք խոսություններով ծանրաբեռ, խռովահույզ հոգով, վիմեղեն հպարտությամբ, վաղեմի փառքերի փշրանքներին ունկնդիր կանգնած է **Գտիչ վանքը**: Վերջինս՝ հոգևոր այրերի փառագագաթ արարումների տեսանող վկան, նրանց մտախոկերի ու ազգային խառնվածքի, անհանգիստ ներաշխարհի լուռ ունկնդիրն է, միով բանիվ՝ վարքադարանի հզոր լույսի ու հայրենապաշտ էության վիմեղեն վկայախոսը, մնալով թշնամիների ավերումներից քրքրված, անողոք դարերի հարահարցումներում իր շնորհներից զրկված մենավորը: Այսօր էլ Գուչավանքը, իրավամբ, ամենայն նվիրումով ու դարավոր սպասումներով կարող է երկխոսել ներկաներիս ու ապագայի նախանձախնդիր գիտնականների հետ, բանավիճել՝ մշակույթներ սեփականացնող այլազգի ստահակների հետ:

Ասելիքները՝ դարավոր լռության մեջ, խորն են և երրորդող:

Նրանցից՝ հոգևոր դասի **Գուչա (տարբեր աղբյուրներում՝ Քթիշ, Գտիչ, Գուչավանք, Գտավանք) վանքի** վանահայրերի մեջ, իր ծրագրայնությամբ, որդեգրած գաղափարակարգով, մտավոր քննողությամբ, և հատկապես, հայրենի եզերքների մասին պատմվող փաստերի, ձեռագիր մատյանների հավաքագրմամբ, հայրենիքի մասին պատմություն ստեղծելու անքննելի ու

¹ Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 247:

պարտադիր պահանջով առանձնանում է բանահավաք, վաստակաշատ մանկավարժ, իր գործի հմուտ գիտակ (չնայած միշտ իրեն խոնարհ ու համեստ մշակ է համարում), պատմիչ Առաքել վարդապետ Կոստանոյանցը՝ XIX դարի հայ գրականության մեջ Արցախի թեման արյունատար մայր երակներով քննած, բացառիկ և եզակի արժեքներ հավաքագրած և արարած վարդապետը:

Հայոց մայր պահոցում՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, առավելապես ընտիր ոսկեղենիկ հայերենով՝ գրաբարով, պահպանված են Առ. Վարդապետի հեղինակությամբ ստեղծված ձեռագիր մատյանները, որոնք ունեն հարուստ և հետաքրքիր բովանդակությամբ պատումներ, Արցախ աշխարհի քաղաքական, հասարակական, պատմական կյանքին վերաբերող դրվագներ, հոգևոր և աշխարհիկ առաջնորդների վարքաբանությունը քննող պատմություններ: Նրանցում քննված են նաև բնական երևույթների՝ սարսափելի հիվանդությունների, սովի, ժանտախտի, բնության մեջ շարժվող տարաբնույթ աղետների՝ երկրաշարժերի, պատերազմների, գերեվարության, կոտորածների, գաղթի վերաբերյալ սահմուկեցուցիչ պատմություններ, արցախցիների կյանքին վերաբերող բազմապիսի դրվագներ, նրանց բնույթի, տոհմիկ հոգեբանության ավանդույթակիր շերտերի բացահայտումներ, ազգային հոգեկերտվածքի շղարշներ, **կենսաբանական տրվածքի՝ ազատության, հայրենապաշտության** անկրկնելի օրինակներ, ապրելակերպի տիպական երանգներ, հայրենի երկրի ճակատագրին առնչվող տարաբնույթ անցքեր, մելիքական տներին բնորոշ առատ տեղեկություններ, նրանց կորուստների, հերոսապատումների, ստեղծագործ էության երանգներ: Եվ որ կարևորն է՝ գրականության և մշակույթի, հոգևոր և աշխարհիկ նշանավոր գործիչների, առաջնորդների սեղմ ու արժեքավոր դիմանկարներ, հարևան ժողովուրդների հետ առնչությունների, տարաձայնությունների, արյունալի կռիվների անցքեր, օտար երկրների քաղաքական խաղերի և այդ ամենի կիզակետում գտնվող, Արցախի քաղաքական ծանր ճակատագիրը բացահայտող անդրադարձներ, բարոյական, պատմական, աշխարհագրական, հոգևոր կյանքը բնութագրող խիտ մեկնաբանություններ:

Արդի ժամանակաշրջանի անբարո և դաժան մարտահրավերներին, թշնամական ոտնձգություններին, ամենայն լրջությամբ, կարող են դիմակայել նաև Կոստանոյանցի երկերը՝ առավելապես դեռևս անտիպ վիճակում գտնվող ձեռագրերը և աշխարհաբարի վերածված մի քանի եզակի արժեք ունեցող գործերը: Առաքել Կոստանոյանցի «Պատմություն Արցախի»-ն գրաբարից

աշխարհաբար փոխադրելու աշխատանքը՝ սեղմ առաջաբանով, գիտական բարձր կուլտուրայով, մեծ ջանադրությամբ և անչափելի պատասխանատվությամբ, ընդգծված հոգատարությամբ, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, սկսել և ավարտին է հասցրել ծնունդով խժաբերդցի, մեծ լեզվաբան-գիտնական, հայրենական, հոգևոր արժեքների հանդեպ նախանձախնդիր, հայագետ-արցախագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մկրտչյանը: Նրա փոխադրության վերաձված գիրքը բաղկացած է 232 էջից, հրատարակվել է Երևանի «Արմավ» հրատարակչությունում, 2019 թվականին:

«Պատմություն Արցախի»-ն ունի իր հիմնանյութը, որն իրար շարունակող երկու ձեռագիր մատյաններից է բաղկացած՝ թիվ 7822 և 7823 համարակալությամբ, որոնք պարունակում են 525 էջ: Այդ ձեռագիր մատյաններն ունեն պատմագեղարվեստական, քննաբանական ուղղվածություն, քաղաքական, փիլիսոփայական մտահանգումներ:

Էդ. Մկրտչյանն այդ ձեռագրերի վերծանման, բացահայտման, մեկնաբանման շուրջ առաջին աշխատանքը վերնագրել է «Եկեղեցածոր-Օձաբերդ-Խժաբերդ կամ Խժաբերդ անուան ծագման մեկնաբանություն» անվամբ, այն տպագրելով 2001 թ. Հալեպում լույս տեսած «Գանձասար» պաշտոնաթերթում: Իր առաջին անդրադարձը գիտնականը կատարել է թիվ 7822 ձեռագրից արված քննական անդրադարձներով: Վերողիտվածից ելնելով, կարելի է ընդգծել Էդ. Մկրտչյանի ցուցաբերած ջանքն ու եռանդը, ունեցած արդյունաբար դերը XIX դարի համապատկերում «Պատմություն Արցախի» գրքի փոխաբերման շրջանակներում Արցախի թեման ներկայացնելու ուղղությամբ: Այս տեսանկյունից նաև բարձր գնահատականի է արժանի նրա ցուցաբերած քաղաքացիական և մասնագիտական քայլը «Պատմություն Արցախի» գրքի հեղինակին ներկայացնելու, որոշ կարևորագույն հարցեր ծանոթագրելու, հիմնականում հեղինակի ռճն ու պատմական խնդրառություններն անխաթար պահելու ուղղությամբ:

Առ. Կոստանյանցի ծննդավայրը հայրենական առաքինություններով պսակված Արցախի Դիզակի մելիքության Թաղուտ գյուղն է: Կրթությունը կրոնական է: Երեք տասնամյակ նա աշխատել է Գտչավանքում՝ որպես վանահայր վարդապետ:

Գտիչ վանքի ճակատագրի ծանր անցումներից մեկն էլ փաստվում է նետողաց ազգի՝ մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակաշրջանը, որոնք մորեխի նման տարածվել էին աշխարհով մեկ, այդ թվում նաև դեպի

Հայաստան, Արցախ, Ռուսաստան, Կիլիկիա՝ հարյուրավոր տարիներ այդ երկրների ժողովուրդների զարգացումը հետ մղելով: Նրանք դավանում էին շիա կրոնին:

Նրանց մասին հայ և համաշխարհային գրականության մեջ բազմապիսի արձանագրություններ, վավերագրեր կան՝ գրված տարբեր լեզուներով: Արաբ մատենագիր Իբն ալ-Ասիրը նրանց մասին գրում է. «... Ես նկարագրելու եմ ամենասոսկալի դժբախտությունը և ամենամեծ աղետը, որի նմանը դեռ չեն տեսել երկրի վրա ոչ ցեղերը, և ոչ գիշերը որը պայթեց բոլոր ժողովուրդների գլխին ու, գլխավորապես մուսուլմանների:... Համաշխարհային տարեգրերում ո՛չ մի նման բան կամ մոտավոր կերպով նման անցք չի հիշատակված:...

Ոչ ոք չէր քնում այն երկրում, որի վրա նրանք դեռևս չէին հարձակվել, ամեն ոք ահ ու սարսափով սպասում էր նրանց գալուն... Նաբուգոդոնոսորի ժամանակներից աշխարհն այսպիսի պատուհաս չի կրել»¹:

Հայ գրականության մեջ մոնղոլ-թաթարական արշավանքների մասին անդրադարձեր են կատարել Վանական Վարդապետը, Կ. Գանձակեցին, Ստ. Օրբելյանը, Վարդան Արևելցին, Միք. Չամչյանը, Մուրացանը և ուրիշներ:

Մոնղոլներն իրենց գրաված երկրներում մեծ հարկեր էին հավաքում, նույնիսկ՝ մեռելներից: Հարկերի դիմաց մարդիկ ստիպված գրավ էին դնում իրենց որդիներին, հարազատներին, բայց նրանցից պրծումն չկար: Դրա վառ օրինակներից է Ֆրիկը, ով հարկի դիմաց իր որդուն պատանդ տվեց: Տաղանդաշատ բանաստեղծը, որ սկզբնապես մեծահարուստ էր՝ խառնակվող և դաժան բնույթ ունեցող մոնղոլների երեսից ունեզրկվեց, հարկի դիմաց իր պատանդ տված որդուն ամբողջ կյանքում անհույս կերպով փնտրելով:

«Ռուզան» դրամայի հերոս Ջաքարեն փաստում է, որ այնտեղով, որտեղով անցնում են մոնղոլները, խոտ չի բուսանում:

Ահա այդ սահմոկեցուցիչ ժամանակներում (XIII դար) Գտչա վանքը ևս ենթարկվել է ծանր հարձակումների. նետողաց ազգի երեսից շուրջբոլոր՝ վանքն ու շրջակա տարածքները, որտեղ որ հայտնվում էին նրանք՝ ավերի, թալանի, խառնակության էին ենթարկում ամեն ինչ, ամեն ոք:

Ինչպես հայ գրականության, մշակույթի երևելիներից (Մուրացան, Բաֆֆի, Հայկունի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց և այլն) շատերը, նույնպես Առ. Կոստանդյանը մտադրվել է հայրենի հիշատակներին վերաբերող

¹ Տե՛ս **Крымский А.**, *История Персии, ее литературы и дервишской теософии*, т. 3, нн 1-2, Москва, 1914-17, ст. 1-3: Տե՛ս **Ибн ал-Асир**, *Из Тарих ал Камиль*, Баку, 1940, ст. 134-136: Տե՛ս **Մանանդյան Հ.**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Գ, Ե., ՀՄՄԹ ԳԱ հր., 1952, էջ 179-180:

պատմությունները, ձեռագիր մատյանները հավաքել, բազմապիսի տեղեկությունները կենդանի ծերունիներից լսել և գրի առնել իր որոշյալ մատյաններում՝ կորստից փրկելու մտքով զինված: Ձեռք բերած նյութերը տարաբնույթ արձանագրություններ էին, գրավոր ձեռագիր սկզբնաղբյուրներ, վիմագրություններ, այդ ամենին ավելացնելով յուր մտորումներն ու հետևությունները՝ հայթայթած նյութերի վերաբերյալ՝ ըստ այդ ամենի, փորձեց պատմություն հյուսել: Հավաքված նյութը բազմաբովանդակ, բազմաթեմատիկ էր՝ սով, քաղց, սարսափազդու ծանր հիվանդություններ, պատերազմական իրավիճակներ, թշնամյաց հետ կատաղի ընդհարումներ, արյունալի բախումներ, կոտորածներ, ավերվածություններ, գերեվարություններ, հոգևոր և աշխարհիկ սրբավայրերի պղծություններ, սպանություններ և այլն և այլն:

Առ. Կոստանյանցն՝ ըստ յուր մտադրության, ծրագրել էր չորս հատորով գիրք գրել, սակայն նրան չի հաջողվել իրագործել յուր նպատակը: Չորրորդ գիրքն անավարտ է մնացել: Նրա ձեռագրերը թե՛ իր ժամանակակիցներին (Լեո, Բաֆֆի և ուրիշներ), թե՛ հետագա հետազոտողներին շատ են հետաքրքրել, որոնք հղումներ են կատարել՝ ըստ իրենց պահանջի:

Առ. Կոստանյանցի «Դիզակի մեղիքությունը» գիրքը լույս է տեսել 1913 թ. Վաղարշապատում: Տաղանդաշատ պատմիչի ձեռագրերը ստեղծվել են համարյա 20 տարվա ընթացքում: Դրանք ունեն առաջաբաններ: Հեղինակը դրանց մասին այսպես է արձանագրում. Առաջինում՝ «Փրկչական 1858 թվականին սկսված և 1868-ին ավարտված՝ տեղեկություններ չլինելու պատճառով», երկրորդում՝ «Փրկչական թվականի 1870 թ. սկսել և 1880 թ. ավարտել եմ»¹:

Առաքել Վարդապետը, իր մեծ նախորդի՝ պատմահայր Խորենացու օրինակով (Մովսեսն իր պատմության երկրորդ գիրքն անվանում է «Մեր իշխանների անիմաստասեր բարքի մասին»՝ թե ինչու նրանք իրենց թագավորական մատյաններում գրի չեն առել իրենց ժամանակներում կատարված պատմական իրադարձությունները) անչափ անհանգիստ և տխուր է, դժգոհ «գիտնական վարդապետներից», «բանասեր անձանցից», «հոգևոր հովվից ու հովվապետներից», բոլոր այն հներից, ովքեր հիշատակություններ չեն թողել ապրած ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների, հոգևոր և աշխարհիկ հրաշագործ կառույցների, սրբավայրերի մասին, «որի համար

¹ Տե՛ս Առաքել Կոստանյանց, Պատմություն Արցախի, Ե., «Արմավ» հր., 2019 (այսուհետև՝ Առաքել Կոստանյանց, Պատմություն Արցախի), էջ 5:

Աղվանքը այսօր մնում է տխուր դեմքով քաջակորով մարդկանց կատարածների կորստյան պատճառով»: Անդառնալի ցավ է ապրում, որ տեսանող աչքը տեսնում, բայց չգիտե՝ ո՞վ և ե՞րբ է կառուցել. «Անթիվ բերդեր և մենաստաններ, ուխտատեղիներ կամ եկեղեցիներ ու զանազան շինություններ ենք տեսնում, սակայն բնավ չկա ու չկա տեղեկություն, թե ու՞մ բնակությունն է կամ ո՞վ է կառուցել...»¹:

Կոստանդյանցի խորագույն կսկիծները մեզ հիշեցնում են նաև Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» գրքի ցավանախշ տողերը՝ գրված հայրենի քառագագաթ, երկնափառ տաճարները տերերից, երբեմնի հզոր փառքից զրկվելու, երևելի ու հանճարաշատ արարողների, անպարտ ու հզորագոր մելիքների հիշատակները կորստյան մատնվելու հանգույն, մանավանդ, որ պատմիչը մեկ առ մեկ այցելել է Հայոց երկրի երբեմնի վեհ ու վսեմագույն տերերի, արքաների, հովվապետների ուխտատեղիները՝ նրանց իրենց փոքր շնորհների փշուրներին գերված և կործանման եզրին տեսնելու վշտերից աղի արտասուք թափելով, սրտամրմուռ հառաչանքներ-հոգոցներ անելով:

Արդ, Առաքել պատմիչը ևս անկարող է խորագույն ցավ չզգալ և չկսկծալ՝ դեռևս կանգուն հոգևոր արժեքներն անհասցե տեսնելու, ծննդյան վկայական չունենալու, արարողի անունից՝ անհայտ մնալու մտքից, անորոշությունից՝ հուսահատորեն փշաքաղվելու, ազգակործան բախտին ծանրորեն ուղեկցող քմահաճույքների երեսից՝ չզայրանալու և չզարմանալու, չխենթանալու:

Իսկ այդ մեծագույն կորուստները, անցքերը վկայում են անօրենների երեսից՝ յուր ժողովրդին՝ արցախցիներին, հասած անողոք պատուհասների, անհավասար կռիվների, վաչկատուն ցեղերի կողմից հայրենակիցների հանդեպ գործածած հանցագործությունների, գերեվարության, գլխատումների մասին, կոտորածներից առաջացած արյան գետերի, գեղեցկուհի կանանց, աղջիկների, մանուկների առևանգման և այլևայլ թշվառությունների մասին բազմապիսի պատմությունների:

Սովն ու ժանտախտը ևս՝ բնության արհավիրքները գումարած, համաճարակները, բերդավանների, գյուղերի, քաղաքների տխուր նկարագրությունները՝ արված տաղանդաշատ վարդապետի գրչի տակ, փաստագրում են ոչ հեռավոր անցյալի փառավոր էջերի, մելիքների կատարած բազմապիսի հերոսապատումների, կառուցումների մասին, աստվածամերձ

¹ Նույն տեղում, էջ 5:

տաճարների՝ երբեմնի իրենց փառքերից, տերերից զրկված լինելու մասին, հոգևոր և աշխարհիկ կոթողների անշքանալու, անտերության մատնվելու, անձանձիր և նվիրյալ գրառողներից անլուր մնալու մասին:

Ամենակարևորը, Վարդապետը շոշափում է նաև քրիստոնեական հավատի, հայրենիքի պաշտպանության հիմնախնդիրները, առաջադրում և ոգեկոչում հայրենապահության գաղափարը:

Դիզակը հանդիսանալով Արցախի 12 նահանգներից մեկը, ուներ իր ինքնատիպ ազգային դիմագիծը, ավանդույթների, տոհմիկ հոգեբանության ընդգծված շերտերը, մելիքների ինքնավարության (XVI դարից սկսած) ազդակները: Պատմագրի նկարագրությունները հիմնականում ամբողջանում են Դիզակի շուրջ կայացված դիտարկումներում:

Աշխարհագրական սահմանագծումները կենտրոնանում են հետևյալ տեղատարածքներում. Հարավից՝ Արաքսը, արևելքից՝ Մուղանի դաշտավայրը, հյուսիսից՝ Քոնդալան գետը, արևմուտքից՝ Դիզափայտը և Քիրսի պարը:

Կոստանդյանցը պատմական և վիպական հերոսների հետաքրքիր շարք է ներկայացնում, նրանց ակտիվ գործողություններում բացահայտում, հայրենապահ մղումներ, հերոսական գծեր վերագրում:

Առաքել պատմիչն իր վաստակին, գիտական կարողություններին համեստորեն և անհարկի կերպով թերահավատությամբ է նայում՝ իրեն ցածր դասելով «գիտաուսումնական հաստատություններում» կրթվածներից: Այդուհանդերձ, ձեռագրի առաջաբանում նկատում է. «Բայց ներքին հայացքով ու դիտողականությամբ նրանց նկատմամբ [զգացածը] նշմարելով՝ [ասեմ], որ նրանք բոլորը զանցառու են. անտեսում և հաշվի չեն առնում այս ամենը, նրա շուրջը ազգասերի փոքր-ինչ վաստակասիրությամբ [չեն երևում]՝ ազգային գրչագրությունների ժամանակակից անձանց չգտնելու պատճառով: Ուստի նրանց աչքում այս գրավոր վաստակին [իմ] մերձենալը շատ ավելի դժվար և անարժան թվաց և, ճշմարիտ ասած, այնպիսի անաշխատ՝ հանգիստ և անհոգ անձանց մեղադրողը չեմ. արդարև մեր նախնիներից աշխատասիրության գրավոր տեղեկություններ չեն գտնվում: Բայց ես,- շարունակում է պատմիչը վստահաբար,- ստանձնելով վստահության այն մասը, բերում եմ՝ որպես օժանդակություն ազգասեր և կարոտյալ անձանց, ովքեր հարատև փափագներով ցանկանում են քաղել սույն վաստակումների քաղցրաճաշակ պտուղները»¹:

¹ Նույն տեղում, էջ 7:

Հեղինակը կարևորելով իր առջև դրած սրբազան պարտականությունը՝ հայրենի հիշատակների հավաքագրումը և սերունդների դատին հանձնելը, այդուամենայնիվ իրեն «ամենայն գիտնական վարդապետների և արտաքին բանասերների վերջին նվաստը» համարելով, գալիս է ճշմարիտ եզրակացության՝ գտնելով, թե «մեր այս ազգի վերջին ամենասուղ ժամանակում բացեցի աչքերս և բազում նեղություններ կրելով, տեսա երևելի ազգային անձանց կատարածների այսինչ ճռաքաղությունները»¹:

Հեղինակը հետևյալ բացատրությունն է տալիս **«ճռաքաղություն»** տերմինի մասին. «... հետագայի [գրիչները], հայրենասիրության հիշատակները թողնելով, բոլորովին անհամաձայն են մնում նախնիների կատարածներին, որի համար հետին գրածները կոչում ենք **ճռաքաղություն («մնացորդի ժողովում»)** նրանց մոտ»²:

Պատմիչը ստեղծված իրադարձությունների պահանջով և անհրաժեշտությամբ պարտադրված, ազգաքննական աղերսներով պատմագրում է հետևյալը. «... թե որովհետև նախկին մեծամեծ թագավորները, հայրենասեր նախարարները, քաջամարտ զորապետերը կամ վեհանձն հոգևորականները կատարել են քաջություններ կամ [ունեցել են] ազգասիրական այլատեսակ տառապանքներ, [ապա] նախնի հեղինակավոր ուղղափառ պատմաբան վարդապետները իրենց մարգարտաշատ գրքերում շարադրել են և ավանդել մեր այս ազգին: Ուրեմն արժե քննության դնել [և գնահատել] իմ արդար դատողության վստահությունը»³:

Անչափ ցավալի է հնչում պատմիչի խոսքը հետևյալ բառակապակցությունում և նրա շարունակության իմաստը՝ պետականության կորստի գիտակցությամբ. «Հայոց թագավորության վերջանալուց հետո մեր այս ազգը ընկավ զանազան ազգերի ու թագավորությունների իշխանության տակ, թեպետ տարբեր տեղերում նախարարները և զորապետերը ինչ-ինչ քաջություններ և այլատեսակ ազգասիրական բարեգործություններ կատարեցին, սակայն ոչ ազատական [եղանակով], այլ այլազան՝ տարբեր թագավորողների և կառավարողների իշխանության կասկածանքներով»⁴:

Ամենայն մանրամասներով, հայրենավառ հեղինակը **ընդգծում է իր աշխատանքի և՛ կարևորությունը, և՛ հետապնդած նպատակները (դարերին**

¹ Նույն տեղում, էջ 8:

² Նույն տեղում, էջ 8:

³ Նույն տեղում, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 8:

հանձնել ձեռք բերած՝ իր երկրի կյանքին վերաբերող, պատմությունները), և՛ իր առաքելությունը՝ հատկանշելով նաև իր պատմության գրության ժամանակաընթացքը. «... Դա իսկությամբ ավելի հարմար երևաց իմ տկար անձի պակաս գիտությանը. միայն նրանք անցկացնել պատմության մեջ, որոնք Հայոց ՌՃԿ (1160) [1711 թ.] թվականից հետո պատահել են Աղվանից երկրին:

Հիշյալ թվականից մինչև Արցախյան երկրին ռուսաց թագավորության տիրապետությունն [ընկած] շրջանում բոլոր պատահածները բովանդակել եմ այս փոքրիկ պատմության մեջ: Բայց մի քանի հնագույն պատմագրություններ եմ գրել նրա մեջ, գրանցել անցքերի ինչ-ինչ պատմություններ, դրանք ևս անկացրել սույն ձեռագրերի մեջ. հառաջաբանությունից հետո [պատմությունը] (նաև թղթահամարն առանձին) սկզբնավորվել է մինչև այնտեղ, որ [տերն] ասի՝ արժան է համարում: Այն բոլոր պատմությունները օրինակել եմ՝ արտագրելով ձեռագրերից, որի համար քաղցրությամբ ներող ընթերցող անձանցը հայցում եմ ձեր հարգանքներում ընդունել իմ այս փոքր գրավոր վաստակը և հիշել մարդկային անջնջելի տկարությունները, թերևս ներողություն շնորհել անթիվ վրիպումներս»¹:

Պատմիչը փաստացի կերպով նշում է հայրենի երկրի ամրակուռ կազմվածքը, պետականությամբ պսակյալ նրա ճոխությունը՝ քանի դեռ թշնամյաց ոտնձգություններին չի ենթարկվել: Ինչպես պատմիչներից շատերը, Առաքելը ևս խնդրում է հետագա ընթերցողներին բարությամբ հիշել «այս գրքի անպետ՝ անխնամ աշխատասիրող սուրբ Գտիչ վանքի միաբան Առաքել վարդապետին: Եվ դուք,- ասում է շնորհաշատ դպիրը,- արժանի կլինեք ամենակալի առաջ. այստեղ՝ մարմնավոր ժառանգությամբ, այնտեղ՝ հոգևոր, որտեղ մեզ կփառավորի ամենասուրբ երրորդությունը՝ Հայր և Որդի և սուրբ Հոգին, հավիտյանս հավիտենից. Ամեն: Փրկչական 1858 թվականին սկսված և 1868-ին ավարտված՝ տեղեկություններ չլինելու պատճառով»²:

Առաջին ձեռագրերում՝ «Մնախորհեկի բժշկարար նահատակների մասին» (քույր և եղբայր՝ Մինայի և Խորհենի անունից է ստացել Մնախորհեկ սրբավայրի անունը) պատմության մեջ նշված է հետևյալը. «Աղվանից երկրի հայաստանցիների ազգի թագավորության ժամանակ հաստատ և ճոխ էր Հայաստանը [Հայաստան կար], և թագավորները հաջորդաբար նստում էին իրենց այթոռներին, շեն ու շեն տեղեր էին բոլոր քաղաքները և ավանները,

¹ Նույն տեղում, էջ 8:

² Նույն տեղում, էջ 8-9:

դաշտային տեղերը լի էին բնակությամբ՝ Երասխ գետից մինչև Կուր գետը, բերրի Մուղանի դաշտը, որ լի էր բնակությամբ ու մարդկանցով...»¹:

Հայոց աշխարհի կանոնիկ կյանքի խաթարման դեպքում՝ թշնամիներից հասած արշավանքների պատճառով, միանգամայն այլ երանգ են ստանում Կոստանդյանցի նկարագրությունները՝ նույն պատմության մեջ: «Նույն ժամանակ,- գրում է հեղինակը,- պատերազմներ էին սկսվում բոլոր կողմերում՝ ալանաց ազգից և պարսիկներից, բազում գերեվարություն և ասպատակություն եղան Հայաստանում, ուստի սկսեցին նվազել և հետզհետե շարժվել դեպի լեռնային տեղերը»²:

Պարսիկներից հասած չարամտություններից, հավատափոխելու փորձերից հետո, իրենց երդման մեջ հավատարիմ մնացած հրեշտականման քույր ու եղբայր մարմինները բզկտվեցին... ու նրանց տապանված մարմինների տեղը հրաշքներ էին կատարվում, ախտակիր մարդիկ բուժվում էին անխտիր, քանզի «բբաբեր ախտերի բժշկության բազմաթիվ հրաշքներ եղան»³՝ ըստ պատմիչի հաղորդման: Հրաշագործության վայրը գտնվում էր Դիզակ նահանգի Ցրիվ կոչված բնակավայրից ներքև՝ հայացքը դեպի Երասխ գետը:

Արցախցիների ու նրա քաջ նախարար Վելիջանի հերոսական պայքարի մասին է հյուսված «**Ցոր բերդի պատմության և նրա տեղաբնիկների գաղթականության մասին**» պատմությունը:

Հսկայամարմին, չար ու անօրեն մարդիկ Սյունյաց աշխարհում հղանում են չարագործություն կատարել Տաթև Առաքյալի Մուրբ վանքի հանդեպ: Կոտորում են Տաթևի վանականներին, կողոպտում ունեցվածքը՝ արծաթեղենը, ոսկեղենը, սրբալույս մեռոնը հեղում գետնին և այլն: Այն կրկնում են երկրորդ անգամ: Սրբակենցաղ վանականների, եպիսկոպոսների՝ արտասուքով հեղեղված անեծքի ահագնությունից երկրաշարժ է լինում մարդկանց գտնվելու վայրում: Մի մասը գահավիժում է, մի մասը՝ շնչահեղձ լինում, մի մասը՝ ցրվում: Այդ իսկ պատճառով բնակության վայրը կոչվում է **Ցրվան** : Իսկական անունը չիմանալով, պատմիչն այն անվանում է **Ցոր**: Ահա այդ ցրվածներից, ինչպես Առաքել պատմիչն է նշում՝ «Ութ հարյուր տուն եկավ Դիզակի գավառը, որոնց գլխավորը՝ քաջ գորապետ Վելիջան Խումարյանը, [բոլորին] վերցրեց եկավ մի

¹ Նույն տեղում, էջ 25:

² Նույն տեղում, էջ 25:

³ Նույն տեղում, էջ 28:

ձորակ տեղ՝ երկու կողմերից բարձրաբերձ լեռներ, բարեխառն օդ, ցուրտ և առողջարար ջուր, աննման գովական ցորենի բերքատու արտ»¹ :

Ինչպես Սասնա տան եղբայրները որոշեցին բերդ կառուցել, ջուր անցկացնել, նույնպես մեծ գորապետ Վելիջանը մեծամեծ ծախսերով ամրացրեց, շենացրեց Ցորի բերդը՝ ահռելի քարերով պատելով այն: Պարսիկները այս կառույցի մասին լսելով, հետևելով իրենց չար մտադրությանը, որոշեցին արշավել Արցախ երկիր, քարուքանդ անել ժայռերի գլխին թառած Ցորաբերդը, ավարի, ավերի, կոտորածի ենթարկել բոլորին, Վելիջան քաջ նախարարին՝ գերել ու գլխատել:

«Ղարայուսուփ չար գորապետը բազմաթիվ ծանր զորքով եկավ Ցորա բերդի վրա՝ մարտնչելու հայոց քաջ նախարար Վելիջանի դեմ: Երկու կողմերը սկսեցին մարտնչել, բազմաթիվ օրեր նրանք պաշարեցին բերդը: Բայց անմիջաբար պատերազմում պարսիկների կողմից մեծ կոտորած եղավ, որովհետև բերդը անառիկ էր՝ շինված անմատչելի վեմի վրա»²:

Առ. Կոստանդյանցին հաջողվել է տիպական հանգամանքներում, վիպական գեղեցիկ անցումներով, քնարական շերտերով ստեղծել արցախցիների ու մեծ, անմրցակից գորավար-նախարար Վելիջանի հերոսական կերպարները, պայքարող ոգին, պատկերագրել Արցախի աշխարհագրական լանդշաֆտին հատուկ տիպական միջավայր, կերտել տիպական խառնվածքներ՝ օժտելով նրանց հայ մարդկանց հատուկ խիզախ ու աննկուն, միաբան գծերով, որոնք անընդմեջ պարտության էին մատնում Ցորա անառիկ բերդը պաշարող պարսիկների անթիվ-անհամար զորքը: Եվ ոչ միայն. հեղինակը յուրօրինակ գծերով ստեղծել է խորամանկ, բանասարկու, չարամիտ, արյունարբու, այլադավան թշնամու կերպարը՝ հանձինս պարսիկ Ղարայուսուփ չար գորապետի:

Առաքել Վարդապետը ոճական գեղեցիկ հյուսվածքով, հայրենանվեր մղումներով շարադրում է հետևյալը. «Յոթ տարի պատերազմեցին, կորագլուխ պարսիկները հետ դարձան, երբեք չկարողացան վնաս հասցնել կամ հաղթել. այնքան տարիներ պարսից զորքից անթիվ կոտորած եղավ: Բայց այն կատաղածները չհուսահատվեցին, օրըստօրե զայրանում էին. «Գալ միանգամայն կամ բնաջինջ լինել, կամ վերջին տարում հաղթել հայոց նախարարին»³:

¹ Նույն տեղում, էջ 30:

² Նույն տեղում, էջ 30-31:

³ Նույն տեղում, էջ 31:

Պատմական աղբյուրներում փաստվում է, որ այն ինչ չի հաջողվել կատարել թշնամուն Հայոց Արցախա երկրում ավերումով, արյունալի ընդհարումներով, բերդերի պաշարումով և նպատակին չհասնելով, փորձելով կոտրել հայոց մեջքը, նույնիսկ անհավասար կռվով վերացնել, հաղթել հայոց իշխաններին, քաջերին, մելիքներին, հաջողվել է ներքին թշնամու, արծաթամու մատնիչների միջոցով:

Գերի ընկած մի անհրավ կնոջ մատնությամբ, թշնամուն հաջողվում է դեպի բերդ հոսող ջրի ակի տեղը իմանալ, այն կտրել և բերդում գտնվողներին, Վելիջան գորավարին այս կերպ փորձել գերել, չարչարանքներով գլխատել, բերդը հիմնահատակ կործանել, բնակիչներին կոտորել, գեղեցիկ հարս ու աղջիկներին, մանուկներին, կանանց գերեվարել . . .

Անպարտ Վելիջանը, այդուհետև ցուցաբերելով քաջին վայել անկոտորուն կամք, խիզախության դիմելով, յուր մնացած զինվորների հետ խառնվեց թշնամու գործին՝ մտքում որոշելով հետևյալը. եթե պարտվել՝ ապա մարտի դաշտում, եթե հաղթել՝ միմիայն մարտադաշտում, խստիվ հաստատելով՝ «... **որովհետև այնտեղ էր քաջության տեղը:**

Երկու ազգերի ջերմաջերմ արյունը խառնվել իրար և ծովացել էր բերդի հատակներում, կուտակվել էին դիակները, ամենքը ներկվել և թաթախվել էին հանդերձանքով. այնտեղ բոլորը անպատմելի տարակուսական ցավ ու աղետի մեջ էին:

Այնտեղ ընկավ քաջ Վելիջանը գորքով հանդերձ»¹:

Ժողովուրդը հիշողություն և պատվապահություն ունի, ոչ միայն ենթակա այրան ու կոտորածների, այլև վերհառնելու դժոխքից. «Պարսիկների չվելուց հետո բոլոր թաքնվածները ելան ու եկան բերդը, տեսան բերդի ամուր տեղերը քանդված: Երբ ներս մտան, տեսան այնտեղ դիակներն ընկած, կուտակված, արյունը ծովացած, գորապետներն իրենց բերդում ընկած: Հավաքվելով այնտեղ՝ ճանաչեցին իրենց ազգականներին, ընտանիքներին և տարան ամփոփեցին ընդհանուր գերեզմանոցում:

Իսկ քաջ Վելիջանի դին,- սրտի կսկիծով գրում է հեղինակը,- բերին ամփոփեցին Սպիտակ խաչ կոչված վանքին առընթեր՝ Դիզակ նահանգում: Ըստ կտակագրության՝ այնտեղ է թաղված նաև [Վելիջանի] հայրը՝ Խումարը: Փափոք Քրիստոսին հավիտյանս հավիտենից, ամեն . . .»²:

¹ Նույն տեղում, էջ 32-33:

² Նույն տեղում, էջ 33:

Գրականություն

ա) բնագրեր-սկզբնաղբյուրներ

1. Առաքել Կոստանդյանց, Արցախի պատմություն, Ե., «Արմավ» հր., 2019:
2. Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1885:
2. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912:

բ) տեսաքննական աղբյուրներ

ա) հայերեն

1. Բալայան Ջ., Արցախը XIX դարի հայ գրականության մեջ, Ստ., «Դիզակ պլուս» հրատարակչություն, 2021:
2. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Ե., ՀՍՍՌ ԳԱ հր., 1952:

բ) ռուսերեն

1. Ибн ал-Асир, Из Тарих ал Камиль, Баку, 1940,
2. Крымский А., История Персии, ее литературы и дервишской теософии, т. 3, нн 1-2, Москва, 1914-17.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82-9Բ -20Հայ գրականություն*Զինախոյա ԲԱԼԱՅԱՆ**ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.**E-mail: zinaida.54@bk.ru*

ՄԻԼԼՈՔԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱՀՈՔԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԱՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԱՑԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ. «ԱՆԴՐԵԱՍ ԵՐԵՑ»

Հայացքը սկսելով հայ ժողովրդի պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջաններից մեկի՝ XVII դարի առաջին տասնամյակներում տեղի ունեցած պատմական ծանր իրադարձությունների նկարագրին, մասնավորապես շահաբայան առաջին արշավանքներից (1604 թ. սկսած) առաջացած քաղաքական ծայրահեղ ծանր իրավիճակին, այդ ամենի կիզակետում գտնվող հայ ժողովրդի գլխին իջեցված ահավոր հարվածից՝ մեծ սուրբունից՝ գաղթից և դեշիրմեից՝ մանկածողովներից առաջացած սարսափին, Մուրացանը ելնելով ազգային գաղափարաբանության յուր ընկալումներից, իր երրորդ պատմական երկի՝ «Անդրաես Երեց»-ի առանցք է դարձնում էթնիկական տրվածքի փիլիսոփայական ընդհանրացումը՝ այս անգամ մասնավորի զոհաբերումը հավատի հաղթանակին վերապահելով:

Եռյակի (Ռուզան, Գևորգ Մարգպետունի, Անդրաես Երեց) կերպավորումների բարոյահոգեբանական այս միասնությունն է հատկանշում Մուրացանի ընկալած պատմության փիլիսոփայությունը՝ գեղարվեստի առանցքներում, իր ներկայացրած դասերով նորովի ընթերցվելով արդի ժամանակաշրջանի հայ պատմավիպասանների կողմից՝ միաժամանակ պահպանելով ավանդույթի ուժը:

Բանալի բառեր՝ «Բազմավեպ», գաղթ, Առաքել Դավրիժեցի, բանավեճ, մանկածողով, Ներսես Մոկացի, պոլեմիկա, «Գևորգ Մարգպետունի», գենեֆոնդ:

3. *Балаян*

**ФИЛОСОФСКИЕ, ИСТОРИКО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ
ПАРАДИГМЫ СИЛЛОГИЗМА И ИСКУССТВО МУРАЦАНА:
"АНДРЕАС ЕРЕЦ "**

Коснувшись одного из самых сложных и противоречивых периодов истории армянского народа - тяжелых исторических событий первых десятилетий XVII века, в частности, крайне тяжелой политической ситуации, возникшей от первых нашествий шаха Абасса (начиная с 1604г.) и ужаса великого изгнания, переселения, девишirme – страшных испытаний, выпавших на долю находящегося в центре этих событий армянского народа, Мурацан, исходя из своих представлений о национальной идеологии, в своем третьем историческом произведении «Андреас Ерец» акцентирует внимание на философском обобщении этничности, на этот раз прибегая к идее самопожертвования во имя спасения веры.

Нравственно-психологическое единство трех персонажей (Рузан, Геворг Марзпетуни, Андреас Ерец) характеризует лежащую в основе творчества Мурацана философию истории, преподнесенные уроки которой современные армянские авторы исторических романов осмысливают по-новому, в то же время сохраняя силу традиции.

Ключевые слова: "Базмавен", миграция, Аракел Даврижеци, дебаты, отбор детей, Нерсес Мокаци, полемика, "Геворг Марзпетуни", генофонд.

Z. *Balayan*

**PHILOSOPHICAL, HISTORICAL AND PSYCHOLOGICAL
PARADIGMS OF SYLLOGISM AND THE ART OF MURATSAN:
"ANDREAS ELDER"**

The article describes one of the one of the difficult and controversial periods in the history of the Armenian people - the difficult historical events that took place in the first decades of the XVII century, in particular, from the first Shahabas invasions (1604) to the extremely difficult political situation that arose, at the center of all this is the Armenian people, who are receiving a terrible blow from the great exile, from resettlement, from the grave, to the horror and selection of children. Muratsan, based on his ideas about national ideology, makes the main thing in his third historical work "Andreas Yerets" an ethnical theme, this time reserving the sacrifice of the private for the victory of faith.

This moral-psychological unity of the three characters (Ruzan, Georg Marzpetuni, Yerets Andreas) characterizes the philosophy of honor of Muratsan, the art re-read in the lessons is based on a new reading of the prayers of modern Armenian historians, at the same time, the strength of tradition is remained.

Key words: "Bazmavap", migration, Arakel Davrizhetsi, debates, selection of children, Nerses Mokatsi, polemics, "Gevorg Marzpetuni", gene pool.

*Ով տեսել է ներկան, նա արդեն տեսել է ամեն ինչ,
անցյալը՝ անցածի անհունում, և գալիքը՝ ժամանակի անվերջում...*

Մարկոս Ավրելիոս

*Նա մշտապես որոնել է կապը անցյալի հետ, ներկա
իրադարձությունների իմաստն ստուգել պատմության փիլիսոփայությամբ...*

Սերգեյ Սարինյան

Մուրացանի ստեղծագործությունը հայ դասական գրականության անկրկնելի ու բարձրարվեստ, ունիկալ էջերից է:

Ըստ «Բազմավեպ»-ի կարծիքի, եթե Մուրացանի երկերը թագմանվեին օտար լեզուներով, ապա նա՝ իր երկերով հանդերձ, համաշխարհային գրականության երևելիների շարքը կդասվեր...

Ըստ Ա. Տերտերյանի՝ հայ պատմավիպասանության երեք դեմքերից յուրաքանչյուրը (Օերենց, Բաֆֆի, Մուրացան) առանձնանում է իր ոճով, արտահայտչամիջոցներով, կերպարների համակարգի ստեղծմամբ, բայց միանգամայն այլ է Մուրացանի լեզուն և ոճը:

Հիրավի, ամեն տեղ ու ամեն ինչում առանձնացող գրական երևույթ՝ բառիս բոլոր իմաստներով՝ սահմանագծող ու սահմանազատող՝ մինչև ուղն ու ծուծը թաթախված պատմափիլիսոփայական ուրույն գեղարվեստով:

Ապրած ժամանակաշրջանի քաղաքական սուր հարցադրումներին հետևելով, փորձելով դրանց պատասխանել գեղարվեստի առանցքներում, Մուրացանը հայացքը դարձրեց դեպի հեռավոր ժամանակների խորխորատները՝ իր ժողովրդի պատմական անցյալի ծանր կիզակետերից, ծանր մաքառումներից դասեր առնելու, ներկա և ապագա սերունդներին զինելու ազգային պահպանության, ազատասիրության, հայրենասիրության, անձնուրացության գործոններով՝ արժևորելու ազգային գաղափարաբանության, պետականության այն մայրաբերողը (գերակա համակարգերի՝ ազգային միաբանության, պետականության կառույցի, ազատության, ինքնիշխանության, լեզվի, հավատի պահպանության, անխափան կողավորում), որը երբեմնակի անտեսվել, դավաճանվել է անհավատարմությունից, թշնամյաց հետ գործակցելուց, ընդհանուր շահերի անտեսումից, անմիաբանությունից՝ ներսից և դրսից խարխրվել, թշնամիների հարձակումներից՝ ավերումների, կոտորածների, պետականության երերման ու կորստի, հավատի սասանման, ցեղասպանության ավերիչ գործոնների ենթարկվել, հարցականի տակ դնելով հայ ժողովրդի լինելության պատմական փաստը:

XX դարի հայ գրականության, բանաստեղծական արվեստի հանճարափայլ գագաթի՝ **Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի»**-ի փիլիսոփայական ուղերձները՝ գալիքին ուղղված, մասնավորաբար մշակութային հանգանակ եր նաև **պոեզիան** հատկանշող 60-ականների սերնդին պատգամված:

Մուրացանի ստեղծագործությունն իր հերթին, ավանդութակիր հարուստ շերտերով՝ նորի և ավանդականի պարուրաձև մեկնադաշտ է նախանշում՝ գեղարվեստի և պատմության, հոգեբանական ներսուզումների դասեր, գաղափարակիր հերոսների պատմական և վիպական համակարգ առաջադրելով: Թերևս այն՝ առաջին հերթին, 60-ականների սերնդի համար սկզբնադուռ նախանշելով, **արձակի** սահանքներում կանգնած՝ ժխտումի և հաստատումի ելած ոգեկիրներին, անցյալի դասերին, ներկայի և ապագայի սերմնակիր սերմնացաններին՝ հայոց ճակատագրի քաղաքական և փիլիսոփայական մեկնումներին հասու դարձնելով, անցյալից առաքված, ներկայի և ապագայի սերունդներին ազգային անսխալական ճանապարհ առաջնորդելով:

Հետևենք Մուրացանի հավատի հանգանակը նախանշող երկի՝ «Անդրես Երեց»-ի մեկնաբանական շերտերի հարցադրումների քննությանը:

XIX դարավերջին հայ գրականության մեջ գերշխում էին կուսակցական դիրքորոշումները, պոլեմիկական, աչառու վերաբերմունքը թե՛ գրական երկերի, թե՛ նրանց հեղինակների նկատմամբ: Այդ վերաբերմունքը նկատելի էր հատկապես երիտասարդ մի շարք գրողների (Շիրվանզադե, Մուրացան, Թումանյան, Հովհաննիսյան, Փափագյան) և ընդհանրության մեջ՝ ոչ մշակական գրողների (Հայկունի, Բարխուդարյան և ուրիշներ) հանդեպ:

Գրական դաշտում առկա այդ երևույթը ամբողջացված էր մասնավորապես Լեոյի «Ռուսահայոց գրականությունը. սկզբից մինչև մեր օրերը» և «Վէ՛պ թե՛ պատմութիւն» և այլ գրաքննադատական աշխատությունների, հոդվածների մեջ: Քննադատ Լեոյի հասարակագիտական տեսության դեմ պարբերական մամուլում հանդես եկան մի շարք գրողներ, տեսաբաններ՝ Գ. Ենգիբարյան, Մ. Կյուրճյան, Գ. Բալասանյան, Մ. Բերբերյան, որոնց խոսքը հնչել է մե՛րթ չափավոր, մե՛րթ ծայրահեղ ու կոպիտ դրսևորումներով: Քննելով XIX դարի վերջին տասնամյակների ու XX դարասկզբի բանավեճերը հայ մամուլում, Դ. Պետրոսյանը դիտում է. «Իր ժամանակակիցների հանդեպ Լեոյի կողմնակալ վերաբերմունքի հիմնական պատճառը Մ. Բերբերյանը համարում է այն, որ նրա «քննադատական կշեռքը» «Մշակն» է, որի գաղափարական շրջանակի մեջ մտնողներն ու չմտնողները արժանանում են համապատասխան գնահատականի. մտնողները գովաբանվում են, չմտնողները՝ արժանանում հայիոյանքի: Նման մոտեցման արդյունքում «Մշակին» չհամակրող գրողները (Շիրվանզադե, Մուրացան, Վ. Փափագյան) ոչ միայն ըստ արժանվույն չեն գնահատվում, այլև ստանում են վիրավորական բնորոշումներ»¹

Թե՛ ի՞նչ պատճառաբանվածությամբ ու քննական մղումներով, ի՞նչ սկզբունքայնությամբ էր առաջնորդվում գրաքննադատ Լեոն յուր տեսական

¹ **Պետրոսյան Դ.** *Գրական բանավեճերը 20-րդ դարի հայ մամուլում, Ե., Երևանի համալսարանի հր., 2007 (այսուհետև՝ Պետրոսյան Դ.), էջ 291:*

ընդհանրացումներում, քննադատության դիրքորոշման ու էության, տեսաբանի դերի ու ծրագրայնության մասին գրական մշակների ու բանաստեղծական երկերի հանդեպ, երևում է թե՛ «Կրիտիկան հայ մամուլի մեջ» հոդվածում («Կրիտիկան կոնտրոլ է մարդկային մտքերի վրա»), թե՛ «Ռուսահայոց գրականությունը...» ուսումնասիրության՝ «Մի քանի խոսք ընթերցողին» ներածական խոսքում:

Ըստ մեկնաբանի՝ քննադատությունը «միշտ և ամեն տեղ անհատական, անձնական բնավորություն ունի, քանի որ քննադատը իր կարծիքների, իր անձնական տպավորությունների վրա է գլխավորապես հիմնվում: Քանի քննադատներ, այնքան կարծիքներ,- այսպես կարելի է ասել», փորձելով իր չկամությունը անտեսանելի դարձնել, նպատակաուղղվածությունը ոչ անձնական հակվածությունը, այլ իր՝ հերքողի ճշմարիտ ձիրքը, «իմ հայացքները, իմ ըմբռնողությունը, համոզմունքները, գրական դաստիարակությունս»¹ :

Այս սխալ դիրքորոշմամբ Լեոն իր կրիտիկայի սլաքը ուղղեց նաև Մուրացանի թե՛ «Ռուզանի»-ն, թե՛ «Անդրեաս Երեցի»-ն:

Հիպպոլիտ Թենի կուլտուր-պատմական դպրոցի հետևորդներ Լեոյի և իր հակառակորդների ու այլևայլ սկզբունքներում կանգնած, իր հետ պոլեմիկայի մեջ մտնող հեղինակների բանակոթիվներից հետևություն անող տեսաբան Դ. Պետրոսյանը նկատում է. «ա) Երկու դեպքում էլ Լեոն հավատարիմ է մնում սկզբունքներին և շարունակում է գրական գործընթացները քննել օգտապաշտական հայացքների դիտանկյունից, բ) հավատարիմ է մնում սկզբունքներին»²:

Իսկ ինչ քննաչափով Լեոն անդրադարձավ «Անդրեաս Երեց»-ին, որի դեպքում Մուրացանը Լեոյի շարադրանքը համարում է «սուր և անխիղճ հերյուրանք»³:

Արդյոք «տիրացուական ազգասիրության» ազդակներ կան «Հայ բողոքականի ընտանիքը», «Իմ կաթողիկ հարսնացուն» և «Անդրեաս Երեց» երկերի քննադաշտում՝ դա հարցի մի կողմն է և, ըստ ընդհանրության՝ այդ երկերի միջև դիտված եզրերը գրեթե բացակայում են: Դրանց շուրջ բանավիճային դաշտը ակտիվ կերպով թեր ու դեմ մեկնաբանող հերքումներ ու հաստատումներ է արձանագրել (Լեո, Վ. Փափազյան, Վ. Պարտիզունի, Ա. Օհանյան և այլն), հայրենասիրության, անձնագոհության փաստարկումներ հայտնաբերել «Անդրեաս Երեց»-ում. հարցին անդրադառնանք մի այլ կարևոր քննօղակից՝ ազգային գաղափարակառույցն ամրապնդող եզրույթից:

«Անդրեաս Երեց»-ի պատմական առանցքը XVII (1601-1617 թթ.) դարի առաջին տասնամյակներին Հայաստանում տեղի ունեցած պատմական ծանր ու

¹ Լեո, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, Ս.Ղազար, 1904, էջ 2:

² Պետրոսյան Դ., էջ 293:

³ Մուրացան, Իմ երկերի քննադատության առիթով, «Լուսմա», 1909, N 4, էջ 59, տե՛ս Մուրացան, ԵՃ, հինգ հատորով, հատոր հինգերորդ, ՀայՊետՀրատ, 1954:

ողբերգական իրադարձություններն էին՝ պարսկական շահաբայան արշավանքները դեպի Հայաստան, ապա ունիթոր կոչված պապական արքանյակների «սխրանքները»՝ քանդել հայ ընտանիքների սրբությունները՝ միմյանց օտար, թշնամի, կաթուղի դարձնել ընտանիքի անդամներին, որսավով անմեղ հոգիներ: «Սրա վրա էլ,- «Անդիեաս Երեց»-ի «Նախադրություն» սկզբնամասում գրում է Մուրացանը,- պետք է ավելացնել ունիթոր կամ միաբանող կոչված պապական արքանյակների սխրագործությունները, որոնք դեռ 13-րդ դարու կեսից մուտ էին գործել մեր աշխարհը և ամեն տեղ տարածվել, սկսած Ռուբինյան թագավորության երկրից մինչև Հայաստանի հեռավոր նահանգները: Անհավատներին քրիստոնեություն քարոզելու փոխարեն, դրանք նահատակ հայ ժողովրդի անդամներին էին որսում, հայրենի եկեղեցուց հեռացնում և «միաբանող» լինելու փոխարեն՝ բաժանող և պառակտող հանդիսանում: Հեռացնելով որդին ծնողից, եղբայրը եղբորից, կինը ամուսնուց՝ ընտանիքների ու հարազատների միջից սերն ու միությունը վերացնում էին: Այսպիսով մահմեդական հրեշների թողած պակասը դրանք էին լրացնում և դեռ մի բան էլ ավելի, որովհետև մահմեդականները նյութապես էին կեղեքում, իսկ դրանք՝ հոգեպես ու բարոյապես»¹:

Անշուշտ, ազգության ֆիզիկական հարստության՝ պետականության, բացակայության դեպքում, բարոյական հարստության արժեքն ավելի են բարձրացնում ազգության հոգեկերտվածքը ժառանգած նրա մտավոր գործիչները, որոնց կարելի է հանդիպել պատմության դժվարագնա ճանապարհներին՝ հայության ողբերգական ճակատագիրը ներկայացնող թե՛ պատմական, թե՛ վիպական կերպավորումներում:

Եվ, ինչպես Գյոթեն իր փիլիսոփայական վեպերում արդեն համոզված է, որ ինքն էլ խորապես չի կարող իր հերոսի բարդ ներաշխարհը բացահայտել, ուր մնաց քննադատությունը, նույնպես Մուրացանի պատմական վեպում վերողիտված գաղափարահիմք հանդիսացող կառույցում կա ամբողջությամբ բացահայտելի երրորդ առանցք, սարսափ տարածող, ազգի գենեֆոնը կլանող գործոն, որն իր հերթին ևս չարիքների չարիքն էր հանդիսանում ու համակողմանի վերլուծության կարիք ունի: Դա պատմական աղբյուրներում փաստված **«մանկածողովն» էր՝ «ղևջիրմեն»**: Այն հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի համար, իր բերած ու սպասվելիք ծանր հետևանքներով հղի ազգային ողբերգության երակ էր հանդիսանում, կործանարար ճանապարհ: Եվ ոչ միայն:

Պարսից շահերը իրենց գրաված երկրներում հայտարարում և իրագործում էին այդ դաժան օրենքը՝ **«ղևջիրմեն»-մանկածողովը**: «Մանկածողով» հատկապես հայտարարում էին հայերից, հույներից և մի քանի այլ նախորոշված

¹ **Մուրացան**, Եժ, յոթ հատորով, հատոր հինգերորդ, Ե., ՀայՊետշրատ, 1963 (այսուհետև՝ Մուրացան, հատոր հինգերորդ), էջ 68:

ազգերից. նշանակում է, այն իր խորքում միաժամանակ համազգային աղետ էր հանդիսանում:

Երևանը գրաված ահեղ և խորամանկ պարսից Շահ Աբաս արքան «կամենում էր մի երկու շաբաթ անցցնել Նախիջևանում, հայերի հյուրասիրությունը վայելելու համար»¹:

Իր հին հաշիվներից էլնելով, փորձելով վրեժխնդիր լինել Անդրեասից, որի գեղեցիկ կինը՝ Վարդենին, իր սերը արհամարհելով, նախապատվել էր առաքինի, ազնվաբարո երեցին՝ Անդրեասին, նենգապատիր Շահռուխ Բեկը առաջարկում է շահին հյուրընկալելու վայր գեղատեսիլ Ագուլիսը, որտեղ և շահի հրամանով կկատարվեր **«մանկաժողովը»**:

«Անդրեաս Երեց» վեպի (Մուրացանը այն պատմական վիպակ է անվանում²) նյութը, ի սկզբանե, առաջին հերթին «մանկաժողովներից» վթարված հայության անելանելի իրավիճակի պատմությունն էր ներկայացնում՝ XVII դարի պատմաքաղաքական իրադարձությունների ընդհանուր ֆոնին՝ շահաբայան **գաղթերի՝ «մեծ սուրգունի»** և **«մանկաժողովների»՝ «ղեշիբմեի»** նկարագրությամբ, որովհետև սրանք իրենց խորքում հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով հղի պատմական փաստեր էին ներկայացնում, որոնք, ինչպես նշեցինք, Մուրացանի վեպում որպես առաջնահերթ քաղաքական, փիլիսոփայական հարցադրումներ են ներկայանում:

Մանկաժողովները երկու՝ **«տղայաժողովի»** և **«աղջկաժողովի»** կարգով էին կատարվում: Օտարների կողմից իրականացվող այդ անմարդկային, հանցագործ, բացասական երևույթները, հետապնդած ծրագրերը՝ իրենց հետևանքներով, իրենց խորքում անչափ դաժան էին:

Մանկաժողովների միջոցով հայերից և այլ ժողովուրդներից որպես հարկ վերցված մանուկներին (**տղա և աղջիկ**) կամ լցնում էին շահի հարեմները, կամ դարձնում էին կատաղի ենիչերներ՝ ուղղորդելով իրենց իսկ ծնած ժողովրդին կեղեքելու, բռնաբարելու, ոչնչացնելու ծրագրի իրագործմանը, կամ՝ որպես ստրուկներ, վաճառում էին և այլն:

Մովսես Անապատականի երբեմնի ուշիմ, շնորհաշատ աշակերտ, արդեն Ագուլիսի դպրոցի վերակացու և ուսուցիչ տեր Անդրեաս Երեցը, իմանալով մանկաժողովի մասին, ի սկզբանե ահա նմանատիպ չարիքի առաջն է ուզում առնել՝ շահի դաժան հրամանից փորձելով փրկել իր սիրասուն և ձեռնասուն, հոգեսուն աշակերտներին:

Անդրեաս Երեցը նախօրոք **արհեստական գոնջ (ժամանակավոր մազաթափող նյութ)** է պատրաստում և քսում իր աշակերտների գլուխներին՝ մազաթափելու, որպեսզի, երբ շահի առջևով շարքերով անցնեն՝ տգեղ ու այլանդակ երևան ու չիրականանա օրենքի ուժ ստացած մանկաժողովը, քանզի

¹ *Մուրացան, հատոր հինգերորդ, էջ 75:*

² *Տե՛ս նույն տեղում, էջ 63:*

տգեղներին, հիվանդներին չէին ընտրում: Ցավոք սրտի, «**մոտիկ**» մարդիկ Անդրեասին մատնում են շահի առջև: Վերջինս, իր շահական մեծափառությունը անարգված տեսնելով, Անդրեաս երեցին դատապարտում է կախաղանի:

Իր հաղթանակից ցնձացող Շախտուխ բեկը, երբեք չէր կարող կռահել, որ իրեն ներկայացող և իր ամոթալի առաջարկն առերես ընդունող Վարդենին կարող էր սրի մի հարվածով սպանել իրեն, ցույց տալով հայ կնոջ հերոսական ու առաքինի վարքը՝ արժանի իր սիրած ամուսնուն ու իր սնած, թանկագին ժողովրդին:

Ինչպես տեսնում ենք, շահի հրամանով կախաղանի ենթարկված Անդրեաս Երեցի կատարած հանդուգն ու աննախադեպ սխրանքն իր խորքում դեռևս տիրացուական ոչ մի քայլ չէր հիշեցնում. նա իմացյալ կերպով դիմադիր է եղել շահի հրամանին՝ մանկաժողովից փրկելու հայ մանուկներին, պատանիներին՝ իր աշակերտներին, նրանց հետագա ծանր ճակատագիրը շեղելու առաքելությամբ:

Վիպական հետաքրքիր անցումներով են զարգանում վեպի մեջ կատարվող հետագա գործողությունները: Հերոսական շերտերով է տրված Անդրեաս Երեցի կերպարը, գեղարվեստական վառ գույներով՝ պատվասեր և խիզախ հայ կնոջ՝ Վարդենու վիպապատումը:

Պարսկական զագրելի տիրապետության չարիքը փորձում է իր հունձքը առատ դարձնել... Վիպական գործողություններին զուգահեռ բացվում է փորձության ենթարկված Անդրեաս Երեցի՝ հայրենասիրական մղումին ուղղորդված առաքելությունը սասանելու և այս կերպ նրան կախաղանի ճիրաններից փրկելու առաջարկը. այն է՝ պապական արքայականների, պապի նվիրակ Չիտտադինի և ունիթորների կարգապետ հայր Երազմոսի խորհրդին հետևել, դառնալ ունիթորական, մերժել հայրենի եկեղեցին և փրկվել կախաղանից:

Ազգային գաղափարակառույցն ամրապնդող իր վարքով, առաքելությամբ զարդարված, իր սրբազան **հայրենիքն ու հավատն** աներեր պահող երիտասարդը մերժում է քրիստոնեական միաբանությունը պառակտող ունիթորների առաջարկը՝ ամուր մնալով իր **հավատի** Վճռում...

Նրան իր ընդունած Վճռից չի սասանում նաև պարսիկ կրոնապետի պահանջը՝ ուրանալ քրիստոնեական հավատը, ընդունել մահամեղականություն՝ փրկվելու կախաղանից:

Իր հայրենիքի գենեֆոնդի ծաղիկը փրկող հայրենասեր երիտասարդը՝ այդ պահին հայրենիքի սրբությունները պահպանող զինվորը, ազգային գաղափարակառույցին նվիրված գիտակից մարտիկը, չի սասանվում իր ընտրած ճանապարհից և մերժում է բոլոր սին ու պատվազուրկ, վտանգավոր առաջարկները՝ փրկվելու կախաղանից՝ անմահանալով իր ընտրած հերոսական ճանապարհին:

Ահա այս ազգային գաղափարակառույցի ու ազգության հավատի պահպանման զինվորն է արիական-հերոսական բնույթագրումներով փայլող Անդրեաս Երեցը:

Անդրեասը՝ Մուրացանի բարոյական ու քաջագուն, վսեմ հատկություններով պասկյալ իդեալ հերոսը, նահատակվել է 1617 թ. նոյեմբերի 18-ին:

Անդրեաս Երեցը, նկատի ունենալով Չիտտադիինի և պարսկական հովվապետի առաջարկները (ամենից առաջ նրա սխրանքը մանուկներին՝ հայ գենեֆոնդի սերուցքին՝ իր սիրասուն աշակերտներին, փրկելն էր) գոչում է. «Ուրեմն, նա ինձ առաջարկում էր այն, ինչ որ ինքը, մեծափառ շահը: Մինը պահանջում էր՝ թողնել քրիստոնեությունը և լինել մահմեդական, մյուսը առաջարկում էր՝ թողնել հայությունը և լինել կաթոլիկ... Արդյոք այս երկու առաջարկներն էլ միևնույն կշիռը չունին, երկուսն էլ միաժամանակ չէին պահանջում, որ ես դավաճանեմ իմ ազգին, իմ հայրենական եկեղեցուն: Հարկավ այդպես է: Ուստի ես բացե ի բաց մերժեցի հայր Երազմուսին և նախատեցի նրան՝ յուր անարգ առաջարկի համար: Բայց ահա,- շարունակում է յուր վրդոհվալից խոսքը Արդրեասը,- ինչպես տեսնում եք, պապի իմաստուն ծառաները չեն գոհացել իմ մերժմամբ. նրանք խնդրել և ստացել են շահից իմ ազատության հրամանը, որպեսզի կարողանան ձեզ ասել թե՛ «տեսեք հայեր, որքան հզոր և կարող է պապը, որքան մեծ ու անսահման է նրա իրավունքը.- այն մահապարտը, որին ազատել չկարողացան բոլոր հայերը ու պարսից ավագանին, ազատեց մի Չիտտադիինի, լոկ Հռովմա պապի անունով... Եկեք, ուրեմն, հայեր, խոնարհեցեք այդ գործության առաջ, թողեցեք ձեր ազատությունը, ձեր եկեղեցին, ձեր լույս հավատը, սուրբ Էջմիածինը և դարձեք ծառա Հռովմա գահին...»: Օ՛ն և օ՛ն, հայոց ժողովուրդ. մի՛ ուրախանաք այս նենգամիտ շնորհով, որն այսօր մի հոգի փրկելով՝ վաղը հարյուրը պիտի կորցնե. այսօր մի տեր-Անդրեաս ապրեցնելով՝ վաղը նման տասին պիտի մեռցնե,- չեմ ասում սրով, այլ հոգվով ու սրտով...: Մի՛ ընդունեք ուրեմն այս շնորհը, մի՛ գոհանաք այս մարդկանց ձեզ արած ծառայությամբ: Զոհեր տվեք աներկյուղ, եթե այդ պահանջում է ձեր եկեղեցվո ազատությունը»¹:

Անդրեաս Երեցն ամուր և անսասան է պահում իր հավատո հանգանակը և մտադիր չէ իր վճռից հրաժարվել՝ նահատակվելուց փրկվել հանուն իր ազատության. «... Զի հայոց եկեղեցին գորավոր է և նա յուր հիմքը փորող բազուկները կջախջախե: Նա գորավոր է ոչ թե աշխարհակալ արքաների պաշտպանությամբ, այլ յուր անձնվեր որդվոց նահատակությամբ, և նա չի ընկճվիլ, չի հաղթահարվիլ, թեկուզ Հռովմա պապը և Ֆռանգի թագավորները՝ քրիստոնեության թշնամի Շահաբասի հետ միացած աշխատեն նրան կործանելու համար: Կգա ժամանակ, երբ մեր այս Սյունիքում, ուր դուք այսօր հաստատվել և ամեն կողմ ցանցեր եք սփռել, ձեր հետքն անգամ չի երևալ, և

¹ *Մուրացան, հատոր հինգերորդ, էջ 220-221:*

հայոց հայրենական եկեղեցին կլինի միակ հովանավորողը յուր հարազատ գավակներին...»¹, - անպատմելի գայրույթով գոչում է Անդրեասը:

Անդրեաս Երեցն աներկյուղ պատռում է իր ազատության համար կնիքված, շահի կողմից տեր-Մաթևոս Երազմուսի և տեր Մարիա-Չիտտադինիի միջոցով ուղարկված հրամանագիրը: Դահճապետը այդ հանդգնությունը տեսնելով, դաշյունի հարվածներ հասցնելով թափում է քահանայի փորոտիքը՝ հրամայելով նրան կախաղան բարձրացնել: Ապա անթիվ սրահարվածներով թրատում է Անդրեաս Երեցի աղոթող և խաչակնքող ձեռքերը և մարմնի մնացած անդամները...

Անարգված շահի հրամանով թրահարված, գլխիվայր կախաղան բարձրացված Անդրեասի մարմինը ձգեցին բաց դաշտ, որ գազանները բզկտեն նրա մարմինը...

Անդրեաս Երեցի մարմինը հսկող հայերին, մելիքներին դժվարությամբ է հաջողվում առնել անողոք շահի համաձայնությունը՝ հողին հանձնել նահատակին...

Անդրեաս Երեցը պատմական և վիպական կերպավորում է: Նրա առաջին վիպական կերպավորումը տվել է **XVI դարի վերջի և XVII դարի առաջին քառորդի նշանավոր գործիչ, փիլիսոփա, Լիմի միաբանության հիմնադիր առաջնորդ, Բանաստեղծ-տաղերգու Ներսես Մոկացին** իր՝ «Գանձ նոր նահատակին և սուրբ քահանային Անդրեասի Նախճաւանցոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի» գանձում՝ նվիրված Անդրեաս երեցի հաստատակամության, հավատի պահպանման և հերոսական նկարագրին ու նահատակության մանրամասներին, անձ, ով իր մահով փրկել է շատերի կյանքը և անմահացել: Գանձը գրվել է ականատեսի ու ականջալուրի թարմ ազդեցությամբ ու վկայությամբ, մեծ սիրով ու նվիրաբանությամբ:

Ներսես Մոկացին ծնվել է **պատմական Հայաստանի Մոկք գավառի Ասկնջավս գյուղում**, ունեցել է **Վանեցի** և **Բեղլու** անվանումները:

Ներսես Մոկացու և՛ գանձը, և՛ տաղը խազավորված են, որը վկայում է նրա ունեցած երաժշտական գիտելիքների մասին:

XV դարից սկսած մինչև XVII դարի առաջին տասնամյակները՝ տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած մանկաժողովների՝ դեշիրմեի, շահաբայան ծանր գաղթերի՝ մեծ սուրբունի, Շահ Աբասի կերպարի տարաբնույթ՝ չար ու բարի բնութագրումների մասին պատմավիպական տեղեկություններ են պահպանված XVII դարի պատմիչներ, ժամանակագիրներ Գր. Դարանաղու, Զաքարիա Սարկավագի, Առ. Դավրիժեցու, Ներսես Մոկացու երկերում և նորագույն ու արդի ժամանակաշրջանում՝ Լորետա Դանեղյանի և այլոց քննական ուսումնասիրություններում:

¹ Նույն տեղում, էջ 221:

Երանելի **Մաղաքիա Դերջանցի վարդապետին** հաջողվել է մեծ փրկագնով անվավեր դարձնել շահի այդ վայրենի ու սարսափներով լի, քաղաքական դիմագիծ ունեցող հրեշավոր հրամանագրերը:

Ամենից առաջ, մեր վիպական հերոսների զարմանահրաշ առաքինություններին կարող ենք հանդիպել պատմական վավերագրերում, իսկ թե ինչ սկզբունքներից ու գաղափարակառույցից են խնդրառություն ընդունում վիպասան-գրողները, բանաստեղծները իրենց երկերը հյուսելիս՝ իրենց ապրած ժամանակաշրջանի ազգային գաղափարաբանության հրամայականից է կախված:

Այս կարևոր հանգամանքը պետք է հաշվի առնեն ուսումնասիրողները՝ ամենից առաջ քննելով պատմությունը, պատմական վավերագրերը, վիպականությամբ շաղախված հերոս-նահատակների թողած ուսանելի դասերը, նրանց զարմանահրաշ վարքաբանությունը, որոնք սերունդներ են դաստիարակել ու դաստիարակելու են դեռ, նաև նորօրյա մեր հերոս նահատակներին առած իրենց քրքրված ու սրբացված վարքամատյանը՝ ահեղ վկայության ու ներկայության պես:

Հիրավի, ճշմարիտ է դիտել Ս. Մարինյանը գրելով. **«Մուրացանը ներկային պատասխանելու համար հարցում է անում անցյալից»:**

Մուրացանի հերոսների բույլը: **Անդրեաս Երեց.** Ազնվագույն հերոսականություն ու ազգային գաղափարակառույցն ամուր պահպանող երդվյալ հերոս-նահատակ՝ վիպապատմական, փիլիսոփայական, գեղագիտական, հավատաքննչական օրենքների հավատի պահպան, գեղեցիկ արարումներով սրբացված, անմահացած Հայոց ժամանակների ու նրա Կերոնների անթվակիր շարքում...

Դյուցազնական ու անքննելի է Նրանց հավերժական երթը, հիշատակը անմար՝ միշտ և ամենուր՝ դարերի-ժամանակների հոսքում՝ խոնարհման, խնկարկման արժանի...

Եզրաբանության փոխարեն՝ ըստ Ս. Մարինյանի. «Ոչ մի գրող այնպես չի սահմանափակել իրեն գրական-պատմական պրոցեսից և այնպես չի օտարել իրեն գրական միջավայրից, ինչպես Մուրացանը»՝ որպես «հայ գրականության պատմության մեջ մի չափազանց առանձնակի երևույթ»¹:

Հիրավի, գրական մեծություն, որը՝ ըստ Դեմիրճյանի, որպես զբաղմունքի առարկա էր ընտրել Շեքսպիրին, Գյոթեին, Բայրոնին, Հայնեին, Պուշկինին, Լերմոնտովին... Եսքիլեսին, Մոֆոկլեսին, Եվրիպիդեսին և այլ երևելիների...

Պատմության և գրականության փիլիսոփայության, մեթոդաբանության, ազգային գաղափարաբանության մուրացանյան գեղարվեստի մոդելը («Ռուզան կամ հայրենասեր օրիորդ», «Գևորգ Մարգպետունի», «Անդրեաս Երեց»), հիրավի պատմական նյութի հանդեպ հեղինակի ստեղծագործական ինքնատիպ,

¹ Մարինյան Ս., *Մուրացան, Ե.*, «Հայաստան», 2004, էջ 60:

բարձրակարգ մոտեցումները՝ իրենց բարերար ազդեցությամբ հանդերձ, անչափ շոշափելի են հայ պատմավիպագրության, և ընդհանրապես, արձակի զարգացման վրա՝ ավանդականի և նորի ոճավորմամբ, զուգահեռմամբ՝ ինչը գրականության նորոգության, մերձեցման, ավանդների շարունակման աղերսներ է արձանագրում:

Գրականություն

ա) քննադրեր-սկզբնաղբյուրներ

1. Մուրացան, Իմ երկերի քննադատության առիթով, «Լուսն», 1909, N 4, տե՛ս Մուրացան, ԵԺ, հինգ հատորով, հատոր հինգերորդ, ՀայՊետհրատ, 1954:
2. Մուրացան, ԵԺ, յոթ հատորով, հատոր հինգերորդ, Ե., Հայպետհրատ, 1963, 347 էջ:

բ) տեսաքննական աղբյուրներ

1. Լեո, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904:
2. Պետրոսյան Դ., Գրական բանավեճերը 20-րդ դարի հայ մամուլում, Ե., Երևանի համալսարանի հր., 2007, 368 էջ:
3. Սարինյան Ս., Մուրացան, Ե., «Հայաստան», 2004, 248 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ., Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82.09Գրականագիտություն**Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ****ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ****E-mail: ghazarian.hasmik@gmail.com**

Հ. ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈԵՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննության է առնվում Հովհ. Շիրազի պատմափիլիսոփայական երկերից մեկի՝ «Անի» պոեմի թեմատիկ և պատկերային առանձնահատկությունները: Հայ գրականության պատմության մեջ պոեմն ունի նորարարական մեծ արժեք: Պատմական այդ բարդ ժամանակաշրջանի համապատկերում բանաստեղծը կերտել է գեղարվեստական հզոր կոթող, որով էլ պայմանավորված է պոեմի հաջողվածությունը: Հայոց հնագույն մայրաքաղաք Անիի կյանքի լայնակտավ պատկերումն ու կործանման պատճառներն են վեր հանվում պոեմում, որն անշուշտ ունի արդիական հնչեղություն:

Շիրազը բարձր արվեստով է ստեղծել դարաշրջանին բնորոշ մարդկային բնավորությունները, տվել նրանց գեղագիտական բնութագրերն ու առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ Հովհ. Շիրազ, Անի, խոհափիլիսոփայական պոեմ, 11-րդ դար, Բագրատունյաց թագավորություն, Հովհաննես-Սմբատ, Վահրամ Պահլավունի, կորուսյալ հայրենիք, կարոտ, Մասիս, ողբերգություն, բռնազավթում, ծորացող վերք:

А.Хачатрян

ТЕМАТИЧЕСКИЕ И ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПОЭМЫ ОВ. ШИРАЗА «АНИ»

В данной статье подвергаются анализу тематические и изобразительные особенности одного из историко-философических произведений Ов. Шираза – «Ани». В контексте того трудного исторического периода армянской литературы, поэт создал мощнейший литературный памятник, чем и был

обусловлен успех произведения. В поэме раскрывается широкий спектр жизни города Ани, причины его разрушения, что, несомненно, имеет современное звучание. Шираз искусно воссоздал образ человека того времени, раскрыл с литературно-научной точки зрения его характер и особенности.

Ключевые слова: Ованнес Шираз, Ани, философская поэма, 11-ый век, царствие Багратидов, Ованнес-Смбат, Ваграм Паглавуни, потерянная Родина, тоска, Масис, трагедия, захват, кровоточащая рана.

A. Khachatryan

THE THEMATIC AND VISUAL FEATURES OF THE POEM

«ANI» BY H. SHIRAZ

This article analyzes the thematic and visual features of the historical and philosophical work «Ani» by H. Shiraz. In the context of that difficult historical period of Armenian literature, the poet created a great literary monument, which made the work successful. The poem reveals a wide range of life of Ani, the reasons of its destruction, which undoubtedly has a modern sound. Shiraz skillfully recreated the image of a man of that time, revealed his character and features from a literary and scientific point of view.

Key words: Ovannes Shiraz, Ani, philosophical poem, 11-th century, Bagratid kingdom, Ovannes- Smbat, Bahram Pahlavuny, lost motherland, homesickness, Masis, tragedy, capture, bleeding wound.

Հովհ. Շիրազն «Անի» պոեմը գրել է ստալինյան ժամանակներում՝ 1950-1951 թվականներին, սակայն ինչպես Շիրազի մյուս ստեղծագործությունները, այնպես էլ «Անի» պոեմը հանդիպել է լուրջ դիմադրության: Խորհրդային գաղափարական պարտադրանքի տարիներին Շիրազը հանդգնեց գրել պոեմ կորուսյալ Անի քաղաքի մասին և բարձրաձայնել՝ «Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»: Բազում մեղադրանքներով անընդհատ հետաձգեցին պոեմի հրատարակումը: Բանաստեղծը մեծ հույսեր ու սպասելիքներ ուներ պոեմի հետ կապված, բայց պետհրատարակչությունն անընդհատ հետաձգում է, հասկանալի պատճառներով:

1954թ. «Հատընտիր», «Քնար Հայաստանի» գրքերում Շիրազը պոեմից որոշ հատվածներ է զետեղել, սակայն նա կյանքից հեռացավ, այդպես էլ չտեսնելով «Անին» ամբողջական հրատարակված, թեև բանաստեղծն անհագ փափագ ուներ, որ պոեմը պետք է տպագրվեր Բազրատունյանց ազատագրված ու վերաշինված Անի մայրաքաղաքի տպարանում:

Միայն 2011թ. գրականագետ, դոկտոր-պրոֆեսոր Ս. Մուրադյանի խմբագրմամբ ու առաջաբանով Երևանի պետական համալսարանի հովանավորությամբ լույս ընծայվեց «Անի» պոեմը՝ բաղկացած 308 էջից՝ 11 հազար տողով:

Պռեմում Շիրազը պատկերել է 11-րդ դարի առաջին կեսի իրադարձությունները, երբ Բագրատունյաց հայոց մայրաքաղաքը հայտնվել էր թշնամու թիրախում, և, ինչպես միշտ, գործում էին ներքին պառակտիչ ուժերը: Շիրազը թեև գեղարվեստականացրել է պատմական այդ ծանր ու դժնի ժամանակաշրջանը, սակայն պոեմի նյութն ու շարադրանքն այնքան պատմականորեն ու անհերքելի վավերագրական հիմքերով են ներկայացված, որն ընթերցելիս թվում է, թե անցնում ես «պատմության քառուղիներով»:

Պռեմը բաղկացած է 18 գլուխներից, վերջին մասից և վերջերգանքից, որոնցում բանաստեղծը տվյալ դարաշրջանին հատուկ ոճով է ներկայացրել մարդկային կերպարներն ու նրանց շուրջը զարգացող գործողությունները:

Անի քաղաքը Շիրազի համար կորուսյալ հայրենիքի խորհրդանիշ էր, բաց ու ծորացող վերք, հայոց անցյալի փառքի մեծ խորհրդանիշ:

Բագրատունիների՝ շուրջ 100 հազար բնակիչ ունեցող մայրաքաղաքն ապրում էր բուռն ու ծաղկուն կյանքով, ուներ զարգացած արհեստագործություն և ճարտարապետություն, գիտական և մշակութային կարևորագույն կենտրոն էր:

Անին հայտնի է որպես «հազար ու մի եկեղեցիների քաղաք»: Գլխավոր եկեղեցին՝ Անիի Աստվածածին կամ Անիի Մայր տաճարը, կառուցվել է Տրդատ ճարտարապետի կողմից՝ 989-1001թթ., որն էլ համարվում է հայ և համաշխարհային ճարտարապետական լավագույն նմուշներից մեկը:

Միջնադարում այստեղով էին անցնում բազմաթիվ առևտրային ճանապարհներ, և հենց այս բարենպաստ աշխարհագրական ու ռազմավարական դիրքի, հարստության ու ճոխության պատճառով էլ Անին դարձել էր հարևան գիշատիչ տերությունների թիրախը, որոնք ամեն կերպ ջանում էին տիրանալ Արևելքի մարգարտին:

Գագիկ Ա թագավորից հետո թուլացավ Բագրատունիների պետությունն ու սկիզբ առան ներքին խժոժությունները: Ահագնացան երկպառակությունները թագավորի երկու որդիների՝ Հովհաննես Սմբատի և Աշոտ Դ-ի միջև: Նրանք երկուսն էլ հավակնում էին տիրանալ գահին՝ հաշվի չառնելով երկրում տիրող ծայրահեղ ծանր վիճակը: Թուլացած երկրի անմիաբանությունը կործանարար եղավ հայոց ճակատագրի համար:

Հովհ. Շիրազն այս ողբերգական անցքերն է նկարագրել «Անի» պոեմում: Բանաստեղծի խոսքը մերթ եղերական է, մերթ ըմբոստ, մերթ պահանջկոտ ու ցասումնալից, որն, անշուշտ, բխում է կորուսյալ հայրենիքի ցավից կծկված սրտից: Ինչպես նկատել է գրականագետ Հրանտ Թամրազյանը. «Շիրազի ստեղծագործությունը իր լավագույն դրսևորումներով դառնում է մեր ժողովրդի պատմության մի որոշակի շրջանի բանաստեղծական արձագանքը, ներաշխարհի նրբին պատկերը, ազնիվ տենչերի և հույզերի երգը»¹:

¹ Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր. 1975, էջ 223:

Պոեմում Շիրազն իր գրչին հատուկ խոսուն ու պատկերավոր ոճով է նկարագրում Անիի ողջ հմայքն ու գեղեցկությունը.

Աստվածամոր հոնքերն անգամ
Այնքան նրբին կամար չունեն՝
Որքան գմբեթն այս հայկական
Որքան Անին աստվածաշեն¹:

Իսկ ահա, գեղագիտական մի այլ պատկեր է ստեղծում Անիով զմայլված ու հիացած, առաջին անգամ Անի ոտք դրած ու ճարտարապետական կառույցներով տարված, հայոց հանճարի դրսևորումներով արբեցած մարդու զգացողությունները պատկերելիս.

Առաջին անգամ Անին տեսնողը
Պարիսպներով էր զարգանդում, ապշում,
Ետ քաշվում ահից, իսկ ներս մտնողը,
Հիացքի սանձը հազիվ էր քաշում...²

Գրականագետ Ս. Մուրադյանը գրել է. «Մեր ժողովրդի պատմական հիշողության, գիտական ու գեղարվեստական գրականության մեջ Անին մնացել էր իր երկու տարբեր, անգամ հակադիր վիճակներով, անցյալը փառահեղ ու հերոսական, ներկան՝ անկյալ ու ողբերգական»:³

Կորուսյալ հայրենիքի հանդեպ ունեցած անհագուրդ կարոտի, անսպառ սիրո, կորածը հետ բերելու արդար պահանջատիրության ելակետերից էր բանաստեղծը սկզբնավորել պոեմի բարոյական հենքը:

Հայրենապաշտ Շիրազը բարձր արվեստով է կերտել դարաշրջանին բնորոշ մարդկային բնավորություններն ու կերպարները, տվել նրանց գեղագիտական բնութագրերն ու տիպականացրել նրանց խոսքը:

Էպիկական հզոր շնչով է կերտված սպարապետ Վահրամ Պահլավունու կերպարը, ով թուլամորթ Հովհաննես Մմբատ արքայի գաղտնի կտակի բացահայտումից հետո համախմբեց Անիի ողջ ազնվականությանն ու բնակչությանը և ուժեղ դիմադրություն ցույց տվեց հայոց մայրաքաղաքը պաշարած բյուզանդացիներին: Պահլավունիների տոհմն ականառու դեր է ունեցել միջնադարյան Հայաստանի ռազմաքաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքում: Վահրամ Պահլավունին փառավորվեց ու պատմության էջերում մնաց որպես հայրենիքի անձնուրաց նվիրյալ ու քաջարի զորավար:

Պոեմում բանաստեղծն իր ազգային գաղափարախոսությունն ու ժողովրդի ազգային բաղձանքը պատկերավոր ու բարձր արվեստով հնչեցրել է քաջազուն սպարապետի շուրթերով.

-Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,

¹ Շիրազ Հ., Անի, Եր., 2011, էջ 61:

² Նույն տեղում, էջ 60:

³ Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր., 2003, էջ 56:

Երբ իմ թրի շողը չունես,-
 Դժբախտ Անի, Վան ու Ոստան,
 Անի, երբ քո հողը չունես:
 Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,
 Երբ քո Մասիս սարը չունես,
 Երբ ոտք ելնող մանկանց շուրթին
 Քո հայերեն բառը չունես...¹

Դարերի մրմուռն ու կորուսյալ հայրենիքի ողբն է խտացված շիրազյան մեծակտավ այս երկի պատկերավոր հատվածներում, ինչն ակամայից ընթերցողի առջև բացում է հայրենի եզերքի ոչ հեռավոր անցյալը: Թեև հայոց թրի շողն ու Անիի գահը, դժբախտ Ղարսն ու Արդահանը, Մասիսն ու Վանը տեսիլք են դարձել հայոց ներկայի համար, սակայն բանաստեղծն աննահանջ հույսով է լցված ապագայի հանդեպ: Ահավասիկ.

Մայրս ասաց. «Միշտ չի մնա բախտդ կորած, մի՛ տխրիր,
 Աչքիդ լույսը շատ մի՛ թափե, գլխակորած, մի՛ տխրիր», -
 Մայրս գնաց, հույսը մնաց, մարգարե հույսն իմ հոգու,
 Ա՛գգ իմ, Մասիսն է գալիքդ, հույսն է նորված, մի՛ տխրիր...²

Անիի՝ և նրանով ողջ կորուսյալ հայրենիքի պատկերները, անկախ թեմայից ու բովանդակությունից, առկա են Շիրազի գրեթե բոլոր ստեղծագործություններում:

Անին դարեր ի վեր ոգեշնչման աղբյուր է եղել ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հեղինակների համար, ովքեր իրենց նախորդներին ավանդել են հարուստ գիտական ու գեղարվեստական գրականություն:

Արիստակես Լաստիվերցին առաջին հայ հեղինակն է, ով նկարագրել է 1047-1048թթ. սելջուկյան արշավանքները՝ մինչև Անիի գրավումը (1064թ.): Նա մանրամասն ներկայացրել էր տվյալ ժամանակաշրջանում հայոց աշխարհում տեղի ունեցած արհավիրքները, կոտորածներն ու բռնի տեղահանումները. «Մանուկները մայրերի գրկերից հափշտակվելով՝ քարերին էին խփվում, իսկ մայրերը իրենց արցունքով ու արյամբ էին թրջում նրանց. հորը և որդուն նույն սուրն էր խողխողում. ծերերն ու երիտասարդները, քահանաներն ու սարկավագները մինևույն սրով մահ ճաշակեցին, այնպես որ ամբողջ քաղաքը լցվեց դիակներով, և սպանվածների մարմինները վերածվեցին ճանապարհի»³:

Լաստիվերցու «Պատմություն» երկը իր հերթին սկզբնաղբյուր է դարձել բազմաթիվ ուսումնասիրությունների, գրական գեղարվեստական ստեղծագործությունների համար:

¹ Նույն տեղում, էջ 304:

² Շիրազ Հ., Անտիպ էջեր, գիրք 2-րդ, Եր., 2019, էջ 184:

³ Լաստիվերցի Արիստակես, «Պատմություն», Եր., 1971, էջ 100:

Անիի մասին բազմաթիվ ու բազմազան են հիշատակություններն օտար աղբյուրներում՝ վրացական, արաբական, բյուզանդական, պարսկական պատմագիրների ու ժամանակագիրների երկերում:

Պատմաբաններն իրենց գիտական ուսումնասիրություններում հիմնականում կենտրոնացել են պատմական փաստերի, դեպքերի ու իրադարձությունների վրա, իսկ ահա մեծատաղանդ Շ. Շիրազն իր իսկ բնորոշմամբ «Անի» խոհափիլիսոփայական պոեմում համատեղել է թե՛ պատմականը և թե՛ գեղարվեստականը: Գեղարվեստական համոզչության հետ միասին պոեմն ունի նաև գիտական հավաստիություն:

Առանձնակի դրամատիկությամբ է վեր հանել Հովհաննես Սմբատ արքայի կերպարը, ով որպես թուլամորթ ու կամազուրկ է պատկերված պոեմում, սակայն բանաստեղծը լրիվությամբ չի ոչնչացնում արքային՝ որպես դավաճանի, թեև պոեմի մի հատվածում նրան համեմատում է Վասակ Մյունու հետ: Նույնիսկ մի պահ թվում է, թե Շիրազը նրա մեղքը թեթևացնելու փորձեր է անում, Հռոմոսի վանքի կառուցումը, բյուզանդացիների կողմից նվերների չընդունելը, մինչև անգամ ինքնասպան լինելը գեղարվեստականացնելով: Սակայն նրա՝ բյուզանդացիների հարկադրմամբ Անին հանձնելու գաղտնի կտակի ստորագրումն ու պատերազմից խուսափելն արդեն իսկ աններելի դավաճանություն է: Նախնիների ուրվականների հետ առերեսվելով՝ մեղքերի թողություն է ակնկալում արքան, սակայն մերժվում ու ամոթանք է ստանում բոլորից, իսկ ահա հոր կողմից ստանում է վերջին հարվածը.

-Ո՞վ կների, քո վերջն հասավ,-

Դու չես ծնվել իմ հայ գարմից...¹

«Թոնդրակեցիները» պոեմը կերտելիս, որը նախորդում է «Անի» պոեմին, բանաստեղծը Հովհաննես-Սմբատ արքայի նկատմամբ պահպանել է հարգալից վերաբերմունք, քանի որ այդտեղ արքան համախմբված պայքարում էր հայրենիքի համար: Նա փորձել է ահագնացած թոնդրակեցիներին դարձի բերել, սակայն «Անի»-ում խուսափել է դրսի թշնամու հետ պայքարից ու դարձել Անիի փոքրոգի վերջին արքան:

Լինելով Բագրատունյաց գահատիրության ժառանգորդը՝ Հովհաննես-Սմբատ արքան իր ֆիզիկական, ինչու չէ նաև հոգևոր պատրաստվածությամբ չկարողացավ դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Նրա այդ հանցավոր ու կործանարար ծրագրերի հանցակիցն է դառնում շահամոլ կաթողիկոս Պետրոս Արշարունին, ով 1021թ. արքայի անունից կտակ գրեց բյուզանդական կայսեր Վասիլ Բ-ին, որ արքայի մահից հետո Անին հանձնում է Բյուզանդիային:

Բանաստեղծը պատկերավորման արվեստի հատուկ նրբությամբ ու գեղեցկությամբ է պատկերել Այծեմնիկին, ում կերպարի մեջ խտացրել է «հայոց

¹ Նույն տեղում, էջ 238:

փափկասուն կանանց»: Այժեմնիկ Անեցու կերպարին անդրադարձել են մի շարք հայ պատմիչներ, նկարագրել նրա սխրագործություններն ու կյանքի գնով հայրենիքին նվիրվելը:

Այժեմնիկն իր շուրջը հավաքեց ավագանու մի խումբ աղջիկների, նրանց զինավարժության դասեր տալու համար: Աղջիկները սովորում էին նետաձգության և նիզակամարտի արվեստը: Եվ երբ արյունարբու թշնամին իր մեծաքանակ զորքով շուրջ մեկ տարի պաշարեց Անին, Այժեմնիկն աղջիկների իր ջոկատով կովի ամենաթեժ պահին հայտնվեց միջնաբերդի վրա: Նրա ջոկատը մարտնչում էր հայ ռազմիկների հետ հավասար քաջությամբ: Թշնամու նետերը տեղում էին կարկտի պես, սակայն նրանցից և ոչ մեկը չէր նահանջում: Մոռացած ցավ ու մահ, Այժեմնիկն իր մարմնից հանում է թշնամու նետերն ու դրանք հետ արձակում նրանց վրա:

Հովհ. Շիրազն այսպես է ներկայացրել թշնամու ապշանքն ու սարսափը, ինչու չէ նաև հիացմունքը կապված Այժեմնիկի հետ. թերևս անհնար է առանց հուզվելու կարդալ այս տողերը.

-Ո՛վ վ շահ , առյուծ է Անին կատաղի,-

Այժամի նման որմն էլ դիմացավ...

Եւ Այժեմնիկի պատմությունն արին.

-Հայոց կույսն էլ է հայ որձի նման,

Մեր խփած նետերն իր մարմնից հանում՝

Մեր աչքն էր հանում մեր խփած նետով,

Կատաղում էինք, բայց և հիանում,

Նա մի այծյամ էր առյուծի սրտով:¹

Եվ այսպես, դարեր շարունակ հայ կինը հայոց պատմության դժվարին ու ճակատագրական պահերին ու արհավիրքի ժամին երբեք անմասն չի մնացել մեր գոյապայքարից, որն էլ քանիցս ապացուցել է հայ կնոջ քաջությունն ու հերոսությունը: Հայոց դարավոր պատմությունը հարուստ է խիզախ ու համարձակ, անձնվեր ու հայրենասեր հայուհիների գործած սխրանքներով:

Պոեմում արծարծված հարցերից մեկն էլ դարեր ի վեր քանակի խնդիր ունեցող հայ ժողովրդի սակավաթվությունն էր, և բանաստեղծը մեր փրկության ելքերից մեկը տեսնում է ազգի շատացման ու բազմացման մեջ.

«Հայոց թիվն հայոց վերքն է, որ այսքան ,

Դարեր դարձել է վերքն Հայաստանի»²

և վստահեցնում է.

- Միայն մեծաթիվ ազգն է անառիկ

Մեծաթիվ ազգերն իշխում են հավետ³

¹ Շիրազ Հ., Անի, Եր., 2011, էջ 282-283:

² Նույն տեղում, էջ 194:

³ Նույն տեղում, էջ 194:

«Անի» պոեմն ավարտվում է հայենիքի ցավով կեղեքված բանաստեղծի այս անհաս փափագով.

Հազար տարվա, կարոտ ունի իմ երազը հազարաթև՝
 Ա՜խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին՝ ու նոր մեռնեմ:
 Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես Մասիսն իմ անուշակ
 Գլխին հայոց մի դրոշակ, տեսնեմ Անին ... ու չմեռնեմ:¹

Անին կորուսյալ Հայաստանի մյուս քաղաքների ու բնակավայրերի նման սպասում է իր իրական տերերի՝ հայերի վերադարձին, ովքեր նոր շունչ ու ոգի կտան ավերակների մեջ էլ շքեղաշուք Անիին, ապահովելով նրա նոր վերածնունդն ու լուսավոր ապագան:

Սակայն պատմությունից դասեր չքաղելով՝ ինչպես 11-րդ դարում Անին, այնպես էլ 21-րդ դարում Շուշին է բռնել սպասման՝ այդ երկար ու տառապալից ուղին, որի հաղթահարումը պահանջում է դատն ու կորստաբեր, հասուն ու խելամիտ պայքար:

Մեծատաղանդ բանաստեղծը մեր դարավոր պատմությունը վերակերտել է ներկայի ու ապագայի տեսանկյունից՝ խորապես գիտակցելով անցյալի և գալիքի համադրումն ու պատճառահետևանքային կապը:

Կորուսյալ էրզրի կեզ մորմոքը, գերված հայրենիքի մշտաբթուն կսկիծն ուղեկցել է բանաստեղծին ողջ կյանքի ընթացքում:

Գրականություն

1. **Լաստիվերցի Ա.**, Պատմություն, Եր., 1971:
2. **Թամրազյան Հ.**, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր. 1975 :
3. **Մուրադյան Ս.**, Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր. 2003:
4. **Շիրազ Հ.**, Անի, Եր., 2011:
5. **Շիրազ Հ.**, Անտիպ էջեր, գիրք 2-րդ :

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ Նույն տեղում, էջ 306:

ՀՏԴ 82-9

Գրականագիտություն

Զարինե ՄԱՌԱԶՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ԸՍՏ ՄՈՒՐԱՑԱՆԻ

Արդի գլոբալ քաղաքակրթության զարգացումներում ազգային ինքնության ու գոյության պահպանումը կարևորագույն հիմնախնդիրներից է հատկապես փոքր պետությունների համար: Ուսումնասիրության առանցք դարձնելով Մուրացանի ստեղծագործություններում ազգային գոյությունը պայմանավորող հիմնական դրույթները՝ առանձնացրել ենք **եկեղեցին, սերը առ հայրենիք, միաբանությունը, ընտանիքը և այլն:** Սույն հոդվածը նվիրված է ազգային ինքնության պահպանման հիմնական դրույթներին՝ ըստ Մուրացանի: Այս առումով Մուրացանի ստեղծագործությունները արդիական են, իսկ սույն թեման՝ կարևոր:

Բանալի բառեր՝ Մուրացան, ազգային ինքնություն, գոյություն, միաբանություն, ընտանիք, կրոն, եկեղեցի, գրականություն, հայրենիք, հայրենասիրություն:

3. Տարաձյան

ОСНОВЫ НАЦИОНАЛЬНОГО СУЩЕСТВОВАНИЯ ПО МУРАЦАНУ

В развитии современной глобальной цивилизации сохранение национальной идентичности и существования является одним из важнейших вопросов, особенно для малых государств. Ставя в центр исследования основные положения, обуславливающие национальное бытие в произведениях Мурацана, мы выделили церковь, любовь к Родине, единство, семью и др. Статья посвящена основным положениям сохранения национальной идентичности по Мурацану. В этом отношении работы Мурацана актуальны, и эта тема важна.

Ключевые слова: Мурацан, национальная идентичность, существование, единство, семья, религия, церковь, литература, родина, патриотизм.

Z.Sarajyan

**BASES OF NATIONAL EXISTENCE ACCORDING TO
MURATSAN**

In the development of modern global civilization, the preservation of national identity and existence is one of the most important issues, especially for small states. Making the main provisions conditioning the national existence in Muratsan's works the focus of the study, we have singled out the church, love for the homeland, unity, family, etc. This article is devoted to the main provisions of the preservation of national identity, according to Muratsan. In this respect, Muratsan's works are relevant, and this topic is important.

Key words: *Muratsan, national identity, existence, unity, family, religion, church, literature, motherland, patriotism.*

Արդի գլոբալ քաղաքակրթության զարգացումներում ազգային ինքնության ու գոյաբանության պահպանումը կարևորագույն հիմնախնդիրներից է հատկապես փոքր պետությունների համար: Այս առումով հայ դասական գրականությունն իր հարուստ ավանդներով ու արժեքներով կարող է դառնալ գաղափարախոսական ամուր հիմնաքար՝ ազգային և ինքնության պահպանման համար, և հուսալի պատվար՝ ազգային գոյաբանությունը, ինքնությունն ու պետականությունը խարխիլել փորձող օտարաձին ուժերի դեմ:

Վերոնշյալ համատեքստում Մուրացանի ստեղծագործություններին նոր լույսի ներքո անդրադառնալն ու վերարժևորելը կարևոր է ու արդիական: Հայ գրականագիտական միտքը տարբեր ժամանակաշրջաններում անդրադարձել է Մուրացանի ստեղծագործություններին գրողի դեռևս կենդանության շրջանից սկսած մինչև մեր օրերը, Լեոյից մինչև Սերգեյ Սարիսյան, մինչև մեր օրերի գրականագետներ: Հանգամանք, որը փաստում է Մուրացանի ստեղծագործությունների բազմաշերտ ու համակողմանի ուսումնասիրված լինելը, ինչը, սակայն, չի սահմանափակում դաշտը, ավելին՝ նոր տարածքներ է բացում ուսումնասիրությունների համար՝ հաշվի առնելով Մուրացանի ստեղծագործությունների արդիականությունը նաև մեր օրերում: Այս առումով ուսումնասիրության առանցք դարձնելով Մուրացանի ստեղծագործություններում ազգային գոյաբանությունը պայմանավորող հիմնական դրույթները՝ առանձնացրել ենք

եկեղեցին, սերը առ հայրենիք, միաբանությունը, ընտանիքը, կրթությունը /լուսավորությունը/, առաքյալությունը, բարոյական օրենքները, ազգային սովորույթներ ու բարքերը և այլն:

Գրականագետ Սերգեյ Սարիսյանը իր «Մուրացան» մենագրության մեջ փաստում է, որ երբ 1870-ականի վերջին Մուրացանը մեկնեց Թիֆլիս, հայ մտավորականության կյանքը զարգանում էր երկու ազդեցիկ հոսանքների՝ ազգային-պահպանողականության և լիբերալիզմի գաղափարական թեժ պայքարով:

«Մուրացանն արդեն ուներ իր կողմնորոշումները և ազգային-պահպանողական հոսանքը հանձին նրա գտավ իր տաղանդավոր գեղագետին: «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Նոր Դար», «Արձագանք» և դրանց հարող այլ պարբերականների էջերում նա տպագրում է իր գեղարվեստական երկերը՝ գրական գործը որոշակիորեն տրամադրելով «կուսակցական» դավանանքի պաշտպանությանը»¹:

Ըստ լիբերալների՝ հայը հայ է՝ անկախ դավանանքից, և պահանջվում էին եկեղեցական բարեփոխումներ ու դավանանքի ազատություն, մինչդեռ ազգային-պահպանողականները սրբագործում էին հայ եկեղեցին, դավանափոխությունը համարում ազգուրացություն:

Խնդիր, որն այսօր էլ արդիական է մեր հասարակության համար: ԱՀ Սահմանադրության հոդված 41-ով² ամրագրված մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը մի կողմից փաստում է Արցախի Հանրապետության՝ ժողովրդավարական երկիր լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ անարգել դոներ բացում աղանդավորական բազմատեսակ հոսանքերի ներթափանցման դիմաց, որը լրջագույն սպառնալիք է հայ առաքելական եկեղեցու և դրանով իսկ պայմանավորված՝ ազգային միաբանության, ինչպես նաև՝ ինքնության պահպանման երաշխիքներից մեկի՝ հավատքի /կրոնի/ համար:

Ազգային-պահպանողականները, բացի վերոնշյալից, ազգապահպանության նախապայման էին համարում նաև «բարոյական հարստությունը»՝ ի տարբերություն լիբերալների, որոնք դրան հակադրում էին «նյութական հարստությունը»: Բոլոր այս հարցերում Մուրացանը հարում էր ազգային-պահպանողականության գաղափարներին, որոնք իրենց դրսևորումները գտան նաև նրա գեղարվեստական արձակում:

Ազգի համար կրոնական աղանդների բազմացման ողբերգական հետևանքները գրողը ցույց է տվել մի շարք ստեղծագործություններում, ինչպիսիք են «Իմ կաթոլիկ հարսնացուն», «Հայ բողոքականի ընտանիքը», «Գևորգ Մարգարետունի» և այլ գործեր:

«Մեր հին և նոր պատմության տեղյակ ո՞ր հայը չգիտե, թե կրոնական բաժանմունքները որքան թշվառություններ են բերել ազգի գլխին, որքան ընտանիքների մեջ գժտություն և խռովություն են սերմանել...»,-գրում է Մուրացանը, ապա հավելում, որ այդ փաստերից մեկը իր վիպակի նյութն է դարձրել (նկատի ունի «Հայ բողոքականի ընտանիքը» վիպակը)՝ ցույց տալու համար դավանանքի ազատություն քարոզողների մոլորությունը, ու հավելում նաև, որ այդ շարժառիթը ծնունդ տվեց նաև «Իմ կաթոլիկ հարսնացուն» ստեղծագործության, որոնք կոչ են հավատարիմ մնալու հայ առաքելական եկեղեցուն և զերծ մնալ ողբերգության հանգեցնող աղանդավորական

¹ Մարիկյան Մ., Մուրացան, Երևան, «Հայաստան», 2004, էջ 36:

² <http://www.nankr.am/hy/1838>

կրոնական մոլեռանդությունից: Մուրացանի ազգային-պահպանողական համոզմունքները, բնականաբար, չէին կարող գերծ մնալ ժամանակի քննադատական մտքից և հենց ինքն իր հասցեին Լեոյի «մենք գործ ունենք հայ տիրացուական ազգասիրության ներկայացուցիչներից մեկի հետ» քննադատությանը պատասխանել է նույնքան սուր իր «Իմ երկերի քննադատության առթիվ» հոդվածում՝ գրելով. «Արդյոք տեսնված է աշխարհում մի քննադատ, որ վիպասանի գրվածքի միայն վերնագիրը կարդալով, դատաստան անե նրա մասին: Մի՞ թե այս չի ապացուցում այն, որ պարոնը հենց սկզբից ճգնում է նախապաշարել ընթերցողին և տոգորել նրան այն աստելությամբ, որով ինքն է վառված գրողի դեմ»¹:

Հայրենիքի հանդեպ սերը, երբեմն նաև հերոսների անձնուրացության աստիճանի հասնող՝ որպես ազգային գոյաբանության հիմք է հանդիսանում Մուրացանի մի շարք կոթողային ստեղծագործություններում, որոնցից առանձնանշելի են «Գևորգ Մարգարետունի» վեպն ու «Ռուզան» դրաման:

Հայրենիքի ու ընդհանուր շահի համար իր անձը զոհաբերող կերպար է Ռուզանը: Ինչ խոսք, դրամային այսպիսի լուծում տալով՝ Մուրացանը սրբագործում է հայրենասիրության գաղափարը՝ այն վեր դասելով բոլոր համոզմունքներից, զգացմունքներից ու սկզբունքներից: Այս հանգամանքը ևս գրականագիտության մեջ բազում վեճերի տեղիք է տվել. Լեոն այն բնորոշել է «թշվառ հայրենասիրություն, որ թույլ է տալիս մի օրիորդի նետովել երկրի թշնամու գիրկը՝ հայրենիքի ազատություն ձեռք բերելու համար»²: Այս և այլ քննադատություններին ի պատասխան, Դ. Դեմիրճյանը նշում է. «Մուրացանին լավ չհասկացան: Չհասկացան Ռուզան հերոսուհու մեջ գերագույնը, տիրապետող գաղափարը, ժողովրդին փրկելու և իրեն զոհելու երկընտրանքի դժվարությունները»³: Բոլոր այս կողմ և դեմ տեսակետների իրավացի գնահատականն ու առաջադրված խնդիրների լուծումը տալիս է Սերգեյ Սարինյանը՝ հղում անելով «ժողովրդի էթիկական փիլիսոփայության հանրագիտարանին»՝ «Սասնա ծռեր» էպոսին՝ զուգահեռներ անցկացնելով Ռուզանի և Ծովինարի կերպարների ու արարքների միջև, ինչպես նաև Ռուզանի հոր՝ իշխան Ջալալի ու Ծովինարի հոր՝ Գագիկ թագավորի միջև, իրար հակադրելով երկու հզոր ուժերի պայքարը՝ հայրական զգացմունքի և երկրի ղեկավարի ստանձնած, չգրված բարոյական օրենքի ուժը, անձնասիրության և հայրենասիրության պայքարը, որտեղ հաղթում է հայրենիքի հանդեպ սերը. «Ամենից առաջ ուշագրավ է այն նմանությունը, որ առկա է ոչ միայն Ծովինարի ու Ռուզանի կերպարներում, այլ առհասարակ իրադրությունների կոնկրետ ընթացքում: Նույնիսկ թվում է, թե «Ռուզան» դրաման էպոսի համանման դրվագի

¹ **Մուրացան**, *Իմ երկերի քննադատության առթիվ*, Երկեր, հ. 5, Երևան, «Հայպետհրատ», 1954, էջ 367:

² **Սարինյան Ս.**, *Մուրացան*, Երևան, «Հայաստան», 2004, էջ 180:

³ **Դեմիրճյան Դ.**, *ԵՇ*, հ. 8, էջ 575:

գեղարվեստական մշակումն է՝ հոգեբանական նույն կացությունը, նույն իրավիճակը, գործողությունների նույն շարժումը՝ պաշարված բերդ, հայրենիքին սպառնացող աղետ, աղջկա զոհաբերության պատրվակ», - գրում է Ս. Սարինյանը և բացառում էպոսի տվյալ դրվագի հետ Մուրացանի անմիջական առնչությունը, քանի որ դրաման գրելու ընթացքում հայ բանագիտությանը հայտնի էր միայն Գարեգին Սրվանձտյանի գրառած էպոսի միակ պատումը, որտեղ Ծովինարի դրվագը չկար¹:

Մուրացանի հայրենասեր հերոսներին հաճախ բնորոշ է անձնուրաց առաքյալությունը հանուն հայրենիքի ու ժողովրդի, համընդհանուրի, հասարակաց շահին անձնականը ստորադասելը, երբեմն էլ՝ անանձնական կյանքով ապրելը. սա, ինչ խոսք, ռոմանտիզմի գրականության բնորոշիչներից մեկը կարելի է համարել, ինչը տեսնում ենք նաև Րաֆֆու շատ ու շատ գործերում: Հայրենիքի հանդեպ առաքյալությունը, սակայն, Մուրացանի ստեղծագործություններում նոր որակ է կազմում, ինչը նրա գեղագիտության ու աշխարհայացքի առանձնահատկություններից է: Ահավասիկ՝ նրա «Խորհրդավոր միանձնուհի» վիպակի հերոսներից Գարեգինի համոզմունքը. «Մակայն կա և մի ուրիշ մարմին, որ ավելի սիրելի, ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը հայրենիքն է: Ես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց գատ աշխարհում ուրիշ սեր չճանաչել, նրա ցավերից գատ՝ ուրիշ ցավերով չվշտանալ, նրա բախտավորությունից գատ՝ ուրիշ բախտավորություն չխնդրել... Իմ ուժերը փոխանակ մի ընտանիքի կամ որոշ թվով մարդկանց բախտին նվիրելու, ես ուխտել եմ բոլոր ազգին նվիրել»²:

Մուրացանի առաքյալ հերոսները երբեմն անձնական երջանկությունն ու ընտանիքը հակադրում են հայրենիքին բոլորանվեր ծառայելու գործին. ասվածը փաստում է «Խորհրդավոր միանձնուհի» վիպակում Գարեգինի պատասխանը Աննայի հոր այն հարցադրմանը, թե.

«Մի՞ թե քո ազգին օգնելու համար անպատճառ պիտի ամուրի մնաս և ամուսնանալով հանդերձ չես կարող նրա օգտին աշխատել:

-Ո՛չ, պատասխանեց Գարեգինը. — որովհետև գեղեցիկ է ասված. «Ոչ որ կարե երկուց տերանց ծառայել, կամ զմինն ասոխցե և զմիւսն սիրիցե, կամ զմինն մեծարիցե և զմիւսն արհամարհիցե...»: Ով որ կամենում է բոլորանվեր կերպով ծառայել ազգին, նա չպետք է ամուսնանա: Որովհետև ամուսնությունն ինքը ունի յուր որոշ պարտքերը, որոնց ամեն մի օրինավոր ամուսին պարտավոր է անթերի կատարել»³: Այս և մի շարք այլ գործերում Մուրացանն ընդգծում է առաքյալության գաղափարը՝ անանձնական կյանքով հայրենիքի ու հասարակաց զարգացմանը բոլորանվեր ծառայելը, ինչը շատ դեպքերում

¹ Սարինյան Ս., Մուրացան, Երևան, «Հայաստան», 2004, էջ 186:

² <https://clck.ru/ejyvV>

³ Նույն տեղում:

հերոսների թուլակամության հետևանքով հենց իր ստեղծագործություններում դատապարտվում է ձախողման («Նոյի ագռավը», «Առաքյալը»):

Ընտանիքի գաղափարը՝ որպես ազգի գոյաբանության հիմք, շեշտվում է, սակայն, նրա գլուխգործոցային երկերից «Գևորգ Մարգարետունի» վեպում: Ազգային միաբանություն, հայրենասիրություն և ընտանիք. այս գաղափարները հեղինակը դարձնելով վեպի առանցք, և մեկը մյուսին բնավ չստորադասելով՝ այն դիտարկում է իրար լրացնող և ազգային գոյաբանության հզորությունը պայմանավորող հանգամանք: Վեպի համակողմանի քննության և գեղարվեստական արժեքի գնահատման պակաս չզգալով գրականագիտության մեջ՝ այնուամենայնիվ ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս անդրադառնալու վեպում ընդգծված ընտանեսիրության գաղափարին և ազգերի գոյության երթը հայկական ավանդական ընտանիքի գոյության անհրաժեշտության շեշտադրմանը՝ հղում անելով Մուրացանի գեղագիտությանն ու աշխարհայացքային ըմբռնումներին: Ժամանակակից լույսի ներքո քննելով նրա աշխարհայացքային ըմբռնումները՝ արդի զարգացումների համատեքստում կասկած չի հարուցում ընտանիքի ինստիտուտի հանդեպ Մուրացանի ունեցած համոզմունքի ճշմարտացիությունը, ավելին՝ այն կարիք ունի անընդհատ բարձրաձայնելու, հանրայնացնելու՝ դրանով իսկ դիմակայելու հայ ավանդական ընտանիքի ինստիտուտի մոդելը քայքայել փորձող գլոբալիստական ուժերին ու հոսանքներին, որոնք այդ երևույթը փաթեթավորում են որպես «հանդուրժողականություն», «մարդու իրավունքների պաշտպանություն» կամ «գենդերային խտրականության դեմ պայքար», «առաջադիմական մտածողություն» և այլն: Բնավ չփորձելով իդեալականացնել անցյալի ավանդական, նահապետական կամ հետադիմական բարքերը՝ այնուամենայնիվ, պետք է շեշտել, որ ազգային արժեքների պահպանումը փոքր ազգերի ինքնության պահպանման ու գոյության համար առանցքային նշանակություն ունի: Ընտանիքի գաղափարի ու նրա հզորությամբ նաև ազգի հզորությունը պայմանավորելու բանաձևը լավագույնս է տվել Մուրացանը Գևորգ Մարգարետունու միջոցով:

«-Ազգերի գոյությունը ընտանիքների մեջ է, -ասաց ծերունին, -գորավոր է ա՛յն ազգը, որ ունի գորավոր ընտանիքներ. սիրով, միությանմբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ուժը: Ով որ կամենում է գորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը գորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն երևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը: Ինչպես որ չի կարող ապրել

այն տունկը, որի արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և կանգուն չի մնալ այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հալածական է սերը, միությունը, առաքինությունը, և, նամանավանդ, աստուծո երկյուղը»¹: Գևորգ Մարգարետունու իմաստությունը ամփոփվում է աստվածաշնչյան «Միրեցե՛ք միմյանց» պատգամով:

Մուրացանի գեղարվեստական արձակի գաղափարական արժեքն այսօր էլ արդիական է, և յուրաքանչյուր սերունդ, անդրադառնալով նրա ժառանգությանը, գտնում է տվյալ ժամանակշրջանի խնդիրների լուծման համար արդիական դասեր, որոնք կարիք ունեն անընդհատ ուսումնասիրության:

Գրականություն

1. Դեմիրճյան Դ. , ԵԺ, հ. 8, Երևան, «Հայպետհրատ», 1982,
2. Մուրացան, ԵԺ, հ.2, Երևան, «Հայպետհրատ», 1961,
3. Մուրացան, ԵԺ, հ. 4, Երևան, «Հայպետհրատ», 1953,
4. Մուրացան, Իմ երկերի քննադատության առթիվ, ԵԺ, հ. 5, Երևան, «Հայպետհրատ», 1954,
5. Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Երևան, «Հայպետհրատ», 1957,
6. Մարինյան Ս. , Մուրացան, Երևան, «Հայաստան», 2004,

Էլեկտրոնային ռեսուրսներ

7. <http://www.nankr.am/hy/1838>

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, փ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Երևան, «Հայպետհրատ», 1957, էջ 481-482:

ՀՏԴ 070

Ժուռնալիստիկա

Զարինե ՄԱՌԱՋՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

Մելինե ՄԱՐԳՍՅԱՆ

ԱրՊՀ ասպիրանտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԹԵՐԹԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2010-2022 ԹԹ.**

Սույն հոդվածը նվիրված է «Արցախի համալսարան» գիտակրթական ամսաթերթին, որը ԱրՊՀ պաշտոնաթերթն է: Այն Արցախի մայր բուհի կյանքի ինքնատիպ տարեգիրն է, որն իրականացնում է տեղեկատվական, կրթական և այլ գործառույթներ՝ ձեռքը մշտապես պահելով խնդիրների ու դրանց լուծման զարկերակին: Թեման արդիական է ու կարևոր, քանի որ մամուլի պատմությունը խոսուն փաստ է ընդդեմ հակահայկական պատմական զեղծարարությունների ու քարոզչության:

Բանալի բառեր՝ Արցախի համալսարան, թերթ, լուսաբանել, տպագիր մամուլ, տեղեկատվություն, Արցախի Հանրապետություն, Արցախի պետական համալսարան:

**3.Տարաձյան, Մ.Տարսյան
ДЕЯТЕЛЬНОСТЬ ГАЗЕТЫ «АРЦАХИ АМАЛСАРАН»
В 2010-2022 гг.**

Статья посвящена научно-образовательному ежемесячнику "Арцахский университет", который является официальной газетой АрГУ. Это уникальная летопись жизни Арцахского университета, которая осуществляет информационные, образовательные и другие функции, при этом держа руку на пульсе проблем и их решений. Тема актуальна и важна, так как история прессы является красноречивым фактом против антиармянских исторических фальсификаций и пропаганды.

Ключевые слова: Университет Арцаха, газета, освещение, печатная пресса, информация, Республика Арцах, Арцахский Государственный университет.

Z.Sarajyan, M.Sargsyan

**"ARTSAKHI HAMALSARAN" NEWSPAPER ACTIVITIES IN
2010-2022**

The article is devoted to "Artsakhi Hamalsaran" scientific-educational monthly, which is the official newspaper of Artsakh State University. It is a unique record of Artsakh University's life, which carries out informational, educational and other activities while keeping up with current problems and their solutions. The topic is relevant and important, as the history of the press is an eloquent fact against anti-Armenian historical falsifications and propaganda.

Key words: *Artsakhi Hamalsaran, newspaper, highlight, press, information, Republic of Artsakh, Artsakh State University.*

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման արդի ժամանակշրջանում տպագիր մամուլը մեդիասպառողի համար երկրորդ պլան է մղվում տեղեկատվության օպերատիվություն ապահովելու տեսանկյունից՝ իր տեղը զիջելով ժամանակակից ՏՏ բազմաբնույթ գործիքներին:

Պետք է նշել սակայն, որ ժամանակակից զարգացումների համատեքստում, հատկապես տեղեկատվական պատերազմների մեջ գտնվող երկրների համար, հույժ կարևորվում է տպագիր մամուլի դերակատարությունն ու տպագիր մամուլի պատմության ուսումնասիրությունը, այն նոր լույսի ներքո մեկնաբանելը, վերաբժնորելը, որպես պատմագիտական փաստարկ ներկայացնելը՝ տասնամյակների ու հարյուրամյակների պատմություն ունեցող թերթերն ու պարբերականները դիտարկելով որպես տվյալ երկրի այս կամ այն ոլորտի ինքնատիպ տարեգիր և փաստերի արձանագրող: Մամուլը դիտարկելով որպես տվյալ երկրի մշակույթի բաղկացուցիչ մաս՝ Արցախի ժուռնալիստների միության նախագահ, լրագրող Կիմ Գաբրիելյանը իրավացիորեն փաստում է. «Արցախում մամուլի ավելի քան 135 տարվա պատմությունը նույնպես փաստում է, որ դարերի ընթացքում հայկական այս երկրամասում, իրոք, ստեղծվել է մշակութային հարուստ ժառանգություն. նկատենք, որ Լեռնային Ղարաբաղում առաջին պարբերականը լույս է տեսել ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում հրատարակված անդրանիկ պարբերականի լույս ընծայվելուց ընդամենը մի քանի տարի հետո: Սա ևս վկայում է երկու հայկական պետությունների պատմամշակութային նույնարմատ կապի մասին»¹:

Արցախում, մասնավորապես՝ Շուշիում, պարբերականներ հրատարակվել են 19-րդ դարի 70-ական թթ-ից: Որպես անդրանիկ թերթ՝ հիշատակվում է «Հայկական աշխարհ»-ը, որը տպագրվել է 1874 թ-ին²:

¹ Արցախի պարբերական մամուլի պատմությունից (1874-2009թթ.), Արցախի ժուռնալիստների միություն, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2010թ., էջ 5:

² «Հայաստան» հանրագիտարան, ՀՀ ԳԱԱ, Երևան հրատ., 2012թ., էջ 1015:

Մամուլի պատմությունը դիտարկելով որպես խոսուն փաստ ընդդեմ հակահայկական պատմական գեղծարարությունների ու քարոզչության՝ կարևորվում է Արցախի Հանրապետությունում լույս տեսնող տպագիր մամուլի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ «Արցախի համալսարան» թերթի գործունեության, տեղեկատվական, կրթագիտական, մշակութային, համալսարանի թափանցիկության, կրթագիտական կյանքի հանրայնացման, և առհասարակ, թերթի քաղաքականության առանձնահատկությունների քննությունը՝ ժամանակակից լույսի ներքո:

«Արցախի համալսարան»-ը գիտակրթական ամսաթերթ է, որը հանդիսանում է Արցախի պետական համալսարանի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում Ստեփանակերտում, 1997 թ-ի հունվարի կեսերից, սկզբնական շրջանում՝ 500-600 օրինակ տպաքանակով, այժմ՝ տպաքանակի խիստ կրճատմամբ:

«Արցախի համալսարան» թերթի մասին հիշատակում են պատմաբաններ Գևորգ Յազրճյանը, Մհեր Հարությունյանը հայկական պարբերական մամուլին նվիրված իրենց ուսումնասիրություններում, ընդ որում՝ համառոտ տեղեկություններով: Այս առումով սույն հոդվածի **նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է արվում համապարփակ ուսումնասիրության ենթարկել «Արցախի համալսարան» թերթն ու նրա գործունեությունը ինչպես ընդհանրական բնութագրամբ, այնպես էլ վերոնշյալ ժամանակային կտրվածքով, ասել է թե՛ քննել համաժամանակյա և տարաժամանակյա տիրույթներում:

Գ. Յազրճյանը նշում է, որ թերթը չի տեսել, այլ նկարագրում է ըստ «Արմենպրես»-ի տարածած տեղեկատվության¹:

«Արցախի պարբերական մամուլի պատմությունից» աշխատության մեջ պատմաբան Մհեր Հարությունյանը նշում է, որ «Արցախի համալսարան»-ը փաստական ժառանգորդն է 1994 թ. փետրվարից լույս տեսած և մի քանի համար հրատարակելուց հետո դադարած «ԼՂՊ համալսարան» թերթի²:

Թերթը տարբեր ժամանակաշրջաններում խմբագրել են Ս. Օհանյանը, Գրիգոր Դանիելյանը, Արտակ Ղուլյանը, Արմինե Պետրոսյանը, Լիանա Բաղդասարյանը, Լաուրա Գրիգորյանը, Նարինե Աբրահամյանը, Զարինե Սառաջյանը:

Արցախի պետհամալսարանի պաշտոնական www.asu.am կայքի տեղեկատվությամբ՝ «Արցախի համալսարան» թերթը հրատարակվում է ամիսը մեկ անգամ՝ հայերեն: Թերթի առաջին համարը լույս է տեսել 1993թ. մայիսին: Առաջին խմբագիրն էր Ս. Օհանյանը: Թերթի էջերում տեղ են գտնում համալսարանի դասախոսների և ուսանողների հոդվածները, որոնք

¹ «Ազգ», 21.01.1997թ., «ՀՀ», 21.01.1997թ.:

² Արցախի պարբերական մամուլի պատմությունից (1874-2009թթ.), Արցախի ժուռնալիստների միություն, Ստեփանակերտ, «Դիզակ պյուուս» հրատ., 2010թ., էջ 88:

արտացոլում են գիտական, կրթական և ուսանողական կյանքի բազմաբնույթ հարցեր¹: Կայքի «Հրապարակումներ» բաժնի «Թերթ «Արցախի համալսարան»» ենթաբաժնում տեղադրվում են թերթի էլեկտրոնային տարբերակները՝ 2013 թ. մի քանի համար և 2016 թ-ից առ այսօր հրատարակված բոլոր համարները²:

Ուսումնասիրելով թերթի 2010-2022 թթ-ի, ինչպես նաև նշյալ ժամանակահատվածին նախորդող շրջանում տպագրված համարները՝ կարող ենք արձանագրել, որ թերթն ընդհանուր առմամբ հանդիսանում է համալսարանի որդեգրած քաղաքականության խոսափողը և հարթակ ինչպես բարձրագույն կրթության ոլորտի ծրագրերի իրացման, տարաբնույթ միջոցառումների արձանագրման, այնպես էլ մտավորականության և ուսանողության ուշագրավ գաղափարների, մտքերի հանրայնացման:

Արցախի պետական համալսարանը ոչ միայն Արցախի Հանրապետության գիտակրթական խոշորագույն կենտրոնն է, այլ նաև մշակութային, հայագիտական, ազգային ու համամարդկային արժեքները պահպանող, սերունդների մեջ ամրապնդող, գաղափարներ գեներացնող հաստատություն: Թերթի էջերում պարբերաբար տեղ են գտել տարբեր ժանրերով հոդվածներ, համալսարանի գիտակրթական կյանքը լուսաբանող նյութեր՝ հարցազրույց, ակնարկ, դիմանկարային ակնարկ, լրատվական, իրադարձային, գիտության տարբեր բնագավառներին վերաբերող գիտաճանաչողական հոդվածներ, հավերժի ճամփորդ դարձած, ինչպես նաև ապրող հերոսներին նվիրված նյութեր, գրական-գեղարվեստական ժանրի ստեղծագործություններ՝ պատմվածքներ, ֆանաստեղծություններ, էսսեներ և այլն:

Պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ համալսարանականների հանդիպումները լուսաբանող հոդվածների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Արցախի պետական համալսարանը միշտ էլ առանցքային դեր ու նշանակություն է ունեցել երկրի ղեկավարության համար՝ կրթության և գիտության ոլորտում իրականացվող ծրագրերում կարևորելով համալսարանի ներուժը. այսպես՝ «Մայր բուհը պետք է լինի ոչ միայն կրթական, այլև գիտական կենտրոն»³ վերտառությամբ հոդվածում լուսաբանվում է 2009 թ. հունվարի 16-ին ԱրՊՀ նոր ձևավորված խորհրդի նիստը, որին ներկա էին նաև ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

Նիստի աշխատանքների լուսաբանման համատեքստում, որպես առանցքային միտք, նշվում է, որ Արցախի մայր բուհից երկրի ղեկավարությունը մեծ ակնկալիքներ ունի և մեջբերվում է ԱՀ նախագահի խոսքը. «Համալսարանը պետք է լինի հանրապետության ոչ միայն կրթական, այլև հիմնական գիտական

¹ http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=95

² Նույն տեղում:

³ «Արցախի համալսարան», 1(116), հունվար, 2009, էջ 1:

կենտրոններից մեկը... Անձամբ հետևելու եմ այս ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքին: Համոզված եմ, որ մեզ կհաջողվի ունենալ ժամանակակից, մրցունակ, գիտակրթական համակարգ և մեծ համբավ ունեցող մայր բուհ»¹:

Հաջորդիվ լույս տեսած համարներում տարբեր ձևաչափերով իրականացված միջոցառումների լուսաբանմամբ թերթը ներկայացնում է երկրի ղեկավարության որդեգրած՝ բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների և կրթագիտական բնագավառի շարունակական բարելավմանն ուղղված քաղաքականության արտացոլումը:

2010 թ. անդրանիկ համարը բացվում է «Ուսման որակի բարձրացումը՝ կարևորագույն պայման»² վերտառությամբ ԱրՊՀ խորհրդի հերթական նիստը լուսաբանող հոդվածով: Նիստը նախագահում էր այդ տարիների խորհրդի նախագահ, ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը, ով նիստի աշխատանքներն ամփոփող իր խոսքում զարգացած երկիր ունենալու համար ընդգծում է բարձրորակ կրթություն ունենալու նախապայմանը, իսկ կրթական բարեփոխումների հարցում՝ միակ ճիշտ ուղին համարում եվրոպական կրթական համակարգի մոդելն ու Արցախի կրթական համակարգի ինտեգրվելը վերջինիս: Թերթը վերոնշյալ հոդվածում մեջբերում է երկրի վարչապետի խոսքը, որը ուղենիշային նշանակություն ունի ինչպես կրթական քաղաքականության, այնպեսև, դրանից ածանցվող, թերթի տեղեկատվական քաղաքականության հարցում. «Եթե մենք ուզում ենք ունենալ զարգացած երկիր, առաջին հերթին պետք է ունենանք զարգացած կրթական համակարգ», - ասաց Ա. Հարությունյանը: Այս առումով նա կարևորեց ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստումը, ինչը ենթադրում է ուսման որակի հետևողական բարձրացում», - խորհրդի նախագահի խոսքը թերթում եզրափակվում է երկրի համար անհրաժեշտ մասնագետներ պատրաստելու գործը որակական նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտության պահանջով:

Աշխատաշուկայի պահանջներին բավարարող որակյալ մասնագետներ պատրաստելուն ուղղված երկրի ղեկավարության պահանջն ու այդ ուղղությամբ գործադրած բուհի ղեկավարության և համապատասխան կառույցների ջանքերը տեսանելի են նաև թերթի հաջորդ տարիների համարներում, որոնցով սկսվում է յուրաքանչյուր տարվա թերթի անդրանիկ համարը՝ ԱրՊՀ խորհրդի ղեկավարի նախագահությամբ (տարբեր ժամանակաշրջաններում՝ ԼՂՀ վարչապետը, ապա՝ ԱՀ պետնախարարը) կայացած խորհրդի նիստերի լուսաբանմամբ: Ահավասիկ՝ «Որակյալ

¹ Նույն տեղում:

² «Արցախի համալսարան», 1(126), հունվար, 2010թ., էջ 1:

մասնագետներ պատրաստելով կկարողանանք դիմակայել փորձություններին»¹ վերնագրով հոդվածը, որը պատմում է տարվա ընթացքում բուհում կատարված աշխատանքների մասին ռեկտորի հաշվետվության, առկա խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծման ուղիների շուրջ առաջարկությունների մշակման ու ներկայացման մասին:

Գիտական տարբեր կենտրոնների (այդ թվում նաև՝ հայագիտական, ազգագրական), հիմնում, միջազգային գիտաժողովների կազմակերպում, աշխարհահռչակ անվանի գիտնականների հյուրընկալում, արտերկրի և ՀՀ առաջատար բուհերի, գիտական ինստիտուտների, կազմակերպությունների միջև համագործակցային կապերի ստեղծում և ամրապնդում, համատեղ ծրագրերի իրականացում և փոխայցելություններ. թերթի՝ մեր կողմից ուսումնասիրված համարներում արձանագրված այս և նմանատիպ միջոցառումները միտված էին մի կողմից Արցախի մայր բուհում կրթության և գիտության զարգացմանը, որակի բարելավմանը, մյուս կողմից՝ կրթության և գիտության միջոցով Արցախի ճանաչելիությանը միջազգային հանրության կողմից, Արցախի հիմնախնդրի լուծմանը նպաստ ունենալը:

Խոսելով «Արցախի համալսարան» թերթի գործառույթների մասին՝ պետք է առանձնանշել նրա՝ տեղեկատվական, մշակութալուսավորչական, կրթական, սոցիալ-դաստիարակչական և այլ գործառույթները, ինչպես նաև՝ որպես երկրի մայր բուհի հիմնական ու մնայուն տարեգիրը լինելու գործառույթը, որին չի սպառնում հաքերային ու ցանցային տարաբնույթ տեղեկատվական հարձակումները՝ ի տարբերություն ժամանակակից ինֆորմացիոն կրիչների, այդ թվում նաև՝ բուհի պաշտոնական կայքի ու սոցիալական մեդիայի:

Թերթի բոլոր համարներում առանձին տեղ է հատկացված հիշարժան օրերի առթիվ հղված ռեկտորի ուղերձներին, ԱրՊՀ մեծ խորհրդի և գիտխորհրդի նիստերի լուսաբանմանը, համալսարանի տարբեր բնագավառներում, այդ թվում՝ գիտության և միջազգային համագործակցության, ուսումնական աշխատանքների, ուսանողների, շրջանավարտների, հասարակայնության հետ տարվող աշխատանքների, վարչատնտեսական ուղղությամբ իրականացվող գործընթացների լուսաբանմանը: Թերթի համարներում մինչև 2016 թ. տպագրվում էին նաև դասախոսների և ուսանողների հեղինակային հոդվածները, սակայն 2016-ից հետո, թերթի ծավալի հետ կապված փոփոխություններով պայմանավորված, փոխվեց նաև թերթի քաղաքականությունը՝ հիմնականում տեղ տալով 2016 թ. համալսարանում ստեղծված լրատվության և հանրային կապերի բաժնի պատրաստած նյութերին, իսկ հեղինակային նյութերի համար որպես հարթակ տրամադրելով բուհի պաշտոնական կայքը և գիտական տեղեկագիրը: Իսկ ուսանողության համար հիմնադրվեց ուսանողական «Քո ժամանակը» թերթը, որը դարձավ

¹ «Արցախի համալսարան», 1(148), հունվար, 2012թ., էջ 1:

ստեղծագործող և լրագրության ոլորտում իրենց առաջին քայլերն անող ուսանողների համար ինքնադրսևորման հարթակ:

Արցախի պետական համալսարանի «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթը հրատարակվում է 2014թ-ից: Թերթի էջերում տեղ են գտնում համալսարանի ուսանողների հոդվածներ, բանաստեղծություններ և այլ նյութեր, որոնք արտացոլում են կրթական և ուսանողական կյանքի բազմաբնույթ հարցեր, խնդիրներ ու ձեռքբերումներ: Թերթի համարների էլեկտրոնային տարբերակները հասանելի են Արցախի պետական համալսարանի պաշտոնական կայքի «Հրապարակումներ» բաժնի «Թերթ «Քո ժամանակը»» ենթաբաժնում¹:

Արցախի մայր բուհի պաշտոնաթերթը ինչպես իր հիմնադրման պահից, այնպես մեր ուսումնասիրության շրջափուլում, հանդես է գալիս որպես Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների մասնակից՝ կրթագիտական կայնքից գատ, անդրադառնալով նաև երկրի համար հրատապ թեմաներին, խնդիրներին, այդ թվում նաև՝ քաղաքական և այլ, արտահայտում առաջարկություններ, տեսակետներ՝ որպես երկրի առաջատար բուհ:

Ահավասիկ. «Արցախի համալսարան» թերթի 2016 թ. սեպտեմբեր ամսվա համարում «ԼՂՀ-ն զիջելու տարածքներ չունի» վերտառությամբ հոդվածը պատմում է ՌԴ քաղաքական վերլուծաբաններ Մոդեստ Կոլերովի և Ստանիսլավ Տարասովի ԱրՊՀ կատարած այցի մասին, որը Ղարաբաղյան խնդրի կարգավորման ուղիների շուրջ հանրային կարծիքի ուսումնասիրության նպատակ էր հետապնդում: Ըստ թերթի. «Հանդիպման երկրորդ մասում քաղաքագետները ներկաներից հետաքրքրվեցին, թե ինչպես են պատկերացնում ղարաբաղյան հարցի կարգավորումը, ինչպիսի ակնկալիքներ ունեն և խնդրի խաղաղ կարգավորման համար ինչ փոխզիջումների են պատրաստ: Վերջին հարցի պատասխանը միանշանակ էր՝ փոխզիջում ասվածը հարաբերական է. ԼՂՀ-ն զիջելու տարածքներ չունի», -ընդհանրացնում է թերթը հանդիպմանը ներկա համալսարանականների կարծիքը²:

Թերթի մեր ուսումնասիրության ժամանակահատվածն աչքի է ընկնում ինչպես Արցախի Հանրապետության զարգացման համար համեմատաբար կայուն ու խաղաղ ժամանակաշրջանով, այնպես էլ երկրի համար բարդ ու ողբերգական, անդառնալի կորուստներով լի ժամանակշրջանով: Եթե մինչև 2016 թ. թերթը արձանագրում է բուհի կայուն զարգացման ուղին, ապա 2016-ի ապրիլյան պատերազմը խաթարում է այդ խաղաղ կենսագործունեությունը: Թերթի էջերում արձանագրվում են հանուն հայրենյաց պատերազմում անմահացած ուսանողների հերոսապատումները, պատերազմական օրերին՝

¹ http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=2213

² «Արցախի համալսարան», 06(193), սեպտեմբեր, 2016, էջ 5:

աղջիկների թիվունքային աշխատանքները: Պատերազմական ու հերոսացման տարեգրությունը կրկին սկսվում է 2020 թ. սեպտեմբերի 27-ի պատերազմով: Հարկ է նշել, որ պատերազմական օրերին հասկանալի պատճառներով թերթը չէր տպագրվում: 2020 թ. դեկտեմբերի 1-ից բուհում պարապմունքների մեկնարկին զուգընթաց թերթը սկսեց տպագրվել՝ պատերազմից հետո առաջին համարը նվիրելով հանուն հայրենիքի անմահացած 26 լույս տղաների՝ հիշատակին ներկայացնելով նրանց կենսապատում-հերոսացումը՝ լուսանկարներով¹:

Համալսարանական կյանքի կրթական ոլորտում արձանագրված աննախադեպ հաջողությունը ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ի կողմից Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրումն էր թերթի նշյալ ժամանակահատվածի ուսումնասիրությունների ծիրում: Թերթը գործընթացի լուսաբանմանն անդրադառնալ սկսել է դեռևս մինչև 2020 թ. պատերազմը:

2018 թ. դեկտեմբեր ամսվա համարում «Աշխատաժողով «Որակի ապահովման համակարգ: Ինստիտուցիոնալ հավատարմագրում» թեմայով» վերտառությամբ հոդվածում նշվում է, որ ԱՀ Կառավարության որոշմամբ Արցախի բոլոր պետական և ոչ պետական բուհերը պետք է անցնեն հավատարմագրում անկախ կառույցի կողմից և մինչև 2019 թ. դեկտեմբերի 30-ը պետք է դիմեն հավատարմագրման, այլապես՝ բուհերը կկորցնեն լիցենզիան»², -նշում է թերթը՝ հավելելով, որ հավատարմագրումը հաջողությամբ անցնելը որակի առկայության ցուցիչ է:

ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացների, ՈԱԱԿ և ԱրՊՀ մասնագետների փոխայցելությունների, հավատարմագրմանը միտված միջոցառումների մասին թերթը արձանագրում է նաև 2019 թ. հունվար-փետրվար ամիսների հրատարակությունում³ և հաջորդիվ՝ մինչև հավատարմագրումը:

Համալսարանի պատմության ընթացքում աննախադեպ իրադարձությունը՝ բուհի հավատարմագրումը, թերթը արձանագրում է 2021 թ. հոկտեմբեր ամսվա համարում. «Հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) Հավատարմագրման հանձնաժողովի նիստ: Օրակարգում Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրումն էր: Հավատարմագրման հանձնաժողովը քննարկեց փորձագետների զեկույցները հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ, դիտարկեց դրական և բացասական գնահատված տիրույթները, փորձագետների մատնանշած ուժեղ և

¹ *Նույն տեղում, 05 (228), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2020:*

² *Նույն տեղում, 09 (214), դեկտեմբեր, 2018, էջ 2:*

³ *Նույն տեղում, 1 (215), հունվար-փետրվար, 2019, էջ 7:*

թույլ կողմերը, հնարավոր ռիսկերը: Քննարկվեց նաև, թե որքանով են իրատեսական բուհի բարելավման ծրագրերը:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ՝ Արցախի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով¹:

Այսպիսով՝ «Արցախի համալսարան» թերթը, լինելով Արցախի մայր բուհի պաշտոնաթերթը, հանդիսանում է երկրի կարևորագույն հաստատության՝ մայր բուհի կյանքի ինքնատիպ տարեգիրը՝ իրականացնելով տեղեկատվական, մշակութալուսավորչական, կրթական, սոցիալ-դաստիարակչական և այլ գործառույթներ՝ միաժամանակ նաև ձեռքը մշտապես պահելով երկրի ու բուհի առջև ծառայած խնդիրների ու դրանց լուծման զարկերակին:

Գրականություն

1. Արցախի պարբերական մամուլի պատմությունից (1874-2009թթ.), Արցախի ժուռնալիստների միություն, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 2010թ.
2. «Հայաստան» հանրագիտարան, ՀՀ ԳԱԱ, Երևան հրատ., 2012թ.

Թերթեր

1. «Ազգ», 21.01.1997թ., «ՀՀ», 21.01.1997թ.
2. «Արցախի համալսարան», 1(116), հունվար, 2009թ.
3. «Արցախի համալսարան», 1(126), հունվար, 2010թ.
4. «Արցախի համալսարան», 1(148), հունվար, 2012թ.
5. «Արցախի համալսարան», 06(193), սեպտեմբեր, 2016թ.
6. «Արցախի համալսարան», 05 (228), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2020թ.
7. «Արցախի համալսարան», 09 (214), դեկտեմբեր, 2018թ.
8. «Արցախի համալսարան», 1 (215), հունվար-փետրվար, 2019թ.
9. «Արցախի համալսարան», 07 (235), հոկտեմբեր, 2021թ.

Էլեկտրոնային ռեսուրսներ

6. www.asu.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ Նույն տեղում, 07 (235), հոկտեմբեր, 2021, էջ 1:

ՀՏԴ 82.09

Գրականություն

Հովիկ ՄՈՒՄԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ն. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտ. աշխատող,

Բ. Գ. Դ.

E-mail: kaplanyanani@gmail.com

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բանալի բառեր՝ պոեզիա, մտածողություն, արդի, կառուցվածք, ժամանակ, անկախություն, մետաֆոր, տիպարանություն, հիմնահիմունք:

Օ.Մուսաելյան

ПРОБЛЕМЫ ТИПОЛОГИИ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ ПЕРИОДА НЕЗАВИСИМОСТИ

В статье рассматриваются типологические проблемы и основные особенности армянской поэзии периода независимости. Особое внимание мы уделяли новому художественному мышлению, новым поэтическим формам и приемам. В настоящее время человек раскрывается по-новому, иначе взаимодействуя с обстоятельствами и явлениями, которые определяют его эстетическое восприятие. И это, как следствие, влияет на формирование новых принципов художественного мышления. Новое поколение находится в эстетическом поиске, углубляясь в корни многовековой армянской поэзии и учитывая тенденции современной мировой цивилизации, которые, в свою очередь, нацелены на открытия в духовном мире личности, живущей в современной действительности. Исследования проводились на основе анализа произведений и творчества наиболее видных и ярких представителей армянского поэтического поколения 80-х годов прошлого века с целью выявления эстетических предпочтений рассматриваемого периода и обусловленного им нового поэтического мышления и выражения.

Ключевые слова: *поэзия, мышление, современность, структура, время, самостоятельность, метафора, типология, проблема.*

H.Mousayelyan

PROBLEMS OF TYPOLOGY OF ARMENIAN POETRY OF THE PERIOD OF INDEPENDENCE

In this article the typological problems and the main features of the Armenian poetry of the period of independence were considered. We paid special attention to the new artistic thinking and the new poetic forms and methods. In a new historical period, a person reveals himself in a new way. In a new way he interacts with circumstances and phenomena that determine his aesthetic perception. And as a result it affects and dictates new principles to artistic thinking. Delving into the roots of centuries-old Armenian poetry, the new generation aspired to new aesthetic searches, taking into account the trends of modern world civilization, which, in turn, are aimed at new discoveries in the spiritual and inner world of a person living in today's reality. The research was conducted on the basis of the analysis of the creativity of the most prominent and outstanding representatives of the Armenian poetic generation of the 80s of the last century to identify the aesthetic preferences of the period under review and the new poetic thinking and expression.

Key words: *poetry, thinking, modern, structure, time, independence, metaphor, typology, problem.*

Անցյալ դարի 80-ական թթ. բանաստեղծական սերունդը հայտնվեց պատմական ռիթմի փոփոխության մեջ՝ կապված ոչ միայն սոցիալ-պատմական և հասարակական - քաղաքական իրադարձությունների, այլև մարդու՝ նրանցով պայմանավորված նոր կենսափիլիսոփայության և բարոյահոգեբանական մթնոլորտի հետ: Այս սերունդն իր անմիջական նախորդների հետ գրեթե չունեցավ հոգևոր առնչություններ, արժեքների որակափոխման նոր ժամանակաշրջանի և վերջինիս կողմից թելադրված մարդու ինքնըմբռնման նոր մեթոդներով այն առավել մոտ գտնվեց 60-ականների բանաստեղծական ծրագրին: Սակայն այս երկու սերունդների տարբերությունը նրանում է կայանում, որ 60-ականներն ունեին բանաստեղծական նոր հարթություն դուրս գալու հիմք և առիթներ, առաջինը բանաստեղծական նախորդ արժեքների սպառվածությունն էր, երկրորդը գեղագիտական համընդհանուր զարգացումներն ու նրանցով պայմանավորված պոետական նոր ձևերի ու եղանակների անհրաժեշտությունը: Իսկ 80-ականները չունեին թե՛ մեկը և թե՛ մյուսը, այլ փոխարենը՝ անկայուն և միաժամանակ պրագմատիկ մի իրականություն՝ իր ապրիորի զարգացումներով, անկանխատես ու անծրագիր ընթացքով ու փութեռանդությամբ: Նման հանգամանքներում էլ ժամանակակից գեղարվեստը (մասնավորապես պոեզիան) հարկադրված եղավ ներփակվելու ինքն իր մեջ ստեղծելով այլ մի իրականություն՝ համահունչ իր օրենքներին, գոյության կերպին ու նախախնամությանը, որտեղ միայն կարելի է դառնալ «մերձավորը Մեկի...»:

Ես ինչ-որ մեկն էի պարզապես՝

մինչ այդ ընթերցելը, ապա դարձա Ուն՝

մերձավորը Մեկի...

Զավեն Բեկյանի այս տողերում բարձրագույն կազմակերպվածությանը (Մեկին) մերձենալու բոլոր դոմենները փակ էին և սպասում էին իրենց գաղտնիքի «ընթերցմանը»: Նախքան այդ մերձեցումը «ամեն ինչ բառերի կույտ է», որ արտաքին աշխարհի իրական պատկերն է, և որի մեջ մարդը «ինչ-որ մեկն է պարզապես» իր գոյության անգիտակից ժամանակի և տարածության մեջ:

«Մեկին» մերձենալու շարժառիթները պոետական նոր սերնդի մոտ շատ ավելի սուր բնույթ կրեցին՝ կապված առարկայական աշխարհի «անշրջելիության» և դրանից բխող գոյության «հավանական» այլընտրանքայնության ներքին պահանջի հետ: «Ես խորհում էի աշխարհի մասին // Եվ մտածումիս մեջ Աստված կար...», - գրում է Վահան Վարդանյանը՝ Աստծո ներկայությունը տեսնելով «աշխարհի մասին մտածումի», որ նույնն է, թե՛ կեցության նախապայմանի և նրանում՝ սեփական «ես»-ի ներհայեցողության մեջ: Իրերի սկիզբը տեսնելու համար բանաստեղծը շարժվում է դեպի նրանց վերջը (սկզբի և վերջի էլիոթյան դիալեկտիկան), և այդ ճանապարհը տանում է դեպի Աստծո հոգին, դեպի բարձրագույն ճանաչում:

Ո՞նց անփոփեմ այդքա՛ն և թվարկեմ մեկ-մեկ, Տեր իմ,

Գնամ հասնեմ վերջին՝ սկզբին նրանց և ճանաչեմ հոգիդ՝

Ծննդավայրը թանկ-անպարագիծ, անփակ այս ամենի...

«Աստծո հոգին» ճանաչել հնարավոր չէ, քանի որ նրա դիրքը գտնվում է մարդու համար անհասանելի տարածության վրա, հետևաբար և՛ նրանց միջև երկխոսություն տեղի ունենալ չի կարող: Իսկ հոգին հնարավոր է ճանաչել միայն երկխոսության միջոցով՝ հավասարը հավասարի պայմաններում, որ, տվյալ դեպքում մարդն է՝ զրկված Աստծո հետ առերեսման բոլոր հնարավորություններից: Բանաստեղծն այստեղ ի նկատի ունի իրերի ներքին կյանքը, որ «ճանաչելի է» և իր մեջ կրում է Աստծո կազմակերպվածության գաղտնիքը: Ճանաչել այդ գաղտնիքը՝ նույնն է թե՛ ճանաչել սեփական «ես»-ը (Աստծո արտացոլանքը), ինչը հնարավոր չէ, ըստ այդմ և ծնունդ է տալիս մարդու ողբերգականության գիտակցմանը: Այդ գիտակցությունն առավել սրվում է, երբ բախվում է արտաքին աշխարհին՝ նրա մեջ տեսնելով այդ ողբերգության դրդապատճառները, միաժամանակ նաև՝ սեփական այլընտրանքի բացակայությունը: Ինչքան մեծանում է աշխարհի գաղափարական մակերեսայնությունը, այնքան նրա բովանդակությունը նեղանում է՝ առիթ տալով մարդու ներքին տարածության ընդլայնման պահանջին: Իսկ ինչքան ընդլայնվում է այդ տարածությունը, այնքան նեղանում է մարդու գոյության իմաստը՝ սկիզբ դնելով նրա ինքնըմբռնման ողբերգականությանը: Այստեղից և՛ Ֆ. Դոստոևսկու նկատառումը. «Լայն է մարդու ընդգրկումը, ես կնեղացնեի այն»: Այդ «նեղացման» արդյունքում մեծանում է մարդու ինքնամոտեցման հավանականությունը, այստեղից նաև՝ պարտադրված իրականությունը

«շրջանցելու» նրա համարձակությունը՝ ստեղծելով միակ հնարավոր նախապայման, ուր մարդը կարող է գտնել իր հոգեկան խաղաղությունը:

Նկատված երևույթի իրական պատկերը տալիս է ներկա իրականությունը՝ իր ընդգրկած մակերեսայնությամբ, կործանարար անդեմությամբ ու հոգևոր անհեռանկարայնությամբ, ուր մարդը դուրս է մղվում ինքն իրենից՝ մնալով համատարած դատարկության և վերջինիս կողմից խոշտանգված սեփական տեսիլքի հետ: Այսօրինակ իրավիճակում 80-ականների պոեզիան շարունակում է փնտրել նոր հենակետ, որը մի դեպքում աստվածային հոգու ճանաչողության պատրանքն է, մեկ այլ դեպքում՝ ինտիմ կյանքի պատկերագրող գաղտնիքը, տեխնոլոգիական վերջին զարգացումների չափածո վերծանումը և այլն: Բոլոր դեպքերում, այնուամենայնիվ, ի տարբերություն իր անմիջական նախորդի, այս սերունդն ուրվագծում է իր ժամանակը՝ խարսխված իրականության բարդույթի ու մակերեսայնության միջև երկփեղկված խռովքի վրա: Մերնդի պոետական հիմնական առանձնահատկություններից մեկը հենց այդ բարդույթի ու մակերեսայնության ներքին համատեղման իմաստավորումն է, որ երբեմն անսպասելի լուծումներ է պարտադրում ինչպես իմաստաբանական, այնպես էլ՝ կառուցվածքային հարաբերություններին՝ կյանքի պարզունակ ժեստերն ու «ժամանակավրեպ» քնքշությունն այլևս համարելով իրական «աղետ»:

*Ոչ թե մտածումներ, որից գիտեք հյուծվել,
լուծել հիմնը այս կեցության հնչյուններում ժանտախտային,
ահավորվել գիտեք - տարալուծել ձեր մեջ բացիլ,
ոչ թե Խորհուրդ ձեր զավակին,
որ չի մուրա ոչինչ և չի լինի ողորմահայց - բացի
երգ մուրալուց իմ հույզերից,-
կուզենայիք, որ ես խոց բերեի Բանականիս,
ոչ թե մտածումներ և վկայում Բանիվ,
և լինեի աղերսական - ահավորված առնետ քնքշությունից՝
հոգիներին ձեր փլվելով որպես աղետ...*

Մանասեի այս տողերում արդեն իսկ ուրվագծվում է նրա հոգեկերտվածքը՝ օտար ստորին հույզերին ու նրանց ակնկալած բոլոր տեսակի ձղձիմություններին: Բնաբան ընտրելով Հորացիոսի հայտնի միտքը («Բանաստեղծելու արվեստի բանալին մտածելու արվեստի մեջ է»)՝ նա մտնում է իրականության մեջ և այնտեղից խոսում նրա լեզվով, որը հնարավոր է սուկ սթափ մտքի պարագայում, որը և, տեքստի ետնաբեմում «մշակելով» իրականությունը, ստեղծագործություն է ներմուծում նրա «թույլատրելի» տեսքը:

Գեղարվեստական ստեղծագործության ամբողջական համակարգն իրականացնում է միտքը, որից հետո նույն համակարգը ձեռք է բերում ընկալման տարբեր ֆունկցիաների միջև մասնատվելու հնարավորություն՝ պայմանավորված ստեղծագործության ներքին էներգիայի նպատակով և ուղղվածությամբ: Անկախ այդ մասնիկների քանակից և տարածական

մասշտաբներից՝ մեր ընկալման օբյեկտիվն ընդգրկում է նրանցից որևէ մեկը, իսկ մնացածները պարզապես նպաստում են այդ մեկի լիարժեք իրացմանը: Ստեղծագործության ամբողջական համակարգման գործընթացում միտքը չի կարող կանխորոշել այդ մասնիկներից այս կամ այն մեկի հետագա ճակատագիրը, ինքնադրսևորման բնույթն ու հեռանկարը, քանի որ, ըստ էության, դա չի մտնում նրա գործունեության ընդհանրական ծրագրի մեջ: Այսպիսով, ձեռք բերելով ինքնուրույն կարգավիճակ և գործունեության տարբեր ոլորտներ, ստեղծագործության բոլոր մասնիկները գտնվում են փոխադարձ կապի մեջ, լրացնում մեկը մյուսին՝ մեկ ընդհանուր նպատակի հանգույն փոխզիջելով միմյանց: Թե ինչպիսի հնարքներ է կիրառում միտքը այդ մասնիկների հետագա ինքնուրույնությունն ապահովելու համար՝ տեքստի ընդհանուր պլանում և, մանավանդ, այդ մասնիկներից յուրաքանչյուրի առանձին գործունեության մեջ տեսանելի չէ. դա հեղինակի անհատականության նախապայմանն է, նրա մտքի կողմից գեղարվեստական հնարքի կիրառման գաղտնիքը: Դիպրոն մի առիթով նկատել է, որ դերասանն արտասվում է իսկական արցունքներով, որոնք, սակայն, հոսում են նրա ուղեղից: Ռեակցիան, փաստորեն, տեղի է ունենում դերասանի ուղեղում, և այն բնավ տեսանելի չէ հանդիսատեսին, քանի որ վերջինիս հետաքրքրում է արցունքի առկայությունը որն արտաքին մակարդակում ձեռք է բերել ինքնուրույնություն, բայց ներքին մակարդակում շարունակում է կախված մնալ ուղեղից, որը, շարունակելով իր ֆունկցիան, ստեղծում է այնպիսի պայմաններ (տրամադրություն, դիմային մկանախաղ և այլն), որոնցում արցունքը կարողանում է իրացնել հանձն առած պարտականությունները: Տրամադրությունը, դիմային մկանախաղը, արցունքը և սովյալ իրավիճակի համար մյուս բոլոր անհրաժեշտ դետալներն ուղեղի մեկ ամբողջական ստեղծագործության առանձին մասնիկներն են, որոնք իրենց ինքնուրույն միսիան կարող են իրականացնել միմիայն ներքին փոխշաղկապվածության շնորհիվ: Այսպիսով, դերասանի արտասվելու պատճառած հույզը խելացի հույզ է, քանի որ արդյունք է ոչ թե սրտաճմլիկ ինչ-ինչ տեսարանների, այլ ուղեղի հնարքի և մտքի երևակայության: Ստեղծագործությունը, այսուհանդերձ, մտքի արդյունք է որի առանձին մասնիկների ինքնուրույնության աստիճանը (ըստ այդմ՝ ստեղծագործության կայացումը) պայմանավորված է մտքի կազմակերպվածության և վերջինիս գործընթացում գեղարվեստական հնարքի հեղինակի կողմից կիրառված մեխանիզմներով: Ինչքան «կաղում է» գեղարվեստական հնարքը, այնքան խափանվում է մտքի կազմակերպվածության ընթացքը՝ ստեղծագործության ամբողջական համակարգը դարձնելով աններդաշնակ ու խրթին: Այս երևույթը, օրինակ, երբեմն նկատելի է դառնում Մանասեի ստեղծագործություններում, որոնցում, չնայած ուրվագծվում են մտքի ուղղությունն ու ընդգրկված տիրույթները, բայց, միևնույն ժամանակ, լեզվական փոխանցումների հաճախակի խցանումներում

ծնունդ առնող մոտավորությունը ցրում է հոգևոր ներքին էներգիայի միասնականության տպավորությունը: Նույնը, օրինակ, չի կարելի ասել Հրանտ Ալեքսանյանի պարագայում, որի ստեղծագործության ներքին մակարդակում իրացվում է արտաքին մակարդակի «անկազմակերպվածությունը», քանի որ

*Զգուշորեն մտնում են բառերի գաղտուկ կյանքի խորանը. –
սակված իրերը շարժվում - ցնցվում են,
շուրջուրեք ուժգին օրորվում - ճոճվում է, -
և ես ուշաթափ ընկնում - համրանում եմ
միջբառային քար անդունդի մեջ:*

Ալեքսանյանի պոեզիայում երբեմն չափազանց «մոդեռն» թվացող արտահայտություններն ու բառակապակցությունները, որոնք, թվում է, չեն կարող տեղ գտնել բանաստեղծության մեջ, իրականում արտացոլում են ժամանակի ճշգրիտ կերպարը («Շնչառությունս ճշգրիտ կրկնում է // ներկայի ռիթմը կտործուն»), նրանում նաև՝ նոր մարդուն՝ իր նոր հոգեկերտվածքով ու կենսափիլիսոփայությամբ, որ այլևս դուրս է եկել տարածաժամանակային ընկալումներից և պահանջում է իր հետ խոսել նոր իրականության լեզվով, ապագայի ներսից:

Գեղարվեստի պատմության մեջ ժամանակակից յուրաքանչյուր նոր դրսևորում նախապես դիտվել է որպես ապրիորի ընդվզում՝ օտարված ազգային ավանդույթներից, մարդու և իրականության ռեալ պահանջներից և այլն: Բայց ժամանակի հետ այդ նոր դրսևորումներն արտահայտել են ոչ միայն մարդու իրական պահանջները, նրա ազգային կերպարն ու հոգեբանությունը, այլև յուրովի ապահովել նոր ժամանակների հետ նրա հոգևոր հավասարակշռությունը: Մոդեռնիստական մեծաթիվ ուղղություններ, օրինակ, իրենց էության մեջ ծրագրային դրույթներով, ոչ մի առնչություն չեն ունեցել այն երկրների ազգային ավանդույթների հետ, որոնցում իրենք ձևավորվել են: Բայց, ժամանակի ընթացքում, դարձել են ոչ միայն տվյալ երկրի, այլև, առհասարակ, համաշխարհային մշակույթի զարգացման այս կամ այն ժամանակահատվածի կարևորագույն օղակներից մեկը: Այսպես, օրինակ ծնունդ առնելով Իտալիայում՝ ֆուտուրիզմը ոչ մի կապ չի ունեցել իտալական մշակույթի հարուստ ավանդույթների հետ, իսկ կուբիզմը և դադաիզմը՝ համապատասխանաբար ֆրանսիական և շվեյցարական: Մակայն այդ հանգամանքը չի խանգարել, որպեսզի վերոհիշյալ ուղղությունները յուրօրինակ շրջադարձ կատարեն ինչպես այդ երկրների, այնպես էլ, ի վերջո, արվեստի համընդհանուր զարգացման պատմության մեջ: «Խոսում է նա, ով հալածվում է լռությունից», - գրում է Հ. Ալեքսանյանը, և թե որ թռիչքադաշտում է վայրէջք կատարելու խոսքը՝ վճռում է մարդը՝ պայմանավորված տարածաժամանակային այս կամ այն հարթության մեջ ինքնաճանաչման ձևով ու բովանդակությամբ, քանի որ

*Ամենուր օղանավակայան է,
ուզում ես թռչել մի կյանքից մյուսը՝*

չգրանցելով անունդ իբրև հանցանշան:

Հ. Ալեքսանյանի պոեզիայում նոր ժամանակների տեսիլքն ուրվագծվում է նոր մարդու իրական ներսևեռումների մեջ, որտեղ և, նախկին արժեքների քայքայման արդյունքում, գտնում է բաց տարածություն, որը, սակայն, ի սկզբանե նախատեսված չլինելով նրա համար՝ ձևախեղվում է, բնականաբար և՛ այդպիսին դարձնելով իր մեջ ներխուժած այդ տեսիլքը: Բայց, միննույն ժամանակ, նրանք երկուսն էլ այլընտրանք չունեն և միմյանց հարմարվում են, միաձուլվում՝ դառնալով մերօրյա մարդու միակ հնարավոր հենքը, գոյության այլընտրանքային ձևն ու փիլիսոփայությունը: Առարկան և գաղափարը (Երկիրն ու Երկիրքը), ներթափանցվելով միմյանց մեջ, կորցնում են իրենց նախնական սահմանները, մտնում նոր շարժման մեջ՝ մեկ համընդհանուր սահմաններում ձևավորում նոր իրավիճակ, որ նոր մարդն է՝ ճանաչողական նոր համակարգով ու հոգեբանությամբ: Առարկան, որպես այդպիսին, պայմանավորված է մյուս առարկայի և նրա՝ որպես այդպիսին լինելու հանգամանքի հետ: Առանց մեկի՝ մյուսը կորցնում է այդպիսին լինելու իր իմաստն ու նշանակությունը, ինչը և արվեստի կարևորագույն առանձնահատկությունն է և գոյության սկզբունքային նախապայմանը: Լինելով ամբողջական համակարգ՝ ստեղծագործության բոլոր տարրերը փոխներթափանցված են միմյանց մեջ, և երբ նրանցից յուրաքանչյուրը ճշգրտորեն իրականացնում է իրեն վերապահված ֆունկցիան՝ ստեղծագործության օրգանիզմը ձեռք է բերում ներդաշնակություն, գործում մեկ միասնական պլանում: Իսկ եթե այդ տարրերից որևէ մեկը «կաղում է»՝ հետևանքները ներագրում են նաև մյուսներին, և օրգանիզմը կորցնում է իր բնականոն վիճակը: Երբ մենք, օրինակ, շարժում ենք մեր մատը՝ մեր մարմնի մյուս մասերում անբնական ոչինչ չի կատարվում, որովհետև այդ շարժմամբ մարմնի հիշյալ մասն իրականացնում է իր ֆունկցիան՝ պայմանավորված օրգանիզմի մկանային համակարգի համընդհանուր ներդաշնակությամբ: Իսկ երբ մեր մատը ցավում է՝ այդ ցավը տարածվում է նաև մեր մարմնի մյուս մասերի վրա, և օրգանիզմը կորցնում է իր բնական վիճակը: Նույն սկզբունքը գործում է նաև հոգևոր հարթության մեջ. երբ մենք ընդգծված որևէ զգացողություն չենք ապրում՝ մեր միտքն ու հոգին շարունակում են իրենց բնականոն ընթացքը, և մենք իրականությունը տեսնում ենք այնպիսին, ինչպիսին այն կա: Իսկ երբ, ասենք, մենք սիրահարվում ենք՝ իրականությունը մտահայվում է այլ կերպ, մեր հոգևոր ապարատը փոխում է նրա նկատմամբ իր դիրքը՝ ստիպելով նրան երևալու իր այն կողմերով, որոնք նախատեսված չեն իր բնական վիճակի համար: Իր նոր վիճակում, այսպիսով, առարկան փոփոխության է ենթարկում նաև մյուսին, և իրենց նոր իրավիճակում նրանք մտնում են նոր հարաբերության մեջ: Արվեստը հենց այս հարաբերությունն է, և դրա սկզբունքը՝ հարաբերություն հանուն հարաբերության: Իսկ այստեղ արդեն այլ հարթություն է տեղափոխվում այդ հարաբերության բնույթի ու աստիճանի խնդիրը՝ կապված իրավիճակի՝

առարկայի ընտրության և իր հոգևոր դիրքով պայմանավորված նրան փոփոխության ենթարկելու հանգամանքների հետ:

Այս առումով ուշագրավ է Վիոլետ Գրիգորյանի ընտրած առարկան՝ մարմինը, որը Խաչիկի աղջիկը «մթերել է թանկ հյուրի համար».

Այս է մարմինը, որ հանձնված է... սիրուն:

Այս է արյունը, որ թովռում է ժիր երակներում:

Աչքս լույս, տոն է,

այս գիշեր տոն է, մարմնիս կիրակի,

և իգությունս, որ մթերել եմ թանկ հյուրի համար,

սփռել եմ ահա սիրեկանի դեմ:

Համեցիր, վերցրու, անուշ արա, դե,

նայիր, Խաչիկի աղջիկն է, ջանիկ, քեզ հյուրասիրում:

Աստվածաշնչյան ընկալմամբ՝ երբ մարմինը տոնում է, հոգին սուգ է ապրում և՛ ընդհակառակը: Աստվածային արարչագործության պլանում նրանք երկուսն էլ գտնվում են հավասար մակարդակներում, և նրանցից մեկի առավելությունը պայմանավորված է մյուս-ի թերությամբ, մեկի ազատությունը՝ մյուսի բացակայությամբ: Միասին՝ նրանք ունեն ազատության միևնույն սուբյեկտիվ հնարավորությունները, տարբեր են միայն վերջիններս գործի դնելու նրանց եղանակները, որոնք էլ, իրենց հերթին, պայմանավորված են ազատության՝ որպես երևույթի մտահայեցման նրանց տարբերություններով: Այն տեսակետները, թե հոգին ազատ է և կարող է թռչել, սավառնել, փարվել ու և ինչին ուզում է՝ զուտ պայմանական հասկացություն է և կարող է սոսկ ընդունելի լինել գեղարվեստի ինչ-ինչ մակարդակներում: Իրականում այդ ամենն անում է երևակայությունը, որը կախում չունի մարմնից և ազատ է բառի բուն իմաստով: Հոգու և մարմնի ազատության չափն ու բնույթը պայմանավորված են պատմահասարակական, հոգևոր - մշակութային, ազգային - ավանդական տարաբնույթ հանգամանքներով և վերջիններիս կողմից նրանց համար ստեղծված օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններով: Այս պայմաններում էլ մարդը պատկերացում է կազմում ազատության չափի ու բնույթի մասին և, հանդիպելով նրանց «խախտման» այս կամ այն երևույթին, զուտ մարդկային առումով դիտում է այն որպես անբնական իրավիճակ: Այստեղից էլ՝ էրոտիկ գրականության և, հատկապես, «բաց» տեսարանների վերաբերյալ գրաքննադատության և ընթերցող լայն շրջանների վերջերս ձևավորված տեսակետները, որոնք, մեծ հաշվով, չեն համակարգվում գիտահոգեբանական պլանում և գտնվում են ընկալման արտաքին մակարդակի վրա:

Գրականության մեջ, ինչպես արդեն ասվել է վերևում, կարևորը ոչ թե առարկաներն են, այլ նրանց հարաբերությունները, որոնցում առարկաները սոսկ պայմանական բնույթ են կրում՝ այդ հարաբերությունների համար դառնալով ընդամենը համապատկեր: Խնդիրը կայանում է նրանում, թե այդ հարաբերություններում ինչպիսի տարածություն են ընդգրկում ընթերցողի

ընկալման օբյեկտիվն ու հոգևոր դաշտը, ինչի արդյունքում և նա (ընթերցողը) գնահատական է տալիս գեղարվեստական ստեղծագործությանը: Ինչ վերաբերում է մարմին և հոգուն, ապա (մեծ հաշվով) մարդը չի կարող տնօրինել նրանց կամքը, որովհետև նրանք իր սեփականությունը չեն և իրեն չեն պատկանում այլ համապատասխանաբար՝ երկրին և երկնքին, մեկը գտնվում է ներքևում, մյուսը՝ վերևում, իսկ մարդը («ես»-ը)՝ նրանց միջնատարածության մեջ: «Ես»-ը հոգին չէ և ոչ էլ՝ մարմինը, այլ նրանց միասնական գիտակցումը, որի այս կամ այն աստիճաններում միայն մարդը հարաբերվում է մարմնի և հոգու հետ: Ինչքան սրվում է «ես»-ի գիտակցումը՝ այնքան ընդլայնվում են մարմնի և հոգու ազատության հնարավորությունները, այստեղից նաև՝ ինքնատնօրինման նրանց մեթոդներն ու եղանակները:

Վերոհիշյալ նկատառումները՝ իբրև երևույթի ներքին դրսևորում, որի արտաքին համակարգումները գեղարվեստական պլանում պայմանավորված են հեղինակի հոգեկերտվածքով, առարկայի հարաբերությունը ստեղծագործության կառույցում իրացնելու ճաշակով ու նախատրամադրվածությամբ: Վ. Գրիգորյանի պարագայում մարմինը կարող է լինել միանգամայն ազատ, քանի որ այն «նվեր է», մարդն այն «շահել է վիճակախաղում»՝ առանց ջանք գործադրելու, թեթև մի շարժումով, որ կարող էր նաև բախտը չբերել և չշահել, հետևաբար և՛ կարող է վարվել նրա հետ ինչպես ուզում է և անգամ «ձրի» տալ ուրիշին.

Ձրի եմ առել, ձրի էլ կտամ մարմինն այս նվեր,

որ ինձ փայ հասավ, որ շահեցի հեշտ

այն վերաշխարհիկ վիճակախաղում...

7. Городецкий С., Карабах. – “Карабахский вопрос”. Истоки и сущность в документах и фактах. Степанакерт, 1989.
8. Дубровин Н. Ф., История войны и владычества русских на Кавказе, т. 2, ч. 1, СПб, 1886.
9. Иоаннисян А., Россия и освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990.
10. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1989.
11. Кочарли Т., К истории Карабахского вопроса (вымыслы и действительность), Баку, 2009.
12. Հայաստանի ազատագրության հյուսիսային և հարավային ծրագրերը:

¹ *Цыганков П.А., Теория международных отношений. М., 2002, с.232.*

- http://www.anunner.com/repository-articler_armenian-people_history/37.
13. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Сб. документов под. ред. Ю. Барсегова, т. 1, М., 2008.
 14. Нагорный Карабах. Историческая справка. Ереван, 1988.
 15. Наджафли Г., Планы создания армянского государства на азербайджанских землях во второй половине XVIII века. – 1905.az.ru.
 16. Потто В., Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества. М., 1993.
 17. Պողոսյան Ս. Մ., Հայ-ռուս բարեկամության պատմությունից, Երևան, 1974:
 18. Присоединение Восточной Армении к России. Сб. док. под ред. Ц.П. Агаяна, т.1, М., 1972.
 19. План М. Сарафяна
<http://findarmenia.org/arm/history/22/409/411>.
 20. Права человека. Сборник международных договоров. Т.1, ООН, Нью-Йорк, 2002.
 21. Скачко А., Армения и Турция на предстоящей конференции.- “Жизнь национальностей”, 1921, N 4.
 22. Цыганков П.А., Теория международных отношений. М., 2002.
 23. Шахмурадов А., Армяне на Южном Кавказе, Баку, 2015.
 24. Эзов Г., Сношения Петра Великого с Армянским народом. СПб, 1898.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Տարոն ՀԱԿՈՒԲՅԱՆ

ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌԶԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ԶԵՌՔԲԵՐՈՒՄ

1985 թ. հետո գորքաչտվյալն՝ այսպես կոչված «վերակառուցման» քաղաքականությունը Արցախի հայ բնակչությանը հնարավորություն ընձեռեց կրկին հանդես գալու իր ոտնահարված իրավունքների պաշտպանությամբ և Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը միավորելու պահանջով:

Անտեսելով հայ բնակչության ինքնորոշման իրավունքը և նրա պահանջի իրավաքաղաքական հիմնավորվածությունը՝ Ադրբեջանը Մոսկվայի հովանավորությամբ նորից նախընտրեց հարցի կարգավորման, ավելի ճիշտ մեռցման ոչ քաղաքակիրթ մեթոդները՝ կազմակերպելով էթնիկ զտումներ: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 1991 թվականը, երբ նշմարվեց ԽՍՀՄ լուծարման հեռանկարը:

ԼՂՀ-ն ձևավորվեց ԽՍՀՄ-ի լուծարման գործընթացում՝ ԽՍՀՄ պետական կառույցում ներառված ազգային-պետական կազմավորման՝ ԼՂԻՄ-ի և հայաբնակ Շահումյանի շրջանի հիմքի վրա: Հաշվի առնելով Հայաստանի հետ վերամիավորման պահանջի բավարարման անհնարինությունը ԽՍՀՄ-ում ու միջազգային որոշ կազմակերպություններում, ինչպես նաև դրանց կողմից խնդիրը որպես Հայաստանի՝ Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություն դիտելը, ինչը կարող էր անկասելի դարձնել ադրբեջանա-հայկական պատերազմը, ԼՂՀ իշխանությունները ընտրեցին միակ ճիշտ՝ փոխզիջումային

տարբերակը՝ սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ հայտարարելու մասին հռչակագիր: Դրանով ԼՂ-ն մի կողմից՝ իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից՝ հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորման պահանջից:

Հիմնախնդրի իրավական փաթեթը թույլ է տալիս ասել, որ ԼՂ-ն միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական կայացած պետություն է, իսկ ԱՀ-ի հավակնությունները ԼՂ-ի նկատմամբ ապօրինի են:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Արցախյան շարժում, ինքնապաշտպանության ուժեր, կենտրոնական շտաբ, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Գերագույն խորհուրդ, ցեղակրոն, քաղաքական ահաբեկչություն

Т.Акопян

**ПРОВОЗГЛАШЕНИЕ РЕСПУБЛИКИ КАРАБАХ (АРЦАХ)
КАК ДОСТИЖЕНИЕ НОВОГО ЭТАПА АРЦАХСКОГО
ДВИЖЕНИЯ**

Так называемая политика «перестройки» Горбачева в 1985 г. позволила армянскому населению Арцаха вновь поднять вопрос о своих нарушенных правах, потребовав объединения Нагорно-Карабахской автономной области с Армянской ССР.

Игнорируя право армянского населения на самоопределение и политико-правовое обоснование, Азербайджан с согласия Москвы снова предпочел нецивилизованные методы решения вопроса, а точнее убийства, путем организации этнических чисток. Такая ситуация сохранялась до 1991 года, когда появилась перспектива распада СССР.

Нагорно-Карабахская республика образовалась в процессе распада СССР, на основе двух национально-государственных образований, Нагорно-Карабахской автономной области и армянонаселенного Шаумянского района. Невозможность удовлетворить требования НКАО о воссоединении с Арменией в СССР, а также их отношение к проблеме территориальных претензий Армении к Азербайджану, которые делали азербайджано-армянскую войну неизбежной, власти НКР выбрали единственно верный компромиссный вариант - принятие 2 сентября 1991г. декларации о провозглашении НКР. Таким образом, с одной стороны, Нагорный Карабах объявил себя вне Азербайджана, а с другой - отказался требовать воссоединения с Арменией.

Правовой пакет вопроса позволяет говорить о том, что НКР является вполне правовым государством с точки зрения международного права, а претензии Азербайджанской Республики к НКР незаконны.

Ключевые слова: Нагорно-Карабахская автономная область, арцахское движение, силы самообороны, центральный штаб, Республика Армения, Нагорно-Карабахская Республика, Верховный Совет, этнорелигия, политический терроризм.

T. Hakobyan

**PROCLAMATION OF NAGORNO-KARABAKH (ARTSAKH) THE
REPUBLIC AS THE ACHIEVEMENT OF A NEW STAGE OF
THE ARTSAKH MOVEMENT**

In 1985 Gorbachev's so-called "reconstruction" policy allowed the Armenian population of Artsakh to once again defend their violated rights by demanding the unification of the Nagorno-Karabakh Autonomous Region with the Armenian Soviet Socialist Republic.

Ignoring the right of the Armenian population on self-determination and the legal-political justification of their demand, Azerbaijan, under the aegis of Moscow again preferred uncivilized methods of settling the issue, or rather killing, by organizing ethnic cleansing. This situation persisted until 1991, when the prospect of the dissolution of the USSR appeared.

NKR was formed in the process of dissolution of the USSR, on the basis of the NKAO and the Armenian-populated Shahumyan region, the national-state formation included in the USSR state structure. Taking into consideration the impossibility of meeting the demand for reunification with Armenia in the USSR and some international organizations, as well as their treating the issue as a territorial claim of Armenia towards Azerbaijan, which could make the Azerbaijani-Armenian war inevitable, the NKR authorities chose the only correct compromise solution - declaring the NKR on September 2. Thus, on the one hand, Nagorno-Karabakh declared itself independent from Azerbaijan, on the other hand, it refused to demand reunification with Armenia.

The legal package of the issue allows to declare that the NKR is a legal state from the point of view of international law, and the claims of the Republic of Azerbaijan towards the NKR are illegal.

Key words: *Nagorno Karabakh Autonomous Region, Artsakh movement, self-defense forces, central headquarters, Republic of Armenia, Nagorno Karabakh Republic, Supreme Council, ethno-religion, political terrorism.*

Լեռնային Ղարաբաղը (ԼՂ) (պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի մի հատվածը) խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921 թ., ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի հուլիսի 5-ի ապօրինի որոշումով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին (Ադրբեջանական ԽՍՀ)¹: Այնուհետև 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին» (ԼՂԻՄ)²: Սակայն նորաստեղծ մարզի սահմանների մեջ չընդգրկվեցին հարթավայրային Ղարաբաղի մեծ մասն ու արևմտյան լեռնային շրջանները³:

¹ Տե՛ս՝ *Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов, Ер., 1992 с. 650.*

² Տե՛ս՝ *նույն տեղում, էջ 669-670:*

³ Տե՛ս՝ **Հակոբյան Տ.**, *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.)*, Եր., 2011, էջ 4:

Ադրբեջանի կողմից տասնամյակներ ի վեր կիրառված հակահայկական քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարումը ստեղծեցին ծայրահեղ լարված իրավիճակ:

1985 թ. հետո ԽՍՀՄ-ում ստեղծված նպաստավոր քաղաքական պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու միացման գաղափարը:

1980-ական թվականների կեսերից մտավորականության և ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել ԼՂԻՄ-ում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնախնդիրները՝ մատնանշելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու՝ վաղեմի իդձերի իրագործման ուղիները:

Քննարկվող հարցերին գործնական ընթացք ապահովելու նպատակով դեռևս 1981 թ. Ստեփանակերտում ստեղծվեց «Արցախ» ընդհատակյա կազմակերպությունը, այնուհետև վերաձևավորվեց՝ անվանվելով **Արցախյան ազգային միություն**¹:

Կազմակերպության ստեղծման գործում մեծ դերակատարություն ունեցան Հակոբ Խաչատրյանը, Իգոր Մուրադյանը, Արթուր Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Էմիլ Աբրահամյանը, Արկադի Կարապետյանը և այլք: Կազմակերպության կենտրոնական կոմիտեի քարտուղար ընտրվեց Հակոբ Խաչատրյանը: Միության մեջ ընդգրկված էին նաև ուսանողներ, որոնք ընդհատակյա պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական շարժման կրողները դարձան՝ հետագայում ստանձնելով ուսանողության կազմակերպման, նրանց գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը:

1987թ. վերջին 1988թ. սկզբին ազգային-ազատագրական պայքարը նոր թափ ստացավ: Շարժման մեջ ներգրավվածները սկզբնական շրջանում արցախյան հարցի լուծումը տեսնում էին Խորհրդային Միության շրջանակներում, որպեսզի շարժումը չընկալվեր որպես հակախորհրդային: Ավելին, շարժման ղեկավարությունն ամեն առիթով փորձում էր մոսկովյան աստիճաններում արցախցիների պայքարը ներկայացնել վերակառուցման և հրապարակայնության գաղափարների լույսի ներքո՝ նրան օրինական տեսք տալու համար:

Դրա առաջին արտահայտությունը դարձավ 1987 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ԼՂ-ն Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով ԼՂԻՄ-ում

¹ Տես՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ.Հակոբյանի անձնական արխիվ՝ Հայ ազգայնականության ճակատի կենտրոնական վարչության նախագահ Հակոբ Խաչատրյանի դիմումը՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդին (1993 թ., դեկտեմբեր):

կազմակերպված յուրօրինակ հանրաքվեն, որի ընթացքում հավաքվեց շուրջ 80 հազար ստորագրություն¹:

Նույն ժամանակահատվածում կենտրոնական կուսակցական ու պետական մարմիններն ընդունել են ԼՂԻՄ հայության ներկայացուցիչների չորս պատվիրակություններ և հավաստիացրել են, թե մոտ ապագայում Արցախի հիմնահարցն արդարացի լուծում կստանա: Արցախյան պատվիրակության անդամները մոսկովյան առաջին այցի ժամանակ ոչ պաշտոնական հանրաքվեի ընթացքում հավաքած 80 հազար ստորագրությունները ներկայացրեց ԽՍՀՄ ղեկավարությանը:

Ոգևորված կենտրոնական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից՝ մարզի բոլոր գյուղերում, ձեռնարկություններում և կազմակերպություններում տեղի ունեցան կոլեկտիվների ժողովներ, որոնցում որոշումներ ընդունվեցին ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ: Այդ որոշումների հիման վրա մարզի շրջանների ժողովրդական դեպուտատների խորհուրդները նմանատիպ որոշումներ կայացրին²: Միաժամանակ Ստեփանակերտում և մարզի մյուս շրջկենտրոններում սկսեցին բազմամարդ հանրահավաքներ կազմակերպվել:

1988 թ. փետրվարի 13-ին շարժման ակտիվիստները Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսների և ուսանողների հետ ինքնաբուխ ցույց կազմակերպեցին: Այդ օրվանից շարժումը համաժողովրդական և աննահանջ պայքարի բնույթ ստացավ:

Ընդառաջ գնալով մարզի հայ բնակչության ցանկություններին՝ 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցով Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների (ԳԽ) առջև միջնորդելու մասին³:

Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1988 թ. փետրվարի 21-ին ընդունեց ժողովուրդների ինքնորոշման միջազգային սկզբունքներին հակասող որոշում, ինչպես նաև փորձ արվեց հիմնահարցի քաղաքական լուծումը փոխարինել սոցիալ տնտեսական բնույթի տարբեր միջոցառումներով, ինչն էլ հարուցեց մարզի բնակչության խիստ դժգոհությունը:

Անտեսելով հայ բնակչության ինքնորոշման իրավունքը և նրա պահանջի իրավաքաղաքական հիմնավորվածությունը՝ Ադրբեջանը Մոսկվայի

¹ Տես՝ «ԼՂ Հանրապետություն», 22.01.1998:

² Տես՝ **Բայլայան Վ.**, *Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.)*, Ստեփ., 2012, էջ 280:

³ Տես՝ **Բայլայան Վ., Հակոբյան Տ.**, *Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ նիստի արձանագրությունը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, Ստեփ., 2008, էջ 12:

հովանավորությամբ նորից նախընտրեց հարցի կարգավորման, ավելի ճիշտ՝ մեռցման ոչ քաղաքակիրթ մեթոդները՝ կազմակերպելով էթնիկական գտումներ: Սա արդեն քաղաքական ահաբեկչություն էր: Խորհրդային գորքերի օգնությամբ հրկիզվեցին ու ավերվեցին հայկական բնակավայրեր: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև 1991 թ., երբ նշմարվեց ԽՍՀՄ-ի լուծարման հեռանկարը:

Իսկ 1988թ. փետրվարյան իրադարձությունների բովում ծնված ինքնապաշտպանության վերացական գաղափարը, որն այնժամ դեռևս իրական հնչեղություն չէր կարող ձեռք բերել, վերոնշյալ իրադարձությունների ֆոնին դարձավ հրամայական անհրաժեշտություն: Ստեփանակերտում և շրջաններում թաղային ու համայնքային սկզբունքներով ծնունդ առան ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատներ:

Հատկանշական է, որ հայրենիք վերադարձած ՀՅԴ կազմակերպությունը, լինելով ազատագրական պայքարի գաղափարի կրողներից մեկը, նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով անմիջապես իր վրա վերցրեց ինքնապաշտպանության ջոկատների ստեղծման և զինման գործընթացը: ՀՅԴ Արցախի կենտրոնական կոմիտեի որոշմամբ Վալերի Բալայանը նշանակվեց **Մարտական գործողությունների** պատասխանատու՝ համակարգելով զինված ջոկատների գործունեությունը:

Ընդառաջ գնալով օրվա հրամայականին՝ ՀՅԴ-ն և տեղի հայրենասիրական ուժերը միասին առաջին գործնական քայլերը ձեռնարկեցին ինքնապաշտպանության ջոկատները միավորելու ուղղությամբ: Արցախում ինքնապաշտպանական գործընթացները սկսեցին համակարգվել մեկ կենտրոնի կողմից: 1991 թ. սկզբին Արցախում արդեն գործում էր կենտրոնական շտաբ: Շտաբի պետ և ինքնապաշտպանության ուժերի հրամանատար էր նշանակվել Արկադի Կարապետյանը (Դաշնակ Ազո): Յուրաքանչյուր շրջան ուներ իր հրամանատարությունը, որոնք ենթարկվում էին կենտրոնական շտաբին՝ բացառությամբ մի քանի ջոկատների: Կենտրոնական շտաբին կից ստեղծվել էր 7 հոգուց բաղկացած այսպես կոչված **Կորդինացիոն խորհուրդ**, որի կազմում ընդգրկված էին Արցախում գործող քաղաքական ուժերի ներկայացուցիչները:

Ինքնապաշտպանական ուժերը մարտական առաջին մկրտությունը ստացան Հյուսիսային Արցախում և Հաղթություն:

Միաժամանակ նշենք, որ ինքնապաշտպանության գործը կանոնավոր հունի մեջ դնելուն զուգընթաց՝ ՀՅԴ ղեկավարությունը քայլեր էր ձեռնարկում նաև Արցախում կազմակերպական տեսանկյունից հիմնավորվելու համար: 1989 թ. Արցախի տարբեր շրջաններում ձևավորվեցին առաջին խմբերը, որոնց հիմքի

վրա էլ կազմակերպվեց ՀՅԴ «Արցախի Ապառաժի» մարմինը¹: Բացի ՀՅԴ-ից, ակտիվ գործունեություն էր ծավալում Արցախում ցեղակրոնության գաղափարախոսության հիման վրա ստեղծված «Հայ երիտասարդության ճակատ» (հետագայում վերանվանվեց՝ Հայ ազգայնականության ճակատ) կազմակերպությունը²: Միաժամանակ նշենք, որ 1993-1995թթ. քաղաքական հայացքների պատճառով ձերբակալվեցին վերոնշյալ կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ Հակոբ Խաչատրյանը³, կազմակերպության մի շարք անդամներ, ինչպես նաև ՀՅԴ անդամներ, ազգային նկարագիր ունեցող քաղաքական այլ գործիչներ: Սակայն մեղադրականների բացակայության պատճառով վերջիններս ազատ արձակվեցին՝ մինչ այդ ենթարկվելով խոշտանգումների ու ծաղրանքի⁴:

Թվում է, թե Հայաստանում և Արցախում ընդհանուր շարժումը ղեկավարվում էր մեկ կենտրոնի կողմից, սակայն վերլուծելով պատմանական դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը՝ գալիս ենք այն համոզման, որ, որքան էլ պարադոքս է, այն ժամանակվա Արցախում և Հայաստանում շարժման ղեկավարման հիմքում կանգնած էին իրար ծայրահեղ հակոտնյա երկու քաղաքական ուժեր:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Խորհրդային Հայաստանում ևս համազգային շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Սկզբում այն ղեկավարվում էր ազգային մտածելակերպ ունեցող մտավորականության և ազգային գաղափարախոսությամբ տոգորված երիտասարդների կողմից: Թեև հետագայում հանրապետության կուսակցական ղեկավարությունը ևս ջանքեր էր գործադրում շարժումը գլխավորելու համար, սակայն հաջողության չհասավ: Արցախյան շարժումը ներդաշնակելու, համակարգելու նպատակով մարտ ամսին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որն իր մասնաճյուղերը ստեղծեց հանրապետության շրջաններում:

Գոյություն ունեն կարծիքներ, որ Հայաստանում արդեն թափ հավաքած շարժման մեջ ընգրկվեցին խորհրդային հատուկ ծառայությունների գործակալներ, ովքեր կարողացան շարժման վերահսկողությունը վերցնել իրենց ձեռքը՝ փոխելով շարժման ընթացքը և ուղղությունը՝ ազգային նպատակներից անցնելով ԽՍՀՄ ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի հունը: Այսօր նրանց գործունեության պատմությունը դեռևս պարուրված է

¹ Տես՝ **Հակոբյան Տ.**, *ԼՂՀ ձևավորումը որպես մեկնակետ միացյալ Հայաստանի ճանապարհին*, «ՎԷՄ» Համահայկական հանդես Եր., թիվ 3 (67), 2019, էջ 66:

² Տես՝ *ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ.Հակոբյանի անձնական արխիվ, Հայ ազգայնականության ճակատի կենտրոնական վարչության նախագահ Հակոբ Խաչատրյանի դիմումը՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդին (1993 թ., դեկտեմբեր):*

³ Տես՝ նույն տեղում:

⁴ Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 183:

խորհրդավորության շղարշով: Այնինչ, նրանց ընդգրկվելու և Միացումի սկզբունքով առաջնորդվող «Ղարաբաղ» կոմիտեի առաջին կազմի մեկուսացվելու երևույթը բացատրելի և օրինաչափ էր այն ժամանակվա քաղաքական իրողությունների տեսադաշտում: Պետք է նշել նաև, որ տվյալ ժամանակաշրջանի ոչ բոլոր քաղաքական իրադարձություններն են հայտնի գիտական շրջանակներին և բացահայտում են պահանջում:

Արցախում գործընթացներն այլ կերպ էին ընթանում: Շարժման մեջ, բացի հայրենասիրական ուժերից, ներգրավված էր նաև կուսակցական ակտիվը, ինչպես նաև հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները: Վերջիններիս մի մասի ակտիվ մասնակցությունը, մեր կարծիքով, այլ ենթատեքստ էր հետապնդում և համահունչ էր Հայաստանում Ղարաբաղյան շարժման ղեկը Միացումի կողմնակիցներից իսլած «Վերակառուցման» դարաշրջանի ժողովրդավարների նպատակներին:

Ուստի, հետագայում շարժման մեջ ձևավորվեց երկու հակառակ ուղղություն: Մի ուղղությունն Ադրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացրեց իրեն: Դրան գուգահեռաբար գնում էր այլ գործընթաց՝ զինված ինքնապաշտպանության կազմակերպում: Մեկ անգամ ևս փաստենք, որ այդ խնդրում վճռական դեր խաղաց ՀՅԴ-ն, ինչպես նաև ազգայնական այլ քաղաքական ուժեր (Հայ ազգայնականության ճակատ, Արցախի ժողովրդական ճակատ և այլն), որոնք աննախադեպ թափ հաղորդեցին ազգային - ազատագրական շարժմանը՝ ներառելով Միացումի կողմնակիցներին: Վերջիններիս ակտիվությունը, ըստ երևույթին, գործի մղեց նաև Հայաստանում Ղարաբաղյան շարժումը ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի հուն տեղափոխած ՀՀԾ-ին: Նրա խողովակով նույնպես սկսեց գենք մատակարարվել և ստեղծվել ինքնապաշտպանական ջոկատներ: Սա չէր կարող Ղարաբաղյան շարժման առաջնորդների նոր խմբավորում չառաջացնել. նախկին խորհրդային կուսակցական ակտիվի, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարների շրջանում հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց հիմնական մասն ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ¹:

Միաժամանակ ընդգծենք, որ այդ գործակալներից ոմանք, ցավոք սրտի, ներթափանցեցին Հայաստանում ու Արցախում գործող քաղաքական այլ ուժերի շարքեր՝ իրենց անցյալը քողարկելու կամ ինքնամաքրվելու նպատակով: Մի մասը նույնիսկ ակտիվ մասնակցություն ունեցավ Արցախի և Հայաստանի պետականության կերտման գործընթացում՝ հանդես գալով իր համար խորթ ազգային դիմակներով:

Արցախցիների վիճակն ավելի ծանրացավ ԽՍՀՄ լուծարման նախաշեմին: 1991թ. օգոստոսից ԽՍՀՄ-ի լուծարման համատեքստում ստեղծվել էր

¹ Տես՝ նույն տեղում, էջ 40:

յուրօրինակ քաղաքական իրադրություն. օգտվելով նպաստավոր պայմաններից՝ ԽՍՀՄ տարածքում գտնվող ազգային միավորումները ձգտեցին անկախություն:

Մինչ այդ ԽՍՀՄ պետական բարձրագույն օրենսդիր աստյանը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունել էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը: Այս օրենքը հստակեցնում էր ոչ միայն բոլոր միութենական հանրապետությունների, այլև ինքնավար կազմավորումների, անգամ ինքնավար շրջանների և հոծ ապրող ազգային խմբերի՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավական հիմունքները: Օրենքի 3-րդ հոդվածում ասվում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անց է կացվում յուրաքանչյուր ինքնավարության հաշվով առանձին: Ինքնավար հանրապետությունների և կազմավորումների ժողովուրդներին է մնում ԽՍՀՄ-ում կամ դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաև իր պետական կարգավիճակի հարցը դնելու իրավունքը: Այն միութենական հանրապետությունում, որտեղ կան տվյալ վայրի բնակչության մեծամասնությունը կազմող և հոծ թվով բնակվող ազգային խմբերի տարածքներ, հանրաքվեն հանրագումարելիս քվեարկության արդյունքները հաշվի են առնվում առանձին»¹:

Այդ օրենքի ընդունման օրից հոծ բնակվող ազգային խմբերը ԽՍՀՄ-ի լուծարման պարագայում ԽՍՀՄ պետական իրավունքի կրողները դարձան:

Հիմք ընդունելով հենց 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը՝ Ադրբեջանի ԳԽ-ն 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունում է «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, որով Բաքուն հրաժարվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից և վերականգնում 1918-1920 թթ. գոյություն ունեցած ԱՀ-ի պետականությունը²:

Իսկ 1991 թ. հոկտեմբերի 18-ին ընդունվեց Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտը, որով Բաքուն ամրագրեց իր հրաժարումը Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից³:

Պետք է ընդգծել, որ Բաքուն, վերադառնալով 1918-1920 թթ. իրողություններին, վերականգնեց Ազգերի լիգայի կողմից դե-յուրե չճանաչված մուսավաթական Ադրբեջանական Հանրապետության պետականությունը, որը

¹ Տես՝ «Արցախ», 26.08.1993:

² Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 19:

³ Տես՝ **Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Մ.**, Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի, ազրեսիայի իրավաքաղաքական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Երեւան, 2007, էջ 228-229:

չունենալով ճանաչված, լեգիտիմ սահմաններ և չէր վերահսկում ոչ Լեռնային Ղարաբաղը և ոչ էլ Նախիջևանը¹:

Նկատենք նաև, որ Ադրբեջանի անկախությունը ընդունվեց ոչ թե հանրաքվեի արդյունքում, այլ հայտարարվեց հանրապետության գերագույն օրենսդիր մարմնի կողմից, որի կազմի մեջ չկար ներկայացուցիչ ո՛չ ԼՂԻՄ-ից և ո՛չ էլ այլ հայկական ու հայաբնակ տարածքներից:

Մյուս կողմից էլ Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունը լիովին չէր կողմնորոշվել մայր Հայաստանին Արցախի վերամիավորման համայն հայության պահանջի հարցում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում միայն Լ.Տեր-Պետրոսյանը պահանջեց բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը²:

Ստեղծված անորոշության պայմաններում հաշվի առնելով Հայաստանի հետ վերամիավորման պահանջի բավարարման անհնարինությունը ԽՍՀՄ-ում ու միջազգային որոշ կազմակերպություններում, ինչպես նաև խնդիրը՝ որպես Հայաստանի Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություն դիտվելու վտանգը, ինչը կարող էր անկասելի դարձնել հայ-ադրբեջանական պատերազմը, ԼՂ իշխանությունները ընտրեցին միակ ճիշտ, հանգրվանային տարբերակը՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ անկախության մասին Հռչակագիր³: Դրանով ԼՂ-ն մի կողմից իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից առերես հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորումից: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, և այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղվածություն: Այսպիսով, ԽՍՀՄ-ի լուծարման արդյունքում նախկին Ադր. ԽՍՀ-ի տարածքում կազմավորվեցին երկու անկախ պետություններ՝ ԼՂՀ-ն և Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ):

ՍՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է «ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «SHORT TERM RESEARCH GRANT FOR THE STUDY OF NAGORNOKARABAKH II» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հողվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

¹Տես՝ **Մանասյան Ա.**, Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003, էջ 166:

² Տես՝ **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 299:

³ Հայաստանի Հանրապետություն, 03.09.1991:

ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Տարոն ՀԱԿՈՒՅԱՆ

ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ.

**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱՒԻ)
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992Թ. ԱՊՐԻԼ)**

Արցախյան շարժման պատմության մեջ վրա հասավ այն նշանակալից պահը, երբ շարժումը թևակոխեց իր զարգացման մի նոր շրջան. սկսվեց անկախ հանրապետության կայացման և գոյատևման համար ադրբեջանական ագրեսիայի դեմ համառ պայքարի շրջանը: ԼՂՀ իշխանությունները շարունակեցին ազգային պետության կարգավիճակը անկախ պետականության հարթակ բարձրացնելու ճանապարհին պահպանել միջազգային իրավունքի բոլոր նորմերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության և սաստկացող ռազմագործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, կարողացան ինքնուրույնաբար ստեղծել հիմքեր իրավական և ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային և պահպանել իր անկախությունը:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, Գերագույն խորհուրդ, Արթուր Մկրտչյան, Նախարարների խորհուրդ, պաշտպանության կոմիտե, պաշտպանության խորհուրդ, ինքնապաշտպանության ուժեր, պետական շինարարություն:

Т.Акопян

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ (АРЦАХ) (АПРЕЛЬ 1992 г.)

В истории арцахского движения наступил знаменательный момент, повлекший за собой новый этап развития: начался период упорной борьбы против азербайджанской агрессии за создание и выживание независимой республики. Власти НКР продолжали соблюдать все нормы международного права на пути повышения статуса национального государства до статуса независимого государства.

После трагической гибели председателя Верховного совета НКР Артура Мкртчяна нестабильная внутриполитическая ситуация не поколебала основ государственности НКР. Более того, даже в сложившейся сложной политической ситуации и в условиях обострения боевых действий, пришедшие к власти новые силы, независимо от партийной принадлежности, смогли самостоятельно заложить основы правового, демократического государства, которому было суждено противостоять агрессии Азербайджана и сохранить свою независимость.

Ключевые слова: *Нагорно-Карабахская (Арцахская) Республика, Верховный Совет, Артур Мкртчян, Совет министров, Комитет обороны, Совет обороны, силы самообороны, государственное строительство.*

T. Hakobyan

**MILITARY-POLITICAL PROCESSES IN THE NAGORNO
KARABAKH (ARTSAKH) REPUBLIC
(APRIL 1992)**

The significant moment in the history of the Artsakh movement started when it entered a new stage of its development: the period when the persistent struggle against the Azerbaijani aggression for the establishment and survival of an independent republic began. The NKR authorities continued to follow all the norms of international law on the way of raising the status from a nation state to an independent one.

After the tragic death of NKR Supreme Council Chairman Arthur Mkrtychyan, the unstable internal political situation did not shake the foundations of the NKR statehood. Moreover, even in the current difficult inner political situation and intensifying military conditions, the new forces that came to power, regardless of their party affiliation, were able to independently establish the bases for a legal, democratic state, which was destined to resist the aggression of Azerbaijan and maintain its independence.

Key words: *Nagorno Karabakh (Artsakh) Republic, Supreme Council, Arthur Mkrtychyan, Council of Ministers, Defense Committee, Defense Council, self-defense forces, state construction.*

1991 թ. դեկտեմբերի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին գումարման (ԼՂՀ) Գերագույն խորհրդի (ԳԽ) ընտրություններից հետ սկսվեց իշխանական համակարգերի ձևավորման գործընթացը: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի

նախագահ հաստատվեց Օլեգ Եսայանը, իսկ տեղակալ՝ Բորիս Առուշանյանը: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին: Սակայն, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով, ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարևոր դեկավար պաշտոններ, այդ թվում՝ ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր: ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գեորգի Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վլադիկ Հակոբյանը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները¹ և հետևյալ խումբ-խմբակցությունները՝ ՀՅԴ խմբակցություն, «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ, «Մարտակերտցիների խումբ», «Միացում» պատգամավորական խումբ, չեզոք անդամներ ու զինվորականներ:

1992 թ. մարտի 4-ին ԳԽ նախագահության նիստում Արցախի ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992 թ. հունվարի 9-ի որոշմանը համապատասխան՝ հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը²:

Այնուհետև նորընտիր ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ Նախարարների խորհուրդի (ՆԽ) կազմը հաստատելու մասին, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը: «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ հաստատվեց ԼՂՀ կառավարությունը և հանձնարարվեց վերջինիս, առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը³:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Կազմավորելով ԼՂՀ կառավարությունը՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորություններն իրեն վերապահեց մինչև 1992թ. օգոստոս Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը: Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ

¹ Տես՝ **Հակոբյան Տ.**, *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.)*, Եր., 2011, էջ 39:

² Տես՝ *ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 2, կետ 1, թերթ 5-6:*

³ Տես՝ *նույն տեղում, թ. 11-14:*

նախագահությանը՝ ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ)¹:

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպում ունենա Հայաստանի Հանրապետության (ՀՀ) նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա.Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա.Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ նա իր տեղը պետք է զիջի ՀՀԾ-ական որևէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին²:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԻՊՈՒ-ի հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա.Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ, առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության, հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահը կանգնած էր երկրնտրանքի առաջ: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվակները:

Այս համատեքստում չենք կարող չհիշատակել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ Արցախում մինչև Ա. Մկրտչյանի մահը: Արտաքին ուժերի ազդեցության ներքո փորձ կատարվեց մասնատելու նորաստեղծ պետականությունը, և այդ գործընթացի սկիզբը դրվեց Մարտակերտում: Հարկ է նշել, որ այս իրադարձության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, երևի այդ իրադարձությունից դրդված, ապրիլի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ԼՂՀ բնակչությանը, որում, մասնավորապես, ասվում էր.

¹ Տես՝ ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:

² Տես՝ **Աբրահամյան Հ.**, Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 160:

«...Հայրենակիցներ, Մենք Ձեզ կոչ ենք անում պթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սաղրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավասար կռվում հայրենիքի անձևվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի և մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»¹:

Հակված ենք կարծելու, որ Ա. Մկրտչյանի և ԼՂՀ-ում ՀՅԴ-ի գործունեության թերությունը պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղություն ընտրելն էր, ինչի արդյունքում հարկ եղավ իշխանության մի շարք կարևոր պաշտոններ հանձնել ընդդիմադիր կուսակցական գործիչներին: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերևս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց ներքաղաքական քառսային իրավիճակ:

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. 1992 թ. ապրիլի 14-ի երեկոյան առեղծվածային հանգամանքներում մահացավ ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա. Մկրտչյանը իրենից հետո թողեց ոչ մեծ, բայց քաղաքական ու բարոյական ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչև ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երևանի հետ ծանր պայքարի պայմաններում: Այսինքն՝ Արցախը, ունենալով սուբյեկտայնություն, իր հստակ դիրքորոշումն էր արտահայտում բանակցային գործընթացում, ինչպես նաև չէր միջամտում ՀՀ ներքաղաքական կյանքին՝ պահպանելով իր չեզոքությունը:

¹ Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 1, պ.մ. 2, կ. 1, թ. 36-37:

Ուսումնասիրելով և վերլուծելով հետազայում երկրում ծագած ներքաղաքական իրադարձությունները՝ պետք է ասել, որ ապրիլի 14-ի կրակոցը բազմաթիվ մտորումների տեղիք է տալիս, որոնք առ այսօր պատասխան են որոնում: Խնդիրն անգամ այն չէ, թե ինչպես դա տեղի ունեցավ, ամենայն հավանականությամբ այն չբացահայտվողների դասին է պատկանում, սակայն ինչպես բացատրել փաստերի միանգամայն համընկնումները:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության և ՊԽ-ի համատեղ արտակարգ նիստ, որը նախագահում էր ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ Գ. Պետրոսյանը¹:

Ժամանակակիցների վկայությամբ, մինչև նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անգոյշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը և հանգեցնել անկախատեսելի հետևանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացվել էր Ստեփանակերտում: ԼՂՀ ներքին գործերի (ՆԳ) նախարարի պաշտոնակատար Արմեն Իսաբուլովի առաջարկությամբ, մինչև հետաքննության նախնական եզրակացությունը, ԳԽ նախագահության անդամների և Ա. Մկրտչյանի ընտանիքի պահպանությունը ուժեղացնելու նպատակով՝ ներքին կարգով լրահամարվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանի վրա:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով «ԼՂՀ ԳԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունները դրեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալի՝ Գ. Պետրոսյանի վրա: Այնուհետև ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ հաղորդագրությամբ, ուր նշվեց հետևյալը. «ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ՆԽ-ն հայտնում են, որ սույն թվականի ապրիլի 14-ի երեկոյան դժբախտ պատահարի հետևանքով ընդհատվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Ասլանի Մկրտչյանի կյանքը:

Կատարվածի հանգամանքների հետաքննության նպատակով ստեղծված է կառավարական հանձնաժողով: Ապրիլի 15-ը, 16-ը և 17-ը հանրապետությունում հայտարարվում են սգո օրեր»²:

Մահվան հանգամանքները պարզող և, միաժամանակ, թաղման կառավարական հանձնաժողովի կազմը հետևյալն էր. Գ. Պետրոսյան, Վ.

¹ Տես՝ նույն տեղում, թ. 51-52:

² Նույն տեղում, թ. 52:

Բալայան, Օ. Եսայան, Հ. Խաչատրյան, Ա. Տեր-Թադևոսյան, Ա. Իսագուլով, Ս. Սարգսյան: Ստեղծվեց նաև մահվան պատճառների բացահայտման բժշկական հանձնաժողով: Նույն օրը ուշ երեկոյան լավեց ԼՂՀ իրավապահ մարմինների հաղորդումը՝ իրականացված օպերատիվ միջոցառումների մասին: ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը նշեց, որ ստացված նախնական տեղեկությունների համաձայն, Ա. Մկրտչյանի մահը վրա է հասել ծառայողական զենքի հետ անզգույշ վարվելու հետևանքով:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ԼՂՀ ՆԽ-ն դիմում հղեցին ԼՂ ժողովրդին՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայրենակիցներ, սույն թվի ապրիլի 14-ի երեկոյան, մոտավորապես ժամը 19-ին, դժբախտ պատահարի զոհ դարձավ ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Ասլանի Մկրտչյանը: Հայտնելով այս ծանր լուրը, դիմում ենք ձեր ողջախոհությանը, իմաստությանը և հոգու կորովին: Հանրապետության համար այս ճգնաժամային օրերին երիցս կարևորվում են մեր ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը: Ծանր կորուստը չպիտի խարխիլի մեր շարքերը, չպիտի ջլատի մեր ուժերը: Մենք Ձեզ կոչ ենք անում մնալ սառնասիրտ, չենթարկվել սադրանքների, դիմակայել բոլոր դավերին:

Մեր պայքարը արդարացված է, մեր որոշումը՝ անդառնալի: Արցախի ազատության և անկախության սուրբ գաղափարին նվիրաբերեց իր կյանքը Արթուր Մկրտչյանը: Թող արյամբ սրբագործված այս գաղափարը միավորի մեր ուժերը, համախմբի մեր շարքերը: Արթուր Մկրտչյանի հիշատակի պահպանումը նրա որդեգրած ուղուն հավատարիմ մնալն է»¹:

Հուլարկավորությանը մասնակցելու համար Արցախ ժամանեցին ՀՀ ԳԽ պատվիրակությունը՝ ԳԽ նախագահ Բարկեն Արարքցյանի գլխավորությամբ, և մի խումբ փորձագետներ՝ Ա. Մկրտչյանի զոհվելու հանգամանքները պարզելու համար: Մի քանի օր անց փորձագետների խմբի ղեկավարը հայտարարեց, որ ողբերգության պատճառը եղել է զենքի հետ վարվելու հմտության պակասը, այլ խոսքով՝ դժբախտ պատահար:

Աշխարհի բազմաթիվ երկրների կառավարություններ, հասարակական ու քաղաքական կազմակերպություններ իրենց կսկիծն ու ցավակցությունն են հայտնել իր ազատության համար մարտնչող ժողովրդի ղեկավարի ողբերգական մահվան առթիվ: Ցավակցական հեռագրեր ստացվեցին Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի Հանրապետության կառավարություններից: Հեռագիր ուղարկեց նաև Քերոլայն Քոքսը: Մեծ Բրիտանիայի խորհրդարանի փոխխոսնակը, մասնավորապես, գրել է. «Պատմությունն ապացուցում է, որ նա, ով մեռնում է հանուն ազատության և արդարության, երբեք չի մոռացվում: Նրանց արյունը կյանք է բերում ուրիշներին: Ես հարգանքի տուրք եմ մատուցում Արթուր

¹ Տե՛ս «Երկիր», 16. 04.1992:

Մկրտչյանին, որը պատմական դեր է խաղացել Ղարաբաղի պատմության մեջ, և ես ամբողջովին նեցուկ կկանգնեմ ձեզ»¹:

Այսպիսով, Արցախյան շարժման պատմության մեջ վրա հասավ այն նշանակալից պահը, երբ շարժումը թնակոխեց զարգացման մի նոր շրջան. սկսվեց անկախ հանրապետության կայացման և գոյատևման համար աղբյուրների ազդեցիկ դեմ համառ պայքարի շրջանը: ԼՂՀ իշխանությունները շարունակեցին ազգային պետության կարգավիճակը անկախ պետականության հարթակ բարձրացնելու ճանապարհին պահպանել միջազգային իրավունքի բոլոր նորմերը:

ԼՂՀ-ում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ հանրապետության հռչակումից հետո սկզբնավորված իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր, ապա և գործադիր մարմինների ձևավորումը ընթանում էր ռազմական շինարարության խնդիրների լուծմանը զուգահեռ՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ օրենսդիր մարմինն իր գործունեության հենց սկզբից միջազգային տարբեր կոնվենցիաներին միանալու ուղեգիծ որդեգրեց՝ նպատակ ունենալով ստեղծել ազատ, իրավական և ժողովրդավարական պետություն:

Քանի որ ԼՂՀ-ն համաշխարհային հանրակցության կողմից ճանաչված չէր որպես ինքնիշխան, անկախ պետություն և միջազգային կազմակերպություններում նրա արտաքին քաղաքական շահերը ստիպված էր ներկայացնել միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող ՀՀ-ն, այդ բնագավառում համատեղ ջանքերն արդյունավետ համակարգելու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. ապրիլի 20-ի նիստում որոշում կայացվեց Մանվել Սարգսյանին նշանակել ՀՀ-ում ԼՂՀ-ի քաղաքական ներկայացուցիչ²:

Իսկ ապրիլի 22-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը հաստատեց «ԼՂՀ պաշտպանության խորհրդի մասին» կանոնադրությունը, ըստ որի՝ ՊԽ կազմի մեջ ընգրկվում են ԼՂՀ ԳԽ նախագահը (ՊԽ նախագահ և ԻՊ ուժերի գլխավոր հրամանատար), ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալը, ինչպես նաև ԼՂՀ ՆԽ նախագահը, ԻՊ ուժերի հրամանատարը, ԼՂՀ պաշտպանության նախարարը, ԳԽ պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահը: Անհրաժեշտ դեպքերում, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ կամ կարգադրությամբ, ՊԽ-ի կազմի մեջ կարող են մտցվել նաև այլ պաշտոնատար անձինք: Որպես կանոն, ՊԽ-ի նիստերին հրավիրվում են ԼՂՀ ՆԳ նախարարը, ԼՂՀ ՆԽ առընթեր ազգային անվտանգության պետական վարչության պետը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախագահի կարգադրությամբ՝ այլ պաշտոնատար անձինք³:

¹ Տես՝ նույն տեղում

² Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխատ., էջ 75:

³ Տես՝ *ԱՀ պետարխիվ*, Ֆ. 254, ց. 1, պ.մ. 2, կ. 1, թ. 59-61:

Կառավարության գործող օրենքներին և որոշումներին համապատասխան՝ ՊԽ-ին իրավունք է վերապահվում. ԼՂՀ քաղաքացիներին, իրավիճակից ելնելով, ներգրավել հաղորդակցության ուղիների, կառույցների, կապի միջոցների, էլեկտրակայանների, էլեկտրացանցերի, կարևորագույն այլ օբյեկտների պահպանության, հրդեհների, համաճարակների, այլ աղետների դեմ պայքարի և այլ պաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքներում: Նաև որոշվեց աշխատանքային ավտոսայլային պարհակ հայտարարել պաշտպանության կարիքների բավարարման նպատակով, ինչպես ձեռնարկություններից, այնպես էլ առանձին քաղաքացիներից կատարել փոխադրամիջոցների և անհրաժեշտ այլ գույքի ժամանակավոր առգրավում, կարգավորել հիմնարկների և ձեռնարկությունների աշխատանքային ժամերը, ամեն տեսակ ժողովների, երթերի և ցույցերի կազմակերպումը, արգելել որոշակի ժամից հետո առանց հատուկ անցագրերի փողոցում հայտնվելը, սահմանափակել փողոցային երթևեկությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարել խուզարկություններ ու կասկածելի անձանց կալանքներ և այլն: ԳԽ նախագահությունը որոշեց ուժը կորցրած համարել Պաշտպանության խորհուրդ ստեղծելու մասին ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի թիվ 0023 որոշումը¹:

Հայ-ադրբեջանական զինված հակամարտության ճակատում իրադրությունը գնալով շիկանում էր: Ծավալվող ադրբեջանական ագրեսիային դիմակայելը ԼՂՀ-ի գոյատևման համար կարևոր և կենսական նշանակություն ուներ: Դրան համապատասխան, հայկական կողմը շարունակում էր դիվանագիտական ջանքեր գործադրել միջազգային ասպարեզում՝ նպատակ ունենալով համաշխարհային հանրության գիտակցությանը հասցնել հակամարտության բուն էությունը և հասնել նրա խաղաղ կարգավորմանը: Եվ ահա ապրիլի վերջին ԵԱՀԽ-ի ավագ պաշտոնատար անձանց Հելսինկյան խորհրդակցությունը որոշեց հայ-ադրբեջանական առճակատման գոտիներում տեղադրել դիտորդական խմբեր¹: Դիտորդական խմբերի ղեկավար նշանակվեց Շվեդիայի արտգործնախարարի տեղակալ Մ.Մոսսերգը: Վերջինս բանակցային գործընթացներ սկսեց Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների հետ: Նախատեսված էր նրա այցը ԼՂՀ, սակայն, անհասկանալի պատճառներով, այն չկայացավ: Իսկ Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում 1992 թ. ապրիլի 28-30-ը տեղի ունեցավ սեմինար-գիտաժողով, որտեղ շահագրգիռ երկրների մասնակցությամբ քննարկվեց Անդրկովկասում տիրող իրադրությունը՝ ԼՂ-ի, ինչպես նաև Հարավային Օսիայի և Աբխազիայի հարցերը²: Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ ԳԽ Արցախի հարցերով հատուկ

¹ ԼՂՀ նախագահության որոշումը՝ ԼՂՀ ՊԽ-ի կազմը հաստատելու մասին:

¹ Տես՝ «Երկիր» 28.04.1992:

² Տես՝ **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 412:

հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը, նույն հանձնաժողովի քարտուղար Սուրեն Ջոյանը և ՀՀ նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: Հայաստանի կողմից սեմինարին մասնակցեցին նաև մասնագետ-գիտնականներ պրոֆեսոր Յուրի Բարսեղովը և արևելագետ Գագիկ Ասատրյանը: ԼՂՀ-ն ներկայացնում էր ԼՂՀ ԳԽ նախագահի խորհրդական Սերգեյ Քալանթարյանը, իսկ դա միջազգային հանդիպումներում ԼՂՀ իշխանությունների ներկայացուցչի առաջին հանդիպումն էր:

Ադրբեջանական կողմը ներկայացնում էին Ադրբեջանի ԳԽ նախագահի տեղակալ Թ. Կարանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ի. Ղամբարը, նախագահի՝ ազգամիջյան հարցերով խորհրդական Ռ. Մուսաբեկովը և Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺՃ) «Ազադլըզ» («Ազատություն») պաշտոնաթերթի խմբագիր Ն. Նաջաֆովը:

Երևան վերադառնալիս հայկական պատվիրակությունը Մոսկվայում ոչ պաշտոնական հանդիպումներ ունեցավ ՌԴ ԱԳ նախարարի տեղակալի հետ: Վերջինս ընդունեց նաև ադրբեջանական պատվիրակությանը: Ս. Քալանթարյանի վկայությամբ, հակամարտ կողմերին առաջարկվեց արտգործնախարար Անդրեյ Կոզիրևի հետ միասին մասնակցել նախաճաշի, սակայն հայկական կողմը մերժեց այդ առաջարկությունը¹:

Դիվանագիտական գործընթացներին զուգահեռ՝ իր գոյատևման համար մաքառող ինքնահոչակ հանրապետությունում ոչ մի օր չէր ընդհատվում պետական շինարարության և պաշտպանական բնույթի հրատապ հարցերի քննարկումը և լուծումը: Դրա վկայությունն է ԼՂՀ ԳԽ նախագահության և պաշտպանության խորհրդի (ՊԽ) 1992 թ. ապրիլի 27-ի համատեղ նիստը²: Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության համար և ռազմավարական տեսակետից Ստեփանակերտի օդանավակայանի առանձնահատուկ կարևորությունը և ելնելով հակառակորդի հնարավոր հարձակումից նրա հուսալի պաշտպանության անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ԼՂՀ ՊԽ-ն ընդունեցին որոշում, որով օդանավակայանի պարետ նշանակվեց Ա. Մեսրոպյանը: Օդանավակայանի պարետին հանձնարարվեց օդանավակայանի պետի հետ համատեղ շտապ կազմակերպել մարդկանց ու բեռների համար նախատեսված սպասարանի շինարարությունը: Քաղաքացիների մեկնման և ժամանման աշխատանքը կարգավորող ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Հրանտ Խաչատրյանին հանձնարարվեց Ստեփանակերտի օդանավակայանից մեկնելու համար թույլտվությունները սահմանափակել մինչև օրական 15-20 հոգի: Իսկ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանին՝ գործուղվող մարդկանց թիվը սահմանափակել 10-ով (բացառությամբ վիրավորների և զինձառայողների հատուկ խմբերի): Միաժամանակ, ՆԳ

¹ Տե՛ս՝ *Հակոբյան Տ.*, նշվ. աշխատ., էջ 78:

² Տե՛ս՝ *ԱՀ պետարխիվ*, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ. 1, թ. 64-66:

նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովին և օդանավակայանի պահպանության հրամանատար Ֆելիքս Գաբրիելյանին հանձնարարվեց ոստիկանական և զինվորական հատուկ ջոկատներ հատկացնել օդանավակայանի անվտանգությունը կազմակերպելու և իրականացնելու համար, իսկ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանին՝ ապահովել հակառակորդի օդային հարձակումներից օդանավակայանի պաշտպանությունը:

Նույն որոշմամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ԱԱՊՎ պետ Ա. Խաչատրյանին պարտավորեցրեց նախապատրաստել մաքսատան աշխատանքի կազմակերպման նախագիծը:

Սույն որոշման կատարման վերահսկումը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի և ԻՊՈՒ հրամանատարի տեղակալ Սամվել Բաբայանի վրա:

Որոշման հրատապությունը կայանում էր նրանում, որ որոշ ուժերի վնասակար գործունեության հետևանքով օդանավակայանում քառասյին իրավիճակ էր ստեղծվել: Դրա պատճառներից մեկն էլ բնակչության մի որոշ մասի արատահոսքի ուժեղացումն էր, որոնք հուսահատության էին մատնվել և ամեն գնով ձգտում էին հեռանալ հանրապետությունից: Իսկ նման միտումի ուժեղացումը կարող էր հանգեցնել համընդհանուր խուճապի:

Պետք է նշել, որ մինչ այդ օդանավակայանի պահպանությունն ու ամբողջ գործունեության վերահսկողությունը իրականացվում էր ՀՀ-ից ղեկավարվող զինված ջոկատների կողմից, որոնք ապրիլի սկզբին ուղարկվել էին Ստեփանակերտ¹: Ի դեպ, դա կատարվել էր առանց ԼՂՀ օրինական իշխանությունների հետ որևէ պայմանավորվածության:

Այսպիսով, ռազմաքաղաքական ծանր կացությունը, ԼՂՀ տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը և սոցիալ-տնտեսական ծանր վիճակը ԼՂՀ իշխանություններին թելադրում էին անհետաձգելի միջոցներ ձեռնարկել երկրի նորաստեղծ պետականության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

*ՍՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵԼ
Է <<ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ>> ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ <<SHORT TERM RESEARCH
GRANT FOR THE STUDY OF NAGORNOKARABAKH II>>
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ*

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

¹ Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխատ., էջ 79:

UDC 941:329(479.25)

Պատմություն

Malik. TELUNTS

Lawyer, Doctor of History, Chief of the Chair of History and Law at Goris State University RA, Doctorate of Law at Yerevan State University .

JOSEPH EMIN'S LEGAL POLITICAL AND NATURAL LEGAL VIEWS. SOME STATE SOVEREIGNTY AND GOVERNMENTAL PROBLEMS IN EMIN'S LIBERATION POLITICAL PROGRAM

Մ.Թելունց

**ՀՈՎԱՍԵՓ ԷՄԻՆԻ ԻՐԱՎԱԲԱՐՎԱԲԱԿԱՆ ԵՎ
ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ.
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՉԵՎԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈՎԱՍԵՓ ԷՄԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ-
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ**

Հոդվածում քննվում են հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, նշանավոր լուսավորիչ-դեմոկրատ Հովսեփ Էմինի իրավաբանական հայացքները: Հովսեփ Էմինը (1726-1809թթ.) այն քաղաքական գործիչ մտածողներից էր, որոնք իրազեկ էին իրենց դարաշրջանի առաջադիմական գաղափարներին՝ տոգորված այդ գաղափարներով: Հնդկաստանում ստանալով ընդհանուր անգլիական կրթություն, իսկ Լոնդոնում՝ ռազմական, սերտ կապեր հաստատելով ժամանակի անգլիացի նշանավոր մտածող Էդմոնդ Բյորքի հետ, նկատելիորեն կրելով նաև վերջինիս գաղափարական ազդեցությունը, ինչպես և Ելիզավետա Մոնտեցյուլի նշանավոր սայրնում, այնպես էլ անմիջական ուսումնասիրությամբ իրազեկ դառնալով 17-18-րդ դարերի անգլիական և ֆրանսիական առաջադեմ մտածողների հայացքներին, անգլիական-եվրոպական ազատամիտ գաղափարներով ներշնչված՝ 50-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին գալիս է Անդրկովկաս ու Հայաստան՝ ձեռնամուխ լինելու Ժողովրդի մոտ այդ ազատամիտ գաղափարները տարածելու և նրանց թուրք-պարսկական բռնակալությունների լուծը թոյափելուն ուղղված պայքարի հանելու գործին: 1792թ. Լոնդոնում, 1918թ. Կադկաթայում անգլերեն լոյս տեսած հուշեր-խորհրդածություններում արտահայտված են Էմինի

իրավաբանական՝ բնահրավական գաղափարները, մտքերը, որոնց էլ անդրադարձ է կատարվում սույն հոդվածում:

Բանալի բառեր՝ լուսավորիչ Հովսեփ Էմին, Հայաստանի պետական անկախության վերականգնում, Հայաստանի ազատագրումը թուրք-պարսկական լծից, Պետրոս Մեծ Ելիզավետա Պետրովնա, Եկատերինա Մեծ.

М.Телуңц

**ПОЛИТИКО - ПРАВОВЫЕ И ЕСТЕСТВЕННО-ПРАВОВЫЕ
ВЗГЛЯДЫ ИОСИФА ЭМИНА. ВОПРОСЫ СУВЕРЕНИТЕТА
И ФОРМЫ ПРАВЛЕНИЯ В ОСВОБОДИТЕЛЬНО-
ПОЛИТИЧЕСКОЙ ПРОГРАММЕ ИОСИФА ЭМИНА**

В статье обсуждаются политико - правовые и естественно-правовые взгляды известного - армянского политического деятеля, просветителя **Иосифа Эмина** (1726- 1809г.).

Ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարմանը զուգահեռ անձի մոտիվացիոն ոլորտում առանցքային են դառնում անվտանգության պահանջմունքները (կայունության, պաշտպանության, վախից, անհանգստությունից և քառսից ազատվելու պահանջմունքներ): Նյութական պահանջմունքները սոցիալականացման արդյունք են, ապահովում են կենսաբանական, սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարման միջոցներն ու պայմանները: Սոցիալական և հոգևոր պահանջմունքներն արտացոլում են անձի հասարակական էությունը, դաստիարակության հիմնական պայմաններն ու սոցիալականացման առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, սոցիալական պահանջմունքներն արտահայտում են անձի՝ այլ մարդկանց հետ շփվելու, ջերմ հարաբերություններ հաստատելու, նրանց դրական վերաբերմունքին արժանանալու և հասկացված լինելու կարիքները:

Յուրաքանչյուր մարդ ընդունված լինելու, հարգանքի արժանանալու, սեփական արժանիքների գնահատման կարիք ունի: Ընդունված, գնահատված լինելու պահանջմունքների դրսևորման առանձնահատկություններում որոշիչ է նաև նվաճումների, հաջողությունների ձգտման հավակնությունների մակարդակը:

Հոգեբանական գրականության մեջ կան դրդապատճառային ոլորտի տարբեր բաղադրիչների՝ հետաքրքրությունների, արժեքների, ցանկությունների և երազանքների սեռային առանձնահատկությունների ուսումնասիրություններ: Գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պահանջմունքային ոլորտի սեռային ուսումնասիրություններում հիմնականում ընդգրկվել են նվաճման և հաջողությունից խուսափելու, իշխանության և գերակայության, սոցիալական, սեռական ու ինքնաիրացման պահանջմունքները: Կա տարածված կարծիք, ըստ որի՝ տղամարդիկ ավելի շատ են կարևորում հաղթանակները, գերազանցության միտումները և դրսևորում են մրցակցության առավել ընդգծված միտումներ, քան կանայք: Սակայն, Ե. Իյինի հետազոտությունները ցույց են տվել,

¹Տե՛ս **Առաքելյան Ա. Ռ.**, Պահանջմունքներ: ՀՊՄՀ-Եր.: Հեղ. հրատարակություն, 2019, էջ 18:

որ աղջիկների մոտ նվաճման պահանջմունքներն առավել արտահայտված են, քան տղաների (աղջիկների մոտ՝ 60.7%, իսկ տղաների մոտ՝ 48%): Տ. Վ. Բենդասի (2000թ.) հետազոտության արդյունքների համաձայն՝ կանանց և տղամարդկանց նվաճման պահանջմունքների միջև գոյություն ունեցող տարբերություններն աննշան են: Ա. Ի. Վինկուրովայի (1996թ.) հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ կանայք ունեն ինչպես նվաճման, այնպես էլ անհաջողություններից խուսափելու պահանջմունքի ավելի բարձր մակարդակ, քան տղամարդիկ: Ի տարբերություն Վինկուրովայի, Ե. Ֆերգյուսոնն ու Կ. Հորնին գտնում են, որ տղամարդկանց մոտ գերակշռում է հաջողության մոտիվը, իսկ կանանց մոտ՝ անհաջողություններից խուսափելու մոտիվը²:

Մեր հետազոտություններում բացահայտվել է, որ ճանաչված և ընդունված լինելու պահանջմունքների՝ վարպետության և կոմպետենտության մակարդակի բարձրացման ձգտման մակարդակը պայմանավորված է նաև հոգեկան գործունեության ընթացքի կանացի կամ տղամարդկային տիպի առանձնահատկություններով. առնականության բարձր մակարդակի դեպքում փորձարկվողների վարքի մոտիվացիայում տվյալ ձգտումն ունի արտահայտվածության բարձր մակարդակ, իսկ թույլ դրսևորումները պայմանավորված են կանացիության արտահայտվածության բարձր մակարդակով:³

Ըստ Ռ. Ա. Ֆեյնգոլդի (1994թ.)՝ տղամարդիկ ավելի գերակայող են, քան կանայք, սակայն այդ տարբերությունները բավականին չնչին են: Բենդասի հետազոտություններում (2000թ.) կանանց և տղամարդկանց իշխանության ձգտման պահանջմունքների միջև տարբերություններ ընդհանրապես չեն հայտնաբերվել⁴:

Գարդների և Սիլեյի (2002թ.) հետազոտությունների համաձայն՝ կանանց և տղամարդկանց մոտ սոցիալական պահանջմունքների բազմաթիվ տարբերություններ կան: Ըստ Ռասսելի, Պեյլոյի և Կատրոնայի հետազոտությունների (1980թ.), կանանց մոտ միայնակ մնալու պահանջմունքի ինտենսիվությունն ու հաճախականությունն ավելի բարձր է, քան տղամարդկանց մոտ, ինչից կարելի է ենթադրել, որ տղամարդիկ մշտապես կարող են ունենալ մտերմության և որևէ խմբի պատկանելու ձգտում՝ միայնությունից խուսափելու համար⁵: Ի տարբերություն այս պնդումների, Կ. Գիլիգանը (1987թ.) նշում է, որ

¹ Տե՛ս **Бендас Т. В.**, *Гендерная психология: Учебное пособие.* — СПб.: Питер, 2006. с. 219.

² Տե՛ս **Ильин Е. П.**, *Пол и гендер, Санкт-Петербург, 2010, с. 173-174.*

³ Տե՛ս **Առաքելյան Ա. Ղ.**, *Հիմնային պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման առանձնահատկությունները (Մանկավարժական բուհի ուսանողների օրինակով):* Հոգ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2014թ.:

⁴ Տե՛ս **Бендас Т. В.**, *указ.соч.. с. 228-229.*

⁵ Տե՛ս *The psychology of gender / edited by Alice H. Eagly, Anne E. Beall, Robert J. Sternberg.* — 2nd ed. - p. 368.

շփման, հաղորդակցման, ընկերության, պահանջմունքն առաջնային նշանակություն ունի կանանց համար:

Դենիսովայի հետազոտությունների համաձայն՝ աղջիկների մոտ ինքնաիրացումն ունի սոցիոկենտրոն, իսկ պատանիների մոտ եսակենտրոն ուղղվածություն: Ըստ հեղինակի՝ արական սեռի հետազոտվողների ինքնաիրացումը պայմանավորված է եսակենտրոն շարժառիթներով՝ ձգտելով հիմնականում ապավինել սեփական ուժերին: Ինքնաիրացման գործում նրանք ցուցաբերում են ստեղծագործականություն և ուժեղ վերահսկողություն: Իգական սեռի ինքնաիրացումը պայմանավորված է ընդհանուր առմամբ սոցիալական ուղղվածությամբ և սոցիոկենտրոն շարժառիթներով¹:

Անձնավորության դրդապատճառային ոլորտի սեռային առանձնահատկությունների տեսական և էմպիրիկ հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- առավել ուսումնասիրված են նվաճման և անհաջողությունից խուսափելու, իշխանության և գերակայության, սոցիալական պահանջմունքների սեռային տարբերությունները,
- բացահայտված են սեռական և վերարտադրման պահանջմունքների սեռային առանձնահատկությունները,
- բավարար չափով ուսումնասիրված չեն անվտանգության և նյութական պահանջմունքների սեռային առանձնահատկությունները,
- պահանջմունքների ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում տարիքային դինամիկայի տեսանկյունից,
- հետազոտողների ներկայացրած արդյունքները միանշանակ չեն, կան հակասական արդյունքներ:

Փորձարարական հետազոտության կազմակերպում և արդյունքների վերլուծություն

Պահանջմունքների դրսևորման սեռային առանձնահատկությունները բացահայտելու նպատակով կազմակերպվել է փորձարարական հետազոտություն: Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են 25-30 տարեկան 50 անձ՝ 25 կին և 25 տղամարդ: Պահանջմունքային ոլորտի սեռային տարբերությունները ուսումնասիրելու համար կիրառվել է Վ. Մկվորցովի «Հիմնական պահանջմունքների բավարարվածության աստիճանի ախտորոշում» մեթոդիկան²: Մեթոդիկան նախատեսում է 5 խումբ հիմնական պահանջմունքների (նյութական, անվտանգության, սոցիալական, ճանաչման և ինքնադրսևորման) ախտորոշման բավարարվածության, միջին

¹ Տե՛ս *Денисова Е. А., Гендерные особенности самореализации личности студентов: диссертация кандидата психологических наук : 19.00.01 / Москва, 2010. с. 213.*

² Տե՛ս *Առաքելյան Ա. Դ., Պահանջմունքներ: ՀՊՄՀ-Եր.: Հեղ. հրատարակություն, 2019, էջ 85-88:*

բավարարվածության և անբավարարվածության գոտիներ: Հետազոտության տվյալները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդներով:

Կանանց ընտրակազմում պահանջմունքային 5 խմբերի տվյալների տոկոսային վերլուծության արդյունքում պարզվել է, որ **նյութական պահանջմունքները** հետազոտությանը մասնակցած 25 կանանցից 24%-ի մոտ գտնվում են բավարարվածության, 64%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության և 12%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Անվտանգության պահանջմունքները հետազոտվողների 4%-ի մոտ գտնվել են բավարարվածության, իսկ 96%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության գոտում: Անվտանգության պահանջմունքների անբավարարվածության ցուցանիշներ այս ընտրակազմում չեն արձանագրվել:

Սոցիալական պահանջմունքները 44%-ի մոտ գտնվել են բավարարվածության, 44%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության, և միայն 12%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Ընդունված լինելու պահանջմունքները 8%-ի մոտ գտնվել են բավարարվածության, 84%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության, և 8%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Ինքնադրսևորման պահանջմունքները 52%-ի մոտ գտնվել են մասնակի բավարարվածության, իսկ 48%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում: Այս խմբի պահանջմունքների բավարարվածության ցուցանիշներ չեն արձանագրվել:

Տղամարդկանց ընտրակազմում պահանջմունքային 5 խմբերի տվյալների տոկոսային ցուցանիշների վերլուծության արդյունքում պարզվել է, որ **նյութական պահանջմունքները** 20%-ի մոտ գտնվել են բավարարվածության, 72%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության և միայն 8% մոտ՝ անբավարարվածության գոտում:


Անվտանգության պահանջմունքների բավարարվածություն տղամարդկանց մոտ չի արձանագրվել, 72%-ի մոտ այս խմբի պահանջմունքները գտնվել են մասնակի բավարարվածության, 28%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Սոցիալական պահանջմունքները հետազոտությանը մասնակցած տղամարդկանց 68%-ի մոտ գտնվել են բավարարվածության, 24%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության և միայն 8%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Ընդունված լինելու պահանջմունքները տղամարդկանց 4%-ի մոտ գտնվել է բավարարվածության, 92%-ի մոտ՝ մասնակի բավարարվածության, և ևս 4%-մոտ՝ անբավարարվածության գոտում:

Ինքնադրսևորման պահանջմունքները տղամարդկանց 8%-ի մոտ գտնվել է բավարարվածության, 60%-ի մոտ մասնակի բավարարվածության, 32%-ի մոտ՝ անբավարարվածության գոտում:

Հիսթոգրամ N1



Պահանջումնքային 5 խմբերի միջին թվաբանական ցուցանիշները կանանց և տղամարդկանց ընտրակազմերում

Կանանց և տղամարդկանց ընտրակազմերում պահանջումնքային խմբերի միջին թվաբանական ցուցանիշների ներկայացված պատկերում տեսնում ենք, որ կանանց մոտ պահանջումնքների 5 խմբերն էլ գտնվում են մասնակի բավարարվածության գոտում, բայց ինքնադրսևորման պահանջումնքների ցուցանիշը գրեթե մոտենում է անբավարարվածության գոտուն: Անվտանգության և ընդունված լինելու պահանջումնքների ցուցանիշները նույնական են: Կարելի է ենթադրել, որ որքան բավարարված են կանանց ընդունված լինելու պահանջումնքները, այնքան բավարարված են նաև անվտանգության պահանջումնքները: Ի տարբերություն մյուս խմբերի՝ սոցիալական պահանջումնքներն առավել բավարարված են:

Տղամարդկանց ընտրակազմում նյութական, անվտանգության, ընդունված լինելու և ինքնադրսևորման պահանջումնքները գտնվում են մասնակի բավարարվածության, իսկ սոցիալական պահանջումնքները՝ բավարարվածության գոտում: Ինչպես տեսնում ենք, անվտանգության և ինքնադրսևորման պահանջումնքները բավականին բարձր ցուցանիշներ ունեն, առավել ակտուալ են տղամարդկանց մոտիվացիայում: Կարելի է ենթադրել, որ

տղամարդկանց մոտ ինքնադրսևորման պահանջմունքների անբավարարվածությունը կապվում է անվտանգության բազային զգացողության բացակայության հետ, իսկ ինքնադրսևորման ուղիների ու եղանակների առկայությունն ապագայի ապահովության, դիրքի պահպանման երաշխիք է:

Պահանջմունքային խմբերի միջին թվաբանական ցուցանիշների համեմատության արդյունքում առանձնացվել են կանանց և տղամարդկանց մոտ պահանջմունքների դրսևորման հետևյալ առանձնահատկությունները.

- կանանց մոտ բարձր են արտահայտված սոցիալական և ինքնադրսևորման պահանջմունքները, իսկ տղամարդկանց մոտ՝ անվտանգության պահանջմունքները,

- նյութական և ընդունված լինելու պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշներում էական տարբերություն չկա,

- անհատական տարբերությունները մեծ են կանանց մոտ ընդունված լինելու պահանջմունքային խմբում, իսկ տղամարդկանց մոտ՝ անվտանգության պահանջմունքային խմբում:

Հիմնական պահանջմունքների խմբերը կազմող բաղադրամասերի դրսևորումներում առկա են հետևյալ սեռային առանձնահատկությունները.

1. անվտանգության պահանջմունքների՝ ապահովել ինձ ապագա, նյութական պահանջմունքների՝ ապրուստի միջոց վաստակել և ապահովել նյութական բարեհարմարություն, բաղադրամասերը բարձր են արտահայտված տղամարդկանց մոտ,

2. սոցիալական պահանջմունքների՝ ունենալ ջերմ հարաբերություններ մարդկանց հետ և ունենալ լավ զրուցակիցներ, նյութական պահանջմունքների՝ գնել լավ իրեր, ինքնադրսևորման պահանջմունքների՝ զբաղվել գործով, որը պահանջում է լրիվ նվիրում բաղադրամասերը գերակա են կանանց մոտ:

Պահանջմունքային 5 խմբերի ցուցանիշների կարգային համահարաբերակցային վերլուծության արդյունքում առանձնացվել են հետևյալ սեռային տարբերությունները.

1. Կանանց ընտրակազմում նշանակալի դրական հարաբերակցային կապ է բացահայտվել անվտանգության ու ընդունված լինելու պահանջմունքների ցուցանիշների միջև ($r=0.521$, երբ $p \leq 0.01$), ինչը վկայում է, որ անվտանգության պահանջմունքների բարձր մակարդակի դեպքում բարձր արտահայտվածություն ունեն ընդունված լինելու պահանջմունքները, իսկ անվտանգության պահանջմունքների բավարարվածությունը հարաբերակցվում է ընդունված լինելու պահանջմունքների բավարարվածության հետ:

2. Կանանց ընտրակազմում ինքնադրսևորման և ընդունված լինելու պահանջմունքների ցուցանիշների միջև դրական հարաբերակցային կապ է արձանագրվել ($r=0.458$, երբ $p \leq 0.05$): Նման կապի առկայությունը վկայում է, որ ինքնադրսևորման պահանջմունքների բարձր մակարդակի դեպքում բարձր արտահայտվածություն ունեն նաև ընդունված լինելու պահանջմունքները, իսկ

ինքնադրսևորման պահանջումների ցածր մակարդակը հարաբերակցվում է ընդունված լինելու պահանջումների ցածր մակարդակի հետ:

3. Կանանց ընտրակազմում նյութական և ինքնադրսևորման պահանջումների ցուցանիշների միջև նշանակալի բացասական կապ է բացահայտվել ($r=-0.617$, երբ $p \leq 0.01$): Նման կապի հոգեբանական բովանդակությունը ենթադրում է, որ նյութական պահանջումների բարձր մակարդակի դեպքում ինքնադրսևորման պահանջումներն առանցքային չեն վարքի մոտիվացիայում:

4. Կանանց մոտ սոցիալական և ընդունված լինելու պահանջումների խմբերի միջև նշանակալի բացասական կապ է արձանագրվել ($r=-0.717$, երբ $p \leq 0.01$): Նման հարաբերակցային կապի առկայությունը ցույց է տալիս, որ կանանց մոտ սոցիալական պահանջումների բավարարվածության դեպքում վարքի մոտիվացիայում ակտուալ են դառնում ընդունված լինելու պահանջումները, իսկ սոցիալական պահանջումների արտահայտվածության բարձր մակարդակի դեպքում վերջիններս ակտուալ չեն:

5. Տղամարդկանց ընտրակազմում նյութական և սոցիալական պահանջումների ցուցանիշների միջև բացահայտվել է բացասական հարաբերակցային կապ ($r=-0.427$, երբ $p \leq 0.05$), ինչը վկայում է այն մասին, որ նյութական պահանջումների արտահայտվածության բարձր մակարդակի դեպքում բավարարված են սոցիալական պահանջումները, իսկ նյութական պահանջումների արտահայտվածության ցածր մակարդակը հարաբերակցվում է սոցիալական պահանջումների բարձր մակարդակի հետ:

6. Կանանց ($r=-0.630$, երբ $p \leq 0.01$) և տղամարդկանց ($r=-0.487$, երբ $p \leq 0.05$) ընտրակազմերում անվտանգության և սոցիալական պահանջումների ցուցանիշների միջև նշանակալի բացասական կապեր են բացահայտվել: Տվյալ դեպքում, փաստորեն, սեռային տարբերություններ չկան, այս օրինաչափությունը դիտարկվում է ն' տղամարդկանց վարքի մոտիվացիայում, և՛ կանանց: Սա վկայում է, որ անվտանգության պահանջումների արտահայտվածության բարձր մակարդակի ու անբավարարվածության դեպքում վարքի մոտիվացիայում բավարարված կամ ակտուալ չեն սոցիալական պահանջումները, իսկ անվտանգության պահանջումների բավարարվածությունը հարաբերակցվում է սոցիալական պահանջումների բարձր մակարդակի հետ:

Գրականություն

1. Առաքելյան Ա. Դ., Պահանջումներ: ՀՊՄՀ-Եր.: Հեղ. հրատարակություն, 2019, 156 էջ:
2. Առաքելյան Ա. Դ., Հիմնային պահանջումների և անձնային հատկությունների համահարաբերակցման

առանձնահատկությունները (Մանկավարժական բուհի ուսանողների օրինակով): Հոգ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2014թ.:

3. Бендас Т. В., Гендерная психология: Учебное пособие. — СПб.: Питер, 2006. 431 с.

4. Денисова Е. А., Гендерные особенности самореализации личности студентов: диссертация кандидата психологических наук : 19.00.01 / Москва, 2010.- 290 с.

5. Ильин Е. П., Мотивация и мотивы.- СПб.: Питер, 2006, 512 с.

6. Ильин Е. П., Пол и гендер, Санкт-Петербург, 2010, 688 с.

7. The psychology of gender / edited by Alice H. Eagly, Anne E. Beall, Robert J. Sternberg.— 2nd ed.- p. 368.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9:373

Հոգեբանություն

Վահան ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մանկավարժության ամբիոն, մ. գ. թ.

E-mail: vmelqsetyan0077@mail.ru

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՊԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Վերջին ժամանակներում ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ուսումնասիրությունը նոր հնչեղություն է ձեռք բերել: Կյանքի ընթացքում մարդու ինքնավերաբերմունքը և դրա կարևորագույն դրսևորումներից մեկը՝ ինքնագնահատականը, անընդհատ ենթարկվում են փոփոխությունների՝ աճում կամ նվազում: Ինքնավերաբերմունքի բնութագրման համար հաճախ կիրառվում են դրա ձևավորման մեջ դեր ունեցող բաղադրիչների գիտական անվանումները՝ ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնարժեք և այլն: Երբ անձը գնահատում է ինքն իրեն՝ համեմատելով ուրիշների հետ, այդ դեպքում կարելի է ասել, որ նրա ինքնավերաբերմունքը այլ մարդկանց վերաբերմունքն է: Երբ անձը ինքնակամ է հրաժարվում իր բոլոր սոցիալական դիմակներից, որոնք հանդիսացել են նրա ողջ կյանքում իրական ինքնավերաբերմունքից փախչելու գործառույթ, միայն այս դեպքում է, որ անձը կարող է ադեկվատ գնահատել ինքն իրեն: Բարձր և ցածր ինքնագնահատականներն, ըստ էության, միևնույն հոգեկան երևույթի՝ ինքնավերաբերմունքի երկու բևեռներն են: Ինքնավերաբերմունքի բաղադրիչներից ամենաբարձրը ինքնակառավարումն է, իսկ ամենացածրը՝ ինքնամեղադրումը: Անհատի ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի էությունը բացահայտող և ամենաշատը կիրառվող մոտեցումներն են՝ ընդհանուր կամ գլոբալ ինքնագնահատականը, ինքնահարգանքը, ինքնավերաբերմունքը և հուզական-արժեքային վերաբերմունքը: Ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև առկա են բազմաթիվ փոխապայմանավորվածություններ, որոնք ազդում են միջին դպրոցական տարիքի երեխայի անհատական զարգացման վրա:

Բանալի բառեր՝ ինքնագնահատական, ինքնավերաբերմունք, հումանիստական տեսություն, հոգեվերլուծական տեսություն, սոցիոլ, անհատ, մետավերլուծություն, ինքնակառավարում:

V. Meliksetyan

**СВЯЗЬ МЕЖДУ САМООЦЕНКОЙ
И САМООТНОШЕНИЕМ В СРЕДНЕМ ШКОЛЬНОМ
ВОЗРАСТЕ**

В последнее время исследования самооотношения и самооценки получили новое звучание. В течение жизни самооотношение человека и его важнейшее проявление – самооценка – постоянно подвергаются изменениям: возрастают или снижаются. Для характеристики самооотношения часто употребляются термины компонентов, применяемые при их формировании: самооценка, самоуважение, самопринятие и т.д.

Если индивид оценивает самого себя в сравнении с другими, то в этом случае можно сказать, что его самооотношение – это отношение других людей. Когда индивид добровольно отказывается от всех своих социальных масок, которые на всем протяжении его жизни позволяли скрыться от реального самооотношения, то только в этом случае индивид может адекватно оценить самого себя. Высокая и низкая самооценка, по существу, являются двумя полюсами одного и того же психического состояния – самооотношения. Одним из самых высоких компонентов самооотношения является самоуправление, а самым низким – самоосуждение. Среди проявлений, которые раскрывают сущность отношения индивида к самому себе и применяются чаще других, можно назвать: общую или глобальную самооценку, самоуважение, самооотношение и эмоционально-аксиологическое отношение. Между самооотношением и самооценкой присутствует взаимобусловленность, которые влияют на индивидуальное развитие детей среднего школьного возраста.

Ключевые слова: самооценка, самооотношение, гуманистическая теория, психоаналитическая теория, социум, индивид, метаанализ, самоуправление.

V. Meliksetyan

**THE RELATIONSHIP BETWEEN SELF-ATTITUDE
AND SELF-ESTEEM IN MIDDLE SCHOOL AGE**

Recently, the study of self-attitude and self-esteem has received new attention. During life, a person's self-attitude and one of its most important manifestations - self-esteem, are constantly changing by increasing or decreasing. Self-attitude is often characterized through the terms of components involved in its development such as self-esteem, self-respect, self-acceptance, and so on. While a person evaluates himself by comparing himself to others, it can be stated that his self-attitude reflects the attitude of other people. Only in case when a person voluntarily gives up all his social masks, which have had the function of escaping from real self-attitude throughout his life, he can adequately

assess himself. High and low self-esteem are, in fact, two poles of the same mental phenomenon, self-attitude. The highest of the components of self-attitude is self-government, and the lowest is self-blame. The most widely used approaches to revealing the essence of an individual's attitude towards themselves are general or global self-esteem, self-respect, self-attitude, and emotional-value attitude. There are many reciprocal influences between self-attitude and self-esteem that affect a middle-school aged child's individual development.

Key words: *self-esteem, self-attitude, humanistic theory, psychoanalytic theory, society, individual, meta-analysis, self-government*

Ներածություն

Վերջին ժամանակներում ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ուսումնասիրությունը նոր հնչեղություն է ձեռք բերել: Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի են ունենում ինտենսիվ սոցիալ-տնտեսական փոփոխություններ, որոնցում իրենց անմիջական դերն ու մասնակցությունն է ունենում հանրությունը: Այդ ամենի հանդեպ հանրության դիմադրողականության ցուցիչ է դիտարկվում նրա հոգեկան կայունության աստիճանն ու սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը: Վերջիններիս կարևորագույն դրսևորումներից են ինքնավերաբերմունքը և ինքնագնահատականը: Ինքնավերաբերմունքը շատ կարևոր երևույթ է, քանի որ ազդում է անհատի մտածելակերպի, զգացողությունների, ինչպես նաև նրա գործողությունների վրա առօրյա կյանքում:

Առաջին տերմինը առավել լայն կիրառում է ունեցել արևմտյան հոգեբանության մեջ՝ XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դար, որից հետո փոխարինվել է *ինքնագնահատական* եզրույթով: Խորհրդային տարիներին անհատի ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի ֆենոմենի հիմնական հետազոտությունների և ուսումնասիրությունների հեղինակները եղել են Ա. Ն. Լեոնտևը, Ս. Լ. Ռուբինշտեյնը, Ա. Գ. Սպիրկինը, Ի. Ս. Կոնը և այլք: Իսկ *ինքնավերաբերմունք* եզրույթը ներդրվել է վրացի հոգեբան Ն. Բ. Սարջվելաձեի կողմից: Այժմ նախկին խորհրդային հոգեբանության *ինքնավերաբերմունք* տերմինին փոխարինել է *հուզական-արժեքային վերաբերմունք եզրույթը*: Հոգեբանության մեջ ամենահին սահմանումը գլոբալ ինքնագնահատական եզրույթն է (self esteem): *Ինքնագնահատական* բառը ունի լատինական ծագում՝ "aestimare", որը նշանակում է *գնահատում*:

Ինքնավերաբերմունքը բազմազործոնային, բազմաբաղադրյալ համակարգ է, որը սկսում է ձևավորվել անհատի ծնվելու օրվանից ու անընդմեջ փոփոխությունների է ենթարկվում տարիների ընթացքում: *Ինքնավերաբերմունք* հասկացությունը ուսումնասիրվել է դեռևս 19-րդ դարից սկսած: Հետազոտողները

¹ *Кольшко А.М., Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.*

սկսեցին ուսումնասիրություններ անցկացնել, որոնց նպատակն էր պարզաբանել անհատի վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ:

Հոգեբանության մեջ ինքնավերաբերմունքը դիտարկվում է որպես սեփական «Ես»-ի հանդեպ յուրօրինակ զգացողություն, որպես *հայեցակարգային պատրանք*։ Վրացի Ն. Ի. Սարջվելաձեն առաջինն էր, ով մարդու վերաբերմունքն ինքն իր նկատմամբ անվանեց *ինքնավերաբերմունք*։ Նա, ով փորձեց անհատի վերաբերմունքն ինքն իր նկատմամբ առանձնացնել ինքնագիտակցությունից: Սակայն չի նշանակում, որ *ինքնավերաբերմունք* հասկացությունը ուսումնասիրված չէր հոգեբանական տարբեր ուղղություններում: Այն դիտարկել են «Ես»-ի, ինքնագիտակցության, ինքնագնահատականի տեսանկյունից:

Տարբեր տեսությունների միջոցով սկսեցին մեկնաբանվել *ինքնավերաբերմունք* հասկացությունը, օրինակ, հումանիստական և հոգեվերլուծական տեսությունները *ինքնավերաբերմունք* հասկացությունը նույնացնում էին *ինքնագիտակցության* հետ: Ինքնավերաբերմունքը տասնամյակներ շարունակ ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից, սակայն մինչև օրս չկա միասնական մոտեցում. հոգեբանական բառարաններում ևս *ինքնավերաբերմունք* հասկացությունը հաճախ նույնացվում է ինքնագիտակցության հետ¹:

Ինքնավերաբերմունքի փորձարարական հետազոտությունները բացահայտում են տարիքային որոշակի օրինաչափություններ: Եթե դեռահասության և պատանեկան տարիներին անհատին հաճախ է անհանգստացնում այն, թե ինչ են իր մասին մտածում մարդիկ, ապա ուշ հասունության շրջանում, նրան ավելի շատ հետաքրքրում է, թե ինքն ինչ է մտածում իր մասին:

Պատանեկան տարիքում ինքնավերաբերմունքը պայմանավորված է անձի նկատմամբ սոցիալական միջավայրի ազդեցությամբ, իսկ ուշ հասունության շրջանում այն պայմանավորված է մարդու վերաբերմունքով սեփական անձի նկատմամբ: Ինքնավերաբերմունքի անկախացումը շրջապատից խորանում է տարիքի հետ միասին: Տարիների ընթացքում անձը կարողանում է գնահատել ինքն իրեն, որը դառնում է կյանքի իմաստի ձեռքբերման յուրօրինակ փորձ: Երբ անձը գնահատում է ինքն իրեն՝ համեմատելով ուրիշների հետ, ապա այդ դեպքում կարելի է ասել, որ նրա ինքնավերաբերմունքը նաև այլ մարդկանց վերաբերմունքն է: Երբ անձը ինքնակամ է հրաժարվում իր բոլոր սոցիալական դիմակներից, որոնք դարձել են ողջ կյանքում նրա իրական ինքնավերաբերմունքից փախչելու գործառույթը, ապա միայն այդ դեպքում է, որ անձը կարող է արդարացիորեն գնահատել ինքն իրեն:

Ինքնավերաբերմունքի զարգացումը կարելի է ներկայացնել հետևյալ հարթություններում՝

ա. *սոցիալական* հարթություն, որը ենթադրում է ինքնավերաբերմունքի

¹ *Зигченко В.П., Психологический словарь, М., Педагогика-Пресс, 1997, 564 с.*

ձևավորումը շրջապատի կողմից,

բ. *Էքզիստենցիալ* (գոյաբանական) հարթություն, որը ենթադրում է, թե այս դեպքում մարդը մնում է միայնակ իր էության հետ և փորձում է գիտակցել սեփական կյանքի իմաստը:

Ինքնավերաբերմունքը հոգեբանության ոլորտում հետազոտությունների օբյեկտ է դիտվել դեռևս Ու. Ջեյմսի ժամանակաշրջանից և մինչ օրս էլ շարունակում է մնալ ուսումնասիրությունների կիզակետում¹: Ինքնավերաբերմունքի երևույթը հոգեբանական հետազոտությունների ուսումնասիրման օբյեկտ է եղել բազմաթիվ խորհրդային և արտասահմանյան մասնագետների համար, այդ թվում՝ Ռ. Բյորնսի, Ու. Ջեյմսի, Կ. Ռոջերսի, Ս.Ռ. Պանտելեևի, Վ.Վ. Ստոլինի և այլոց: Ըստ Տ.Ն. Կոչետկովի՝ ինքնավերաբերմունքի բազմաթիվ հետազոտությունները փաստում են, որ սովյալ երևույթը, որպես խնդիր, դեռևս արդիական է մի շարք պատճառներով².

ա. ինքնավերաբերմունքի սահմանման, կառուցվածքաբանության, հայեցակարգերի միատարրության բացակայություն,

բ. ինքնավերաբերմունքի կոնֆլիկտային բնույթի ոչ բավարար լուսաբանվածություն,

գ. սեփական անձի հանդեպ դրական ինքնավերաբերմունքի ձևավորման, ինչպես նաև ինքնավերաբերմունքի՝ որոշակի մակարդակում կայուն պահելու պայմանների թերի ուսումնասիրություն:

Հատկանշական է, որ անգամ տեսական մակարդակում միջին դպրոցական տարիքի ինքնավերաբերմունքի բոլոր ասպեկտների վերլուծությունը բավականին բարդ է իրականացնելը: Մինչ օրս ինքնավերաբերմունքի հստակ և միանշանակ սահմանում գոյություն չունի: Ինքնավերաբերմունքի բնութագրման առիթով տարբեր հեղինակներ կիրառել և կիրառում են ինքնավերաբերմունքի ձևավորման մեջ դեր ունեցող բաղադրիչների անվանումները՝ *ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնարժեք* և այլն³:

Միջին դպրոցական տարիքի երեխայի, անհատի՝ ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի էությունը բացահայտող ամենաշատ կիրառվող մոտեցումներն են ընդհանուր կամ գլոբալ ինքնագնահատականը, ինքնահարգանքը, ինքնավերաբերմունքը և հուզական- արժեքային վերաբերմունքն իր հանդեպ:

Ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի փոխկապվածությունը

Հոգեբանության մեջ հաճախ *ինքնավերաբերմունք* հասկացությունը նույնացվում է *ինքնագնահատական* հասկացության հետ: Հոգեբանական գրականության մեջ ինքնագնահատականի կամ ինքնավերաբերմունքի

¹ *Кольшико А.М., Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.*

² *Кох И.С., В поисках себя. Личность и ее самосознание, М.: Политиздат, 1984, 335 с.*

³ <https://www.disserscat.com/content/psikhologicheskie-factoryformirovaniya-samootnoshen-lya-lichnosti>

վերաբերյալ գոյություն ունեն մի շարք սահմանումներ, որոնք հիմնված են աշխարհի և սեփական անձի հանդեպ հուզական վերաբերմունքի գործոնի հիման վրա, որն ըստ էության միևնույն բանն է: Դրանցից են հպարտությունը, ամոթը, սեփական արժանապատվության զգացումը և այլն: Բնարկե, տվյալ հուզական հարթությունը խիստ գիտական չէ, սակայն տվյալ հուզական մոտեցումն առօրյա գիտակցության տեսանկյունից հաճախ որոշիչ է հանդիսանում:

Ինքնավերաբերմունքը՝ որպես ինքնագնահատականի հումանիշ, սովորաբար սահմանվում է որպես կայուն հոգեկան կառուցվածք, որն ունի արժեքային բնույթի բովանդակություն, սակայն մենք համարում ենք, որ տվյալ բնութագրումը չի կարող ընդունված լինել անվերապահորեն: Բարձր և ցածր ինքնագնահատականները, ըստ էության, միևնույն հոգեկան երևույթի՝ ինքնավերաբերմունքի երկու բևեռներն են, ըստ որոնց և տարբերակում ենք այս երկու հասկացությունները: Ճիշտ այդպես, չի կարելի միակողմանիորեն պնդել, թե միջին դպրոցական տարիքի սովորողի ցածր ինքնագնահատականը թերարժեքության զգացողության արդյունք է միշտ: Մենք այն բխեցնում ենք հատկապես ինքնավերաբերմունքի որակի տարիքային բնութագրության դիրքերից, այսինքն, ամեն մի կոնկրետ անձի յուրաքանչյուր տարիքային փուլ իր էական ուղղումն է մտցնում սեփական ինքնավերաբերմունքի մեջ:

Հոգեբանության մեջ կարևորվում է *գլոբալ ինքնագնահատական* տերմինը¹: Այն բնութագրվում է որպես ինքնաճանաչման և հուզական ինքնավերաբերմունքի ամբողջություն: Ինքնավերաբերմունքն առավել լայն հասկացություն է, քան գլոբալ ինքնագնահատականը, քանի որ ինքնավերաբերմունքի բաղադրիչները չեն ներկայացնում միայն անձի գնահատականը, այլ նաև այն տեսակետը, ըստ որի՝ ընդհանուր ինքնագնահատականը պայմանավորվում է նրա ինքնավերաբերմունքով, կամ սեփական անձի հանդեպ հուզական վերաբերմունքով: Ի.Ս. Կոնը, վերլուծելով ինքնագիտակցության հոգեբանական առանձնահատկությունները², անդրադառնում է ընդհանուր ինքնագնահատականի ձևավորման հոգեբանական հիմքում տեղի ունեցող այնպիսի գործընթացների, ինչպիսիք են՝ սուբյեկտի կողմից արտաքին սոցիալական գնահատականների համեմատությունը՝ որպես լավ-վատ, դրական-բացասական, և դրանց յուրացումն ու ինքավերագրումը:

Միջին դպրոցական տարիքի սովորողի ինքնավերաբերմունքը, սեփական անձի նկատմամբ *դեմ* կամ *կողմ* զգացմունքները կայունության այնպիսի մակարդակ ունեն, որը թույլ է տալիս այդ զգացմունքն ընկալելու որպես անձնային որակ, բավականին ռիզիկո, փոփոխությունների անընդունակ: Այսպիսով, Ի. Ի. Չեսնոկովան ելնում է հատկապես նման դիրքորոշումներից³:

¹ Шапиро Д., Невротические стили, М., Институт общегуманитарных исследований, 1998, 346 с.

² Кон И.С., указ.соч., 335 с.

³ Чеснокова И.И., Проблема самосознания и психологии, М., Наука, 1977, стр. 79.

Մենք համարում ենք, որ հենց ինքնավերաբերմունքը արժեքային, հոգեկան բաղադրիչներով լրացվելու կարիք ունի, այսինքն, արդեն իսկ ձևավորված ընդունելի ինքնավերաբերմունքի համար անհրաժեշտ են այլ կարգի արդիականացված արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալական կարգավիճակը, բանականության մակարդակը, միջանձնային հանդուրժողականությունը և այլն:

Ս. Ռ. Պանտելևեր ինքնագնահատականը համարում է ինքնավերաբերմունքի ենթահամակարգերից մեկը, որը, համաձայն հեղինակի հայեցակարգի, իր մեջ ընդգրկում է ինքնահարգանքը, ինքնահամեմատումը, ինքնահամակրանքը, սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունքը: Նա, հիմնվելով Ա. Բոդալևի և Վ. Ստոլինի «Ես» հայեցակարգի ըմբռնման վրա, որոնցում ինքնավերաբերմունքը ներկայացվում է որպես անձի *սպրում*, համեմատաբար կայուն զգացմունք, կարծում է, որ ինքնավերաբերմունքը ներթափանցում է անձի ինքնաընկալման և «Ես» կերպարի մեջ¹: Այսպիսով, տեսական նյութի վերլուծությունից կարող ենք ենթադրել, որ առկա է փոխապայմանավորվածություն ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև: Ս. Ռ. Պանտելևեր, վերլուծելով ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի կապը Ա.Ն. Լեոնտևի և նրա աշակերտ Վ.Վ. Ստոլինի աշխատությունների հայեցակարգերում, հանգել է հետևյալ եզրակացության՝

ա. ինքնավերաբերմունքը անձի ինքնագարգացման և ինքնաձևավորման մի ամբողջություն է, ուստի՝ դրա կառուցվածքի ու կազմության բացահայտումը հնարավոր է իրականացնել միայն սուբյեկտի՝ իրական կյանքում ունեցած հարաբերություններում, որոնց հիմքում առկա են որոշակի դրդապատճառներ՝ կապված սուբյեկտի որպես անհատի, ինքնիրացման հետ:

բ. ըստ Ա.Ն. Լեոնտևի՝ դրդապատճառները, որոնք ստեղծում են գործողություն, ունեն, փաստորեն, որոշակի անհատական իմաստ և կոչվում են *իմաստաբանական*: Մյուս դրդապատճառները, որոնք զուրկ են իմաստաբանությունից, պայմանականորեն կոչվում են *դրդապատճառ խթանողներ*: Վերջիններս գործում են զուտ որպես խթանիչ գործոններ, որոնք, ընդ որում, կարող են լինել թե՛ դրական, թե՛ բացասական, երբեմն էլ՝ սուր էմոցիոնալ աֆեկտիվ:

գ. ինքնագնահատականը առաջին հերթին կապված է զգայությունների հետ, որոնք ազդարարում են, թե սուբյեկտի այս կամ այն առանձնահատկությունները ինչպես են նպաստում հաջողությանը կամ դրդապատճառ-խթանող շարժառիթային գործողությունների հաջող իրացմանը: Սեփական անձի հանդեպ էմոցիոնալ-արժեքային վերաբերմունքով էլ որոշվում են իմաստաբանական դրդապատճառները: Այսպիսով, ինքնավերաբերմունքը, որպես «Ես»-ի գաղափարի դրսևորում, ընդգրկում է երկու ենթահամակարգ՝

¹ *Столин В.В., Самосознание личности. М., 1983, с. 165–166.*

ինքնագնահատականի ենթահամակարգ և էմոցիոնալ արժեքային հարաբերությունների ենթահամակարգ: Ինքնագնահատականի ենթահամակարգը, որի հիմքում ընկած են *դրդապատճառ-խթանող* շարժառիթները, առավել հակված են հոգեբանական պաշտպանիչ գործընթացներին¹:

Միջին դպրոցական տարիքի ճգնաժամի մեջ ինքնավերաբերմունքի դրսևորումները

Կյանքի ընթացքում մարդու ինքնավերաբերմունքը և դրա կարևորագույն դրսևորումներից մեկը՝ ինքնագնահատականը, անընդհատ ենթարկվում է փոփոխությունների. *աճում է* կամ *նվազում*: Այդ ֆլուկտուացիաները ընդհանուր առմամբ արտացոլում են անհատի՝ շրջակա միջավայրի հանդեպ ունեցած փոփոխությունները, ինչպես նաև տարիքային փոփոխությունները:

Ինքնավերաբերմունքի միջուկը մենք հակված ենք տեսնելու անհատի՝ ինքն իր հանդեպ ունեցած հուզական վերաբերմունքով:

Անձը սկսում է գնահատել ինքն իրեն այնպես, ինչպես գնահատում են իրեն ուրիշները, և որքան շատ է անհամապատասխանությունը այն բանի, թե ինչպես է ինքն իրեն գնահատում անձը, այսինքն, ինչպիսին է նրա ինքնարժևորման զգացողությունը, և այն, թե ինչպես են ուրիշները գնահատում իրեն, այնքան ավելի հավանական է ներանձնային կոնֆլիկտի ձևավորումը, որը մեր կողմից անվանվում է *ներանձնային* միայն պայմանականորեն, քանի որ վերջինս ձևավորվում է անմիջապես սոցիալական միջավայրի ազդեցությամբ:

Սկզբունքորեն *ընդհանուր ինքնագնահատական* հասկացության բոլոր մոտեցումները արտացոլում են մեկ ընդհանուր առանձնահատկություն, այն է՝ յուրաքանչյուր սահմանում պարունակում է որոշակի դիմակայող կամ հաշտեցնող կողմ: Ի՞նչ նկատի ունենք: Միջին դպրոցական տարիքի ինքնագնահատականը հաճախ մեկնաբանվում է որպես հուզական վերաբերմունք *գումարում* կամ *հանում* նշանով, այսինքն, ինքնավերաբերմունքի տիրույթում առանձնանում է սեփական անձի ընդունումը կամ նրա հանդեպ վերաբերմունքը՝ *դեմ* կամ *կողմ* լինելը: Այսօրինակ հուզական վերաբերմունքը բնութագրվում է զարմանալի կայունությամբ և չտարբերվողականությամբ: Սակայն հակված ենք մտածելու, որ հուզական ինքնակողմնորոշման մեջ տվյալ կայունությունը կրում է հարաբերական բնույթ, այսինքն, եթե մենք այդ վերաբերմունքի մեջ ներառում ենք տարիքային շեմ, ապա ստանում ենք ճկունության բավականին զգալի մակարդակ:

¹ https://psyera.ru/samootnoshenie-i-samoocenka-lichnosti_8955.htm.

Ութսունվեց հրատարակված գիտական հոդվածներից ստացված մետավերլուծությունը¹ վկայում է՝

ա. *վաղ մանկական* հասակում երեխաները ունենում են հարաբերականորեն բարձր ինքնագնահատական, որը մանկության տարիների ընթացքում հետզհետե սկսում է նվազել: Գիտնականները երեխաների բարձր ինքնագնահատականը կապում են նրա հետ, որ վերջիններս կյանքը ոչ ռացիոնալ դրական են ընկալում: Տարիների ընթացքում նրանք սկսում են բախվել առավել բացասական իրադարձությունների ու երևույթների, ինչի արդյունքում ինքնագնահատականը աստիճանաբար սկսում է անկում ապրել:

բ. *պատանեկության* ժամանակ ինքնագնահատականը շարունակում է անկում ապրել, որը հատկապես կապում են այդ տարիքում մարմնակազմվածքի, արտաքինի և պուբերտատ տարիքին բնորոշ այլ փոփոխությունների հետ:

գ. *մեծահասակների* շրջանում արդեն ինքնագնահատականը սկսում է աճել, որն իր գագաթնակետին է հասնում հատկապես վաթսուն տարեկանի սահմանում:

Այդ աստիճանական աճը կապում են մեծահասակների շրջանում տեղի ունեցող ինքնադրսևորման, աշխատանքում կայացման, որոշակի դիրքի ձեռքբերման, ինքնիրացման գործընթացների հետ: Այս ամենը, ընդհանուր առումով, ազդում է անհատի ինքնավերաբերմունքի, և մասնավորապես, ինքնագնահատականի վրա:

դ. *տարեցների* մոտ կրկին սկսում է անկում ապրել ինքնավերաբերմունքը: Որոշ հետազոտություններ վկայում են, որ անկումը հատկապես դիտարկվում է յոթանասուն տարեկանների շրջանում: Այս անկումը գիտնականները կապում են թոշակի անցման, առողջական տարբեր խնդիրների, ամուսնու կամ կնոջ կորստի և այլ պատճառների հետ:

Գիտնականները հետազոտել են մասնակիցների ինքնավերաբերմունքը՝ հարցնելով նրանց համաձայնության աստիճանը տրված հարցերին.

ա. *«դրական եմ վերաբերվում ինքս իմ հանդեպ»*, որը ենթադրում է բարձր աստիճանի ինքնավերաբերմունք,

բ. *«ժամանակ առ ժամանակ մտածում եմ, որ այդքան էլ լավը չեմ»*,

գ. *«ընդհանուր առմամբ հակված եմ մտածելու, որ անհաջողակ եմ»*: Վերջին երկուսը վկայում են ցածր աստիճանի ինքնավերաբերմունքի մասին:

Կրթությունը, եկամուտը, առողջությունն ու աշխատանքը որոշակի ազդեցություն ունեն ինքնավերաբերմունքի վրա, հատկապես, տարիքին զուգընթաց այդ գործոնների դերը ինքնավերաբերմունքի աստիճանի ձևավորման մեջ ավելի մեծ դեր են սկսում կատարել: Հետազոտությունները ցույց են տալիս,

¹http://local.psy.miami.edu/faculty/dmessenger/c_c/rsrscs/rdqs/emot/robins_trz.selfesteemdev/_curid/2005.pdf.

որ չնայած այն հանգամանքին, թե ընտանեկան հարաբերությունները դրական ազդեցություն ունեն ինքնավերաբերմունքի բարձր մակարդակի վրա, այնուամենայնիվ, տարիքին զուգընթաց, ինքնավերաբերմունքը սկսում է անկում ապրել թե՛ երջանիկ ընտանեկան կյանք ունեցող, թե՛ միայնակ ու դժբախտ ընտանիքներում: Միջին դպրոցական տարիքը կյանքում համարվում է հարաբերորեն կայուն շրջան՝ աշխատանքի, ընտանեկան հարաբերությունների և, առհասարակ, հասարակության մեջ կայուն լինելու հանգամանքը նկատի ունենալով: Ուստի, դրանից հետո, ավելի բարձր տարիքում տեղի ունեցող բեկումնային փոփոխությունները, ինչպիսիք են՝ թոշակի անցումը, եկամտի սղությունը և այլն, սկսում են ազդել ինքնավերաբերմունքի մակարդակի վրա՝ բերելով դրա նվազմանը¹:

Եզրակացություն

Վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

ա. ինքնավերաբերմունքի ամենաբարձր բաղադրիչը ինքնակառավարումն է, ամենացածրը՝ ինքնամեղադրումը,

բ. ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև գոյություն ունի փոխադարձ կապ,

գ. ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ցածր ցուցանիշների դրսևորումները միջին դպրոցական տարիքում վկայում են անձի կյանքում ճգնաժամի առկայության մասին, որն արտահայտվում է այնպիսի չափանիշների միջոցով, որոնք առկա են բացասական հույզերի գերակայության դեպքում. ռեֆլեքսիայի ցածր ցուցանիշներ, սեփական վարքը մեկ այլ տեսանկյունից դիտարկելու անկարողություն:

Գրականություն

1. **Зинченко В.П.**, Психологический словарь, М., Педагогика-Пресс, 1997, 564 с.
2. **Кольшко А.М.**, Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.
3. **Кон И.С.**, В поисках себя. Личность и ее самосознание, М.: Политиздат, 1984, 335 с.
4. **Столин В.В.**, Самосознание личности. М., 1983, с. 165–166.
5. **Чеснокова И.И.**, Проблема самосознания и психологии, М., Наука, 1977, стр. 79.

¹ Article: "Self-Esteem Development From Young Adulthood to Old Age: A Cohort-Sequential Longitudinal Study," **Ulrich Orth**, PhD, University of Basel, **Kali H. Trzesniewski**, PhD, University of Western Ontario and **Richard W. Robins**, PhD, University of California, Davis; *Journal of Personality and Social Psychology*, Vol. 98.

6. **Шапиро Д.**, Невротические стили, М., Институт общегуманитарных исследований, 1998. 346 с.
7. <https://www.dissercat.com/content/psikhologicheskie-factoryformirovaniya-samootnosheniya-lichnosti>
8. https://psyvera.ru/samootnoshenie-i-samoocenka-lichnosti_8955.htm
9. http://local.psy.miami.edu/faculty/dmessenger/c_c/rsrscs/rdgs/emot/robins_trz.selfesteemd_evel_curidr2005.pdf.
10. Article: "Self-Esteem Development From Young Adulthood to Old Age: A Cohort- Sequential Longitudinal Study," **Ulrich Orth**, PhD, University of Basel, **Kali H. Trzesniewski**, PhD, University of Western Ontario and **Richard W. Robins**, PhD, University of California, Davis; Journal of Personality and Social Psychology, Vol. 98, No.

Հոդվածը տպագրության է երաշխավորել իմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 14

Հոգեբանություն

Աննա ԱՌԱՔԵԼՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.

E-mail: aragelyananna23@aspu.am

Նաիրա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, կլինիկական հոգեբանության մագիստրոս

E-mail: sernarnar@gmail.com

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԵՆՍԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ
ՍԵՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Իմաստակենսական կողմնորոշումներն անձի ուղղվածության առանցքային բաղադրիչներն են, սեփական կյանքի իմաստների, նպատակների և արժեքների գիտակցման արդյունքը, որոնք սերտորեն կապված են «արժեքային կողմնորոշումներ», «կյանքի նպատակներ», «կյանքի իմաստ» հասկացությունների հետ:

Հոդվածում քննվում են երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների առանձնահատկություններին ու դրանց սեռային տարբերություններին վերաբերող հարցերը:

Հոդվածում ներկայացված են 25-30 տարեկան 64 երիտասարդների հետ իրականացրած փորձարարական հետազոտության արդյունքները, ինչպես նաև կատարված սեռային տարբերությունների համեմատական վերլուծությունը:

Բանալի բառեր՝ երիտասարդներ, կյանքի իմաստ, կյանքի նպատակներ, իմաստակենսական կողմնորոշումներ, սեռային տարբերություններ:

A. Arakelyan, N. Soghomonyan

**ОСОБЕННОСТИ СМЫСЛОЖИЗНЕННЫХ ОРИЕНТАЦИЙ
МОЛОДЕЖИ И ИХ ГЕНДЕРНЫЕ РАЗЛИЧИЯ**

Смысложизненные ориентации – ключевые компоненты направленности человека, результат реализации собственных жизненных смыслов, целей и ценностей, которые тесно связаны с понятиями «ценностные ориентации», «жизненные цели», «смысл жизни». В статье рассматриваются вопросы, касающиеся особенностей смысловых ориентаций молодежи и их гендерных различий. Представлены результаты экспериментального исследования 64 молодых людей 25-30 лет, а также сравнительный анализ гендерных различий.

Ключевые слова: молодежь, смысл жизни, цели жизни, смысловые ориентации, гендерные различия.

A. Arakelyan, N. Soghomonyan

**THE FEATURES OF SEMANTIC ORIENTATIONS OF YOUTH
AND THEIR GENDER DIFFERENCES**

The semantic orientations are the key components of persons destination, the result of the meaning of the life and the result of the realization of goals and values which are connected with the conceptions such as "value orientation", "life purposes", "a meaning of life". In the article it is discussed the problems which are connected with the features of semantic orientation of youth and their gender differences. In the article it is introduced the results of the experimental researches implemented with 25-30 years old 64 young people and also the comparative analysis of gender differences.

Key words: youth, a meaning of life, purposes of life, semantic orientations, gender differences.

Անձնավորության իմաստակենսական ոլորտի բնութագիրը

Իմաստակենսական կողմնորոշումները դիտարկվում են որպես սեփական կյանքի արժեքների, նպատակների և իմաստների գիտակցման արդյունք: Վ.Ե. Չուլնովսկին և այլք վերջիններս սահմանում են որպես գիտակցական և ընտրովի կապերի ամբողջական համակարգ, որն արտացոլում է անձի ուղղվածությունը, կենսական նպատակների առկայությունը, ընտրության և գնահատման իմաստավորվածությունը, բավարարվածությունը կյանքից (ինքնաիրացում) և դրա համար պատասխանատվություն ստանձնելու կարողությունը¹:

Իմաստակենսական ոլորտի ձևավորումը երկարատև գործընթաց է, տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում: Պատանեկան տարիքում ձևավորվում է

¹Skú Гончар С.Н., Особенности развития смысловых ориентаций современных студентов-первокурсников. Современная психология: материалы междунар. заоч. науч. конф. – Пермь: Меркурий, 2012. – с. 17-19.

անձի արժեքաիմաստային ոլորտը, հստակ են դառնում ապագայի ժամանակային հեռանկարները, կենսական և մասնագիտական ծրագրերի կողմնորոշումները ¹:

Արտասահմանյան հոգեբանության մեջ իմաստի և դրա որոնման հարցերը ուսումնասիրվել են հոգեբանության տարբեր ուղղությունների ներկայացուցիչների կողմից (Վ. Ֆրանկլ, Դ.Բյուջենթալ, Է. Լենգլե, Ռ.Մեյ, Ա. Ադլեր, Ս. Գ. Յունգ, Ջ. Քելի, Կ. Լևին, Ա. Մասլոու, Կ. Ռոջերս, Է. Ֆրոմմ, Գ. Օլպորտ, Ի.Յալոմ) :

Կ. Յունգն իմաստի որոնման հարցերը դիտարկել է մարդու հիմնական խնդիրների շրջանակում: Մարդը, գիտակցելով իր կոչումն ու կյանքի իմաստը, օժտված է դիմացկունությամբ, իմաստությամբ և բարձրացնում է իր կյանքի որակը. «Մարդը կարող է դիմանալ ամենադժվար փորձություններին, եթե դրանց մեջ իմաստ տեսնի: Ամբողջ դժվարությունն այդ իմաստը ստեղծելու մեջ է» ²:

Վ.Ֆրանկլն իմաստի որոնման և իրացման ձգտումը համարում էր անձին գործունեության մղող հիմնական ներքին ձգտումը: Հեղինակը նշում է, որ կյանքի իմաստը միշտ «պահի պահանջ է», որը հասցեագրված է կոնկրետ մարդու: Իմաստն իրականացնելու հնարավորությունը միշտ եզակի է, և մարդը, որը կարող է այն իրացնել, միշտ անկրկնելի է ³:

Ըստ Ա. Լանգլեի՝ իմաստը կյանքի հետ կնքած յուրօրինակ պայմանագիր է, որի համաձայն մարդն իրեն հոգով և մարմնով նվիրում է նրան, ինչն իր համար կարևոր է ⁴:

Ի. Յալոմը մարդու կյանքում առանձնացնում է իմաստի երկու մակարդակ՝ «տիեզերական իմաստ» և «երկրային իմաստ»: «Տիեզերական իմաստը» կյանքի վերանձնային իմաստն է, որն արտահայտվում է ի վերուստ մարդուն տրված կյանքի աստվածային իմաստի որոնման կամ կատարելության ձգտման մեջ: «Երկրային իմաստը» կամ անձնային իմաստը պարունակում է այն նպատակը, որին մարդը ձգտում է հասնել: Հեղինակը տարբերակում է իմաստաստեղծ գործունեության տարբեր տեսակներ. այլասիրություն, նվիրվածություն, ստեղծագործականություն, հեղոնիզմ, ինքնաիրացում: ⁵

Կ. Լևինի տեսության մեջ դիտարկվում է «ժամանակային հեռանկար» հասկացությունը: Որքան նշանակալի և հեռուն գնացող նպատակներով է ապրում անձը, այդքան նրա անձնային հատկությունները գիտակցված և ինտեգրված են:

¹ *Տե՛ս Զատկինա Կ. Ա., Проявление смысложизненных ориентаций в юношеском возрасте// Молодёжь и наука: Сборник материалов VI Всероссийской научно-технической конференции аспирантов и молодых учёных [Электронный ресурс]. -Красноярск: 2011. <http://conf.sfu-kras.ru/sites/mn2010/section15.html>*

² *Տե՛ս Եունգ Կ. Գ., Проблемы души нашего времени / К. Г. Юнг. - пер. с нем. А.Боковикова. - М.: Академический проект, 2007. - 286 с.*

³ *Տե՛ս Փրանկլ Ե., Человек в поисках смысла, Москва, Прогресс, 1990 г.-372с.*

⁴ *Տե՛ս Լենգլե Ա., Жизнь, наполненная смыслом : прикладная логотерапия / Альфريد Лэнгле. - пер. с нем. А. Боковиков и др. - М.: Генезис, 2008. - 125 с.*

⁵ *Տե՛ս Մալցինա Ա., Смысложизненные ориентации в разных жизненных ситуациях у молодежи. Автореферат. Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук. Санкт-Петербург 2015.-161 с.*

Էքզիստենցիալ հոգեբան Լ. Բիսվանգերը «Ժամանակային հեռանկարը» դիտարկեց որպես անձին դեպի անցյալ, ներկա և ապագա ուղղորդող իմաստների համակարգ, որը ձևավորում է հնարավորությունների հորիզոն, որոշում է սեփական ընտրությամբ իմաստային տարածքի խորությունն ու լայնությունը ¹:

Երկարաժամկետ նպատակների սահմանման, ժամանակի ազատ և ինքնուրույն պլանավորման, կենսական և մասնագիտական ռազմավարության կառուցման ունակությունները կապված են անձի ապագայի տեսլականի հետ: Այս տեսանկյունից՝ ժամանակային հեռանկարը կարող է ռեսուրս լինել անորոշության իրավիճակներում, իսկ հետագայում՝ անհատի բարեկեցության նախապայման:

Իմաստակենսական ոլորտի հիմնախնդիրը լայնորեն մշակվել է նաև խորհրդային հոգեբաններ Ա.Գ. Ասմոլովի, Ֆ.Ե.Վասիլյուկի, Բ.Ս. Բրատուսի, Ա.Ն.Լեոնտևի, Վ.Ա.Պետրովսկու, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Վ.Վ. Ստոլինի, Մ.Ս.Կազանի աշխատանքներում:

Մ.Ս. Կազանը կյանքի իմաստը հասկանում է որպես անձի երկարաժամկետ և կայուն ներքին համոզմունք, որն ունի անձնային և հասարակական արժեք: Իմաստը բարձրացնում է արժեքային վերաբերմունքն ավելի բարձր գաղափարական մակարդակ, «կտրվելով առօրյա կյանքի պրակտիկայից» ²:

Խորհրդային հոգեբանության մեջ կյանքի իմաստի խնդիրը հիմնականում մշակվել է գործունեության մոտեցման ուսումնասիրության շրջանակներում: Լ.Ս.Վիգոտսկին դիմամիկ իմաստային համակարգը դիտարկում էր գիտակցության հուզական և ինտելեկտուալ գործընթացների միասնության մեջ ³:

Ս.Լ. Ռուբինշտեյնը նշել է, որ իր ապագան պլանավորելիս, ուրվագծելով հատուկ իրադարձություններ, ծրագրեր և նպատակներ, երիտասարդը հիմնականում ելնում է իր գիտակցության մեջ առկա որոշակի արժեքների աստիճանակարգից:

Իմաստակենսական կողմնորոշումները որոշում են գործունեության որոշակի ոլորտների նախընտրության կարգը, կյանքի ճանապարհի ուղղությունները, որոնց վրա մարդը մտադիր է կենտրոնացնել իր ուժերն ու էներգիան ⁴:

Ա.Ն.Լեոնտևն իմաստային համակարգը դիտարկում է որպես հարաբերականորեն կայուն և ինքնավար աստիճանակարգային համակարգ, որը ներառում է մի շարք իմաստային կառույցներ: Ըստ Լեոնտևի՝ նպատակին հասնելու գործունեության շարժառիթը հանդիսանում է «անձնային իմաստ»:

Ըստ Բ.Ս.Բրատուսի՝ իմաստը բարդ դիմամիկ համակարգ է, որը պայմանավորում է անհատի ողջ կենսագործունեությունը ⁵:

¹ Skú *Макушина О. П., Мазкина О. Б.* указ.соч. с. 74-78.

² Skú *Казан М.С.,* *Философская теория ценности.* – СПб.:Петрополис, 1997. –205 с.

³Skú *Сипина А. А.,* *Смысложизненные ориентации и временная перспектива молодежи свердловской и курганской областей.* Екатеринбург 2018. - 76 с.

⁴ Skú *Моздор Н. В.,* *Развитие смысложизненных ориентаций у студентов в процессе богословского и светского образования: на примере педагогического вуза: автореф., Ставрополь, 2007. – 182 с.*

⁵Skú *Сипина А. А.,* указ.соч. - 76 с.

Պետք է նշել, որ գիտական գրականության մեջ «իմաստակենսական կողմնորոշումներ» հասկացությունն իր նշանակությամբ համարժեք է «արժեքային կողմնորոշումներ» հասկացությանը, նշանակում է իմաստաստեղծ արժեքների ուղղվածություն¹:

Վ.Է.Չուդնովսկին նշում է, որ իմաստակենսական կողմնորոշումները պետք է լինեն «արդյունավետ»՝ նպաստելով անձի զարգացմանը²: Հեղինակը կարծում է, որ իմաստակենսական ոլորտի կառուցվածքի հիմքում դրված է իմաստների աստիճանակարգը, որը պայմանավորված է անձի անհատական, տարիքային առանձնահատկություններով և սոցիալական հանգամանքներով³:

Այսպիսով, հոգեբանության մեջ անձի իմաստակենսական կողմնորոշումները դիտարկվում են սեփական կյանքի իմաստների, նպատակների և արժեքների գիտակցման արդյունք, որոնք սերտորեն կապված են «արժեքային կողմնորոշումներ», «կյանքի նպատակներ», «կյանքի իմաստ» հասկացությունների հետ և հանդիսանում են անձի ուղղվածության առանցքային բաղադրիչները:

Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է 2021 թ. փետրվար- մարտ ամիսներին: Հետազոտությանը մասնակցել է 25-30 տարեկան 64 երիտասարդ՝ 32 աղջիկ և 32 տղա: Քանի որ գիտական գրականության մեջ հանդիպել ենք առավելապես 18-22 տարեկան երիտասարդների խմբերում իրականացված հետազոտություններ, ապա մեր կողմից հետազոտության ընտրակազմի համար առանձնացվել է 25-30 տ. տարիքային խումբը: Մեր հետազոտության նպատակն է եղել բացահայտել երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները: Հետազոտության հիմքում ընկած է եղել այն ենթադրությունը, որ երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների և դրանց բաղադրամասերի դրսևորումները պայմանավորվում են նաև սեռային առանձնահատկություններով:

Երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների առանձնահատկությունների ու դրանց սեռային տարբերությունների հետազոտության համար օգտագործվել են գրույցի և թեստավորման մեթոդները: Զրույցն իրականացվել է մեր կողմից կազմված հարցերի հիման վրա:

Երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների և դրանց սեռային տարբերությունների հետազոտության համար կիրառվել է Դ.Ա.Լեոնտսի

¹ *Տե՛ս Макушина О. П., Мазкина О. Б., указ.соч. с. 74-78.*

² *Տե՛ս Чудновский В.Э., К проблеме адекватности смысла жизни. // Мир психологии. 1999. №2. -с. 74-80.*

³ *Տե՛ս Немировский В.Г., Соколова Е.В., Структура и динамика смысложизненных ориентаций студенческой молодёжи: 1988 -2004 гг. Постнеклассический подход. Красноярск: РИО Крас ГУ, 2006. - 161 с.*

իմաստակենսական կողմնորոշումների թեստը¹, որը Դ. Քրամբոյի և Լ. Մախոլիկի «Կյանքի նպատակ» թեստի ադապտացված տարբերակն է: Թեստում կյանքի իմաստավորվածությունը որոշվում է ապագայի նկատմամբ ունեցած նպատակներով, դրանց հասնելու ընթացքում ստացած բավարարվածության զգացումով, ինքնուրույն որոշումներ կայացնելու, իր առջև նպատակներ դնելու և դրանց հասնելու սեփական կարողության վստահությամբ:

Թեստի ցուցանիշները ներառում են կյանքի իմաստավորման ընդհանուր ցուցանիշը, ինչպես նաև հինգ ենթասանդղակ, որոնք արտացոլում են իմաստակենսական երեք կողմնորոշումներ և վերահսկողության ուղղվածության երկու ասպեկտներ.

- «կյանքի նպատակներ»,
- «կյանքի ընթացք և կյանքի հուզական հագեցվածություն»,
- «կյանքի արդյունավետություն կամ ինքնաիրացման բավարարվածություն»,
- «վերահսկողության ուղղվածություն - ես»,
- «վերահսկողության ուղղվածություն - կյանք»:

Այսպիսով, իմաստակենսական կողմնորոշումների թեստը թույլ է տալիս գնահատել կյանքի իմաստի «աղբյուրը», որը մարդը կարող է գտնել կամ ապագայում (նպատակներ), կամ ներկայում (ընթացք), կամ անցյալում (արդյունք), կամ կյանքի բոլոր երեք բաղադրիչներում²:


Հետազոտության արդյունքները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական առաջնային վերլուծության մեթոդներով: Առաջնային վիճակագրական մեթոդներից կիրառվել են ընտրական միջինը և ընտրական միջինից շեղումը:

Երկու ընտրակազմերում հետազոտության տվյալները նախ մշակվել են տոկոսային ցուցանիշներով, ինչի արդյունքում առանձնացվել են յուրաքանչյուր սանդղակի ցածր, միջին և բարձր ցուցանիշները (տես հիսթոգրամ 1, 2):

¹Տե՛ս *Леонтьев Д.А., Тест смысложизненных ориентаций (СЖО) [Текст] / Дмитрий Алексеевич Леонтьев – 2-е изд. – М.: Смысл, Серия: Психодиагностическая серия, 2006. – 22 с.*

²Տե՛ս <http://dip-psi.ru/psikhologicheskiye-testy/post/test-smyslozhiznennykh-orientatsiy-szho-d-a-leontyeva>

Հիսթորամ N1



Իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքները աղջիկների ընտրակազմում

Աղջիկների ընտրակազմում հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ «կյանքի նպատակներ» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ են արձանագրվել փորձարկվողների 15.6%-ի մոտ, որը վկայում է նրանց մոտ կյանքի նպատակների բացակայության մասին: Միջին ցուցանիշներ են արձանագրվել հետազոտվողների 34. 4%-ի մոտ: Հետազոտությանը մասնակցած երիտասարդ աղջիկների 50.0%-ի մոտ արձանագրվել է այս սանդղակի բարձր ցուցանիշներ, ինչը վկայում է նրանց մոտ կյանքին իմաստավորվածություն, ուղղվածություն, հեռանկար հաղորդող նպատակների առկայության, սեփական ծրագրերի հանդեպ ունեցած հավատի և դրանց իրականացման մասին:

«Կյանքի ընթացք» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ են գրանցվել հետազոտվող աղջիկներից 18. 8%-ի մոտ, ինչը վկայում է կյանքի ընթացքից ունեցած նրանց անբավարարվածության մասին: Միջին ցուցանիշներ են գրանցվել 46. 9%-ի մոտ և բարձր՝ 34.4%-ի մոտ, ինչը վկայում է վերջիններիս կյանքի ընթացքի հուզական հագեցվածության մասին:


«կյանքի արդյունավետություն» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ գրանցվել են հետազոտությանը մասնակցած երիտասարդ աղջիկների միայն 21.9%-ի մոտ, ինչը վկայում է ապրած կյանքից ունեցած անբավարարվածության մասին, իսկ միջին արդյունքներ են արձանագրվել 34.4%-ի մոտ: Հետազոտվողներից 43.8%-ի մոտ արձանագրված բարձր ցուցանիշները նրանց ապրած կյանքի արդյունավետության և ամբողջականության մասին ցուցիչներ են:

«վերահսկողության ուղղվածություն-ես»-ի ենթասանդղակի ցածր ցուցանիշներ արձանագրվել են փորձարկվողների միայն 6.3%-ի մոտ, միջին՝ 53.1%-ի և բարձր՝ 40.6%-մոտ: Տվյալների նման պատկերը ցույց է տալիս, որ հետազոտությանը մասնակցած աղջիկների մեծ մասն ունի իրենց՝ որպես ուժեղ անհատականության մասին պատկերացումներ, ով ընտրության բավարար ազատություն ունի:

«վերահսկողության ուղղվածություն-կյանք» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ գրանցվել են աղջիկների 9.4%-ի մոտ՝ արտացոլելով նրանց այն համոզմունքը, որ մարդն անկարող է վերահսկել սեփական կյանքը: Միջին ցուցանիշներ գրանցվել են 68.8%-ի մոտ: Հետազոտվողների 21.9%-ն այն համոզմունքն ունի, որ մարդն իրապես կարող է վերահսկել սեփական կյանքը, ազատորեն որոշումներ կայացնել և դրանք կյանքի կոչել:

Ըստ «կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» ենթասանդղակի արդյունքների՝ հետազոտվողներից 12.5%-ի մոտ արձանագրվել են ցածր, 53.1%-ի մոտ՝ միջին, իսկ 34.4%-ի մոտ՝ կյանքի ընդհանուր իմաստավորվածության բարձր ցուցանիշներ:

Հիսթոգրամ N2



Իմաստակենսական կողմորոշումների հետազոտության արդյունքները տղաների ընտրակազմում

Տղաների ընտրակազմում հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ «կյանքի նպատակներ» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ են արձանագրվել փորձարկվողների 6.3%-ի մոտ: Սա խոսում է այս տղաների մոտ կյանքի նպատակների բացակայության մասին: Միջին ցուցանիշներ են արձանագրվել 40.6%-ի և բարձր՝ 53.1%-ի մոտ: Վերջինս վկայում է նրանց մեջ կյանքին իմաստավորվածություն, ուղղվածություն, հեռանկար հաղորդող նպատակների առկայության, սեփական ծրագրերի հանդեպ ունեցած հավատի և դրանց իրականացման մասին:

«Կյանքի ընթացք» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ են գրանցվել հետազոտվող տղաներից 3.1%-ի մոտ, ինչը վկայում է կյանքի ընթացքից ունեցած նրանց անբավարարվածության մասին: Միջին ցուցանիշներ են գրանցվել 53.1%-ի մոտ և բարձր՝ 43.8%-ի մոտ, ինչը վկայում է վերջիններիս կյանքի ընթացքի հուզական հագեցվածության և ամբողջականության մասին:

«Կյանքի արդյունավետություն» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ գրանցվել են հետազոտությանը մասնակցած երիտասարդ տղաների միայն 9.4%-ի մոտ, ինչը վկայում է ապրած կյանքից ունեցած նրանց անբավարարվածության մասին, իսկ միջին արդյունքներ են արձանագրվել 68.8%-ի մոտ: Հետազոտվողներից 21.9%-ի մոտ արձանագրված բարձր ցուցանիշները նրանց ապրած կյանքի արդյունավետության և ամբողջականության մասին ցուցիչներ են, այս երիտասարդ տղաներն ապրած կյանքը գնահատել են արդյունավետ և բովանդակալից:

«Վերահսկողության ուղղվածություն-ես» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ տղաների ընտրակազմում չեն արձանագրվել, միջին ցուցանիշներ արձանագրվել են փորձարկվողների 50%-ի մոտ և բարձր՝ 50%-ի մոտ: Տվյալների նման պատկերը ցույց է տալիս, որ հետազոտությանը մասնակցած տղաներն ունեն իրենց՝ որպես ուժեղ անհատականության մասին պատկերացումներ, ով ընտրության բավարար ազատություն ունի:

«Վերահսկողության ուղղվածություն-կյանք» ենթասանդղակի ցածր ցուցանիշներ գրանցվել են տղաների 6.3 %-ի մոտ՝ արտացոլելով նրանց այն համոզմունքը, որ մարդն անկարող է վերահսկել սեփական կյանքը: Միջին ցուցանիշներ գրանցվել են 53.1%-ի մոտ: Հետազոտվողների 40.6.-%-ն այն համոզմունքն ունի, որ մարդն իրապես կարող է վերահսկել սեփական կյանքը, ազատորեն որոշումներ կայացնել և դրանք կյանքի կոչել:


Ըստ «կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» ենթասանդղակի արդյունքների՝ հետազոտվող երիտասարդ տղաների 3.1%-ի մոտ արձանագրվել են ցածր, 53.1%-ի մոտ՝ միջին, իսկ 43.8.-%-ի մոտ՝ կյանքի ընդհանուր իմաստավորվածության բարձր ցուցանիշներ:

Այսպիսով, երիտասարդ աղջիկների իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ աղջիկներն ընդհանուր առմամբ գոհ և բավարարված են իրենց կյանքից: Նրանք աչքի են ընկնում

նպատակալացությամբ, կյանքի ընթացքից և արդյունքից ունեցած գոհունակությամբ, ընտրության բավարար ազատություն ունենալու, ազատորեն որոշումներ կայացնելու և դրանք կյանքի կոչելու համոզմունքով:

Տղաների իմաստակենսական կողմնորոշումների փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ տղաներն ընդհանուր առմամբ գոհ և բավարարված են իրենց կյանքից: Նրանց բնութագրական է կյանքին ուղղվածություն, իմաստ և հեռանկար հաղորդող նպատակների առկայությունը, կյանքի ընթացքից և արդյունքից ունեցած բավարարվածության զգացումը, ինքնավստահությունը, ազատորեն որոշումներ կայացնելու և դրանք կյանքի կոչելու դրսևորումները:

Հիսթոգրամ N3



Իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքների միջինացված ցուցանիշները փորձարարական ընտրակազմում

Հիսթոգրամ 3-ում ներկայացված են հետազոտությանը մասնակցած աղջիկների և տղաների իմաստակենսական կողմնորոշումների հինգ ենթասանդղակների արդյունքների միջինացված ցուցանիշները, որտեղ հստակ երևում են նաև վերջիններիս տարբերությունները:

Տղաների և աղջիկների ընտրակազմերում իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքների միջինացված ցուցանիշների համեմատությունից պարզ է դառնում, որ «կյանքի նպատակներ», «կյանքի ընթացք»,

«կյանքի արդյունավետություն», «վերահսկողության ուղղվածություն-ես», «վերահսկողության ուղղվածություն-կյանք» ենթասանդղակների ցուցանիշները երկու սեռերի մոտ գտնվում են միջին մակարդակի վրա (դեպի բարձրին ձգտող):

Ինչպես տեսնում ենք, տղաների ընտրակազմում հետազոտության տվյալների բոլոր ենթասանդղակների միջին ցուցանիշներն ավելի բարձր են, քան աղջիկների ընտրակազմում: Վերջինս ենթադրում է, որ փորձարարական ընտրակազմի տղաների մոտ կյանքին իմաստ, ուղղվածություն և ժամանակային հեռանկար հաղորդող նպատակներն ավելի ցայտուն են արտահայտված: Նրանք իրենց կյանքի ընթացքն ընկալում են առավել հետաքրքիր, հուզականորեն հարուստ և հագեցած, իսկ ապրած կյանքի հատվածը՝ արդյունավետ և բովանդակալից: Կյանքից ընդհանուր բավարարվածության ցուցիչը տղաների մոտ ևս առավել բարձր է:

Ի տարբերություն աղջիկների՝ տղաների ընտրակազմում առավել ցայտուն է դրսևորված այն համոզմունքը, որ անձն ունի ընտրության բավարար ազատություն, իրապես կարող է վերահսկել սեփական կյանքը, ազատորեն որոշումներ կայացնել և դրանք կյանքի կոչել:

Աղջիկների և տղաների ընտրակազմերում «կյանքի ընդհանուր իմաստավորվածություն» ենթասանդղակի միջին ցուցանիշները ևս գտնվում են միջին (բարձրին ձգտող) մակարդակում: Սակայն, տղաների մոտ կյանքի ընդհանուր իմաստավորվածությունն ավելի բարձր է արտահայտված, քան աղջիկների մոտ: Սա ցույց է տալիս, որ տղաներն ավելի ինքնավստահ են և ունեն բավականին հստակ արտահայտված նպատակներ և դրդապատճառներ:

Հարկ է նշել, որ Դ.Ա. Լեոնտևի իմաստակենսական կողմնորոշումների թեստի հետազոտության արդյունքների ընդհանուր պատկերը համադրվում է զրույցից ստացված արդյունքների հետ:

Աղյուսակ N 1

ԻԿԿ ենթասանդղակներ	Աղջիկների ընտրակազմ		Տղաների ընտրակազմ	
	M	σ	M	σ
Կյանքի նպատակներ	33.5	7.6	34.9	5.9
Կյանքի ընթացք	30.03	7.6	32.56	5.7
Կյանքի արդյունավետություն	24.5	6.8	25.19	4.5
Վերահսկողության ուղղվածություն-Ես	21.44	4.7	22.72	3.4
Վերահսկողության ուղղվածություն- կյանք	30.09	6.2	32.03	5.2

Կյանքի ընդհանուր իմաստավորվածություն	102.84	20.4	108.38	15.2
---	--------	------	--------	------

Իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքների միջինացված և ընտրական միջինից շեղման ցուցանիշները փորձարարական ընտրակազմում

Աղյուսակ 1-ում ներկայացված են աղջիկների և տղաների իմաստակենսական կողմնորոշումների հետազոտության արդյունքների ընտրական միջին ցուցանիշները ու միջինից շեղումները:

Փորձարարական ընտրակազմերում իմաստակենսական կողմնորոշումների բոլոր ենթասանդղակների ընտրական միջինների և միջինից շեղումների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ

1) տղաների ընտրակազմում բոլոր ենթասանդղակներում միջին ցուցանիշներն ավելի բարձր են,

2) աղջիկների ընտրակազմում բոլոր ենթասանդղակներում ընտրական միջինից շեղումների ցուցանիշներն ավելի մեծ են, ինչը նշանակում է, որ այս ընտրակազմում անհատական տարբերություններն ավելի ցայտուն են եղել,

3) տղաների կյանքի իմաստավորվածության բոլոր բաղադրամասերի ցուցանիշներում տվյալները հավաքված են միջինի շուրջ, տվյալների ցրվածությունը փոքր է: Մա նշանակում է, որ տղաների ընտրակազմում անհատական տվյալների մեծ տարբերություններ չեն արձանագրվել,

4) տղաների մոտ կյանքի բոլոր բաղադրամասերի իմաստավորվածությունն առավել բարձր է արտահայտված,

5) կյանքին իմաստ, ուղղվածություն և հեռանկար հաղորդող նպատակների առկայությունը, կյանքի ընթացքից, արդյունքից և բովանդակությունից ունեցած բավարարվածությունն ու գոհունակությունը, ինքնավստահությունը, ընտրության բավարար ազատության ունենալու, ազատորեն որոշումներ կայացնելու և դրանք կյանքի կոչելու համոզմունքը տղաների մոտ առավել ցայտուն են դրսևորվել, քան աղջիկների մոտ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 809.198.1

Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

ԱրՊՀ մանկ. և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԴԺՎԱՐ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդիրը ռազմական հոգեբանության հիմնարար ուղղություններից մեկն է: Զինվորական ծառայությանը բնորոշ արտակարգ պայմաններին նորակոչիկների հարմարման դժվարությունների հոգեբանական պատճառականության բացահայտումը կարևոր է, մի կողմից, բանակի մարտունակության ապահովման, մյուս կողմից՝ տեսական և պրակտիկ հոգեբանության զարգացման առումով: Հոդվածում քննվում են զինծառայության պայմաններին նորակոչիկների հարմարման հոգեբանական պատճառականության հետ կապված որոշ հարցեր:

Բանալի բառեր՝ զինվորական ծառայություն, ադապտացիայի դժվարություններ, սպոնտան հարմարում, հոգեֆիզիոլոգիական հարմարում, սթրեսային խանգարումներ:

В.Ярамышян

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ТРУДНОЙ АДАПТАЦИИ К ВОЕННОЙ СЛУЖБЕ

Проблема социально-психологической адаптации является одним из основных направлений военной психологии. Выявление психологических причин трудной адаптации призывников к чрезвычайным условиям, характерным для военной службы, актуально, с одной стороны, с точки зрения обеспечения боеспособности армии, а с другой, развития теоретической и практической психологии. В статье рассматриваются некоторые вопросы, связанные с психологическими аспектами трудной адаптации призывников к условиям военной службы.

Ключевые слова: военная служба, трудности адаптации, спонтанная адаптация, психофизиологическая адаптация, стрессовые расстройства.

V.Yaramishyan

PSYCHOLOGICAL REASONS FOR DIFFICULT ADAPTATION TO MILITARY SERVICE

The problem of social-psychological adaptation is one of the basic directions of military psychology. The identification of the psychological reasons for the adaptation of conscripts to emergency conditions typical of military service is important, on one hand, from the point of view of ensuring the combat capability of the army, and on the other hand, the development of theoretical and practical psychology. The article deals with some issues related to the psychological aspects of the adaptation of conscripts to the conditions of military service.

Key words: military service, pregnancy adaptations, spontaneous adaptation, psychophysiological adaptation, stress disorders.

Զինվորական ծառայությանը նորակոչիկների դժվար հարմարվելը հատուկ է աշխարհի բոլոր բանակներին: Ռազմական հոգեբան Ն.Քոուփլենդն իրավագիտորեն նկատել է. «Զինված ուժերում ծառայության անցնելուց հետո մարդն իրեն զգում է այնպես, ինչպես ջրից դուրս նետված ձուկը» [1, էջ 101]: Հայ մասնագետները նույնպես նկատել են, որ գործունեության պայմանների կտրուկ փոփոխությունը նորակոչիկի մոտ առաջ է բերում բացասական հույզեր՝ տագնապայնություն, գերհոգնածություն, ընկճվածություն, տրամադրության անկումներ, ներքոներ, հարմարման խանգարումներ [2, 3, 4, 5]: Հետաքրքիր է, որ նույնիսկ ոչ մարտական իրավիճակում անձնակազմի դժվար հարմարմամբ պայմանավորված մարտունակության կորուստները կարող են հասնել մինչև 30-35 տոկոսի, իսկ մարտի պայմաններում՝ ընդհուպ մինչև 70 և ավելի տոկոսի [2, էջ 383]: Նման ոչ հազվադեպ դեպքերի ականատես եղանք նաև մենք՝ Արցախյան պատերազմների ժամանակ:

Ռազմական հոգեբանության մասնագետներն ավանդաբար մարտական իրավիճակների վերաբերյալ ավելի շատ են հետազոտություններ կատարում, քան սովորական ծառայողական պայմանների: Պատճառն այն է, որ պատերազմ վարելու ձևերն ու մեթոդները մշտապես փոփոխվում են, իսկ ծառայողական պայմանները՝ գրեթե մնում անփոփոխ: Իրականում նորակոչիկների դժվար հարմարման օբյեկտիվ պատճառներից մեկը հենց դրա՝ ծառայողական գործունեության արտասովոր բնույթն է: Կանոնակարգված կենսաձևին հետևելու, կոկիկ և մաքրակենցաղ լինելու, անկողինը հարդարելու, հատակն ավելելու, առանց թույլտվության ոչինչ չանելու, զինվորի և օրապահի պարտականությունները սերտելու պահանջները, որոնցով այնքան լեցուն է բանակային առօրյան, ընկճվածության և հիասթափության զգացումներ են

առաջացնում նորակոչիկի հոգեկանում, որը զինծառայությունը <<միամտաբար>> պատկերացնում էր որպես <<հայրենիքին անմնացորդ ծառայելու, արիության ու քաջության դպրոց>>:

Զինվորական ծառայության բնույթի մասին նորակոչիկը, անշուշտ, նախնական տեղեկություններ է հավաքագրում մինչև գորակոչվելը, սակայն լիարժեք պատկերացում կարող է կազմել՝ միայն անձնապես վերապրելով այն, հարմարվելով նոր պայմաններին: Հարմարումը բանակին բարդ գործընթաց է և ընթանում է մի քանի ուղղություններով.

1. **ռազմասանագիտական**՝ պարտականությունների յուրացում,

2. **խմբային**՝ դերային գործառույթների որոշակիացում,

3. **սոցիալ-հոգեբանական**՝ միջավայրի պայմանների յուրացում,

4. **պաշտոնական կամ ձևական**՝ պարտականությունների ստանձնում [3, էջ 41]:

Հենվելով մասնագիտական աղբյուրների վրա, ինչպես նաև անձնական փորձն ընդհանրացնելով փորձենք առանձնացնել այն տիպական դժվարություններից մի քանիսը, որոնք բնորոշ են ադապտացիայի նշված ուղղություններին.

- նախկին միջավայրից կտրվելու հետ կապված բացասական ապրումներ (պայմանականորեն անվանենք <<կորստի ցավ>>)¹,
- նոր, անծանոթ խմբում շփման ու հաղորդակցման անբավարար մակարդակ (անվանենք <<կոմունիկատիվ քաղց>>),
- հոգեբանական անբավարար պատրաստվածություն (<<ռեակտիվության համախտանիշ>>),
- տոտալ՝ համատարած վերահսկողություն և այդ պայմաններում սեփական վարքը կառավարելու անընդունակություն (<<հոգեբանական մամլիչ>>),
- անսովոր սնունդ, կենցաղային խնդիրներ (<<ֆիզիոլոգիական իներտություն>>),
- անորոշություն, ինքնուրույն աշխատելու անկարողություն, մասնագիտական անբավարար մակարդակ (<<բա հիմա ես ի՞նչ անեմ...>>),
- հրամաններին ենթարկվելու անհրաժեշտություն (<<...մեռնե՞մ օրենքին>>),
- կոմունիկատիվ բարդություններ (<<մեր փողոցից մարդ կա՞...>>),
- համահավասարեցում (<<հոգեբանական սափրում>>) և այլն:

Թվարկված բոլոր դժվարությունները նորակոչիկը պետք է հաղթահարի միայնակ և հնարավորինս արագ: Անշուշտ, ծառայողական ժամանակահատվածի աճին զուգընթաց այս դժվարությունների մի մասը ինքնաբերաբար կհաղթահարվի, և տեղի կունենա, այսպես կոչված, **սպոնտան հարմարում**, սակայն զգալի մասը կմնա և կշարունակի իր քայքայիչ ազդեցությունը նորակոչիկի հոգեկանի վրա:

¹ Պայմանական անվանումները մերն են և չեն հավակնում հոգեբանական հասկացություններ լինելուն, պարզապես տրված են պատկերավոր լինելու համար:

Այժմ անդրադարձ կատարենք և փորձենք պարզել զինվորական ծառայության պայմաններին դժվար հարմարվելու հոգեբանական ասպեկտները: Բանակը, որքան էլ լինի քաղաքացիական վերահսկողության տակ, միևնույն է, եղել և մնում է փակ կառույց, ուստի նորակոչիկների հարմարման դժվարությունների մի մասն առաջ գալիս հասարակական կառույցների և բանակի միջև ակտիվ շփումների սակավության, գործառնական կապերի անկայունության, առանձնահատուկ դեպքերում՝ նաև դրանց բացակայության հետևանքով: Անձի անցումը մի կառույցից մյուսին ուղեկցվում է կարգավիճակային, դերային, կենցաղային, հոգեբանական խոչընդոտներով: Եթե վերը նշված առաջին երեք գործընթացները բնութագրում են հարմարման սուկ արտաքին, ձևական փոփոխությունների շղթան, ապա հոգեբանական հարմարումը արտահայտում է երևույթի ներքին, ներանձնային կողմը: Բանն այն է, որ քաղաքացիական առօրյա գործունեությունից զինվորական կենսաձևին անցումը կարող է ծանր ու երկարատև լինել: Պատանին ստիպված է լինում նախ նախապատրաստվել, իսկ հետո նաև հարմարվել նոր կարգավիճակին, մասնագիտությանը, կենսաձևին, սոցիալական խմբին, ներխմբային կապերին:

Հոգեբանական հարմարման հիմնախնդրում մասնագետները տեսնում են անձի խմբային նույնականացման խնդիրը [4, էջ 193]: Եթե պատանին մինչև գորակոչվելը ներգրավված է եղել անմիջական միջավայրում, որին հարմարված է եղել ու իրեն համարել է «<ինչպես մյուսները>>, ապա նոր խմբում ինտեգրվելու, իրեն զինվորական զգալու համար որոշակի ջանքեր ու ժամանակ է հարկավոր:

Անձի մասնակցությունը զինվորական ծառայությանը, ֆիզիոլոգիականից բացի, համապատասխան ներհոգեկան գործընթացներ է պահանջում: Տեսականորեն առանձնացված են [նույն տեղը] հարմարման գործընթացների մի քանի ընդհանուր բնութագրական հատկանիշներ, որոնք ներկայացված են ստորև.

ա) **սոցիալականացման հարկադրական բնույթը**, երբ անձը ստիպված է յուրացնել առկա սոցիալական հարաբերություններն այնպես, ինչպես որ կան, իսկ դա նշանակում է, որ բանակում նախատեսված և իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են նորակոչիկի պասիվ, հարկադրական հարմարեցմանը, այլ ոչ թե ակտիվ հարմարմանը:

բ) **հարմարման համընդհանուր՝ տոտալիտար բնույթը**, երբ համակարգն իր արժեքներն է թելադրում, պարտադրում բոլորին՝ ճնշում գործադրելով նրանց անձնային ու հոգեբանական առանձնահատկությունների ազատ դրսևորման հնարավորության վրա: Խորհրդային բանակից լավ հայտնի է հետևյալ սկզբունքը. «Не можешь-научим, не хочешь-заставим» («Չես կարողանում՝ կսովորեցնենք, չես ցանկանում՝ կստիպենք»),

զ) ընդունված արժեքների փոփոխումը, անհատի համար նոր, երբեմն՝ անընդունելի, **արժեքների յուրացման պարտադրումը**, երբ, օրինակ, մարդասիրական արժեքների փոխարեն յուրացվում է թշնամուն ոչնչացնելու արժեքը,

դ) **սոցիալական փոխհարաբերությունների ակտիվացումը**, որը պայմանավորված է բանակային կյանքի առանձնահատկություններով, միասնաբար գործելու անհրաժեշտությամբ: Մարդը կարծես վեր է ածվում մեխանիզմի կառավարվող մասնիկի, վտանգվում է նրա անհատականությունը, սահմանափակվում՝ ազատությունը:

ե) **իրավիճակի հուզածին, հոգեխոցող գործոնները, սթրեսը**: Եթե պատերազմի վերսկսման հավանականությունը մինչև գորակոչվելը փոքր էր թվում, ապա բանակում պատերազմի թեման շոշափվում է մշտապես, և գորքն իրապես պատրաստվում է դրան: Ամենօրյա գորավարժությունները, մարտական հերթապահությունը, առաջնագծում՝ դիպուկահարները, զոհվելու, վիրավորվելու կամ հաշմանդամ դառնալու մեծ հավանականությունը, ավելի ճշգրիտ՝ դրանցով պայմանավորված իրադրային տագնապայնությունը, իրենց երիտասարդ տարիքի շնորհիվ երևակայության բարձր մակարդակ ունեցող անձի հոգեկանը դարձնում են փխրուն ու խոցելի: Հետևանքը լինում է այն, որ պատանու մոտ ուժեղանում է չգիտակցված ձգտումը դեպի խումբը, ակտիվանում է խմբային վարքագծի ու արժեքների արագ ու անգիտակցական յուրացումը:

Նորակոչիկը սոցիալական նոր պայմաններում ձեռք է բերում անլիարժեքության բարդույթ, իջնում է նրա ինքնագնահատականը, որը, ի դեպ, մինչ այդ աճել էր գորակոչվելու նախօրյակին, երբ ամեն կողմից խրախուսական և քաջալերիչ ազդակներ էր ստացել, կորցնում է ժամանակի ու տարածության իրական զգացումը, ապրում է վախ, անհանգստություն, ճնշվածություն: Լքվածության, միայնակության զգացումը հանգիստ չի տալիս ծնողներից ու հարազատներից հեռացած նորակոչիկին, որը հայտնվում է ընկճվածության հոգեվիճակում, խորատուզվում մտորումների մեջ, փորձում փորփրել իր ներաշխարհը, գտնել <<քավության նոխագին>>:

Բնական է, որ զինվորական ծառայության վերաբերյալ նորակոչիկի նախնական պատկերացումները չեն արտացոլում բանակային կյանքի ողջ բազմազանությունը: Հարմարման խնդիրը մնում է ակտուալ այնքան ժամանակ, մինչև պատանին անձնապես կվերապրի բոլոր ծառայողական <<հաճույքները>>, գործունեության պայմանները կընկալի իբրև սովորական, բնականոն պայմաններ:

Հատկանշական է, որ բանակային ողջ նիստուկացր կարծես հատուկ մշակված է այնպես, որ գորակոչված պատանին ստիպված լինի արմատապես փոխել կյանքի ու վարքի նախկին մոդելը, հրաժարվի սովորույթներից, կատարի նոր դերեր: Բանակում ծառայություն անցած տղաներից շատերը կվկայեն, որ

զինվորական կանոնադրությունների մի շարք պահանջներ ու հրամաններ նորակոչիկին թվում են ավելորդ ու ձևական (օրինակ, ինչո՞ւ ասել «ճի՛շտ այդպես», եթե կարելի է՝ «այո՛», կամ ինչո՞ւ ասել «լսու՛մ եմ», երբ սովորաբար ասում ենք՝ «եղավ» և այլն): Այս հողի վրա առաջանում են թյուրիմացություններ ու հակասություններ: Նորակոչիկին թվում է, թե հրամանատարները հատկապես ի՛ր հանդեպ են բժախնդիր, և նրանց բոլոր գործողությունները գնահատում է որպես ազրեսիա իր նկատմամբ: Շատերն էլ, եթե նույնիսկ ծառայության նկատմամբ ունենում են դրական կողմնորոշում, ձգտում են լինել կատարողական, սակայն անհաջողության են մատնվում, որովհետև դեռևս անվարժ են ու «անտաշ»։ Անքնություն, վարժանքներ, գորավարժություններ, զենքի խնամք, անվանականչեր, ստուգումներ... կարգին հանգիստ չկա, ամենուրեք շա՛րք, շա՛րք: Ամեն քայլափոխի լսվում են արգելոդ ու սաստող հրահանգներ՝ «չի՛ կարելի», «սխա՛լ ես կատարում», «ճի՛շտ չե՛ս դիմում», «համազգեստդ ուղղի՛ր» և այլն: Պատանիների մի մասն էլ կոնֆլիկտներ է ունենում՝ կանոնադրական պահանջները վատ յուրացնելու պատճառով: Առաջացած լարվածության հետևանքով շատերը թույլ են տալիս վրիպումներ ու զանցանքներ, դրսևորում շեղվող վարք: Այստեղ պետք է նկատել, որ երբեմն մեկը մյուսի նկատմամբ փոխադարձ պահանջներ են ներկայացնում անգամ իրենք՝ նորակոչիկները: Պատճառն այն է, որ նրանք դեռևս չեն հասցրել լիարժեք ներգրավվել խմբային դինամիկային, չեն ստանձնել իրենց հստակ դերակատարությունը խմբում, ուստի որոշակի ակտիվություն են հանդես բերում՝ կայանալու և ինքնահաստատվելու համար, ինչը կարող է տեղի ունենալ ծառայակից ընկերների շահերի հաշվին:

Գտնվելով լարվածության վիճակում՝ պատանին առաջին շաբաթներին ֆիզիկապես ու հոգեպես ուժասպառ է լինում: Նրանց միայն 20 տոկոսն է մերվում նոր խմբին, կայուն կապեր հաստատում: «Կոմունիկատիվ քաղցր», երբ դեռևս չկան վստահելի ընկերներ, ստիպում է, որպեսզի նորակոչիկը սեփական մտքերի, տպավորությունների մասին կիսվի միայն հարազատների, նախկին ընկերների հետ: Ահա թե ինչու ծառայության առաջին մի քանի օրերին նորակոչիկը նոր միջավայրում փնտրում է իր համերկրացիներին, ձգտում կապեր հաստատել նրանց հետ: Միաժամանակ նա ուշադիր հետևում է «հին, հեղինակավոր» զինվորների վարքին՝ ձգտելով գտնել նմանակման սուբյեկտ, որին կրկնօրինակելով, իր կարծիքով, կարելի է լավ զինվոր դառնալ: Մինչդեռ «հին ծառայողներին» իրականում «ձեռնտու է» նորակոչիկներին որպես այդպիսին ընկալելը, քանի որ իրենց հարաբերական կարգավիճակը զգալիորեն բարձրանում է. նրանք թոթափում են «նորակոչիկի խարանք»:

Նորակոչիկներից շատերին թվում է, թե իրենց բախտը չի բերել, որովհետև ուրիշ զորամասերում ավելի լավ է: Նույնիսկ եթե տվյալ ստորաբաժանման հրամանատարը փորձառու է և հոգատար, միևնույն է, նորակոչիկին թվում է, թե այդ հոգատարությունը շինծու է, հատուկ մշակված՝ իրեն «կոտրելու» և

ենթարկելու նպատակով: Օրինակ, հրամանատարի կողմից կիրառվող միանգամայն անմեղ <<տղա ջան>>-ը նորակոչիկի կողմից կարող է դիտարկվել որպես վիրավորական ու նսեմացուցիչ արտահայտություն՝ ուղղված իր արժանապատվության ստորացմանը:

Չնայած սոցիալական գործոնների բազմազանությանը՝ այնուամենայնիվ, դժվար հարմարման իրական հիմքը **հոգեֆիզիոլոգիական** է՝ որպես սթրեսային հակազդեցություն: Սթրեսային խանգարումն անհատական վիճակ է՝ մակաձված այն պայմաններից, որոնք նորակոչիկի կողմից ընկալվում են որպես արտակարգ: Նրա ախտանիշների համակազմը նույնպես անհատական է և ունի արտահայտման բազմազան ձևեր: Ահա դրանց ոչ լրիվ ցանկը՝ ըստ ռուս հայտնի ռազմական հոգեբան Ժ. Սենկոսովի [5].

- գրգռվածություն, ագրեսիվություն՝ չնչին առիթներով, օրինակ՝ բարձր ձայնից,
- հակակրանք, հետաքրքրության կորուստ, անտարբերություն,
- անհանգստություն, քնի խանգարում, սևեռուն մտքեր, վերահսկման կորուստ,
- անիմաստ գործողություններ, կենտրոնանալու անկարողություն,
- վերջույթների թուլություն, կատատոնիկ սինդրոմ,
- ախորժակի կորուստ, մարսողության խանգարումներ,
- գերհոգնածություն, ճնշվածություն (դեպրեսիա), հոռետեսություն,
- հիշողության վատթարացում,
- գիշերամիզություն (էնուրեզ),
- խոսքի խանգարումներ, մտածողության մակերեսայնություն,
- տրամադրության անկումներ կամ չպատճառաբանված էֆորիա,
- ինքնամեղադրման հակում, սուիցիդալ մտքեր,
- ջերմաստիճանային ռեժիմի խանգարումներ,
- ինքնամեկուսացում, մտասնեռման վիճակ, հիվանդ երևակայություն,
- ալկոհոլ, թմրանյութեր օգտագործելու հակում:

Սթրեսային ախտանիշները կարող են տարածվել ողջ խմբում՝ առաջ բերելով դասալքություն, համագործակցելու անընդունակություն, հրամանների չկատարում, անփութություն, վիճաբանություններ, բարոյական դեգրադացիա:

Որքան էլ հրամանատարները ջանքեր գործադրեն, հարմարման հոգեբանական խնդիրը յուրաքանչյուր նորակոչիկ պետք է լուծի ինքնուրույն՝ ծառայության որոշակի ժամկետ ձեռք բերելուն զուգընթաց՝ իր հարմարվողական հնարավորությունների սահմաններում ու հավակնությունների մակարդակի համաձայն: Սակայն դա տեղի է ունենում ուշացումով և միայն այն ժամանակ, երբ հիմնախնդիրը էականորեն կորցնում է իր սրությունը:

Այսպիսով, հոգեբանական ասպեկտով զինվորական ծառայությանը դժվար հարմարվելու հիմքը փոփոխվող միջավայրի սթրեսաձին գործոնների անխուսափելի ազդեցությունն է նորակոչիկի հոգեբանության վրա: Անձը զինծառայության պայմաններում որոշակիորեն զրկվում է յուրահատուկ

հատկանիշների ազատ դրսևորման հնարավորությունից: Ոչ կամավորականության հիմունքով բանակ գորակոչված նորակոչիկը հարմարման համընդհանուր-պարտադիր բնույթի, նրա սոցիալական բարձր արժեքի ու որպես դրա հետևանք՝ անձնային ազատությունների սահմանափակման, վարքային ձևերի, ընդունված արժեքների փոփոխման արդյունքում ներքուստ ընդդիմանում է միջավայրի արագ փոփոխման դեմ, գործարկվում է նրա անձի <<անհաջողությունից խուսափելու>> մոտիվացիոն ասպեկտը:

Գրականություն

1. **Քոուփլենդ Ն.**, Հոգեբանությունը և զինվորը: Եր., «Լուսակն» հրատ., 2007թ., 141 էջ:
2. Հայրենիք և ծառայություն. հեղ. կոլ.: Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2001թ., 576 էջ:
3. **Յարամիջյան Վ.** «Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները». հոգեբ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ԵՊՄՀ գրադարան, 2009թ., 157 էջ:
4. Ռազմական սոցիոլոգիա, հեղ. կոլ., Երևանի պետ. համալսարան, 2005թ., 232 էջ:
5. **Сенокосов Ж. Г.**, Социально-психологическая адаптация молодых солдат к военной службе. ВПА, 1990г., 264с.

**Հոդվածը տպագրության է երաշխավորել
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:**

ՀՏԴ 173

Հոգեբանություն

Անի ԱՎԱԳՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
E-mail: animavagyan@yahoo.com*

Կարինե ՀԱԿՈԲՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
E-mail: karinka1998.hakobyan@mail.ru*

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԿՈՆՖԼԻԿՏԱՑԻՆ ՎԱՐՔԻ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում հեղինակներն անդրադառնում են ամուսինների կոնֆլիկտային վարքի և նրանց արժեհամակարգի փոխկապակցվածության հիմնախնդրին: Իրականացված փորձարարական հետազոտության արդյունքում նրանք հանգում են այն եզրակացության, որ կանանց շրջանում կոնֆլիկտային վարքի ավելի շատ հանդիպող ձևը կոնֆլիկտային իրավիճակներից խուսափումն է, իսկ տղամարդկանց մոտ՝ համագործակցությունը և փոխզիջումը: Պարզվել է նաև, որ ամուսինների շրջանում կոնֆլիկտային վարքի հակվածության վրա ավելի շատ ազդեցություն ունեն հետևյալ արժեքները՝ սերը, դաստիարակությունը, կամքի ուժը, ինքնատիրապետումը, հանդուրժողականությունը, ընտանեկան ուրախ կյանքը, այսինքն, կարող ենք ասել, որ ամուսինների կոնֆլիկտային վարքի հիմքում ընկած են նաև նրանց արժեհամակարգի առանձնահատկությունները: **Բանալի բառեր՝ արժեհամակարգ, կոնֆլիկտային վարք, տերմինալ արժեքներ, գործիքային արժեքներ, կամքի ուժ, հանդուրժողականություն:**

Ա.Աვაգյան, Կ.Առոյան

ВЗАИМОСВЯЗЬ КОНФЛИКТНОГО ПОВЕДЕНИЯ И СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ СУПРУГОВ

В статье авторы обращаются к проблеме конфликтного поведения супругов и взаимосвязи их ценностей. Экспериментальные исследования показали, что наиболее распространенной формой конфликтного поведения у женщин является избегание конфликтных ситуаций, а у мужчин сотрудничество и компромисс. Выяснилось, что следующие ценности, любовь, воспитание, сила воли, самообладание, толерантность, счастливая семейная жизнь, имеют большое влияние на склонность к конфликтному поведению супругов. То есть можно сказать, что конфликтное поведение супругов основано на особенностях их системы ценностей.

Ключевые слова: *система ценностей, конфликтное поведение, терминальные ценности, инструментальные ценности, сила воли, толерантность.*

A. Avagyan, K. Hakobyan

THE CORRELATION BETWEEN THE CONFLICTING BEHAVIOR AND THE VALUE SYSTEM OF THE SPOUSES

In this article, the authors address the issue of spouses' conflicting behavior and the interconnectedness of their values. Experimental research has shown, that the most common form of conflict behavior among women is avoidance of conflict situations, and among men, cooperation and compromise. It was also found, that the following values have a greater influence on the tendency of conflicting behaviors among spouses. love, upbringing, willpower, self-control, tolerance, happy family life. We can say, that the conflicting behavior of spouses is based on the peculiarities of their value system.

Key words: *value system, conflict behavior, terminal values, instrumental values, willpower, tolerance.*

Հայտնի է, որ ամուսինների փոխհարաբերություններում իրենց մեծ տեղն ունեն կոնֆլիկտային իրավիճակները, որոնք հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակներում առավել ցայտուն դրսևորումներ են ստանում: Կոնֆլիկտային իրավիճակների դրսևորման վրա ազդող գործոն կարող է հանդիսանալ նաև ամուսինների արժեքային համակարգը: Կոնֆլիկտների առաջացման պատճառները տարբեր են, տարբեր են նաև դրանց լուծման ուղիները՝ պայմանավորված ամուսինների ինտելեկտուալ և կրթական մակարդակով, պատկերացումներով, մտածելակերպի առանձնահատկություններով, արժեքային համակարգի յուրահատկություններով և այլն:

Ամուսնական կոնֆլիկտների վերաբերյալ ուսումնաիրություններ իրականացվել են մի շարք գիտնականների կողմից, որոնց աշխատանքներում սկսել է ձևավորվել կոնֆլիկտի հիմնախնդիրը: Կարելի է նշել այնպիսի հետազոտողների, ինչպիսիք են Յու.Ա. Եվգաֆարովան, ով ամուսնական կոնֆլիկտները համարում է փոխադարձ բացասական հարաբերություններ, որոնք առաջանում են, երբ բախվում են ամուսինների հակասական դիրքորոշումները, նպատակները, հայացքները, իդեալները, գաղափարները

կոնկրետ առարկայի կամ իրավիճակի վերաբերյալ¹, և Վ.Ա. Միսենկոն, ով ամուսնական կոնֆլիկտները նկարագրում է որպես շահերի, կարիքների, հայացքների, գաղափարների բախում²:

Արժեհամակարգի վերաբերյալ տեսական մոտեցումներ են առաջարկել Մ.Ռոկիչը, ով իր տեսության մեջ նշում է, որ արժեքները «հաստատ համոզմունք են, որ գործողության որոշակի եղանակ կամ կյանքի որոշակի նպատակներ առավել նախընտրելի են անհատի և հասարակության համար, քան գործունեության այլ ձևերը կամ այլ վերջնական նպատակները» (Ռոկիչ, 1969): Շ. Շվարցի և Վ. Բիլսկու տեսության մեջ դիտարկվում են արժեքների միջև դինամիկ հարաբերությունները: Նրանց կարծիքով, բոլոր մոտիվացիոն տիպերը և հետևաբար, անձի արժեքները կարող են լինել համատեղելի կամ հակասական հարաբերությունների մեջ: Հենց այս հարաբերություններն են կազմում անհատի կամ խմբի արժեքային կառուցվածքը³:

Արժեհամակարգը դինամիկ համակարգ է, որը ձևավորվում է դաստիարակության սոցիալականացման ողջ ժամանակահատվածում՝ առաջատար դեր խաղալով որոշումների կայացման գործընթացում՝ թույլ տալով որոշել, թե ինչն է էական և կարևոր մարդու համար ընտանեկան կյանքում:

Ի. Կրասիվկան գտնում է, որ «ընտանիքի արժեքային կողմնորոշումների համակարգը կայուն չէ նրա ողջ կյանքի ցիկլի ընթացքում: Ընտանեկան ընդհանուր արժեքները միշտ չէ, որ ներառում են ամուսիններից յուրաքանչյուրի արժեքային կողմնորոշումները: Ընտանիքում անհատների արժեքային կողմնորոշումների շրջանակը կարող է ավելի լայն լինել, քան ամբողջ ընտանիքինը: Որքան լայն է ամուսնության անհատական արժեքների շրջանակը, այնքան ավելի շատ է փոխըմբռնումը միմյանց միջև»⁴:

Մեր կարծիքով, ամուսինների կոնֆլիկտային վարքի հաղթահարման գործում կարևոր դեր կարող է ունենալ անձնավորության արժեհամակարգը, կոնֆլիկտային հարաբերությունների կարգավորման գործում արժեհամակարգի դերի և նշանակության նրբերանգների բացահայտումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ամուսնական զույգերի արժեքային համակարգի և կոնֆլիկտային վարքի դրսևորման ձևերի համահարաբերակցությունը:

¹ *Евграфова Ю.А., Влияние социально-экономических условий на формирование супружеских конфликтов // Омский научный вестник. 2007. №6 (62). С 123-126.*

² *Сысенко А.В., Супружеские конфликты. М.: Финансы и статистика. 2008. 342 с.*

³ *Психология ценностей : учебное пособие / Ж. В. Горькая. – Самара : Изд-во «Самарский университет», 2014. – 92 с.*

⁴ *Теория и практика общественного развития (2010, № 4)- Крапивка Ирина Анатольевна- ценностные ориентации в семейной жизни-ст.51-54.*

Վերոհիշյալ նպատակի իրականացման համար մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանական գիտական գրականության մեջ առկա հիմնական տեսական մոտեցումներն ու հայեցակետերը,

2. կատարել ընտանիքի, ընտանեկան կոնֆլիկտների վերաբերյալ տեսամեթոդական վերլուծություն,

3. փորձարարական հետազոտությամբ պարզել ամուսինների կոնֆլիկտային վարքի դրսևորման ձևերի և արժեհամակարգի համահարաբերակցությունը:

Հետազոտության հիմքում ընկած են՝ Մ. Ռոկիչի «Մարդկային արժեքների բնույթի» տեսությունը, Շ.Շվարցի և Ու.Բիլսկու «Համընդհանուր բովանդակության և արժեքների կառուցվածքի» տեսությունը, Ա.Անցուպովի և Ա.Շիպիլովի՝ հոգեբանության մեջ կոնֆլիկտի ուսումնասիրության հայեցակարգերը:

Ամուսինների կոնֆլիկտային վարքի և արժեհամակարգի համահարաբերակցության ուսումնասիրման նպատակով մեր կողմից իրականացվել է փորձարարական հետազոտություն:

Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են 22 ամուսնական զույգեր, ընդհանուր առմամբ՝ 44 հետազոտվող, որոնք ունեն 3-15 տարվա համատեղ ամուսնական կյանքի փորձ:

Հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառվել են դիտման, հարցազրույցի և թեստավորման մեթոդները:

Օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորվել է ընտրված մեթոդոլոգիական հիմքերով և ուսումնասիրության առարկայով: Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները. մեթոդների համարժեքությունը (վալիդությունը) մեր ուսումնասիրության խնդիրներին, համապատասխանությունը հետազոտության տրամաբանական կառուցվածքին, միասնականությունը՝ մեթոդոլոգիական նույն համակարգում ընտրված մյուս մեթոդների հետ: Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները.

Ս. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկան, անձնավորության արժեքային կողմնորոշումների բացահայտման նպատակով¹:

Ս. Թոմասի «Կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» մեթոդիկան, կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման նպատակով²:

¹ Психологические тесты для профессионалов/ авт. Сост Н.Ф. Гребень. – Минск: Соврем. Шк., 2007. – 496с.

² Рогов Е.И., Настольная книга практического психолога.М.: Владос, 2001.С.63-66.

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով.

1-ին փուլում իրականացվել է առարկայի և օբյեկտի ընտրություն, խնդիրների որոշակիացում, հետազոտության իրականացման համար մեթոդների և մեթոդիկանների ընտրություն,

2-րդ փուլում իրականացվել է գույգերի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշում, արժեքային կողմնորոշման և կոնֆլիկտային իրավիճակներում ամուսինների փոխազդեցության բնութագրերի ուսումնասիրում,


3-րդ փուլում կատարվել է արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական մշակում և ստացված տվյալների որակական վերլուծություն:

Արդյունքների մաթեմատիկական վիճակագրական մշակման արդյունքում Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի կիրառման արդյունքում պարզ դարձավ, որ մեր հետազոտվողների 95,4%-ի մոտ տերմինալ արժեքներից առաջնային կարևորագույն արժեք է համարվում սերը, այսինքն՝ հոգևոր և ֆիզիկական մտերմությունը սիրելիի հետ, իսկ 4,5%-ի մոտ այն համարվում է չեզոք արժեք:

Մյուս կարևորագույն արժեքը համարվում է ֆիզիկական և մտավոր առողջությունը, նյութական խնդիրների բացակայությունը, այսինքն՝ նյութապես ապահովված կյանքը, մեր հետազոտվողների 88,6%-ի մոտ այն նշանակալի արժեք է, 9,09%-ի մոտ՝ չեզոք արժեք, իսկ 2,2%-ի մոտ՝ աննշան արժեք:

Ընտանիքը մարդու համար առաջին հերթին տուն է իր հասկացողությամբ, երբ այն լի է հարազատներով ու սիրելիներով, որտեղ կարող ես մխիթարություն և աջակցություն գտնել, որտեղ բոլորը սիրում են քեզ և հոգ են տանում քո մասին: Այս ամենից ելնելով մեր հետազոտվողների մոտ մյուս կարևորագույն արժեքը ընտանեկան ուրախ կյանքն է, այն 54,5%-ի մոտ կազմում է նշանակալի արժեք, 25%-ի համար՝ չեզոք արժեք, իսկ 20,4%-ի համար՝ աննշան արժեք:

Կյանքի իմաստությունը՝ դատողությունների հասունությունն ու ողջախոհությունը, որոնք ձեռք են բերվել կյանքի ընթացքում, հետազոտվողների 43,1%-ի մոտ նշանակալի արժեք են համարվում, 36,3%-ի մոտ՝ չեզոք արժեք, իսկ 15,9%-ի մոտ՝ աննշան արժեք:




Գծապատկեր 1. Ռոկիչի «արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի տերմինալ նշանակալի արժեքներ

Մշակված արդյունքների մյուս խումբը Ռոկիչի «արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի գործիքային արժեքներն են, որոնց վերլուծությունից պարզ դարձավ, որ մեր հետազոտվողների մոտ առաջնային արժեք է համարվում դաստիարակությունը՝ լավ վերաբերմունքը, ընդունված նորմերին համապատասխան գործելու ունակությունը, որը հետազոտվողների 77,2%-ի մոտ նշանակալի և առաջնային արժեք է համարվում, 9,09%-ի մոտ՝ չեզոք արժեք, իսկ 13,6%-ի մոտ՝ աննշան արժեք:

Կոկիկությունը, ճշգրտությունը, այսինքն՝ մաքրությունը, իրերը լավ պահելու ունակությունը, գործերի կատարման մեջ հստակությունը 68,1%-ի մոտ նշանակալի արժեք է, 25%-ի մոտ՝ չեզոք, իսկ 6,8%-ի մոտ՝ աննշան արժեք, իսկ ազնվությունը՝ ճշմարտացիությունը և անկեղծությունը, հետազոտվողների 54,5%-ի մոտ նշանակալի արժեք է, 34,09%-ի մոտ՝ չեզոք արժեք, իսկ 11,3%-ի մոտ՝ աննշան արժեք:

Գործիքային արժեքներում մեր հետազոտվողների մոտ առաջնային արժեքներ են համարվում նաև աշխատասիրությունը՝ 50%-ի մոտ նշանակալի արժեքով, 34,09%-ի մոտ՝ չեզոք, իսկ 15,9%-ի մոտ՝ աննշան արժեք, և պատասխանատվությունը՝ պարտքի զգացումը, սեփական խոսքը պահելու կարողությունը, որը 45,4%-ի մոտ նշանակալի արժեք է, 34,09%-ի մոտ՝ չեզոք, 20,04%-ի մոտ՝ աննշան արժեք:



Գծապատկեր 2. Ռոկիչի «արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի գործիքային նշանակալի արժեքներ

Այսպիսով, վերլուծելով Ռոկիչի «արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի արդյունքները, կարող ենք ասել, որ մեր հետազոտվողների կյանքում կարևոր և առաջնային արժեքներ են սերը, ընտանեկան ուրախ կյանքը, կյանքի իմաստությունը, նյութապես ապահովված կյանքը, որոնց պահպանման համար կարևոր է առողջությունը:

Թումասի «կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» մեթոդիկայի վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ կոնֆլիկտային իրավիճակներում, վարքի ավելի շատ դրսևորվող ձևը կոնֆլիկտային իրավիճակներից խուսափումն է, որը կին հետազոտվողների մոտ կազմում է 30,6%-ը, իսկ տղամարդկանց շրջանում խուսափումը կազմում է 27%: Խուսափումը կոնֆլիկտից նվազագույն գնով դուրս գալու փորձ է: Այն տարբերվում է կոնֆլիկտի ժամանակ վարքագծի նմանատիպ ռազմավարությունից նրանով, որ հակառակորդն անցնում է դրան՝ ակտիվ ռազմավարությունների միջոցով իր շահերն իրացնելու անհաջող փորձերից հետո: Իրականում խոսակցությունը ոչ թե լուծելու, այլ հակամարտության թուլացման մասին է:

Մյուս դրսևորվող վարքի ձևը զիջողականությունն է, որը դրսևորվում է կին հետազոտվողների 29,6%-ի մոտ, սակայն տղամարդկանց մոտ այս ցուցանիշը այդքան էլ բարձր տեղում չի գտնվում: Այն դրսևորվում է տղամարդկանց 24,8%-ի մոտ: Զիջողականությունը դիտվում է որպես կոնֆլիկտից հարկադիր կամ կամավոր հրաժարում և սեփական դիրքերի հանձնում: Տարբեր դրդապատճառներ հակառակորդին ստիպում են որդեգրել նման ռազմավարություն՝ սեփական սխալի գիտակցումը, հակադիր կողմի հետ լավ հարաբերություններ պահպանելու անհրաժեշտությունը, նրանից ուժեղ կախվածությունը: Բացի այդ, կոնֆլիկտից դուրս գալու նման ելքը պայմանավորված է պայքարի ընթացքում ստացված զգալի վնասով, էլ ավելի լուրջ բացասական հետևանքների սպառնալիքով, այլ արդյունքի հնարավորությունների բացակայությամբ և երրորդ կողմի ճնշումներով:


Փոխզիջումը կայանում է նրանում, որ հակառակորդները ցանկանում են ավարտել հակամարտությունը մասնակի զիջումներով: Այն բնութագրվում է նախկինում առաջադրված որոշ պահանջների մերժմամբ, մյուս կողմի պահանջները մասամբ հիմնավորված ճանաչելու և ներելու պատրաստակամությամբ: Այս ցուցանիշը կին հետազոտվողների 27%-ի մոտ է դրսևորվում, իսկ տղամարդկանց շրջանում՝ 26,6%-ի մոտ: Փոխզիջումն արդյունավետ է հետևյալ դեպքերում. գույգերից մեկը հասկանում է, որ ինքն ու դիմացինը հավասար հնարավորություններ ունեն: Այսօր փոխզիջումը հակամարտությունների դադարեցման ամենատարածված ռազմավարությունն է:

Դրսևորվող վարքի հաջորդ ձևը հակամարտությունն է, որը դրսևորվում է կին հետազոտվողների 23,8%-ի մոտ, իսկ տղամարդկանց շրջանում՝ 24,2%-ի մոտ: Հակամարտությունը կայանում է նրանում, որ մյուս կողմին նախընտրելի լուծում պարտադրվի:

Համագործակցությունը կին հետազոտվողների մոտ ամենաքիչ դրսևորվող ձևն է կոնֆլիկտներում, այն դրսևորվում է կին հետազոտվողների 22,2%-ի մոտ, իսկ տղամարդկանց շրջանում՝ 27,6%-ի մոտ, այսինքն՝ կարող ենք ասել, որ

տղամարդկանց մոտ կոնֆլիկտներում համագործակցությունը ավելի շատ է դրսևորվում: Համագործակցությունը համարվում է հակամարտությունների դեմ պայքարի ամենաարդյունավետ ռազմավարությունը: Այն ենթադրում է, որ հակառակորդները կենտրոնացած են խնդրի կառուցողական քննարկման վրա՝ մյուս կողմին դիտարկելով ոչ թե որպես հակառակորդ, այլ որպես լուծում փնտրող դաշնակից:

Փաստորեն, կանանց շրջանում կոնֆլիկտային վարքի ավելի շատ հանդիպող ձևը խուսափումն է կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ տղամարդկանց մոտ համագործակցությունը և փոխզիջումը:



Գծապատկեր 3. Կ.Թումասի «կոնֆլիկտային վարքի հակվածություն» մեթոդիկայի կոնֆլիկտային վարքի դրևորման ձևերը

Կորելացիոն վերլուծությունը մեզ թույլ տվեց հասկանալ, թե անձնավորության արժեհամակարգը ինչքանով է փոխկապակցված նրա կոնֆլիկտային վարքի հետ: Նշենք, որ ներկայացված բոլոր կորելացիոն ցուցիչներում տվյալ խմբի համար $p < 0,05$:

Ստացվում է, որ կոնֆլիկտային իրավիճակներում անձի համարձակությունը առաջատար է, և հակամարտության մեջ մտնելու առումով պետք է համարձակ լինել սեփական կարծիքը պաշտպանելու համար: Պատահական չէ, որ, հոտագոտվողների մոտ հակամարտությունը գործիքային արժեքներից՝ համարձակության ($r=0,336$) հետ համահարաբերակցային դրական միջին կապի մեջ է:

Մյուս կոնֆլիկտային վարքի ձևը համագործակցությունն է, որը տերմինալ արժեքներից հետաքրքիր աշխատանքի ($r=0,295$), բնության և արվեստի գեղեցկության ($r=0,268$), լավ և հավատարիմ ընկերներ ունենալու ($r=0,250$) հետ համահարաբերակցային դրական թույլ կապի մեջ է, իսկ նյութական խնդիրների բացակայության ($r=-0,299$) հետ այն ունի համահարաբերակցային բացասական թույլ կապ: Ստացվում է, որ համագործակցությունը՝ իբրև վարքի ձև, անձի մոտ ձևավորվում և կայուն դրսևորում է ստանում այն դեպքում, երբ առկա է

հետաքրքիր աշխատանքը, անձը գնահատում է իրեն շրջապատող գեղեցիկն ու դրականը և շրջապատված է լավ ու հավատարիմ ընկերներով, իսկ նյութական խնդիրների բացակայության հետ դրսևորված բացասական կապը խոսում է այն մասին, որ որքան շատ են նյութական խնդիրները, այնքան անձնավորության համար ավելի բարդ է շրջապատի հետ համագործակցության դրական եզրեր գտնել: Սա կարող է պայմանավորվել նաև նրանով, որ անձը նյութական ապահովվածության մակարդակը հաճախ դիտում է որպես շրջապատում ինքնադրսևորվելու, իրեն ավելի վստահ ու ապահով զգալու կարևոր գործոն, իսկ դրա բացակայության պայմաններում համագործակցության հնարավորությունները փոքրանում են:

Կոնֆլիկտային իրավիճակներում համագործակցելու համար պետք է ունենալ կամքի ուժ ($r=0,353$), դաստիարակություն ($r=0,338$), լավ վերաբերմունք, ընդունված նորմերին գործելու ունակություն: Պատահական չէ, որ այս գործիքային արժեքները համագործակցության հետ համահարաբերցային դրական միջին կապի մեջ են, իսկ ռացիոնալիզմի ($r=0,209$), առողջ և տրամաբանական մտածողության, մտածված ռացիոնալ որոշումներ կայացնելու կարողության հետ՝ համահարաբերակցային դրական թույլ կապի մեջ: Ինչպես երևում է ստացված արդյունքներից, համագործակցելու կարողությունը՝ իբրև անձի վարքային դրսևորում, կախված է մի շարք կարևոր գործոններից:

Փոխզիջումը արժեքներից զարգացման ($r=0,274$), հաճույքների ($r=0,249$) և ազատության ($r=0,240$) հետ համահարաբերակցային դրական թույլ կապի մեջ է: Փոխզիջումը երկու գործընկերների միջև պայմանավորվածություն է, համաձայնություն, որը միավորում է երկու կողմերի ցանկություններն ու կարիքները: Փոխզիջումը համահարաբերակցային դրական միջին ($r=0,320$) կապի մեջ է գիտելիքի հետ: Ստացվում է, որ որքան շատ են խնդրի վերաբերյալ անձնավորության գիտելիքները, այնքան ավելի մեծ է տվյալ հարցի շուրջ փոխզիջման հասնելու հնարավորությունը: Մի կողմից՝ անձնավորությունն իր գիտելիքներն օգտագործում է փոխզիջման հասնելու համար, մյուս կողմից՝ խնդրի վերաբերյալ հարուստ գիտելիքներով զինված անձը շրջապատի աչքում փորձագետի կարգավիճակ է ստանում, որի կարծիքի հետ դժվար է չհամաձայնել:

Յուրաքանչյուր անձ ձգտում է զուգընկերոջ հետ անկեղծ և կայուն հարաբերությունների: Եթե ընտանիքում սեր կա, կոնֆլիկտներից խուսափումն ավելի հեշտությամբ է ստացվում: Խուսափումը սիրո հետ համահարաբերակցային դրական միջին կապի մեջ է ($r=0,459$): Խուսափումը փոխկապակցված է նաև ընտանեկան ուրախ կյանքի հետ ($r=0,442$), այսինքն՝ պետք է հնարավորինս զերծ մնալ կոնֆլիկտներից, լինել փոխզիջող միմյանց նկատմամբ, ուրախ ընտանեկան առողջ մթնոլորտ ունենալու համար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ կոնֆլիկտային իրավիճակներում վարքի ձևերը, համահարաբերակցային դրական միջին ուժգնության կապերի մեջ են մի քանի արժեքների հետ, դրանք են՝ սերը, դաստիարակությունը, ընտանեկան ուրախ կյանքը, կամքի ուժը, ինքնատիրապետումը, հանդուրժողականությունը:

Կ. Թումասի «կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» մեթոդիկայի կորելացիոն վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ համագործակցությունը փոխզիջման ($r=-0,280$), և խուսափման ($r=-0,260$) հետ համահարաբերակցային բացասական թույլ կապի մեջ է, իսկ զիջողականության ($r=-0,369$) հետ՝ համահարաբերակցային բացասական միջին կապի մեջ, ինչը շատ բնական է, քանի որ կոնֆլիկտային իրավիճակների ակտիվ փուլում անձնավորությունը չի կարող զիջողականություն կամ խուսափողականություն դրսևորել:

Համագործակցությունը խուսափման ($r=0,317$) հետ համահարաբերակցային դրական միջին կապի մեջ է, իսկ զիջողականության ($r=0,268$) հետ՝ համահարաբերակցային դրական թույլ կապի մեջ, այսինքն, եթե անձնավորությունը կոնֆլիկտային իրավիճակներից խուսափող է և զիջող, ուրեմն կոնֆլիկտային իրավիճակներում համագործակցությունը ավելի հեշտ է իրականանում: Համագործակցությունը հակամարտության ($r=-0,367$) հետ՝ համահարաբերակցային բացասական միջին կապի մեջ է:

Խուսափումը հակամարտության ($r=-0,260$) հետ համահարաբերակցային բացասական թույլ կապի մեջ է, իսկ համագործակցության ($r=0,317$) հետ համահարաբերակցային դրական միջին կապի մեջ:

Ամփոփելով հետազոտության տեսական և փորձարարական վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ կանանց շրջանում կոնֆլիկտային վարքի ավելի շատ հանդիպող ձևը խուսափումն է կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ տղամարդկանց մոտ՝ համագործակցությունը և փոխզիջումը:

Ամուսինների շրջանում կոնֆլիկտային վարքի հակվածության վրա ավելի շատ ազդեցություն ունեն հետևյալ արժեքները՝ սերը, դաստիարակությունը, կամքի ուժը, ինքնատիրապետումը, հանդուրժողականությունը, ընտանեկան ուրախ կյանքը, այսինքն, կարող ենք ասել, որ ամուսինների կոնֆլիկտային վարքի հիմքում ընկած են նաև նրանց արժեհամակարգի առանձնահատկությունները:

Գրականություն

1. **Евграфова Ю.А.**, Влияние социально-экономических условий на формирование супружеских конфликтов // Омский научный вестник. 2007. №6 (62). С 123-126.
2. Психология ценностей : учебное пособие / Ж. В. Горькая. – Самара : Изд-во «Самарский университет», 2014. – 92 с.
3. Психологические тесты для профессионалов/ авт. Сост Н.Ф. Гребень. – Минск: Соврем. Шк., 2007. – 496с.
4. **Рогов Е.И.**, Настольная книга практического психолога. М.: Владос, 2001. С.63-66.
5. **Сысенко А.В.**, Супружеские конфликты. М.: Финансы и статистика. 2008. 342 с.
6. Теория и практика общественного развития (2010, № 4)- Крапивка Ирина Анатольевна- ценностные ориентации в семейной жизни - ст. 51-54.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Կ.Գ.Թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 173

Հոգեբանություն

Անի ԱՎԱԳՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
E-mail: animavagyan@yahoo.com*

Մարիետա ՔԵՐԻՄՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի
ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
E-mail: qerimyan1999@mail.ru*

**ԶՈՒՅԳԵՐԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ
ԴԵՐԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հնդկաժուրմ հեղինակներն անդրադառնում են ամուսնա-
ընտանեկան դերերի բաշխման վրա գույգերի բնավորության
ազդեցության խնդրին: Իրականացված հետազոտության
ընթացքում պարզվել է, որ բնավորության շեշտվածությունն
ունենում է իր ազդեցությունը միջուկային ընտանիքներում
գույգերի դերերի բաշխման առանձնահատկությունների վրա:
Մասնավորապես, **հիպերթիմ** տիպը ստանձնում է բոլոր
դերերը բացի երեխաների դաստիարակությունից և ժամանակը
կազմակերպողի դերերից: **Տազնասպային** տիպը ստանձնում է
երեխաների դաստիարակության, հուզական մթնոլորտի,
ընտանիքի ենթամշակույթի կազմակերպողի դերերը: **Էմոտիվ**
տիպին բնորոշ է ընտանիքի հուզական մթնոլորտը ստեղծողի,
նյութական աջակցությունը ստանձնողի, երեխաների
դաստիարակության դերերը: **Պեդանտ** տիպին բնորոշ են
սեփականատեր, տիրուհի, ժամանակի կազմակերպողի,
նյութական աջակցություն ցուցաբերողի դերերը: **Էքստրավերտ**
տիպը ստանձնում է ժամանակի կազմակերպողի և երեխաների
դաստիարակության դերերը, իսկ **ինտրովերտ** տիպը
ստանձնում է նաև նյութական աջակցության դերը:

Բնավորության շեշտվածության տիպն անդրադարձնում է նաև ամուսնական բավարարվածության մակարդակի վրա: Յուրաքանչյուր շեշտված տիպ ունի իր առանձնահատկությունները, որոնք ազդում են անձի ընկալման և բավարարվածության վրա:

Բանալի բառեր՝ բնավորություն, բնավորության շեշտվածություն, ամուսնաընտանեկան դերեր, տազնապային տիպ, էմոտիվ տիպ, հիպերթիմ տիպ, պեդանտ տիպ, էքստրավերտ, ինտրովերտ:

А. Авагян, М. Керимян

ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ СУПРУЖЕСКИХ РОЛЕЙ В ЗАВИСИМОСТИ ОТ ХАРАКТЕРА СУПРУГОВ

В данной статье авторы затрагивают вопрос о влиянии характера супругов на распределение супружеских ролей. Исследования показали, что акцентуация характера личности влияет на распределение ролей между парами в нуклеарных семьях. В частности, **гипертимный тип** берет на себя все роли, кроме воспитания детей и роли организатора времени. **Тревожный тип** берет на себя роли воспитателя детей, эмоциональной атмосферы, организатора семейной субкультуры. Для **эмотивного типа** характерны роли создателя эмоциональной атмосферы семьи, обеспечения материальной поддержки и роли воспитания детей. **Педантичному типу** свойственны роли хозяйина, хозяйки, организатора времени, обеспечения материальной поддержки. **Экстравертный тип** берет на себя роль организатора времени и воспитание детей, а **интровертный тип** берет на себя также роль материального обеспечения.

Акцентуация характера личности влияет также на уровень удовлетворенности браком. Каждый тип акцентуации характера имеет свои особенности, влияющие на восприятие человека и на его удовлетворенность.

Ключевые слова: характер, акцентуация характера, супружеские роли, тревожный тип, эмотивный тип, гипертимный тип, педантичный тип, экстраверт, интроверт.

A. Avagyan, M. Kerimyan

PECULIARITIES OF THE DISTRIBUTION OF MARITAL ROLES DUE TO THE CHARACTER OF COUPLES

In this article, the authors address the issue of the influence of couples' character on the distribution of marital roles. Research has shown that character accentuation has an impact on the role distribution of couples in nuclear families. In particular, the **hyperteem type** assumes all the roles except the upbringing of the

children, and the role of the time organizer. The **anxious personality type** assumes the roles of children's upbringing, emotional atmosphere, organizer of the family subculture. The roles of the creator of the emotional atmosphere of the family, the recipient of financial support, the upbringing of children are typical of the **emotional type**. The roles of owner, time organizer, and material support are typical of the **pedantic type**. The **extrovert type** assumes the role of time organizer, the upbringing of children, and the **introvert type** assumes also the role of material support.

Key words: character, character accentuation, marital roles, anxious type, emotional type, hypertime type, pedantic type, extrovert, introvert.

Ընտանիքը մարդկային կյանքի կազմակերպման թերևս ամենակենսունակ և արդյունավետ ձևն է: Ա. Գ. Խարչևն ամուսնությունն առանձնացնում է՝ որպես տղամարդու և կնոջ պատմականորեն փոփոխվող հարաբերությունների սոցիալական ձև, որի հետևանքով հասարակությունը կարգավորում և թույլատրում է նրանց սեռական կյանքը, նրանց ամուսնության հաստատումը, ինչպես նաև ծնողական իրավունքներն ու պարտականությունները¹:

Ընտանիքի դերերի բաշխման առանձնահատկությունների և ներդաշնակության վրա մեծապես ազդում է մարդու բնավորությունը: Բնավորությունը անհատական ինքնատիպ հոգեկան հատկությունների հանրագումար է, որոնք դրսևորվում են անհատի համար բնորոշ գործունեության ձևերում, հայտնվում են տիպական հանգամանքներում և որոշում են այդ հանգամանքների նկատմամբ անձի վերաբերմունքը: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ բնավորությունը մարդու անհատական հատկանիշների հանրագումարն է, որոնցով պայմանավորված է մարդու վերաբերմունքը սեփական անձի և շրջապատողների նկատմամբ, արձագանքները կյանքի ամենատարբեր իրավիճակներում, վարքագիծը, սոցիալական շփումները և այլն²: Այլ կերպ ասած, հենց բնավորության միջոցով է ձևավորվում անհատի կյանքի ողջ ընթացքը, եթե բնավորության որոշակի գծեր շեշտվում են, միջավայրի նկատմամբ անձի վերաբերմունքը փոփոխության է ենթարկվում:

Հոգեբանության մեջ արմատացած են այն պատկերացումները, որ բնավորությունը անձի առավել կայուն կառույցն է, որի հիմքում ընկած են բնածին նախադրյալներ՝ նյարդային համակարգի տիպերը, սակայն

¹ Харчев А. Г., Брак и семья в СССР/А.Г.Харчев.-2.изд., перераб. и доп.-М.:Мысль,1979.-365,с.

² Батаршьева А. В., Темперамент и характер: Психологическая диагностика-СПб Питер 2007., 368, с. 97.

օնտոգենոզում որոշիչ դեր են ունենում դաստիարակությունը և այլ արտաքին գործոններ¹:

Է. Ֆրոմմի սահմանման համաձայն՝ բնավորությունը բնութագրում է որպես փորձի յուրացման և սոցիալականացման ընթացքում մարդու եռանդն ուղղորդող հարաբերականորեն կայուն հատկություն²:

Ս. Կովալյովը հավաստում է, որ բնավորությունը մեծ նշանակություն ունի ոչ միայն անձի, այլև հասարակության համար: Կոլեկտիվ կյանքը և աշխատանքը, առանձնապես յուրաքանչյուր մարդու տրամադրությունը որոշվում են անհատների բնավորության որակով³: Բնավորությունը ձևավորվում է կյանքի ընթացքում, չնայած դրա գլխավոր հատկանիշներն առաջանում են վաղ մանկության շրջանում, իսկ հասունանալուն զուգընթաց ենթարկվում են որոշակի փոփոխությունների⁴: *Բնավորության շեշտվածություն* ասելով հասկանում ենք բնավորության առանձին գծերի չափազանց մեծ արտահայտվածություն: Ս. Ս. Փիլոսյանը նշում է, որ առանձին դեպքերում բնավորության շեշտված գծերը կարող են համարվել խառնվածքի հատկանիշներ: Այդ պատճառով խառնվածքի և բնավորության ուսումնասիրության ժամանակ պետք է ուշադիր կերպով սահմանազատել խառնվածքի առանձնահատկությունները անձի բնավորության այնպիսի գծերից, որոնք ակնհայտորեն համարվում են շեշտված⁵: Ինչպես նշում է Մ. Ի. Ենիկևը, բնավորության շեշտվածությունը ավելի հաճախ դրսևորվում է էքստրեմալ իրավիճակներում: Բնավորության շեշտվածություն ունեցող անձը ավելի շատ է ենթարկվում միջավայրի ազդեցությանը, հոգեբանական տրավմաներին⁶: Ե. Ա. Ալեկսևան առաջ է քաշում այն հանգամանքը, որ բնավորության շեշտվածության զարգացման վրա ազդում են աններդաշնակ ամուսնական հարաբերությունները: Այն դրսևորվում է մրցակցության, կեղծ համագործակցության, մեկուսացման ձևերով: Այս տիպերի հարաբերություններով բնութագրվող ընտանիքներում, որտեղ տիրում է անառողջ մթնոլորտ, բնավորության շեշտվածության դրսևորումը դառնում է ռիսկային⁷:

¹ *Карабанова О.А., Психология семейных отношений и основы семейного консультирования: учебное пособие / О.А. Карабанова. – М.: Владос-Пресс, 2004. – 32 с.*

² *Харчев А. Г., указ. соч. - 365с.*

³ *Ковалев, С.В., Психология современной семьи / С.В. Ковалев. – М. Просвещение, 1988.– 208 с.*

⁴ *Смирнов А. Г., Практикум по общей психологии. М: Изд-во Института психотерапии, 2005, с.169-179.*

⁵ *Փիլոսյան Ս., Ընդհանուր հոգեբանություն, Երևան, «Տիր», 2019թ., էջ 185:*

⁶ *Еникеев М.И., Общая и социальная психология. Учебник для вузов.- Издательская группа НОРМА-ИНФРА,М, 1999.- 208с.*

⁷ *Алексеева Е. А., Выбоицк И. В., Паршукова Л. П., Акцентуация характера: Учебное пособие.- Челябинск: Изд-во ЮУРГУ, 2002.- 45с.*

Ամուսնական դերերի բաշխման և այդ գործընթացի վրա գույգերի բնավորության ազդեցության հիմնահարցի ուսումնասիրությունն առավել արդիական է դառնում, քանի որ մերօրյա հասարակության մեջ ավելի շատ են միջուկային ընտանիքները: Երիտասարդները ձգտում են միայնակ ապրել, և ամուսնաընտանեկան դերերը ավելի հաճախ բաշխվում են հենց միջուկային ընտանիքի ներսում: Այս ամենին զուգահեռ, ավելանում է նաև ամուսնալուծությունների թիվը:

Չպետք է մոռանալ, որ ժամանակակից ընտանիքում յուրաքանչյուր գույգի փորձառությունը անհատական է: Կարևոր է, թե ընտանիքի կառուցվածքի, պարտականությունների բաշխման ինչպիսի նմուշներ են ամուսինները վերցրել ծնողական ընտանիքից, ինչ են նկատում ծանոթ ընտանիքներում: Հաճախ սեփական ընտանիքի կառուցվածքի զարգացումը և ընտանեկան պարտականությունների բաշխումը դառնում է երկար և դժվար գործընթաց: Միևնույն ժամանակ, նրանցից յուրաքանչյուրի ֆունկցիոնալ դերի նշանակման և պարտականությունների վերաբերյալ պատկերացումների հետևողականությունը կախված է միայն ամուսիններից:

Միջուկային ընտանիքներում դերերի բաշխում իրականացվում է՝ ելնելով մի շարք գործոնների ներազդումից: Ենթադրվում է, որ ընտանիքում դերերի բաշխման գործընթացում մեծ ազդեցություն է ունենում ամուսինների բնավորությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել բնավորության շեշտվածության ազդեցությունը միջուկային ընտանիքներում դերերի բաշխման առանձնահատկությունների վրա: Հետազոտության *օբյեկտը* անձի բնավորության առանձնահատկություններն են, բնավորության շեշտված տիպերը և ամուսնաընտանեկան դերերը: Հետազոտության *առարկան* բնավորությամբ պայմանավորված ամուսնաընտանեկան դերերի բաշխումն է:

Ենթադրվում է, որ անձի բնավորությունն ազդում է ամուսնաընտանեկան դերերի բաշխման առանձնահատկությունների և ընտանեկան ներդաշնակության վրա: Ենթադրվում է, որ ամուսնաընտանեկան դերերի ստանձնման առումով առավել ակտիվ են տազնապային, *հիպերթիմ* և *պեդանտ* տիպերը:

Հետազոտության նպատակից և վարկածից ելնելով՝ մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

1. վերլուծել անձի բնավորության և ամուսնաընտանեկան դերերի բաշխման վերաբերյալ հոգեբանական գիտական գրականության մեջ առկա հեղինակային տեսությունները.

2. հետազոտել ամուսնական գույգի բնավորության շեշտվածությունը.

3. ուսումնասիրել դերերի բաշխման առանձնահատկությունները միջուկային ընտանիքներում.

4. փորձարարական ճանապարհով բացահայտել բնավորության շեշտվածության ազդեցությունը միջուկային ընտանիքներում ամուսնական զույգերի դերերի բաշխման առանձնահատկությունների և ընտանեկան ներդաշնակության մակարդակի վրա:

Հետազոտությանը մասնակցել են 22 զույգ, 44 անձ: Շարքերի նախնական գտման արդյունքում արդյունքների վերլուծման ընթացքում օգտագործվել են 20 զույգի արդյունքները:

Հետազոտությունը իրականացվել է հետևյալ փուլերով. 1-ին փուլում իրականացվել է առարկայի և օբեկտի ընտրություն, խնդիրների որոշակիացում, հետազոտության իրականացման համար մեթոդների և մեթոդիկաների ընտրություն: 2-րդ փուլում իրականացվել է զույգերի բնավորության շեշտվածության տիպի որոշում, դերերի բաշխման հստակեցում և ամուսնական կյանքի բավարարվածության որոշում: 3-րդ փուլում կատարվել է արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական մշակում և ստացված տվյալների որակական վերլուծություն:

Օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորվել է ընտրված մեթոդոլոգիական հիմքերով և ուսումնասիրության առարկայով: Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները. մեթոդների համարժեքությունը (վալիդությունը) մեր ուսումնասիրության խնդիրներին, համապատասխանությունը հետազոտության տրամաբանական կառուցվածքին, միասնականությունը՝ մեթոդոլոգիական նույն համակարգում ընտրված մյուս մեթոդների հետ: Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիտման և հոգեբանական զրույցի մեթոդները և հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները.

1. Յու. Է. Այլոշինայի , Լ. Յա. Գոզմանի, Է. Մ. Դուբովսկայայի «Դերերի բաշխումը ընտանիքում» հարցաթերթիկը¹:

2. Կ.Լեոնիսարդոսի «Բնավորության շեշտվածության» հարցարանը²:

3. Փ. Թ.Կոստայի, Ռ. Ռ Մակ-Կրեյի հինգ գործոնային անձնային հարցարան՝ «Մեծ հնգյակ» (5PFO) հարցաթերթիկը^{3 4}:

4. Վ.Վ. Ստոլինի, Տ.Լ.Ռոմանովի, Գ.Պ.Բուտենկոյի «Ամուսնական բավարարվածության» հարցարանը⁵:

¹ *Алешина Ю.Е. Индивидуальное и семейное психологическое консультирование. М, 1994.*

² *Леонгардт К. /Акцентуированные личности/ Киев 1981, с. 392 с. 97-249*

³ *Costa, P. T. & McCrae, R. R. (1990). Personality disorders and the five-factor-model of personality. Journal of Personality Disorders, 4 (362-371).*

⁴ *Пятифакторный опросник личности: Учебно-методическое пособие. Курган: изд-во Курганского гос. университета, 2000.-23 с.*

⁵ *Столин В.В., Романова Т.Л., Бутенко Г.П., Опросник удовлетворенности браком// Вест. Моск. Ун-та. сер.14. Психология. – 1984. – N 2. – с. 54-60.*

Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ բնավորության շեշտվածության *հիպերթիմ* տիպի և ամուսնական բավարարվածության մակարդակի միջև առկա է միջին համահարաբերակցային կապ ($r=0.3$, $p \leq 0,05$), որը բացատրվում է այն հանգամանքով, որ այս տիպին պատկանող անձինք ունենում են բարձր տրամադրություն, շփվող են, լավ են հարմարվում միջավայրին: Ցուցադրական տիպի և ամուսնական բավարարվածության մակարդակի միջև առկա է ($r= 0.1$, $p \leq 0,05$) թույլ կապ: Այս տիպին պատկանող անձինք ունեն փոփոխական վերաբերմունք, երբեմն դրսևորում են բարձր, երբեմն շատ ցածր տրամադրություն, նրանք հաճախ են կախվածության մեջ գտնվում: Թույլ կապ է դրսևորվում նաև ամուսնական բավարարվածության և բնավորության շեշտվածության պեղանտ տիպի միջև ($r= 0.2$, $p \leq 0,05$): Այս տիպի անձինք շատ զգուշավոր են, միննուն ժամանակ՝ անվճռական: Միջին ուժգնության բացասական կապ է դրսևորվել տագնապային տիպի և ամուսնական բավարարվածության մակարդակի միջև ($r=-0.4$, $p \leq 0,05$): Այս տիպի անձինք տագնապային են նույնիսկ այն դեպքերում երբ դրա կարիքը չկա:

Մեր կողմից վերլուծվել է նաև բնավորության շեշտվածության տիպերի և ամուսնաընտանեկան դերերի բաշխման միջև առկա համահարաբերակցային կապերի դրսևորումները: Արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ *հիպերթիմ* տիպը միջին բացասական կապի մեջ է գտնվում երեխաների դաստիարակության դերի հետ ($r= -0.3$, $p \leq 0,05$) և դրական կապեր ունի ժամանակի կազմակերպողի ($r= 0,2$, $p \leq 0,05$) ու նյութական աջակցության ($r= 0,1$, $p \leq 0,05$) գործոնների հետ: Այսինքն *հիպերթիմ* տիպն աշխատում է երեխաների դաստիարակության գործառույթն հնարավորինս իր վրա չվերցնել: Տագնապային տիպի և հուզական մթնոլորտի կազմակերպողի դերերի միջև կա դրական միջին ուժգնությամբ կապ ($r= 0.5$ $p \leq 0,05$): Բնական է, քանի որ զույգերից մեկի մոտ դրսևորվող տագնապայնության բարձր մակարդակը իր խոր ազդեցությունն է ունենում ընտանիքում տիրող հուզական մթնոլորտի վրա: Միջին ուժգնության դրական կապ է դրսևորվել ($r= 0.3$, $p \leq 0,05$) *պեղանտ* տիպի և նյութական աջակցություն ցուցաբերողի, ինչպես նաև *պեղանտ* տիպի և *սեփականատեր*, *տիրուհի* դերերի միջև ($r= 0,2$, $p \leq 0,05$): Միջին ուժգնությամբ կապ է դրսևորվել *էմոտիվ* տիպի և *սեփականատեր տիրուհի* դերերի միջև ($r= 0.3$ $p \leq 0,05$):

Յու. Է. Այրոշինայի, Լ. Յա. Գոզմանի, Է. Մ. Դուբովսկայայի «Դերերի բաշխումը ընտանիքում» մեթոդիկայի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բնավորության շեշտվածության յուրաքանչյուր տիպին բնորոշ է ամուսնաընտանեկան դերերի բաշխման յուրահատուկ ցուցանիշ: Արդյունքները վկայում են, որ բնավորության շեշտվածության տագնապային տիպին բնորոշ են հետևյալ դերերի ստանձնումը. 75%-ի դեպքում երեխաների դաստիարակությունը, ընտանիքում հուզական մթնոլորտը, ընտանիքում

ենթամշակույթի կազմակերպումը, մյուս դերերը ստանձնում են գուզընկերները, իսկ 25%-ի դեպքում՝ սեռական գուզընկերոջ նյութական աջակցության, ընտանիքում ենթամշակույթի կազմակերպումը դերերը: Մյուս դերերը կրկին ստանձնում է ամուսնական գուզընկերը:

Պեղանտ տիպին պատկանող հետազոտվողների 80%-ը նշում է, որ սեփականատիրոջ, նյութական աջակցությունը, ժամանակի կազմակերպման դերերը ստանձնում են իրենք, մյուս դերերը՝ ամուսնական գուզընկերը, իսկ 20%-ը նշում է, որ վերոնշյալ դերերից բացի ստանձնում է նաև սեռական գուզընկերոջ դերը:

Բնավորության շեշտվածության *էնտրիվ* տիպին պատկանող հետազոտվողների 67%-ը նշում է, որ ստանձնում է ընտանիքում հուզական մթնոլորտը ստեղծողի, սեռական գուզընկերոջ, երեխաների դաստիարակության դերերը, նյութական աջակցողի դերը ստանձնում են հավասարապես, իսկ մյուս դերերը ստանձնում են ամուսնական գուզընկերները, իսկ 33%-ը ստանձնում է նաև նյութական աջակցությունը:

Հիպերթիմ տիպին պատկանող հետազոտվողների 60%-ը նշում է, որ բացի սեռական գուզընկերոջ, երեխաների դաստիարակողի, ժամանակի կազմակերպման դերերից ստանձնում են բոլոր դերերը, իսկ 40%-ը նշում է, որ բացի երեխաների դաստիարակողի դերից ստանձնում է բոլոր դերերը:

Էքստրավերտները նշում են, որ ստանձնում են ժամանակը կազմակերպողի և երեխաների դաստիարակողի դերը, իսկ մյուս դերերը ստանձնում է գուզընկերը:

Ինտրավերտները նշում են, որ ստանձնում են երեխաների դաստիարակողի, նյութական աջակցության դերերը, ժամանակի կազմակերպողի դերը: Մյուս դերերը ստանձնում է ամուսնական գուզընկերը:

Այսպիսով, անձի բնավորությունը ձևավորվում է կյանքի ընթացքում, որոշ գլխավոր հատկություններ՝ վաղ մանկության շրջանում. ժամանակի ընթացքում ենթարկվում են, որոշ փոփոխություններ: Այն անձի զարգացման կարևոր բաղադրիչն է հանդիսանում է փորձի յուրացման և սոցալականացման արդյունքում մարդու եռանդն ուղղորդող հարաբերականորեն կայուն հատկություն:

Բնավորության շեշտվածություն ասելով հասկանում ենք բնավորության առանձին գծերի չափազանց մեծ արտահայտվածություն: Բնավորության շեշտվածությունը ավելի հաճախ դրսևորվում է էքստրեմալ իրավիճակներում: Բնավորության շեշտվածություն ունեցող անձը ավելի շատ է կատարվում միջավայրի ազդեցությանը, հոգեբանական տրավմաներին:

Ամուսնական դերերի բաշխումը միջուկային ընտանիքներում ենթադրում է երկու ամուսնական գույզերի միջև դերերի բաշխում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ միջուկային ընտանիքներում ապրում է ամուսնական գույզը և իրենց երեխաները: Հետևաբար, բոլոր դերերի բաշխման

պարտականությունները իրականացնում են ամուսինները: Առաջարկվում է 7 հիմնական դեր երեխաների դաստիարակություն, հուզական մթնոլորտի կազմակերպում, սեփականատեր, տիրուհի, նյութական աջակցություն ցուցաբերող, սեռական զուգընկեր, ժամանակը կազմակերպող, ընտանիքից ենթամշակույթի կազմակերպող:

Բնավորության շեշտվածությունն ունենում է իր ազդեցությունը միջուկային ընտանիքներում զույգերի դերերի բաշխման առանձնահատկությունների վրա: Մասնավորապես, *հիպերթիմ* տիպը ստանձնում է բոլոր դերերը, բացի երեխաների դաստիարակությունից և ժամանակը կազմակերպողից: *Տագնապային* տիպը ստանձնում է երեխայների դաստիարակության, հուզական մթնոլորտի, ընտանիքի ենթամշակույթի կազմակերպողի դերերը: *Էմոտիվ* տիպին բնորոշ է ընտանիքի հուզական մթնոլորտը ստեղծողի, նյութական աջակցությունը ստանձնողի, երեխաների դաստիարակության դերերը: *Պեղանտ* տիպին բնորոշ են սեփականատեր, տիրուհի, ժամանակի կազմակերպողի, նյութական աջակցություն ցուցաբերողի դերերը: *Էքստրավերտ* տիպը ստանձնում է ժամանակը կազմակերպողի և երեխաների դաստիարակության դերերը, իսկ *ինտրովերտ* տիպը ստանձնում է նաև նյութական աջակցության դերը:

Բնավորության շեշտվածության տիպը անդրադառնում է նաև ամուսնական բավարարվածության մակարդակի վրա: Յուրաքանչյուր շեշտված տիպ ունի իր առանձնահատկությունները, որոնք ազդում են անձի ընկալման և բավարարվածության վրա:

Գրականություն

1. **Փիլոսոֆիայի Ա.**, Ընդհանուր հոգեբանություն., Երևան, «Տիր», 2019թ. 596 էջ:
2. **Алексеева Е. А., Выбощик И. В., Паршукова Л. П.**, Акцентуация характера: Учебное пособие.- Челябинск: Изд-во ЮУРГУ, 2002.- 47с.
3. **Алешина Ю.Е.**, Индивидуальное и семейное психологическое консультирование. М, 1994.
4. **Батаршева А. В.**, Темперамент и характер: Психологическая диагностика-СПб Питер 2007., 368, с. 97.
5. **Еникеев М.И.**, Общая и социальная психология. Учебник для вузов.- Издательская группа НОРМА- ИНФРА,М, 1999.- 624с.
6. **Карабанова, О.А.**, Психология семейных отношений и основы семейного консультирования: учебное пособие / О.А. Карабанова. – М.: Владос-Пресс, 2004. – 320 с.

7. **Ковалев С.В.**, Психология современной семьи / С.В. Ковалев. – М. Просвещение, 1988.– 208 с.
8. **Леонгардт К.**, /Акцентуированные личности/ Киев 1981, с. 392 с. 97-249.
9. Пятифакторный опросник личности: Учебно-методическое пособие. Курган: изд-во Курганского гос. университета, 2000.- 23 с.
10. **Смирнов А. Г.**, Практикум по общей психологии. М: Изд-во Института психотерапии, 2005, с.169-179
11. **Столин В.В., Романова Т.Л., Бутенко Г.П.**, Опросник удовлетворенности браком// Вест. Моск. Ун-та. сер.14. Психология. – 1984. – N 2. – с. 54-60.
12. **Харчев А. Г.**, Брак и семья в СССР/А.Г.Харчев.-2.изд., перераб. и доп.-М.:Мысль,1979.-365с.
13. **Costa P. T. & McCrae R. R.** (1990). Personality disorders and the five-factor-model of personality. Journal of Personality Disorders, 4 (362-371).

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Ի.Գ.Թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.96

Հոգեբանություն

Սուսաննա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱրՊՀ ՖԴ և ԼՁՊ ամբիոնի դասախոս, մ.գ.թ.

Արայիկ ՖԻՐՅԱՆ

ԱրՊՀ ՖԴ և ԼՁՊ ամբիոնի դասախոս, հ.գ.թ.

**ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄ ԱՆՁԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵԶՐՈՒՅԹԻ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացվում են անձի պաշտպանության կառուցակարգերի հոգեբանական առանձնահատկությունները: Խնդիրն ուղղված է պաշտպանական կառուցակարգերի հայտնաբերմանը հատկապես բնական սահմանամերձ գոտում: Քննության են դրվել նաև այս խնդրի ուսումնասիրությանը վերաբերող մի շարք գիտական մոտեցումներ:

Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանություն, սահմանամերձ գոտի, ադապտացիա, ինքնիրացում, տրավմատիկ ապրումներ

С. Айрапетян А. Фирян

**ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ТРАКТОВКИ
ТЕРМИНА ПСИХОЛОГИЧЕСКАЯ ЗАЩИТЫ ЛИЧНОСТИ В
ПРИГРАНИЧНОЙ ЗОНЕ**

В статье представлены психологические особенности защитных механизмов личности. Проблема нацелена на выявление защитных механизмов, особенно выраженных в приграничной зоне проживания. Представлены на обсуждение также ряд научных подходов изучения данной проблематики.

Ключевые слова: психологическая защита, приграничная зона, адаптация, самореализация, травмирующие переживания .

S. Hayrapetyan A. Firyan

**THEORETICAL AND METHODOLOGICAL
INTERPRETATIONS OF THE TERM PSYCHOLOGICAL
PROTECTION OF A PERSON IN THE BORDER ZONE**

The article presents the psychological point of view of personal protection mechanisms. This problem is targeted at the revealing of protection mechanisms, especially in the border zone. There are also scientific approaches to this issue.

Key words: psychological protection, border zone, adaptation, self-realization, traumatic feelings.

Հասարակության ժամանակակից զարգացման միտումները նախանշում են հասարակության համակարգային բարդացման գործընթացը, անհատի նկատմամբ միջավայրի ճնշման բարձրացումը, սոցիալական հարաբերությունների սթրեսածին մթնոլորտի ավելացումը: Այդ երևույթներն ավելի տեսանելի են դառնում սահմանամերձ գոտում, որտեղ անձից պահանջվում է հարմարման այնպիսի մեխանիզմների ձևավորում ու տիրապետում, որոնք հատկապես գործարկելի են դառնում արագ փոփոխվող հասարակական հարաբերությունների և կոնֆլիկտային իրավիճակների ստեղծման պայմաններում, երբ ակտիվանում են անձի վրա միջավայրային ճնշման եղանակները, և ինտենսիվ զարգացում են ապրում անձի հարմարման գործոնները: Անձի հարմարման դրսևորումներից է նաև հոգեբանական պաշտպանության երևույթը:

Տեսամեթոդաբանական հետազոտությունների արդյունքներում առաջ քաշված եզրակացությունները դառնում են առավել արդիական սահմանամերձ գոտու ազգաբնակչության համար՝ հոգեբանական պաշտպանության համակարգային հիմնահարցերը բարձրացնելու և քննության առնելու, ինչպես նաև ինքնառեալիզացիայի և ազգային ինքնագիտակցության հիմնադրույթները ձևակերպելու տեսանկյունից: Նման ենթատեքստում անհրաժեշտ է լինում նաև դիտարկելու անձի հոգեվիճակների զգացմունքային դաշտը, որը բավական լուրջ ազդեցություն ունի սահմանամերձ գոտում՝ հատկապես կոնֆլիկտային հատկանիշներով բնութագրվող վայրերում, որտեղ առօրյա միջանձնային հարաբերությունները զուգորդվում են ինքնության դրսևորման այնպիսի բաղադրիչներով, որոնք պաշտպանական բնույթ են կրում տազնապային և կոնֆլիկտային միջավայրում: Հակամարտության, վախի և ապագայի նկատմամբ անորոշության պայմաններում է հենց ցայտուն կերպով դրսևորվում հոգեբանական պաշտպանության երևույթը, որի մեխանիզմները ուղղակիորեն ուղղված են հակամարտության հետ կապված հուզական լարվածության նվազեցմանը՝ կանխելով անձի վարքագծում և ընկալումներում ապակառուցողական սթրեսածին դրսևորումների ի հայտ գալը: Այս տեսանկյունից անձի, իսկ ավելի լայն իմաստով՝ ազգաբնակչության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննությունը կարևորագույն գիտական խնդիր է, որը վերաբերում է անձի հոգեբանական առողջության ամբողջ համակարգին:

Ժամանակակից հոգեբանական գիտակարգում պաշտպանական մեխանիզմների հայեցակարգը այս կամ այն առումով ներկայացված է տարբեր հոգեբանական դպրոցներ և ուղղություններ ներկայացնող հետազոտողների կողմից:

<<Հոգեբանական պաշտպանություն>> եզրույթն առաջին անգամ կիրառել է Ջ. Ֆրեյդը 1894 թ. <<Պաշտպանական նեյրոպսիխոզներ>> աշխատությունում: Հետագայում հեղինակը այդ եզրույթով մատնանշում է կոնֆլիկտային իրավիճակում Ես-ի կողմից օգտագործվող բոլոր միջոցները [1]: Նույն հեղինակի կողմից այդ եզրույթն սկսեց պարբերաբար փոխարինվել <<արտամղում>>-ով՝ որպես գիտակցությունից դեպի անգիտակցականը սթրեսածին տեղեկատվության տեղափոխում և պաշտպանություն անընդունելի իրողության գիտակցության մեջ թափանցելուց:

Հոգեբանական պաշտպանության մասին տեսական մշակումների զարգացումները կապված են Ա. Ֆրեյդի անվան հետ: Կախված սպառնալիքի աղբյուրից՝ Ա. Ֆրեյդը տարբերում է բնագոյից և աֆեկտից առաջացող պաշտպանության տեսակները: Առաջին դեպքում պաշտպանության գործընթացը նպատակ ունի կանխելու բնագոյային գաղափարները, և որոնք վտանգ են ներկայացնում Ես-ի առողջության համար: Աֆեկտից առաջացող պաշտպանության գործարկումը պայմանավորված է վտանգավոր ցանկությունների և աֆեկտների գիտակցության մեջ ներթափանցման հնարավորությամբ: Բացի դրանից, Ա. Ֆրեյդը նշանակել է պերմանենտ պաշտպանական երևույթը, որը բնութագրում է «անցյալում շատ ուժեղ պաշտպանական գործընթացների մնացորդները, որոնք դուրս են եկել իրենց նախնական իրավիճակների ենթատեքստից և վերածվել մշտական բնույթ ունեցող բնավորության հատկությունների»: Ա. Ֆրեյդը ձևակերպեց պաշտպանական մեխանիզմների առաջին սահմանումը. «Պաշտպանական մեխանիզմներն են «Ես»-ի գործունեությունը, որը սկսվում է այն ժամանակ, երբ «Ես»-ը ենթարկվում է իմպուլսների չափազանց մեծ ակտիվությանը կամ նրա համար վտանգավոր ազդեցություններին: Դրանք սկսում են գործել ավտոմատ կերպով»[2]:

Հոգեբանության տարբեր ուղղությունների ներկայացուցիչները, անշուշտ, զարգացրին հոգեբանական պաշտպանության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Է.Ֆրոմմը ներկայացրեց այն մեխանիզմները, որոնք անձը իրագործում է միջավայրի հետ կոնստրուկտիվ փոխգործողության բացակայության պայմաններում: Արդյունքում հեղինակը առանձնացրել է պաշտպանական մեխանիզմների հետևյալ խմբերը՝ *սաղիզմ*՝ որպես այլոց նկատմամբ իշխանության սահմանման, *մագոխիզմ*՝ որպես անձի

1 Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, էջ 63.

2 Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, էջ 139.

անկախության վերացման և հասարակության հետ Ես-ի ձուլման միտումի, *դեստրուկտիվիզմ*¹ որպես խաղաղ փոխգործողությունից հրաժարման, *կոնֆորմիզմ*² որպես անձի կողմից տարածված կարծիքների յուրացման դրսևորումներ [1]:

Թ.Շիբուտանին պաշտպանական մեխանիզմները ներկայացնում էր ընկալման և խորհրդանշման գործընթացների հետ միասին: Համաձայն հեղինակի կարծիքի՝ փոխհատուցման հարմարվողականության անգիտակից ձևերի օգտագործումը արձագանք է նշանակալից պահանջումներին արգելափակման կամ խափանման փաստին և բացասական հուզական ռեակցիաներից պաշտպանվածության արտահայտություն է, թուլացնում սպառնացող վտանգավոր իրավիճակների ազդեցությունը և կանխարգելում վարքագծի ապակառուցողական միտումների ամրապնդումը [2]:

Հոգեբանության հումանիստական ուղղության ներկայացուցիչ Ա. Մասլոուն ևս անդրադարձել է հոգեբանական պաշտպանության հասկացության մեկնությանը: Նա գտնում էր, որ հոգեբանական պաշտպանության ձևերն ու մեխանիզմները խանգարում են անձի ինքնաներկայացման ու ինքնառեակիզացիայի գործընթացներին, քանի որ անձը կարող է բացահայտել իր ընդունակությունները միայն պաշտպանական մեխանիզմների գիտակցման և բացահայտման պայմանով [3]:

Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսական մշակումներից կարևոր է նշել Ա. Նալչաջյանի կարծիքը, ով առանձնահատուկ ուշադրություն է դարձրել էթնիկ ինքնապաշտպանվածության մեխանիզմների ուսումնասիրությանը: Նա հոգեբանական պաշտպանական մեխանիզմների շարքում նշում է մշակույթը, ընտանիքը, կրոնն ու եկեղեցին: Էթնոպաշտպանության եղանակներից մատնանշվում է նաև էթնոսի ինքնաիզոյացիան /ինքնամեկուսացումը/, ինչի արդյունքում նկատելի է դառնում *իմբրինդինգի* երևույթը՝ միտված էթնոսի ներսում ընտանիքների ձևավորմանը և, արդյունքում, մարդաբանական որոշակի տեսակի ստեղծմանն ու պահպանմանը: Էթնոհոգեբանական պաշտպանության այսպիսի պատկերը Ա. Նալչաջյանը անվանում է *գլոբալ պաշտպանվածության տիպ*, ինչի ենթատեքստում նա առանձնացնում է կառուցվածքային հոգեբանական պաշտպանության եզրույթը: Այն արտահայտվում է ասիմիլյացիայի վտանգի առջև կանգնած էթնոկիրների համապատասխան վարքագծի մեջ, ինչը դրսևորվում է ազգային փոքրամասնության կողմից սոցիալական, ինքնակառավարման կառուցվածքների ստեղծման գործընթացում ուղղված ներխուժային փոխհարաբերությունների ակտիվացմանն ու պահպանմանը [4]:

1 *Фромм Э., Бегство от свободы, М., 2011, 288 с.*

2 *Шибутани Т., Социальная психология. М., 2002. - 544с.*

3 *Հակոբյան Ն. Օ., Մարզինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.*

4 *Налчаджян А., Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, 2000.*

Ադապտացիայի հասկացության և տեսամեթոդաբանական ներկայացման առանձնահատկություններից անհրաժեշտ է նշել հարակից տարբեր գիտությունների կողմից շրջանառվող հասկացությաին շրջանակների և մեթոդաբանական մոտեցումների բազմազանությունը: Ադապտացիայի զարգացման ֆիզիոլոգիական հիմնավորումը ներակայցրել է Ի. Պավլովը, ով առանձնացրել է ադապտացիայի այնպիսի արտահայտություններ, որոնք ներկայացված են <<ծանր զգացումների>> միջոցով, այնպիսի զգացումների, որոնք առաջանում են կրիտիկական պայմաններում և պահանջում են նոր պայմաններին մարդու հարմարվողականության մեխանիզմների ձևավորում ու ամրապնդում [1]:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրությունն անվերապահորեն առնչվում է հասարակությունում անձի ինքնառեալիզացիայի և սոցիալականացման գործընթացներին, որոնք խթանում կամ, ընդհակառակը, խաթարում են անձի ակտիվությունը՝ վերածվելով ինքնադրսևորման յուրահատուկ միջոցի: Ներկայացնենք հոգեբանական ուսումնասիրությունների տեսամեթոդաբանական դիրքորոշումների հակիրճ վերլուծությունը, որոնք առնչվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերը նշված հարցադրումներին: Բազմաթիվ հեղինակների կողմից (Ջ. Ֆրեյդ, Ա. Ադլեր, Ա. Ֆրեյդ, Կ. Հորնի, Է. Էրիկսոն, Է. Ֆրոմմ, Կ. Ռոջերս և ուրիշներ) բարձրացվում է այն հարցը, որ հոգեբանական պաշտպանությունը՝ որպես կյանքի դժվար պայմաններում անձի գոյատևման և հարմարման միջոց, բացի արտահայտված ադապտիվ նշանակությունից, կարող է ձեռք բերել նաև բացասական նշանակություն՝ սահամնափակելով անձի զարգացման և ինքնառեալիզացիայի հնարավորությունները: Այս դիտարկումն արդեն շատ կարևոր է՝ բնորոշելու անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման հնարավոր շրջանակները և ներկայացնելու այդ մեխանիզմների արտահայտվածության առանձնահատկությունները սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության շրջանակներում [2 3]: Կարծում ենք, քննարկվող եզրույթի ոչ միանշանակ մեկնաբանությունը կապված է այն պայմանների ու իրավիճակների հետ, որոնց պարագայում առաջանում է հոգեբանական պաշտպանության անհրաժեշտությունը: Այսպես, Ֆ. Բասսինը ներկայացնում է իր կոնցեպտուալ տեսակետը, համաձայն որի՝ հոգեբանական պաշտպանությունը դիտարկում է որպես հոգեկան տրավմային արձագանքելու

¹ *Бассин Ф. В., О силе «Я» и психологической защите // Самосознание и защитные механизмы личности: хрестоматия. Самара: БАХРАХ-М, 2000. С. 3–13.*

² *Тулупьева Т.В., Психологическая защита и особенности личности в юношеском возрасте. Автореф. дисс. канд. психол. наук. — СПб., 2001. - 25с*

³ *Մասին Բ.Վ., Էրիկսոնի Է. և Ֆրոյդի Ջ. արդյունքները մեխանիզմների արտահայտվածության առանձնահատկությունները սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության շրջանակներում [2 3]: Կարծում ենք, քննարկվող եզրույթի ոչ միանշանակ մեկնաբանությունը կապված է այն պայմանների ու իրավիճակների հետ, որոնց պարագայում առաջանում է հոգեբանական պաշտպանության անհրաժեշտությունը: Այսպես, Ֆ. Բասսինը ներկայացնում է իր կոնցեպտուալ տեսակետը, համաձայն որի՝ հոգեբանական պաշտպանությունը դիտարկում է որպես հոգեկան տրավմային արձագանքելու*

անձի ընդունակություն: Մի շարք հեղինակների կողմից ընդգծվում է հոգեբանական պաշտպանության՝ որպես անձի ադապտիվ փոխազդեցության համակարգի ուղղվածությունը՝ ըստ վտանգավոր և դեզադապտիվ արտաքին ազդակների նշանակալիության նվազեցման և թուլացման սկզբունքների: Ընդ որում, տարանջատվում են Ես-կոնցեպտի կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային բաղադրիչների վրա ազդող բացասական արտաքին ազդակները, որոնց համադրումից էլ ձևավորվում են համապատասխան հոգեբանական պաշտպանական մեխանիզմները : Բ. Կարվասարսկին հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հանգեցնում է անձի ադապտիվ փոխազդեցություններին՝ նշելով, որ դրանք միտված են անձի բացասական փոխազդեցությունների բոլոր բաղադրիչների՝ կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային, դեզադապտիվ ազդեցության նվազմանն ու թուլացմանը [1]:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կայուն արտահայտվածությունը ընկալումներում և վարքագծում, հաճախակի օգտագործումը, մտածելակերպի կարծրատիպացման հետ կապվածությունը աստիճանաբար կորցնում են իրենց դրական նշանակությունը և խոչընդոտում անձի զարգացումը: Արդյունքում անձը դառնում է անընդունակ գտնելու խնդրի լուծման արդյունավետ ուղիները և կորցնում է իրականության օբյեկտիվ ընկալման հմտությունները: Այդուհանդերձ, հեղինակների կողմից նշվում է նաև այն փաստը, որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել՝ քննելով անձի պահանջմունքների առաջացման և բավարարման գործընթացները: Այս իմաստով հոգեբանական պաշտպանությունը ներկայանում է որպես անձի նպատակների արտացոլում, և, հետևաբար, նպատակների և դրանց հասնելու միջոցների, ինչպես նաև անձի դրդապատճառների և վարքագծի անհամապատասխանությունը կարող են հանգեցնել նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների անարդյունավետության: Դիտարկելով անձի հոգեբանական պաշտպանությունը սոցիալական միաջավայրի հետ փոխգործողության համատեքստում՝ ակներև են դառնում այդ երևույթի ներկայացման հետևյալ հարցադրումները՝

- արտաքին ո՞ր ազդակից պիտի անձը պաշտպանվի,
- արդյո՞ք հոգեբանական պաշտպանության կարիքն առաջանում է միայն արտաքին միջավայրի վտանգավոր կամ անհասկանալի լինելու պարագայում, թե՞ կարող է նաև դիտվել որպես անձի Ես-կոնցեպտի յուրահատուկ դրսևորում,
- արդյո՞ք հոգեբանական պաշտպանության բոլոր դրսևորումները դրական ազդեցություն են ունենում անձի զարգացման և ինքնառեալիզացիայի վրա,

¹ Карвасарский Б.Д., Психотерапия. СПб., 2007. - 672с.

• արդյո՞ք կոնֆլիկտային սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության մոտ ձևավորվում են հոգեբանական պաշտպանության առանձնահատուկ մեխանիզմներ, թե՞ սահմանամերձ շրջանների բնակիչները յուրացնում են պաշտպանության ունիվերսալ մեխանիզմները, որոնք բավարար են հոգեբանական անվտանգության ձեռքբերմանը:

Այսպիսով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման արդյունքում հնարավոր է իրականության ընկալման փոփոխումը կամ վերախմաստավորումն այնպես, որ առավելագույնս նվազեն այդ իրականությունից բխող վախերն ու տագնապները, իրավիճակը կորցնի իր ծայրահեղ վտանգավոր պատկերը և ընկալվի անձի համար նպաստավոր երանգներով: Այստեղ մենք համամիտ ենք այն հեղինակների կարծիքներին, ովքեր մատնանշում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների գործառնության երկակիությանը: Մի կողմից՝ ակներև է, որ պաշտպանական մեխանիզմները դրական գործառույթ են կատարում՝ նպաստելով առկա իրավիճակին անձի հարմարմանը, և հնարավորինս զերծ են պահում տրավմատիկ հոգեկան ապրումներից: Մյուս կողմից՝ պաշտպանական մեխանիզմների երկարաժամկետ գործարկումը կարող է փոխարինել արտաքին միջավայրի օբյեկտիվ ընկալմանը, ինչի արդյունքում անձը ընտելանում է իր <<անվտանգ>> հոգեվիճակին և չի կարողանում ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը:

Հարկ է նշել նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դասակարգման, տարբերակման և գործառույթների վերաբերյալ կուտակված տեսական տարակարծիք մոտեցումների առկայությունը: Այսպես, Լ. Վասիլյուկի կարծիքով, հոգեբանական պաշտպանության բոլոր մեխանիզմների հիմքում ընկած է արտամղման մեխանիզմը, որն ուղղված է վախի զգացումի թուլացմանը կամ քողարկմանը [1]:

Հոգեվերլուծաբանների կողմից խնդրո առարկա հանդիսացող եզրույթը ներկայացվում է որպես չբավարարված անձի պահանջումների և Ես-ի ձևավորման ընթացքում չլուծված խնդիրների արտացոլում: Գ. Քելլերմանի համոզմամբ, այդ տեսակետը անհրաժեշտ է համալրել սոցիոկենսաբանական տեսությունների հետ, որոնք արտահայտում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կապը որոշակի զգացումների կառավարման հետ: Այդ տեսակետն իր զարգացումը ստացավ Ռ. Պլուտչիկի հետ համահեղինակությամբ ստեղծված կոնցեպտի հիմքում, որը ներկայացնում է անձի զգացումների և պաշտպանական մեխանիզմների ուրույն համակարգ: Հոգեբանական պաշտպանության մոդելը Ռ. Պլուտչիկը ներկայացրել է 1979 թ. համահեղինակներ Գ. Քելլերմանի և Հ. Կոնտի հետ միասին: Այս մոդելը

¹ *Васильюк Ф. Е., Психология переживания: анализ преодоления критических ситуаций. М.: Изд-во Моск. ун-та, 1984. 200с.*

հիմնված է զգացմունքների ընդհանուր էվոյուցիոն տեսության վրա, որում ներառվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմները՝ որպես ութ հիմնական հույզերի նախատիպեր: Տեսամեթոդաբանական այդ դրույթները իրենց արտացոլումն են գտել Life Style Index հարցաթերթիկում: Հեղինակները, վերլուծելով տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունները, հանգում են այն եզրակացության, որ պաշտպանական մեխանիզմներն առաջին հերթին փոխկապակցվում են անձնային առանձնահատկությունների հետ: Համաձայն այդ տեսակետի՝ առաջարկվում են հոգեբանական պաշտպանության հետևյալ տեսական մոդելները.

1. հոգեբանական պաշտպանության հատուկ ձևերն առաջանում են առանձնահատուկ հույզերի հաղթահարման պահանջմունքից,

2. հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, որոնք ութն են, ձևավորվում են, համապատասխանաբար, ութ հիմնական հույզերի (*վախ, զայրույթ, ուրախություն, տխրություն, ընդունում, մերժում, սպասում, զարմանք*) հաղթահարման նպատակով,

3. հոգեբանական պաշտպանության ութ հիմնական մեխանիզմները (*արտամղում, տեղափոխում, ռեակտիվ կազմավորում, կոմպենսացիա, իրականության ժխտում, պրոյեկցիա, ռացիոնալիզացիա, ռեզրեսիա*) տիրապետում են ինչպես նմանության, այնպես էլ հակադրության հատկանիշներով,

4. անձի հոգեախտորոշման որոշ տեսակները իրենց հիմքում կրում են հոգեբանական պաշտպանության ոճերի ազդեցությունը,

5. անձի հոգեբանական պաշտպանության ոճերը կարող են ձևավորվել պաշտպանական մեխանիզմների ցանկացած համադրումով:

Սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Զ. Պարֆենովայի մշակումները: Հեղինակն առանձնացնում է հոգեբանական պաշտպանության *գիտակցական, ենթագիտակցական և սոցիալական* տեսակները: Հակիրճ ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրը: *Ենթագիտակցական պաշտպանության* ձևն անձի փորձի և անհատական զարգացման արդյունք է: *Գիտակցական պաշտպանությունն* առաջանում է անմիջական շրջապատի նորմերի և դիրքորոշումների յուրացման արդյունքում: Երրորդ *պաշտպանության սոցիալական տեսակը* ներկայացվում է որպես բարդ, երկակի հասկացվող երևույթ: Հեղինակն այն նմանեցնում է ինչպես ենթագիտակցական տեսակին, այնպես էլ՝ գիտակցականին, քանի որ այն հասարակության ավանդույթների և նորմերի յուրացման արդյունքն է [1]: Հենց այդ տեսակին է ամենից շատ առնչվում սահմանամերձ գոտում հոգեբանական

¹ Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, с. 63.

պաշտպանական մեխանիզմների եզրույթը, որն անկասկած սահմանակից է ինչպես սեփական մշակութային արժեքների ու նորմերի համակարգին, այնպես էլ՝ հարևան մշակույթներին: Ավելին, նշված տարածաշրջանում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների առաջացումը, իր բնույթով լինելով սոցիալական, բնութագրվում է երկու սահմանային մշակույթների փոխազդեցություններով: Այլ խոսքերով, հնարավոր է դառնում տարանջատել հոգեբանական պաշտպանության ներքին՝ անձնային, և արտաքին՝ սոցիալական մակարդակները:

Այսպիսով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների եզրույթը ներկայացնում է անձի կայունացման և ինքնադրսևորման որոշակի համակարգ, որն ուղղված է պաշտպանելու անցանկալի, տրավմատիկ ապրումներից, ներքին և արտաքին կոնֆլիկտային իրավիճակներից, և որն ապահովում է անձի հոգեբանական անվտանգությունը նման իրավիճակներում:

Այնուամենայնիվ, «հոգեբանական պաշտպանություն» եզրույթն այսօր բավականին ընդլայնված է հասկացվում՝ ի տարբերություն ավանդաբար ձևավորված հոգեվերլուծական կողմնորոշման գաղափարների: Միննույն ժամանակ, տեսակետների և կարծիքների համալիր քննությունը հանգում է այն մտքին, որ այսօր հոգեբանական ուղղությունների հայեցակարգերում արտահայտված մեկնությունները հիմնվում են տեսական և մեթոդաբանական տարբեր սկզբունքների վրա, ինչի արդյունքում նկատվում է ներկայացվող խնդրի շուրջ հետազոտողների ընդգծված տարակարծությունը: Մոտեցումների անորոշությունը հաճախ արտահայտվում է նաև նույն տեսական համակարգի ներսում և արտահայտվում կա՛մ տերմինաբանական տարբեր մեկնությունների, կա՛մ էլ ուսումնասիրման մեթոդների խիստ բազմազանության մեջ: Ակներև է, որ խնդրո առարկա հանդիսացող երևույթի բազմիմաստության հիմնական պատճառը <<հոգեբանական պաշտպանության>> հասկացության թարգմանությունն է, դրա կառուցվածքային կապվածությունը անձի պաշտպանական վարքագծի հետ, ինչն էլ նպաստում է բազմանշանակ և բազմաբնույթ կարծիքների միաժամանակյա շրջանառմանը:

Միննույն ժամանակ, հստակեցված չեն այդ բարդ ֆենոմենի զարգացման օրինաչափություններն ու մեխանիզմները, ձևավորված չէ հոգեբանական պաշտպանության ուսումնասիրության համալիր գործիքակազմը, ինչի արդյունքում մշակված չէ պաշտպանական մեխանիզմների դասակարգումն ըստ տեսամեթոդաբանական հիմնադրույթների, իսկ գոյություն ունեցող տեսական մեկնությունները կիրառելի են հիմնականում որոշակի սոցիալ-հոգեբանական վիճակներում:

Նկատելի է նաև հոգեբանական պաշտպանության մեթոդաբանական ուսումնասիրության պակասը, պաշտպանական մեխանիզմների ախտորոշմանն ուղղված մեթոդների անբավարար զարգացումը և անձի պաշտպանության կառուցվածքի օպտիմալացման և բարելավման համար

կիրառվող համալիր ընթացակարգերի գրեթե լիակատար բացակայությունը: Դրան հակառակ՝ ներկայում նկատվում է սոցիալական տարբեր բնագավառներում անձի լարվածության և տազնապայնության մակարդակի բարձրացման ընդհանուր միտվածություն, ինչն իր հերթին խթանում է հետաքրքրությունը հոգեբանական պաշտպանության ձևերի ամրապնդման նկատմամբ: Այսպես, արդիական են դառնում մասնագիտական վարքի ձևավորման, արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ իրողություններին անձի դիմադրողական և արդյունավետ գործունեության կազմակերպման մեխանիզմներն ու մեթոդները:

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեսական եզրակացությունները և մատնանշված էմպիրիկ նյութը գերազանցապես ներկայացվում են ընդհանրացված, քիչ են հանդիպում կոնֆլիկտային փոխհարաբերությունների արդյունքում ձևավորված հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ գրանցումներն ու տեսամեթոդաբանական մեկնությունները: Պատճառներն ակնհայտ են. կոնֆլիկտային, այն է՝ նախապատերազմական, պատերազմական և հետպատերազմական փուլերում գտնվող սոցիալական փոխհարաբերությունները ներկայանում են հետազոտողին հուզական բարձր լարվածության, փոխվստահության կորստի և անտրոպոգեն արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչը բավական դժվարացնում է հոգեբանական հետազոտության ընթացքը: Այդ խնդիրներն առավել ակնհայտ են երևում սահմանամերձ գոտում բնակվող անձանց մոտ, որոնք գտնվում են անմիջական վտանգի և վախի մթնոլորտում:

Ժամանակակից կոնֆլիկտաբանության և հոգեբանության մեջ առանձնացվում են պարբերական բնույթ կրող սահմանամերձ կոնֆլիկտային իրավիճակներն արտահայտող գործողությունների առաջնային և երկրորդային նպատակներ: Առաջնային նպատակը մարդկային կորուստներ պատճառելն է, իսկ երկրորդայինն այդ կորուստների հետևանքներն են: Օրինակ՝ ցավի և կորուստի զգացումը, զայրույթը, վախի մթնոլորտը, սեփական ուժերի թերագնահատումը: Նման իրավիճակները սահմանամերձ գոտում բնակվող անձանց մեջ հաճախ հանգեցնում են որոշակի հուզական դաշտի ձևավորմանը, որը բնութագրվում է հոռետեսությամբ, ներկայի և ապագայի նկատմամբ անվստահությամբ, սպառնալիքների սպասման հոգեվիճակով, հուզական գրգռվածությամբ և այլն: Ինչպես իրավացիորեն նշում է Չ. Դ. Սպիրերգերը, սպառնալիք ներկայացնող իրավիճակները անձի կողմից ընկալվում են որպես սթրեսային, որոնց նկատմամբ ձևավորվում է համապատասխան պաշտպանական մեխանիզմների համալիր՝ միտված այդ սուբյեկտիվ ընկալվող սպառնալիքի կամ վտանգի չեզոքացմանը:

Ներկայումս նշված հարցադրումների կարևորության գիտակցումը առավել նկատելի է պրակտիկ-գործառնական ուսումնասիրություններում: Հաճախ <<հոգեբանական պաշտպանություն>> եզրույթն աղավաղվում է, ներկայացվում զուտ հոգեբանական թրեյնինգների ենթատեքստում կամ մեկնաբանվում որպես հոգեբանական օգնության ցուցաբերման հնարավոր արդյունք: Նման միակողմանի կարծիքների տարածման հայտնի հարթակ է դարձել համացանցը, որը հագեցած է «հոգեբանական պաշտպանության մեթոդների» առաջարկներով, խարդախությունների դեմ հոգեբանական պաշտպանության, տեղեկատվության ծանրաբեռնվածության կամ քաղաքական մանիպուլյացիաներից խուսափելու վերաբերյալ խորհուրդներով: Նման հարցադրումները դառնում են պահանջված հատկապես այն շրջաններում, որտեղ ազգաբնակչությունը գտնվում է սոցիալ-քաղաքական լարված իրավիճակում, ապրում է կյանքին սպառնացող պայմաններում և ստիպված կրում է այդ սպառնալիքներից բխող հետևանքները: Այս իրողությունն արտահայտում է թե՛ հարցերի գիտական մեկնաբանման, թե՛ սեղմ ժամկետում դրանց լուծման սոցիալական անհրաժեշտությունը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

УДК 79(378:612.5)

Физическое воспитание

Сусанна АЙРАПЕТЯН

преподаватель кафедры физического воспитания и НВП АргУ, к.п.н.

СДВИГИ ПОКАЗАТЕЛЕЙ ТЕМПЕРАТУРЫ ТЕЛА ПОСЛЕ РАЗМИНКИ КАК КРИТЕРИЙ ЕЕ ЭФФЕКТИВНОСТИ

Ս. Հայրապետյան

ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻՑ ՀԵՏՈ ՄԱՐՄՆԻ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՂՊԵՍ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Սպորտային նախալարժանքի պրակտիկայում մասնագետները մեծ ուշադրություն են դարձնում մարմնի ջերմաստիճանի դինամիկային: Երիտասարդ մարզիկների հետ աշխատելիս մենք հաշվի ենք առնում ջերմաստիճանի փոփոխությունների դինամիկան՝ ըստ մարզական բժիշկների առաջարկությունների՝ մարմնի երեք կետերում: Պարզվել է, որ երկու հետազոտվող խմբերում երիտասարդ մարզիկների մարմնի տարբեր մասերում ավանդական նախալարժանքից հետո ջերմաստիճանը բարձրանում է 0.1-ից մինչև 0.8 աստիճան: Կարելի է պնդել, որ ֆիզիկական վարժությունների կատարման արդյունքում մարմնի ջերմաստիճանի բարձրացումը համարվում է առաջին հերթին մարմնի և մկանային համակարգի տաքացման հետևանք, ինչպես նաև պատանի մարզիկներին պատրաստում է մարզումների հիմնական մասը սկսելուն:

Բանալի բառեր՝ նախալարժանք, մարմնի ջերմաստիճան, պատանի մարզիկներ:

В практике спортивной подготовки важное значение специалисты уделяют динамике температуры тела. В работе с юными спортсменами динамику температурных изменений мы рассматривали по рекомендациям спортивных врачей, в трех точках на теле. Установлено, что на разных участках тела юных спортсменов после традиционной разминки температура увеличивается от 0,1 до 0,8 градусов у двух групп обследуемых. Можно утверждать, что повышение температуры тела в результате выполнения физических упражнений является следствием обогривания организма и мышечной системы в первую очередь, а также готовности юных спортсменов приступить к основной части тренировочного занятия.

Ключевые слова: разминка, температура тела, юные спортсмены.

S. Hayrapetyan

**SHIFTS OF THE INDICATORS OF TEMPERATURE IN
BODY AFTER WARM-UP AS A CRITERION OF ITS
EFFICIENCY**

In the practice of sports training, specialists pay great attention to the dynamics of body temperature. In work with young athletes, we considered the dynamics of temperature changes according to the recommendations of sports doctors at three points on the body. It was found that in different parts of the body of young athletes after a traditional warm-up, the temperature increases from 0.1 to 0.8 degrees in two groups of subjects. It can be argued that the increase in body temperature as a result of physical exercise is a consequence of the heating of the body and the muscular system in the first place, as well as the readiness of young athletes to begin the main part of the training session.

Key words: warm-up, the temperature body, young athletes.

В процессе учебно-тренировочных занятий во всех видах спорта, как известно, особое место занимает разминка. Она имеет свое содержание, структуру, закономерности, правила, методику. Естественно, разминка обусловлена специфическими особенностями каждого конкретного вида спорта в отдельности. На содержание и продолжительность разминки определенное влияние оказывают тенденции современной подготовки в разных по структуре видах спорта.

Более 70 лет назад физиологи и педагоги (М.Я.Горкин, 1947; А.Н.Крестовников, 1955; М.В.Лейник, 1951; Н.Г.Озолин, 1949; М.Е.Маршак, 1947) обнаружили интересное явление о том, что в основе разминки и ее сущностью является так называемая вработываемость организма, что обеспечивается разогреванием мышечной системы¹: Анализ многочисленных литературных источников по спортивной тренировке в разных видах спорта свидетельствует о том, что разминка перед тренировкой и перед выступлением в соревнованиях способствует подготовке организма к предстоящей работе (М. Я. Горкин, 1938; А.А.Белкин, 1965; Մ.Մ.Մամիկոնյան, Շ.Ն.Շիրաշնյան, 1970; В. Силин, 1991 и многие другие). Поэтому основной задачей разминки является не только обеспечение вработываемости организма в работу, но и мобилизация резервных возможностей спортсменов (М.Е.Маршак, 1947).

Российские специалисты Л.А.Иоффе и Г.А. Бобнов (1988) справедливо отмечают, что основным механизмом разминки является разогревание мышц тела.

¹ **Горкин М.Я.**, Разминка при упражнениях на выносливость// Теория практика ФК. 1974.-№6.с.19-23.

И не случайно, что в ряде стран (Англия, Франция) вместо термина «разминка» зачастую говорят «разогрев» организма. К средствам разогрева относятся также массаж, растирание, горячий душ и т.п. (P.Astrand, K.Rodahl, 1969; В.И. Дубровский, 1994 и др.).

Некоторые авторы, говоря о разогревании мышечной системы, рекомендуют определять температуру тела (А.С.Массарский, 1981; А.Ј.Веннет, 1985; С.Н. Якимеко, 2006). Здесь было установлено, что тепловое состояние организма служит ведущим фактором, определяющим работоспособность организма спортсменов. Поэтому, есть основание утверждать, что тепловое состояние является ведущим и главным показателем готовности организма спортсменов к предстоящей работе. Следовательно, до и после разминки контролем в той или иной степени является измерение температуры в разных частях тела. Эти положения достаточно глубоко обоснованы в огромном количестве работ по разным видам спорта (Н.Г.Озолин, 1949; М.Л.Украин, 1971; Л.Ормаи, 1985; Ю.А.Морозов, 1968; И.А.Тер-Ованесян, 1997; М. А. Лубшев, 2014; В.Н.Платонов, 1986 и очень многие другие).

Высоко оценивая результаты таких работ, в то же время, мы констатируем, что работы по изучению сдвигов температуры тела¹ под воздействием разминки немногочисленны (А.С. Массарский, 1981; А.Л. Похачевский, 2018), в то время, как экспериментальное изучение вопросов, связанных с особенностями разминки перед тренировкой, является весьма современной и актуальной задачей.²

Цель исследования заключалась в изучении сдвигов показателей температуры тела под воздействием спортивной разминки.

Объект исследования – юные спортсменки, систематически занимающиеся борьбой дзюдо в группах начальной подготовки в специализированных и комплексных детско-юношеских спортивных школах Армении и Арцаха в двух возрастных группах 12-14 лет (29 человек) и 15-18 лет (36 человек). Для оценки изменений температуры тела в качестве тестов были выбраны сдвиги показателей в трех точках тела (в градусах) под мышкой, в голеностопном суставе и в подколенной чашечке. После проводилась традиционная разминка, используемая в борьбе дзюдо. По окончании разминки подобное тестирование повторялось (табл.).

Таблица

Изменение показателей температуры тела после разминки, в градусах

Статьи №:	Подмышкой		Голеностопный сустав		Коленный сустав	
	12-14лет	15-18лет	12-14лет	15-18лет	12-14лет	15-18лет

¹ Массарский А.С., Спортивная разминка в тепловых камерах// Теория и практика ФК, 1981-№3, с.49-51.

² Похачевский А.Л., Критерии переносимости физической нагрузки в самбо и борьбе дзюдо//Теория и практика ФК.-2018.-№6.-с.35.

	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
\bar{X}	36,5	36,6	36,1	36,5	35,5	35,9	36,1	36,6	35,3	35,7	35,5	36,3
ξ	0,09	0,08	0,09	0,09	0,11	0,18	0,09	0,08	0,21	0,25	0,25	0,09
M	0,02	0,02	0,03	0,02	0,04	0,06	0,03	0,02	0,06	0,07	0,07	0,02
T	5		11,0		5,7		13,1		4,3		11,4	
P,%	>0,1		>0,1		>0,1		>0,1		>0,1		>0,1	

Примечание: 1-показатели до разминки,
2-показатели после разминки.

Установлено, что на разных участках тела юных спортсменок после традиционной разминки температура увеличивается от 0,1 до 0,8 градусов у двух групп обследуемых. Ссылаясь на данные литературы, можно утверждать, что повышение температуры тела в результате выполнения физических упражнений является положительным явлением.¹ Свидетельством тому – обогревание организма и мышечной системы в первую очередь, а также готовность юных спортсменок приступить к основной части тренировочного занятия.

В то же время, как и в других случаях, сдвиги в показателях температуры тела в процессе разминки более выражены у спортсменок старшей возрастной группы (15-18 лет). Здесь по отдельным точкам различия в сравнении с более младшей группой (12-14 лет) составляют соответственно 0,1 и 0,4 градуса (табл.). Следует также отметить, что различия во всех случаях статистически достоверны ($P > 0,1\%$ значимости). Полученные нами данные получают свое подтверждение и в работах других авторов (Л.А.Романова, 2018).

Результаты изучения, анализа и обобщения существующих доступных литературных источников, а главным образом в итоге собственных исследований, представляется возможность отметить, что разминка призвана решать определенный круг практических задач технико-тактической, психологической и функциональной направленности.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, մ.գ.դ. Ե.Ս. Հակոբյանը:

¹ *Романова Л.А., Распределение температуры кожи в отдельных анатомических сегментах тела // Теория и практика ФК. -2018.-№6.-с.23-25.*

ՀՏԴ 908 (479.243)

Մշակութաբանություն

Սվետլանա ՊՈՂՈՍՅԱՆ

պ. գ. թ.

ՀԱԻ-ՀԱԹ

E-mail: sv_ethnomuseum@yahoo.com

**ԱՐՑԱԽԻ ԿԱՆԱՆՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ՏԱՐԱԶԻ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Արցախի և Մյունիքի տարագր միակն էր հայկական բազմահունք տարագրի համակարգում, որ պահպանվել էր մինչև 20-րդ դարավերջ: Այն ձևավորվել և հարստանել է այնպիսի էթնիկ միջավայրում, որտեղ չի եղել մշակութային ժառանգորդման խզում՝ հանգամանք, որը նպաստել է ախանդութային տարագրի պահպանմանը: Արցախյան տարագրի գեղագրորդման համակարգում ակնհայտ են նաև էթնիկ ընդհանրության գեղագիտական ճաշակի առանձնահատկություններ:

Արցախի ախանդակյան տարագրի համակարգում ասեղնագործությանը և ժանայկե երիզներով հարդարվել են կանանց հագուստի և գլխի հարդարանքի որոշ մասեր՝ ներքնագգեստի եզրերը և կրծքամասը, գլխաշոր թոռը, ճակատակալը և քունքամասի եռանկյունաձև զարդը: Գեղագրորդվել են նաև ազանեղիքի մասերը՝ գուլպան և ոտնամանը: Այս տարագրայինը հագուստի ասեղնագործ բանվածքները փոխարինվել են ժանեկանման արծաթյա կախիկներով և զարդերով: Կանանց զգեստի թևքերը և թևաբերանը հարդարվել են արծաթե զարդերով, որոնց տեղաբաշխվածությունից երևում է, որ դրանք անբազմակ են այնպիսի տեղերում, ուր մարմինն առավել խոցելի էր: Մյունիք-արցախյան զարդահամայնությունը գործածվել են զուգայթել, հատիկաշար եղանակով արված ծոծրակի հաստվածում գլխաշորին ամրացվող արծաթե խաչաձև կեռագրորդերը, որոնք իբրև տոտեմիատական հնամենի հավատալիքների դրսևորում, պաշտվող յոթնի ճանկերով պաշտպանել են կրողին հնարավոր չար, վնասաբեր ուժերից: Ուշագրավ զուգահեռներ կան այունիք-արցախյան կեռագրորդերի և վասպուրականյան կտավե եռանկյունաձև գլխաշորի ունեցած նշանակության, իմաստի մեջ. երկու դեպքում էլ դրանք միտված են պահպանելու կրողին ծոծրակի հաստվածում:

Բանալի բառեր՝ **ասեղնագործություն, ժանյակ, ժանյակե գլխաշոր-թոռ, տուտկապ, գուլպա, գեղագիտական ճաշակ, արծաթյա զարդեր:**

С.Г. Погосян

ОСОБЕННОСТИ ОРНАМЕНТА ТРАДИЦИОННОГО ЖЕНСКОГО КОСТЮМА АРЦАХА

Традиционный костюм Арцаха и Сюника был единственным в системе многообразного армянского национального костюма, который сохранился до конца 20-го века. Он сформировался и сохранился в такой этнической среде, где не было разрыва культурного наследия: обстоятельство, которое способствовало сохранению традиционного костюма. В системе декорирования арцахского национального костюма очевидны особенности эстетического вкуса этой этнической общности. В системе традиционного костюма Арцаха вышивкой и кружевными лентами были окаймлены некоторые части женской одежды и головного убора: края и грудь нижнего белья, головной убор-тор, налобные и височные (треугольные) украшения. Были также украшены детали обуви- носки и туфли. В этой группе традиционного костюма вышивки одежды были заменены кружевообразными серебряными подвесками и украшениями. Края рукавов и рукава женской одежды были украшены серебряными деталями, по расположению которых видно, что они были закреплены в тех местах, где тело было наиболее уязвимым. В Сюник-арцахском комплексе украшения были использованы серебряные крестообразные крючки, прикрепленные к головному убору на затылочной части. Они были проявлением тотемистических древних верований: когтями почитаемой птицы защищали владельца от возможных злых и вредных сил. Есть примечательные параллели в значениях сюник-арцахских крючков и треугольного головного убора васпуракана: в обоих случаях они защищают затылочную часть владельца.

Ключевые слова: вышивка, кружево, кружевной головной убор-тор, узелок (туткан), носки, нижнее белье, верхняя одежда, эстетический вкус, серебряные украшения.

S.H. Poghosyan

FEATURES OF TRADITIONAL COSTUME DECORATION OF ARTSAKH WOMEN

The national costume of Artsakh and Syunik was the only one in the Armenian multi-group costume system that was preserved until the end of the 20th century. It was formed and survived in such an ethnic environment where there was no rupture of cultural heritage - a circumstance, which contributed to the preservation of traditional costumes. The peculiarities of aesthetic taste of the ethnic community are obvious in the system of Artsakh costume decoration.

In the system of traditional costume of Artsakh some parts of the women's clothes and headdress- the edges of underwear and chest, the headscarf, the forehead adornment and the triangular temple pendant were decorated with embroidery and lace ribbons. Parts of footwear - shoes and socks were also decorated.

In this costume group, the embroidered cuts of the clothes were replaced with silver pendants and adornments. The sleeves of the women's dress

were adorned with silver ornaments, the placement of which showed that they were attached to the most vulnerable parts of the body.

In the jewelry set of Syunik-Artsakh , silver cruciform ornaments attached to a scarf in the nape part, were made in the form of a beaded necklace, which, ostensibly outside the totemistic beliefs, protected the wearer from possible evil, harmful forces with the claws of the worshiped bird.

There are remarkable parallels in the meaning and significance of Vaspurakan canvas triangular scarf and Syunik-Artsakh adornments. In both cases they are meant to protect the nape of the wearer.

Key words: *Embroidery, lace, lace scarf, bundle (tutkap), socks, underwear, outerwear, aesthetic taste, silver movable and fixed jewelry.*

Արցախը՝ Լեռնային Ղարաբաղը, էթնիկական և մշակութային առումով մտնում է Հայաստանի Արցախ-Ուտիքի պատմագագազրական մարզի մեջ: Մշակութային համակարգով՝ մարզի բնակչությունը, տեղական որոշ առանձնահատկություններով հանդերձ, կրում է հայոց ազգին բնորոշ մշակութային հատկանիշներ և ընդհանրություններ: Արցախի բնիկ բնակչությունը՝ արցախցիները, ի տարբերություն ուշ միջնադարում միջինասիական տափաստաններից այստեղ ներխուժած թյուրք-թաթարական վաչկատուն ցեղերի, բազում դարեր ի վեր, ընդհուպ մինչև մեր օրերը, վարել են հայ էթնոսին հատուկ կենցաղ և տնտեսություն:

Արցախի ավանդական տարազը շատ կարևոր էթնիկ ինքնության ցուցիչ և մշակութային ինքնատիպ տարր է:¹ Այն ընդգրկվում է Սյունիք-արցախյան տարազախմբի մեջ և ունի տարածման մեծ արեալ: Ըստ ազգագրական նյութերի՝ 19-րդ դարում Արցախում կենցաղավարել է տեղական ավանդութային տարազը, իսկ 19-րդ դարի վերջից կենցաղ է մտել երկրորդ՝ քաղաքային համալիրը, որը ձևավորվել էր թիֆլիսահայերի տարազի ազդեցությամբ:² Արցախի տղամարդու տարազը՝ նյութի ընտրության, գունային համակարգի, գլխի հարդարանքի ձևվածքի, հագուստի առանձին տարրերը կրելու եղանակի տեղական առանձնահատկություններով հանդերձ, բնութագրվում է արևելահայկական, ավելին՝ համակովկասյան գծերով: Այն, կապված կրողի՝ տղամարդու տնտեսական, սոցիալական և ընտանական համեմատաբար ազատ

¹ Պողոսյան Ս., Արցախի տարազը և նրա էվոլյուցիան, ԿԼԱ, 1988, 5-6, էջ 37-44: Պողոսյան Ս., Արցախի ավանդութային տարազը (19-րդ դ. վերջ-20-րդ.), Արցախ, հայ ժողովրդական մշակութային հետազոտման հարցեր, Երևան, 1992, էջ 32-33:

² Պողոսյան Ս., Ստեփանյան Ա., Սյունիք-Արցախի տարազը հայոց ավանդական տարազախմբի համակարգում /Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 417-425:

կարգավիճակի հետ, 20-րդ դարասկզբին աստիճանաբար դուրս է եկել գործածությունից¹:

Լեռնային Հայաստանի՝ Ջանգեզուրի, Միսիանի, Գորիսի, Կապանի շրջաններն ու Արցախը ընդգրկված են Սյունիք-Արցախի տարազախմբում: Ըստ հիշատակությունների ասեղնագործությունը բավական զարգացած է եղել Սյունիքի և Արցախի դեկորատիվ-կիրառական արվեստում: Դրանով հանդերձ կանանց հագուստը հարուստ չէր ասեղնագործ բանվածքներով: Ասեղնագործվել է վարտիքի եզրը՝ փողքակապը, շապիկի կուրծքը, ոսկերելով ասեղնագործվել են գլխի թագը, ճակատակապը: Շքեղ ու ճաշակով ասեղնագործվել են սրբիչները, վարագույրները, սփռոցները՝ բազմատեսակ զարդանկարներով: Սյունիք-Արցախում տարածված են եղել հնուց եկող *վերադիր* կոչվող կարերը, որոնցով հարդարվել են կենցաղային նշանակության առարկաները՝ բռնիչներ, սանրամաններ, ձիու ծածկոցներ, տուտկապ-բոխչաներ: Հաճախ *տուտկապ* կոչվող բոխչաները կարվել են խճանկարային ասեղնագործությամբ՝ տարբեր գույնի կտորներից կազմված նախշերով: Տարածված են եղել կենաց ծառի, Տ տառածևի, զանազան խաչաձևերի զարդանկարները: Մինչև 20-րդ դարի առաջին քառորդը դեռևս գոյություն ունեին գունավոր թելերից գործված ցանցաձև գդալամանները, որոնց հյուսվածքի հատման կետերը ասեղնագործվում էին:

Արցախի ժողովրդական արվեստում առանձնահատուկ տարածում գտած ասեղնագործությունն աչքի է ընկել կարատեսակներով և զարդանկարներով և նյութով՝ ասվեղեն, կտավ, մետաքս, բամբակ, տարբեր թելերով՝ բրդյա, վուշյա, բամբակյա, մետաքսյա, արծաթյա, ոսկերել, փայլուն, մետաղյա ժապավեն, ոսկյա և արծաթյա կլոր և տափակ քուղ, ուլունքով և մարգարտով: Ասեղնագործությունը որոշակի նմանություններ ուներ ոսկերչության, արծաթագործության հետ մանրարուք, թելքաշ եղանակներով:

Ուշագրավ էին արցախյան անշարժ՝ հագուստին ամրացված և շարժական զարդերի համալիրները: Արցախի ոսկերիչներն աշխատել են Շուշիում, Թաղերում, Հաղրութում, Ճարտարում, Գետաշենում և այլն: Ոսկերչությունն առավելապես զարգացած էր Շուշիում, որը կարևոր առևտրական կենտրոն էր: Հայկական մշակութային կենտրոն Շուշիում ոսկերչությամբ և արծաթագործությամբ գերազանցապես զբաղվել են հայ վարպետները. 173 վարպետներից 142-ը հայեր էին: Շուշեցի վարպետները, համահայկական ավանդույթները և գծերը պահպանելով հանդերձ, տիրապետել են նաև արծնակիտման եղանակին: Նրանք միաժամանակ պատվերներ ստացել են դրսից, որոնց արտադրանքը սպառվել է նաև

¹ *Погосян С. Г., Восточноармянский мужской костюм в общекавказском комплексе традиционной одежды//Археология, этнография и фольклористика Кавказа, Материалы международной конференции, Ереван, 17-18 ноября, 2003, Первопрестольный Святой Эчмиадзин, с. 227-231.*

անդրկովկասյան քաղաքներում¹: Շուշեցի վարպետները քանիցս մասնակցել են Անդրկովկասում, Պետերբուրգում, Լոնդոնում, Փարիզում և այլ վայրերում տեղի ունեցած միջազգային ցուցահանդեսների և արժանացել մրցանակների:

Ուշագրավ է, որ հնում կար նաև վերադիր ասեղնագործություն: Անցյալում մետաղյա-ոսկյա, բրոնզյա զարդանախշերը կարվել են հագուստին: Մետաղյա զարդերը ծակոտիներ կամ հետևի կողմից կանթ են ունեցել և կենդանական ջղերով, ամուր թելերով ամրացվել են կտորին:

Շատ մեծ տարածում են ունեցել տուտկապերը՝ բոխչաները: Դրանք տարբեր չափերի են եղել, և դրանց մեջ պահել են գլխի հարդարանքի մասեր, տոնական հագուստ, զարդեր, գուլպաներ և այլն: Քառանկյուն կտորը սովորաբար աստառով էր և ասեղնագործվել է երեսի կողմից: Քառակուսի կտրված կտորը/2x 2սմ / երկու անգամ ծավելել է և եռանկունու նման եռանկյուններով շերտ կազմել, որը կարվել է երեսի և աստառի մեջ: Եռանկյունիների շերտը ամուր է պահել տուտկապի եզրերը և գեղեցկացրել այն: Տուտկապի չորս ծայրերը վրա են բերել ծրարածև և ամրացրել քորոցով կամ կապիչներով: Զարդանկարները ոճավորված բուսանախշեր են, գործվել են գունավոր մետաքսաթելերով, հաճախ՝ ոսկեթելով: Տուտկապերը մեծ դեր ունեին օժիտի մեջ: Եղել են նաև անձեռոցիկներ, ձեռքի թաշկինակներ, գլխի ծածկոցներ:

Աղջիկները, հարսները ասեղնագործել են ուսաշորերը, խցանները, տղամարդկանց ոտքի փաթաթանները: Ուշագրավ է նորահարսի օժիտը, որտեղ տեղ էին գտնում աղջկա կողմից պատրաստված շապիկներ, ուսնոցներ, թաշկինակներ, գոտիներ, ինչպես նաև կենցաղային իրեր՝ սրբիչներ, սփռոցներ և անձեռոցիկներ, բարձի երեսներ և ծածկոցներ, վարագույրներ, վերմակի երեսներ և պատի զարդեր, գորգեր, քիսաներ դրամի և ծխախոտի, ժամացույցի բուն, ասեղաման և սանրաման, սրբիչի կախիկներ և այլն:

Արցախի և Սյունիքի կնոջ տարազը շատ հարուստ չէ ասեղնագործությամբ: Նախշազարդվել են վարտիքի եզրերը, զգեստի կրծքամասը²: Սյունիքի և Արցախի տարազը հայկական տարազի համակարգում առանձնանում է խիստ և զուսպ ոճով: Ստեփան Լիսիցյանը նշել է, որ այն խույս է տալիս ասեղնագործ զարդանախշերից, որոնցով այդչափ պարծենում էին առավելապես Հայկական լեռնաշխարհի արևմտյան կողմերում բնակվող հայերը³: Կանաչ-կապույտ բրդե և բամբակե թելերով պարզ երկրաչափական զարդանախշերով ասեղնագործվում էր կանանց և տղամարդու շապկի օձիքն ու կրծքի բացվածքը: Սյունիք-արցախյան կանանց վերնագզեստ-արխալուղի եզրերը հարդարվել են բուսական զարդանախշի նեղ ժապավենով: Բուսական զարդամոտիվներ արել

¹ Մարգարյան Հ., Արցախի ոսկերչական արվեստը 19-20-րդ դարի սկզբին, Արցախ, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երևան, 1992, էջ 19-20:

² Դավթյան Ս., Բանբեր Մատենադարանի, Հայկական ասեղնագործության մի հին նմուշ, Երևան, 1956, №3, էջ 9:

³ Մտ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 116:

են կանանց թագ-ճակատնոցներին, վարտիքների փողքերին: Տոնական հագուստի եզրերն ու քղանցքը հարդարվել են նաև արծաթաթել-մետաքսաթել երկշար բուսական ժապավենով: Կարմիր, կապույտ և սպիտակ թելերով բուսական զարդամոտիվներ են ասեղնագործել կանանց գլխի հարդարանքի մաս կազմող եռանկյունաձև ականջուկներին: Թոչնաբուսական զարդամոտիվներով հարդարել են կանանց թագ-ճակատակալները, տոնական վարտիքների փողքերը: Կանայք նման նախշազարդ ներքնաշորեր կրել են Շուշիում, Նուխիում, Շամախիում, Գանձակում, Նախիջանում, ինչպես նաև Երևանում, Թիֆլիսում և Բաքվում: Ս. Դավթյանը ակնհայտ նմանություններ է տեսել Սյունիքի և լեռնային Հայաստանի այլ շրջանների՝ Շամշադիի, Իջևանի, Դիլիջանի և Գուգարքի ասեղնագործության մեջ¹: Ասեղնագործվել են նաև չմուշկ-ոտնամանները ոսկեթելով և արծաթաթել բուսանախշով, ակնեղենի օգտագործմամբ: Շամախու, Նուխու, Գանձակի հայ կանայք կրել են կարճ վերնագգեստներ՝ ոսկեթել բուսանախշերով հարուստ ասեղնագործությամբ, որն արվել է հագուստի եզրագծերին:

Արցախի ավանդական տարազի համակարգում ասեղնագործվել են ճակատկապը/ ճակատնոցը, ականջուկ-հարսնանոցը, հագուստի կուրծքը: Այս տարազախմբում հագուստի վրայի ասեղնագործ մասերը փոխարինվել են ժանեկանման արծաթյա կախիկներով և զարդերով: Այս տարազում կանանց զգեստի թևքերը և թևաբերանը հարդարվել են արծաթե բոժոժների շարանով, շեղանկյունաձև, տափակ ու սնամեջ կախիկներով, որոնց տեղաբաշխվածությունից երևում է, որ դրանք ամրացվել են այնպիսի տեղերում, ուր մարմինն առավել խոցելի էր: Կնոջ գլխի զարդահամալիրում առատ են կիսալուսնաձև, եռանկյունաձև զարդակախիկները, որոնք հիմնականում արծաթյա են և խորհրդանշել են կին-լուսին կապը: Գլխազարդերից օգտագործել են արծաթյա կեռազարդը, երեսնոցը և ճակատի դրամաշարը: Այս զարդահամալիրում գործածվել են զուգաթել, հատիկաշար եղանակով արված ծոծրակի հատվածում գլխաշորին ամրացվող արծաթե խաչաձև կեռազարդերը, որոնք իբրև տոտեմիստական հնամենի հավատալիքների դրսևորում, պաշտվող թոչնի ճանկերով պաշտպանել են կրողին հնարավոր չար, վնասաբեր ուժերից: Ուշագրավ զուգահեռներ կան Սյունիք-արցախյան կեռազարդերի և վասպուրականյան կտավե եռանկյունաձև գլխաշորի ունեցած նշանակության, իմաստի մեջ. երկու դեպքում էլ դրանք միտված են պահպանելու կրողին ծոծրակի հատվածում: Քունքակախիկների դեր են ունեցել ոսկե, արծաթե գնդաձև ու սնամեջ կախիկների շարան- բոժոժները, որոնք ամրացվել են եռանկյունաձև ականջակալի վրա: Կանանց առանձնահատուկ զարդերից են արծաթե, ոսկե դրամներով ճակատնոցները՝ կարմիր, կանաչ թավշյա

¹ Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, էջ 24:

ժապավենների վրա շարված և գույգ թռչնի և կենաց ծառի հորինվածքով ճակատակալ-թագերը:

Ոսկյա և արծաթյա գոտին և մատանիները տղամարդու կարևոր զարդերն էին: Գոտի-կամարը տղամարդկության և արժանապատվության խորհրդանիշ էր: Այն կրվել է գոտկատեղում և ամրացվել հատուկ ճարմանդի միջոցով, միանալով հենց պորտի վրա, որը մարմնի կենտրոնն էր, սերնդի հիմքը և մարդու ձևավորման սկիզբը: Գեղեցկացնելով մարդուն, ավելի ակնահաճո դարձնելով նրան, շեշտելով սեռատարիքային կարգավիճակը՝ զարդերը միաժամանակ միտում են ունեցել պահպանել կրողի առողջությունը, հիվանդանալու դեպքում՝ բուժել նրան:

Գուլպաները Զանգեզուրում և Արցախում հարդարվել են կեռագարդերով և S-աձև զարդանկարներով: Արցախի կանանց գուլպաները կարճաճիտք էին լայն շերտ տախտակով և նեղ գծանախշերով: Թաթի տակ և երեսին գործել են սպիտակ քառանկյուն նախշ՝ նախշազարդ շրջանակով: Լինում էր տարբերակ, երբ երեսի կողմից գործվել են կտուց կտցի երկու թռչնակ և ծաղկանախշեր: Գուլպայի երեսի նախշը ստորինից անջատելու համար կատարվել է ասեղնագործ ճյուղակար: Գուլպայի երեսին չորս կողմը նախշազարդ շրջանակ է արվել: Երբեմն կրնկամասը և թաթամասերը հարդարվել են թռչնանախշերով, իսկ շրջանակը զարդարվել է հավերժանախշով: Գուլպայի վերնամասը հարդարվել է շեղ և ոլորուն նախշերով: Թաթի ծաղկանախշը եզրագործվել է ասեղնակարով: Կար նաև տարբերակ, երբ սպիտակ շրջանակի փոխարեն գործել են հյուսեր, իսկ թռչնանախշերը ասեղնագործվել են ծաղկանախշերով: Նման շաթալ կոչված գուլպաները գործվել են շյուղերով և հելունով: Եղել են բրդյա, բամբակի թելերից, այծի մազից, մետաքսաթելից (շերամի թելից)՝ կազի գուլպա անվամբ: Արցախում երկարաճիտ գուլպաներ կրել են տղամարդիկ, իսկ կարճաճիտքովը՝ միայն կանայք: Կիրառված նախշանկարները հայտնի էին շեյթան, շաթալ, ծտեր, իրեքպտանե, օխտրպտանե անուններով: Գուլպա գործել են նստած, կանգնած, հանդ գնալիս, զրուցելիս և այլն:

Արցախի տարագում հանդիպող կարմիր-կանաչ ոլորուն թելերից նարոտը խորհրդանշել է հարսնացուին՝ թագուհուն, և փեսացուին՝ թագավորին, ըստ որում, կարմիրը կինն էր, իբրև սաղմը կրող, կանաչը՝ տղամարդը՝ որպես սերնդաշարունակությունը ապահովող: Գանձակում նարոտի ձևով կանաչ-կարմիր-սպիտակ ոլորուն թելն ամրացրել են թագավորի գլխարկին: Կանաչ-կարմիրը շատ ցայտուն դրսևորում ունի Արցախի կնոջ տարագում: Կանաչը, բնության, բուսականության գույնը լինելով, բույսի և հավերժ երիտասարդության խորհրդանիշն է: Կանաչ-կարմիրը գերակշռել է հարսանեկան արարողության և օժիտի համար գործված գուլպաների, հագուստի մասերի զարդանախշերում, գունային լուծումներում և համադրություններում: Կարմիր-սպիտակը ևս իգականի և արականի միությունն է, որտեղ կարմիրը արյան, կնոջ գունային նշանակումն է, իսկ

սպիտակը՝ արական սերմի: Ոլորուն կարմիր-կանաչ, կարմիր-սպիտակ թելերը խորհրդանշել են իզականի և արականի միախառնումը, որպես միավորման խորհրդանիշ ու նոր կյանքի սկիզբ: Առարկայի զարդանախշումը հատուկ իմաստ ուներ, իսկ զարդանախշ առարկան առանձնահատուկ նշանակություն էր ձեռքբերում: Զարդանախշումը առարկային և՛ գեղագիտական, և՛ պաշտպանական նշանակություն տալու միտում է ունեցել: Կիրառական, գործնական հարթությունից այն տեղափոխվել է նշանային համակարգ՝ ձեռքբերելով սեմանտիկ հատկություն և իմաստ:

Շուշի քաղաքում օգտագործված մետաքսյա կանաչ կտորից զգեստն ուներ կրկնակի թևքեր, որոնցից երկուսը զարդաթևքեր էին, երկար, սրածայր և մինչև անուրթները ճեղքով: Իրական թևքերը կարմիր գույնի մետաքսյա ծաղկազարդ կտորից էին, որոնք ամրացվել են ուսագլխին՝ դեկորատիվ թևքի տակից, աստառին: Թևքաբերանները հարդարվել են սուրմայով կազմված եռանկյունների թեք շարանով: Վերնագգեստի եզրերը, բացի կարմիր գույնի կտորից երիզի, հարդարվել են սև գույնի թավշյա ժապավենով, որի վրա ոսկեթելով ասեղնագործել են բուսանախշեր կամ երկրաչափական զարդանկարներ՝ լիցք հարթակար եղանակով: Թավշյա ժապավենը եզրապատել են կարմիր, կանաչ, սպիտակ մետաքսյա թելերով հյուսած տրեզով: Երբեմն այդ տրեզի վրա ասեղնագործել են վերնագգեստը կրողի անուն-ազգանվան սկզբնատառերը: Մինչև վերնագգեստի քղանցքը հասնող դեկորատիվ թևքերը հարդարվել են արծաթյա գնդաձև զարդերով: Տաք վերնագգեստ քուրքի եզրերը հարդարել են կանաչ գույնի, մետաքսյա երկտակ ծալած, շեղ ու նեղ կտորի շերտով և մորթով: Անուրթատակերի ճեղքերը հարդարվել են դարձյալ կանաչ գույնի կտորի երիզով: Վարտիքի նեղ փողաբերանին կարվել է սև գույնի մահուռյա կամ թավշյա կամ էլ մետաքսյա կտոր/ փղկաքող: Դրա վերնի եզրին կարվել է վերադիր ասեղնագործ ժանյակ, որը երևում էր վրայի շապկի տակից:

Շուշի քաղաքում, 1895 թվականի պաշտոնական տվյալներով, կար մեկ մետաքս մանող և մեկ մետաքս ոլորող գործարան՝ համապատասխանաբար 80 և 90 բանվորներով, իսկ Շուշու գավառում կար ընդհանուր 12 մետաքսի գործարան՝ 720 բանվորական ուժով: Մեկ այլ տվյալով՝ գավառում հաշվվում էր 26 հիմնարկ, որից 16-ը՝ մանարան, 10-ը՝ մետաքս ոլորող: 1895 թվականին պատրաստվել է 1100 փութ մետաքս և 280 փութ ֆրիզոն: Մինչև 1883 թվականը գավառում պատրաստված թելն ուղարկվել է Մարսել, իսկ դրանից հետո մետաքսաթելը ուղարկվել է Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա: Շուշի քաղաքում 1895 թվականին աշխատել են 80 տղամարդ (29 բանվորով և 62 աշակերտով) և 1 կին դերձակ (մեկ բանվորով): Դերձակները կատարել են ոչ միայն մի գյուղի պատվերները, այլ նաև շրջակա գյուղերինը: Շուշի քաղաքում եղել է 4 թաղիքագործ: Աշխատել են նաև գլխարկ կարող և կոշկակար ու մաշկակար

վարպետներ. ըստ որում՝ քաղաքում նրանք բացարձակ մեծամասնություն են կազմել Շուշիի գավառի յուրաքանչյուրից երեքական վարպետի դիմաց:¹

Բամբակյա և մետաքսյա թաշկինակները կարևոր նշանակություն և լայն կիրառություն են ունեցել ամուսնական սովորույթներում և հարսանեկան արարողակարգում: Մրգերի, քաղցրավենիքի և զարդերի հետ դրանք պահանջված և ընդունված ընծաներ են համարվել: Շատ գործածական էին դրամ, ծխախոտ, մանր իրեր պահելու քսակները: Ասեղնագործվել են ասեղամանները, ասեղի բարձիկները, մկրատների, սանրերի գրպանիկները՝ բները, ժամացույցների ամանները: Քաղաքում օգտագործվել են ասեղնագործ դեկորատիվ բնակարներ, դիմանկարներ, թեմատիկ պատկերներ, նկարների շրջանակներ: Յուրաքանչյուր կին աշխատել է գեղեցիկ ձեռագործներով հարդարել իր միկրոտիեզերքը՝ տունը՝ առավել աչքի ընկնող տեղում ներկայացնելով դրանք: Շքեղ, ճոխ բանվածքները խնամքով պահպանվել և փոխանցվել են սերնդեսերունդ՝ որպես ընտանեկան մասունքներ:

Տեղական ասեղնագործությունը առանձնացվել է յուրահատուկ ոճով, կարատեսակներով, զարդանկարային կառուցվածքով: Կիրառվել են ուռուցիկ, գծային հարթակարը, շղթայակարը, վերադիր կարը, իսկ շյուղակարը, հետասեղը, կոթ ասեղը, վերադիր կարը, ուռուցիկ հարթակարը հատկապես կիրառվել են եկեղեցական վարագույր, ծածկոց, սփռոց, սրբիչներ, քսակ, ասեղաման և այլ առարկաներ ասեղնագործելիս:

Սյունիքի և Արցախի հին ասեղնագործությունները կատարվել են մետաքսաթելով, ոսկեթելով՝ մարգարիտներով և գոհարներով համադրված: Մետաղյա, թանկարժեք ճարմանդները ամրացրել են ասեղնագործ գոտիները: Թավշյա երկար գոտիները հարդարվել են մետաքսաթելով արված զարդանկարներով:

Արցախյան ժանյակի օրինակ էր Շամախիի թոռը՝ կնոջ գլխի ծածկոցը, ճաղերով գործած ցանցկեն շալը: Այն մոտ 1 մետր կամ ավելի երկարություն ուներ, նույնքան կամ փոքր-ինչ պակաս լայնությամբ: Օրիորդները կրել են ճերմակ և կարմիր, իսկ այրիները կամ տարեց կանայք՝ մուգ գույների : Թոռ գործող կինը նստել է ներքնակի վրա և դազգահը դրել իր առջև: Անընդհատ աշխատելով՝ մեկ ամսվա ընթացքում կարող էին գործել մեկ շալ : Թոռը գործելուց հետո այն եփել են օձառով²: Նման ցանցագործ երկար վարագույրներ, մեծ սփռոցներ շամախեցի վարպետուհիներին պատվիրել են

¹ Լալայան Ե., Երկեր, հ.2, Արցախ, Երևան, 1988, էջ 84-85:

² Թոռը գործել են միլով և կեն ասեղով: Գործ են ածել դազգահ՝ եռանկյունի պրիզմա կավից, երբեմն քարից: Պրիզման դրվել է մի երեսի վրա, հակառակ կողմի ծայրերում երկու եղեգ են խրել, կես-կես արշինի չափով: Ուղղահայաց տեղադրված եղեգների մեջ թել են կապել և այդ թելին կապել թոռի ծայրը: Որքան գործել են՝ դրանք փաթաթել են եղեգներին: Ամեն տան կարելի էր տեսնել նման դազգահներ: Դավթյան Ս., Հայկական ժանյակ, Երևան, 1966, էջ 13:

անդրկովկասյան քաղաքների՝ Բաքվի, Շուշու, Թիֆլիսի, Նուխու ունևոր դասի կանայք՝ իրենց սենյակները զարդարելու համար:

Շամախեցի կնոջ տարագի կարևոր մաս հանդիսացող գլխաշոր թոռը ցանցկեն ժանյակի հրաշալի նմուշ է: Դա հյուսել են կանայք: Շամախին հայտնի էր իր մետաքսյա կերպասներով, որը մետաքսաթելի հետ արտահանվել է Ռուսաստան: 19-րդ դարում Թառայան եղբայրների արհեստանոցում գործվել են մետաքսաթել կերպասներ, որոնք հարդարվել են բուսական բարդ նախշերով, վարդերի փնջերով:

Ժանյակը կարվել է կանանց սպիտակեղենի, տարբեր կարերով ասեղնագործված տուտկապերի, ծածկոցների եզրերին: Ասեղի ժանյակով եզրագարդվել են թաշկինակները, որոնք կարվել են հենց կտորի եզրերին: Ասեղնագործ ժանյակները գործվել են կարի հասարակ ասեղով, կոճի կամ մետաքսե բարակ թելերով, առանց կտորի, ինչպես ասում են, օդում: Ժանյակը կարվել է հանգույց-օղակով, որը կազմվում է հանգույցի արանքի թելից:

Այսպիսով, արցախյան տարագին բնորոշ է և շատ տիպական ասեղնագործության լիցք, *հարթակար վերադիր, երբեմն ոսկեթել* եղանակներով արված գեղազարդումը, կտորների խճանկարով պատրաստված մանկական պայուսակները և ուսաշորերը, բռնիչները, ոսկեթել ասեղնագործությամբ և բուսանախշերով հարդարված ոտնաման չմոշկները, ոսկեթել և մետաքսաթել ասեղնագործած վարտիքների փողքերը, ինչպես նաև տարբեր եղանակներով արված տուտկապերը: Շատ առանձնահատուկ ձևավորում ունեն կանանց կարճաճիտք սպիտակ հայելանման հատվածով, վիշապանախշերով և գունաշերտերով նախշազարդ մետաքսյա և բրոյա գուլպաները:

Այս բոլորը որոշակի ձևավորումից հետո կարելի է և հանձնարարելի է կիրառելու ժամանակակից հուշանվերային արտադրության մեջ՝ շեշտելով Արցախ-սյունիքյան մշակութային յուրահատկությունները ժողովրդական մշակույթի այս ինքնատիպ ոլորտում:

Գրականություն

1. **Դավթյան Ս.**, Հայկական ասեղնագործության մի հին նմուշ, Բանբեր Մատենադարանի, Երևան, 1956, № 3:
2. **Դավթյան Ս.**, Հայկական ժանյակ, Երևան, 1966:
3. **Դավթյան Ս.**, Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972:
4. **Դավթյան Ս.**, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1981:
5. **Լալայան Ե**, Երկեր ,հ.2, Արցախ.Վարանդա, Գանձակ, Երևան, 1988:
6. **Լիսիցյան Մտ.**, Չանգեզուրի հայերը, Երևան, 1963:

7. **Մարգարյան Հ.**, Արցախի ոսկերչական արվեստը 19-20-րդ դարի սկզբին, Արցախ, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երևան, 1992, էջ 19-20:

8. **Պողոսյան Ա.**, Բալայան Մ., Արցախի պատմաերկրագիտական թանգարանի զարդերի հավաքածուն, Երևան, 2020:

9. **Պողոսյան Ս.**, Արցախի ավանդությանին տարազը/19-րդ դ. վերջ-20-րդ դ./, Արցախ, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երևան, 1992, էջ 32-33:

10. **Պողոսյան Ս.**, Հարսանեկան հագուստը Շիրակի և Ջավախքի պատմագագրական շրջաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1991, թիվ 3, 10 էջ:

11. **Պողոսյան Ս.**, Մանկական հագուստը Շիրակի և Ջավախքի պատմագագրական շրջաններում (XIXդ. ս.-XXդ. վ.) ԼՀԳ, 1993, թիվ էջ 78-94:

12. **Պողոսյան Ս.**, Տարազի պատմությունից. հայ-հունահռոմեական և հայ-պարթևական փոխառնչություններ Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Գիտաժողովի զեկ., Երևան, . 2001, էջ 73-79:

13. **Պողոսյան Ս.**, Հայկական տարազի համալիրները/պատմագագրական ակնարկ/ Հեղինե Փափազյան, Հայկական տարազ, Երևան, 2002, էջ 13-28:

14. **Պողոսյան Ս.**, Հայկական զարդերը որպես նշաններ , «Մովսես Խորենացի» հանդես, 2004, №2, էջ 31-36:

15. **Պողոսյան Ս.**, Մեղրու ավանդական տարազի տոնածիսական համալիրը Հայ ժողովրդական մշակույթ, XII, Երևան, 2005, էջ 120-126:

16. **Պողոսյան Ս.**, Սյունիք-Արցախի տարազը հայոց ավանդական տարազախմբի համակարգում/Լեոնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրություններ, Երևան, 2006, էջ 129-132:

17. **Պողոսյան Ս.**, Հայկական զարդերը // Նայիրի Տարեգիրք Բ, «Նայիրի» հրատարակչություն, Թեհրան, 2008, էջ 471-477:

18. **Պողոսյան Ս.**, Հայկական տարազ, Նայիրի Տարեգիրք Բ, «Նայիրի» հրատարակչություն, Թեհրան, 2008, էջ 477-482:

19. **Պողոսյան Ս.**, Կովկասյան տարազով կերպարներ եվրոպական փորագրանկարներում// Ավանդականը և

արդիականը հայոց մշակույթում(Հայ ժողովրդական մշակույթ 16), 2015, էջ 111 -122:

20. **Պողոսյան Ս.**, Տարազի և զարդերի արտացոլանքը Ակսել Բակունցի երկերում, Բակունցյան ընթերցումներ, Գորիս, 2019, հունիսի 13-14:

21. **Պողոսյան Ս.Հ.**, 2019, Սյունիքի տարազը, Սյունիքը կրթության և մշակույթի օջախ, Երևան, 2019, էջ 216-225:

22. **Մարգարյան Ա.**, Արցախի ժանյակներ, Ստեփանակերտ, 2006:

23. **Ստեփանյան Ա.**, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, Երևան, 2007, ՀԱԲ, հ.22, էջ7-131:

24. **Погосян С. Г.**, 2003, Восточноармянский мужской костюм в общекавказском комплексе традиционной одежды// Археология, этнография и фольклористика Кавказа, Материалы международной конференции, Ереван, 17-18 ноября, 2003, Первопрестольный Святой Эчмиадзин, с. 227-231.

25. **Погосян С. Г.**, Одежда. В кн.: Армяне. Отв. ред. Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц; Ин-т этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН; Ин-т археологии и этнографии НАН РА. М.: Наука, 2012, с. 247-264.

26. **Погосян С. Г.**, 2018, Орнамент армянской народной одежды/ ритуальный, цветовой, знаковой аспекты/, Орнаментальные ритмы Евразии. Знаки. Символы.Смыслы.Сборник выступлений международной конференции. Наследие содружества . традиции для будущего, с.127-135.

27. **Poghosyan S.**, 2001, Costume, in: Armenian Folk Arts, Culture, and Identity Abrahamyan L., Sweezy N. (ed.), Indiana Unuversity Press, p. 178– 194.

28. **Pogossian S.**, 2007, Lecriture dans ls tradition poputarire Armenienne, Armenie La magie de Recrit, Marsel, 252-253.



Նկար 1ա, 1բ. Արցախ-Սյունիքի կանանց ավանդական տարագ, 19-րդ դար, Հայոց ազգագրության թանգարանի ցուցադրություն



Նկար 2. Արցախ-Սյունիքի տարագախմբի կանանց գլխի հարդարանք, Հայոց ազգագրության թանգարանի հավաքածու



Նկար 3. Մանուշակ Ոսկանյանը Արցախի ավանդական տարազով,
Ստեփանակերտ, 1970-ական թթ.



Նկար 4. Տատիկը ավանդական տարազով, Ստեփանակերտ, 1993 թվական



Նկար 5ա, 5բ, 5գ. Կնոջ գլխաշոր-թոռեր, Արցախ, Հաղրուֆի շրջան, գյուղ Տող, 20-րդ դարի սկիզբ



Նկար 6. Կնոջ գուլպա, Արցախ-Սյունիք, 19-րդ դար



Նկար 7. Կնոջ ոստաման-չմոշկ, Արցախ-Սյունիք, 19-րդ դ. վերջ



Նկար 8ա, 8բ. Տուտկապ-բոխչաներ, 20-րդ դարի սկիզբ



Նկար 9. Տարեց կին ավանդական տարագով, Աթայան Մայկո, Լեռնային Ղարաբաղ, Թաղավարդ, 1950-ական թթ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 336.714Տնտեսագիտություն*Արևիկ Ալեքսանյան**ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս,**Հայ-ռուսական համալսարանի տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնի հայցորդ**E-mail: arevik.aleksanyan@bk.ru*

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում հիփոթեքային վարկերի ֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև դրանց ընդլայնման ուղիները: Այդ նպատակով ուսումնասիրվել են ՀՀ-ում գործող հիփոթեքային վարկավորման մոդելները, հիփոթեքային վարկավորման վերաֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև մշակվել է հայեցակարգ, համաձայն որի՝ ՀՀ-ում պետք է ստեղծվի Պետական հիփոթեքային վարկավորման արժեթղթավորման հիմնադրամ, որի գործառույթը լինելու է վարկավորող կազմակերպություններից հիփոթեքային վարկերի «փուլերի գնումը» և դրանց ապահովությամբ հիփոթեքային պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումը: Այդ հիմնադրամի և վարկավորող կազմակերպությունների միջև պայմանագրերը լինելու են ունիֆիկացված:

Բանալի բառեր՝ հիփոթեքային վարկ, արժեթղթավորում, հիփոթեքային պարտատոմսեր, ակտիվներով ապահովված արժեթղթեր, վերաֆինանսավորում, որակավորված վարկեր, պետական հիփոթեքային հիմնադրամ, իրացվելիության ռիսկ, վարկային ռիսկ, տոկոսադրույքի ռիսկ:

А.Алексян

ПУТИ РАСШИРЕНИЯ ФИНАНСОВЫХ МЕХАНИЗМОВ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В АРМЕНИИ

Целью исследования является изучение механизмов финансирования ипотечных кредитов в Армении, а также пути их расширения. С этой целью были изучены действующие в Армении модели ипотечного кредитования, механизмы рефинансирования ипотечного кредитования, а также разработана концепция, согласно которой в Армении должен быть создан

Государственный ипотечный кредитный фонд, функцией которого будет «покупка пул» ипотечных кредитов у кредитных организаций, выпуск и размещение ипотечных облигаций с их обеспечением. Договоры между фондом и кредитными организациями будут унифицированы.

Ключевые слова: *ипотека, секьюритизация, ипотечные облигации, обеспеченные ценные бумаги, рефинансирование, государственный ипотечный фонд, риск ликвидности, кредитный риск, процентный риск.*

A. Aleksanyan

WAYS TO EXPAND FINANCIAL MECHANISMS FOR MORTGAGE LENDING IN ARMENIA

The purpose of the study is to study the mechanisms for financing mortgage loans in Armenia, as well as ways to expand them. For this purpose, the existing models of mortgage lending in Armenia, mechanisms for refinancing mortgage lending were studied, and a concept was developed according to which a State Mortgage Credit Fund should be created in Armenia, the function of which will be to “purchase a pool” of mortgage loans from credit organizations, issue and place mortgage bonds with their security. Agreements between the fund and credit institutions will be unified.

Key words: *mortgage, securitization, mortgage bonds, secured securities, refinancing, state mortgage fund, liquidity risk, credit risk, interest rate risk.*

Հիփոթեքային վարկավորման ֆինանսավորման մեխանիզմները ենթադրում են հետևյալ խնդիրները և դրանց լուծման մոտեցումները.

1. ֆինանսավարկային կազմակերպությունը ինչ միջոցների հաշվին է ֆինանսավորում իր կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերը,

2. գործում են, արդյոք, վերաֆինանսավորման մեխանիզմներ:

ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման մեխանիզմների ընդլայնման ուղղությամբ բավականին լուրջ քայլեր են կատարվել. ներդրվել են հիփոթեքային վարկավորման երեք հիմնական մոդելներից երկուսը՝ բաց հատյալ և բաց ընդլայնված՝ միամակարդակ և երկամակարդակ մոդելները, ինչպես նաև հիփոթեքային վարկավորման վերաֆինանսավորման մեխանիզմը: ՀՀ-ում ֆինանսական ինստիտուտները սկսեցին հիփոթեքային վարկեր տրամադրել 2005 թ-ից: Որպես առաջին մոդել հանդես էր եկել բաց հատյալ մոդելը, ինչը ենթադրում էր, որ ֆինանսական ինստիտուտները հիփոթեքային վարկեր էին տալիս իրենց տրամադրության տակ եղած դրամական միջոցների, հիմնադրիների կողմից կատարված ներդրումների, հաճախորդների դեպոզիտային հաշիվների մնացորդներից և այլն:

Բաց ընդլայնված մոդելի ներդրման նպատակով ՀՀ-ում 2008 թ. մայիսի 26-ին ընդունվեցին երկու օրենքներ՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին»: «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ներդրվեց բաց ընդլայնված միամակարդակ մոդելը, ըստ որի՝ բանկերը և վարկային կազմակերպությունները իրենց կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ապահովությամբ թողարկում են պարտատոմսեր, որոնցից ստացված միջոցների հաշվին ֆինանսավորում էին հաջորդ հիփոթեքային վարկերը: Համաձայն այդ օրենքի՝ **ապահովված հիփոթեքային պարտատոմսը** բանկի կամ վարկային կազմակերպության թողարկված, հրապարակայնորեն առաջարկվող պարտատոմս է, որն ապահովված է հիփոթեքային վարկերի, ինչպես նաև նշված օրենքով սահմանված այլ ֆինանսական ակտիվների գրավով¹:

2017 թ. դեկտեմբերի 12-ին, «ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում «Արարատ Բանկ» ԲԲԸ-ն տեղաբաշխել է «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՍՊԸ-ի կողմից թողարկված 100 մլն ՀՀ դրամ և 500 հազար ԱՄՆ դոլար ծավալով առաջին ապահովված հիփոթեքային պարտատոմսերը²:

Բաց ընդլայնված երկմակարդակ մոդելը ներդրվեց «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, համաձայն որի՝ Արժեթղթավորման հիմնադրամը օրենքին համապատասխան ստեղծված և բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման նպատակ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է³: Նույն օրենքով արժեթղթավորումը սահմանվում է հետևյալ կերպ. «Արժեթղթավորում՝ գործընթաց, որի միջոցով նախաձեռնողը կամ վաճառողն արժեթղթավորման հիմնադրամին վաճառում է ակտիվներ՝ արժեթղթավորման հիմնադրամին փոխանցելով այդ ակտիվների նկատմամբ փոխանցման համար անհրաժեշտ բոլոր իրավունքները, իսկ արժեթղթավորման հիմնադրամը թողարկում է արժեթղթեր ապահովված գնված ակտիվներով և այդ ակտիվներից ստացվող վճարներով: Որպես նախաձեռնող կարող է հանդես գալ բանկը կամ վարկային կազմակերպությունը, որը վաճառում է իր ակտիվները Արժեթղթավորման հիմնադրամին: Ակտիվների խմբում կարող են ներառվել այն ակտիվները, որոնք արժեթղթավորման հիմնադրամին ակտիվների վաճառքի օրվա դրությամբ ծանրաբեռնված չեն դրանց նկատմամբ երրորդ անձանց իրավունքներով ու պահանջներով և ազատ են որևէ

¹ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

² Արարատ Բանկ ՓԲԸ պաշտ. կայքէջ՝ <https://www.araratbank.am/hy/irakanacvats-toxarkumner/124/>, մուտք է 14.11.2021թ.:


³ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

սահմանափակումից¹: Ակտիվներով ապահովված արժեթղթերը կարող են լինել պարտատոմսերի կամ մասնակցության վկայագրերի տեսքով:

Անհրաժեշտ է նշել, որ երկմակարդակ մոդելը ՀՀ-ում այդպես էլ չի գործարկվել, քանի որ 2015 թ -ին սեպտեմբերի 15-ին ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցված «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Լ»-ը՝ որպես արժեթղթավորման առաջին հիմնադրամ, նախաձեռնողներից գնել է միայն ՓՄՁ վարկեր, գյուղատնտեսական և սպառողական վարկեր:

Հիփոթեքային վարկերի ֆինանսական ռեսուրսների ընդլայնման համար մեծ կարևորություն ունի նաև վերաֆինանսավորող ընկերությունների առկայությունը: Տվյալ դեպքում վարկատու կազմակերպությունը, տրամադրելով հիփոթեքային վարկը, դիմում է վերաֆինանսավորող կազմակերպությանը՝ այն ֆինանսավորելու նպատակով²: ՀՀ-ում առկա են վերաֆինանսավորում իրականացնող երկու ընկերություններ՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ, որոնց միակ բաժնետերը ՀՀ Կենտրոնական բանկն է:

«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գրանցված է ՀՀ ԿԲ-ի կողմից 16.06.2009թ-ին (29902,4 մլրդ ՀՀ դրամ կանոնադրական կապիտալ): Ընկերությունը վերաֆինանսավորման նպատակով վարկեր է տրամադրում ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին, այսինքն՝ ծառայություններ չի մատուցում վերջնական սպառողներին: Ընկերության կողմից վերաֆինանսավորված վարկերը ներկայացված են գծապատկեր 1-ում:




¹ Նույն տեղը, հոդված 23:

² «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ, «Բնակարանային միկրովարկերի և էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի վերաֆինանսավորման կարգ», 22.04.2014թ., թիվ 009 Լ որոշում, էջ 6:

Գծապատկեր 1. Ազգային հիփոթեքային ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի դինամիկան 2012-2020 թթ. ¹

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն, որը գրանցված է ՀՀ ԿԲ-ի կողմից 03.02.2010թ-ին (136382.6 մլրդ ՀՀ դրամ կանոնադրական կապիտալ)², որի գործունեության հիմնական նպատակն է ձևավորել միջին և ցածր եկամուտ ունեցող երիտասարդների՝ բնակարանային ապահովվածության, կրթության և առօրյա այլ խնդիրների լուծմանն ուղղված՝ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկավորման հնարավորություններ³:

Գծապատկեր 2-ում ներկայացված է ընկերության կողմից 2015-2020 թթ. վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պորտֆելի դինամիկան:



Գծապատկեր 2. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորված վարկերի պորտֆելի դինամիկան 2015-2020թթ. ⁴

ՀՀ-ում արժեթղթավորման համակարգի գործարկման նպատակով պետք է ստեղծվի Պետական հիփոթեքային արժեթղթավորման հիմնադրամ (Հատուկ նշանակության ընկերություն՝ SPV). այն պետք է հիմնադրվի որպես ոչ առևտրային կազմակերպություն, որի միակ գործառնությունը կլինի հիփոթեքային վարկերի գնումը և դրանց ապահովությամբ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը: Արժեթղթավորման համակարգի ձևավորման

¹ <https://nmc.am/hy/statistics/loan-dynamics/refinanced-quarterly>

² «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 03.02.2010 թիվ 1/53Ա որոշում. Կանոնադրություն, http://www.hfy.am/files/The_Charter_of_HFY_09.11.2020.pdf


³ «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջ, <http://www.hfy.am/am/mission.html>

⁴ <http://www.hfy.am/am/analytics.html>

համար հիփոթեքային վարկերի արժեթղթավորման գործընթացը ներկայացնենք գծապատկեր 3-ի տեսքով:

Առաջին քայլում վարկառուն դիմում է վարկավորող կազմակերպություն՝ հիփոթեքային վարկ ստանալու նպատակով:

Երկրորդ քայլում վարկավորող կազմակերպությունը («օրիգինատոր») ստուգում է վարկառուի ֆինանսական դրությունը, վարկային պատմությունը, ներկայացվող փաստաթղթերի օրինականությունը, որոշում է կայացնում տրամադրել հիփոթեքային վարկ՝ դիցուք 11%-ով:



Գծապատկեր 3. ՀՀ-ում ակտիվների արժեթղթավորման համակարգի առաջարկվող մեխանիզմը¹

Երրորդ քայլը սկսվում է այն ժամանակ, երբ «օրիգինատորը» տրամադրել է հիփոթեքային վարկ: Վերջինս փաթեթավորում է տրամադրված հիփոթեքային վարկերը առանձին փուլերում, որոնցում ընդգրկված վարկերը պետք է լինեն միասեռ, այսինքն՝ դրանք համապատասխանեն միմյանց իրենց որակով, ժամկետներով, ռիսկի մակարդակով, եկամտաբերությամբ և այլն: Հիփոթեքային վարկերը վաճառքի պահին պետք է դասակարգված լինեն որպես ստանդարտ: Համաձայն գործող օրենսդրության՝ ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն, այսինքն՝ բավարարում են հետևյալ չափանիշներին՝²

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

² «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ», ՀՀ Կենտրոնական բանկի 23.04.99թ. թիվ 63 որոշում, 3.7 կետ. <https://www.cba.am>

- փոխառուի (պարտապանի) ֆինանսական կացությունը կասկած չի հարուցում,

- առկա է ակտիվը մարելու (սպասարկելու)՝ փոխառուի (պարտապանի) բավարար ունակությունը:

Այդ պատճառով «օրիգինատորը» պետք է վաճառի հիփոթեքային վարկերի փուլը միայն այն դեպքում, երբ հաճախորդը արդեն կատարել է մի քանի ամսվա մարումներ: Այնուհետև «օրիգինատորը» վաճառում է հիփոթեքային վարկերի փուլերը Պետական հիփոթեքային արժեթղթավորման հիմնադրամին (այսուհետ՝ ՊՀԱՀ)՝ 13%-ով: Այս դեպքում օրիգինատորի շահույթը կկազմի 2%: Այդ հիփոթեքային վարկերը դուրս են գրվում վարկատուի հաշվեկշռից և հաշվառվում ՊՀԱՀ-ի հաշվեկշռում: «Օրիգինատորը» պարտավոր է տեղեկացնել վարկառուներին ակտիվների վաճառքի մասին:

Չորրորդ քայլում տեղի է ունենում ՊՀԱՀ-ի կողմից վճարում ակտիվների ձեռք բերման դիմաց: ՊՀԱՀ-ը, գնված ակտիվների ապահովությամբ, թողարկում է արժեթղթեր՝ հիփոթեքային պարտատոմսեր: Միաժամանակ ՊՀԱՀ-ը պետք է դիմի ՀՀ Կենտրոնական բանկ՝ վարկանիշ ստանալու համար, որը պետք է մանրամասն ուսումնասիրի պարտքային պարտավորությունների յուրաքանչյուր փուլի ռիսկայնությունը, վարկառուի, վարկատու կազմակերպության և երաշխավորի ֆինանսական կայունության աստիճանը, և, ըստ այդմ, որոշի թողարկված արժեթղթերի վարկանիշը: Այնուհետև «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն ակտիվներով ապահովված արժեթղթերին տրամադրելու է միջազգային տարբերակիչ ծածկագիր:

Հինգերորդ քայլում ՊՀԱՀ-ը վաճառում է այդ արժեթղթերը ներդրողներին. վերջիններս կարող են լինել և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձինք:

Հաջորդ քայլում ներդրողը վճարում է արժեթղթերի դիմաց:

Յոթերորդ քայլում վարկառուն ամսական վճարումներ է կատարում ՊՀԱՀ-ին, որը ներառում է վարկի մայր գումարը և տոկոսագումարները:


Այնուհետև ՊՀԱՀ-ն կատարում է իր պարտականությունները ներդրողի նկատմամբ՝ վճարումներ իրականացնելով պարտատոմսերի դիմաց:

ՊՀԱՀ-ի և օրիգինատորների միջև կնքվող պայմանագրերը պետք է լինեն ունիֆիկացված, այսինքն՝ գնվող հիփոթեքային վարկերի փուլերը ունենալու են միասնական չափանիշներ: Մեր կողմից առաջարկվող սխեմայի դեպքում այդ չափանիշներն են՝

1. հիփոթեքային վարկ/գրավի արժեք հարաբերակցությունը՝ 70% (LTV),
2. հիփոթեքային վարկերը դասակարգված են որպես ստանդարտ ակտիվներ,
3. տրամադրված բոլոր հիփոթեքային վարկերը ամբողջությամբ ենթարկված են մոնիթորինգի,
4. հիփոթեքային վարկերը պետք է տրամադրվեն միայն ՀՀ դրամով,

5. վարկառուներ կարող են լինել միայն ռեզիդենտ ֆիզիկական անձինք,
 6. հիփոթեքային վարկի ժամկետը պետք է գտնվի 5-15 տարի միջակայքում:
 Միայն վերոնշյալ պայմանների բավարարման դեպքում հնարավոր է կնքել հիփոթեքային վարկերի փուլի վաճառքի պայմանագիր օրիգինատորի և ՊՀԱՀ-ի միջև:

Որպեսզի հիփոթեքային պարտատոմսերը գրավիչ լինեն ներդրողների համար, դրանց տոկոսադրույքը ավելի բարձր է լինելու ֆինանսական շուկայում գործող տոկոսադրույքներից: Գծապատկեր 4-ում ներկայացնենք ՀՀ ֆինանսական շուկայի գործիքների տոկոսադրույքները. ներառված են պետական միջնաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը, 1 տարուց ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, եվրոբոնդերի և վերաֆինանսավորման տոկոսադրույքները:



Գծապատկեր 4. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2021թ. հունիսի 30-ի դրությամբ¹

ՊՀԱՀ-ը պետք է թողարկի ազդագիր: Համաձայն Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ «Ազդագիրը պետք է պարունակի թողարկողի և առաջարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, որը պետք է բավարար լինի ներդրողի կողմից թողարկողի և արժեթղթերով նախատեսված պարտավորությունների ցանկացած երաշխավորի (այսուհետ՝ երաշխավոր) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի, գործունեության հեռանկարների, նրա հետ կապված ռիսկերի, ինչպես նաև այդ արժեթղթերով ամրագրված իրավունքների վերաբերյալ հիմնավորված գնահատական կազմելու համար»² :

¹ Հիմքը՝ ՀՀ Կենտրոնական բանկի Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>, ինչպես նաև <https://brite.blominvestbank.com/series/Weighted-Average-Interest-Rate-on-Eurobonds-3669/>

² Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք:

Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ, ի տարբերություն ավանդների, հիփոթեքային պարտատոմսերի մարումը չի երաշխավորվելու ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից. այդ պատճառով հիփոթեքային պարտատոմսերի տարեկան առաջարկվող եկամտաբերությունը ավելի բարձր է (գծապատկեր 4): ՊՀԱՀ-ի կողմից հիփոթեքային վարկերի փուլով ապահովված պարտատոմսերը կթողարկվեն երկու տրանշով և յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերը կունենան հետևյալ բնութագրիչները.

1. թողարկվող արժեթղթի դասը՝ անվանական, արժեկտրոնային պարտատոմս
2. արժեթղթի ձևը՝ ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի,
3. թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ,
4. եկամտաբերությունը՝ տարեկան 8%,
5. հիփոթեքային պարտատոմս/հիփոթեքային վարկի փուլ հարաբերակցությունը՝ յուրաքանչյուրի համար 40%,
6. տեղաբաշխման ձևը՝ երաշխավորված,
7. ապահովվածություն՝ ապահովված,
8. արժեթղթերի մարման ժամկետը՝ 24 ամիս:

Հիփոթեքային պարտատոմսերը տեղաբաշխվելու են ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայում ստանդարտ աճուրդի եղանակով: Պարտատոմսերի արժեկտրոնը վճարվելու է եռամսյակը մեկ՝ հետևյալ բանաձևով՝ (1)

$$\text{Արժեկտրոն} = \frac{\text{պարտատոմսի մնացորդային արժեք} * \text{արժեկտրոնի տարեկան տոկոսադրույք}(0.08)}{4}$$

Հիփոթեքային պարտատոմսերի թողարկման ոլորտում առկա են լինելու հետևյալ ռիսկերը՝

1. իրացվելիության ռիսկը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկինում այս պարտատոմսերի սահմանափակ քանակով թողարկման և տեղաբաշխման պատճառով թողարկողը կարող է դժվարություններ ունենալ դրանց վաճառքի ժամանակ: Այս ռիսկի նվազեցման նպատակով պարտատոմսերը թողարկվելու են երկու տրանշով, ինչպես նաև երաշխավորված են լինելու միջազգային բարձր վարկանիշ ունեցող կազմակերպության կողմից:


2. վարկային ռիսկը այն բանի հավանականությունն է, որ պարտատոմսերի ապահովություն համարվող հիփոթեքային վարկերի գծով պարտավորությունները կարող են ժամանակին չկատարվել: Այս ռիսկի նվազեցման նպատակով վարկավորող կազմակերպությունը պետք է ունենա վարկային ռիսկի զսպման մեխանիզմներ, որոնք սահմանված են «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի անբաժանելի մաս կազմող «Վարկային ռիսկի հաշվարկը» հավելվածում: Բացի այդ, համաձայն հիփոթեքային վարկավորման ուղեցուցում սահմանված ստանդարտի՝

սահմանված LTV-ի առավելագույն արժեքն է 70%, իսկ հիփոթեքային վարկերով ապահովված պարտատոմսերի թողարկման դեպքում **թողարկվող պարտատոմս/հիփոթեքային վարկի փուլ** հարաբերակցությունը պետք է տատանվի 75- 80 % միջակայքում:

3. տոկոսադրույքի ռիսկը, որը տեղի է ունենալու այն դեպքում, երբ ՀՀ ֆինանսական շուկայում տոկոսադրույքները փոխվեն այնպես, որ հիփոթեքային պարտատոմսերում ներդրումները լինեն ոչ գրավիչ: Այս ռիսկի նվազեցման նպատակով թողարկվող հիփոթեքային պարտատոմսերը, ի տարբերություն այլ երկրներում կիրառվող պարտատոմսերի, թողարկվում են համեմատաբար կարճ ժամկետայնությամբ՝ երկու տրանշով, ֆինանսական շուկայի այլ գործիքների տոկոսադրույքներից ավելի բարձր եկամտաբերությամբ (տե՛ս գծապատկեր 4):

4. երկրի ռիսկը այն բանի հավանականությունն է, որ ՀՀ-ում կարող են տեղի ունենալ այնպիսի իրադարձություններ, որոնց արդյունքում ՀՀ ֆինանսական շուկան կհայտնվի անկայուն վիճակում. արդյունքում ներդրողները կորուստներ կկրեն: Բացի այդ, հնարավոր է՝ ընդունվեն այնպիսի նորմատիվ-իրավական ակտեր, որոնք կարող են ազդել հիփոթեքային պարտատոմսերի գրավչության վրա:

Որպես հիփոթեքային պարտատոմսերում ներդրումներ կատարողներ կարող են հանդիսանալ ՀՀ ներդրումային ընկերությունները, որոնց թույլատրվում է ներդրումներ կատարել բարձր իրացվելի արժեթղթերում, բացի այդ, վերջին տարիներին ՀՀ ներդրումային ընկերությունների կողմից հրապարակված աուդիտորական եզրակացությունները դրական են: Վերջին տարիներին աճել են ՀՀ ներդրումային ընկերությունների ակտիվների մեծությունը, ինչպես նաև կուտակված շահույթը (տե՛ս գծապատկեր 5):



Գծապատկեր 5. ՀՀ ներդրումային ընկերությունների հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2014-2020թթ. (մլրդ դրամ)¹

¹Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության բաժնի՝ <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

Գծապատկերից պարզ է դառնում, որ 2018-2020 թթ. աճել են ներդրումային ընկերությունների հաշվեկշռային բոլոր ցուցանիշները, բացի այդ 2020թ. ներդրումային ընկերությունների ակտիվների ընդհանուր մեծությունը 2014թ-ի համեմատությամբ աճել է 3 անգամ, իսկ կուտակված շահույթը՝ ավելի քան 4 անգամ:

Այսպիսով, հիփոթեքային վարկերի արժեթղթավորման մեխանիզմի ներդրումը կբարձրացնի վարկավորող կազմակերպությունների ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունները, հիփոթեքային վարկերի հասանելիությունը, որի արդյունքում կգարգանա ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկան, արդյունում նաև՝ ամբողջ ֆինանսական շուկան: Հիփոթեքային վարկերի արժեթղթավորման մեխանիզմի ներդրմամբ կշահեն ՀՀ հիփոթեքային վարկի շուկայի բոլոր մասնակիցները:

Գրականություն

1. Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենք:
2. Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք:
3. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք:
4. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ, «Բնակարանային միկրովարկերի և էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի վերաֆինանսավորման կարգ», 22.04.2014թ., թիվ 009 L որոշում:
5. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 03.02.2010, թիվ 1/53U որոշում. Կանոնադրություն, http://www.hfy.am/files/The_Charter_of_HFY_09.11.2020.pdf
6. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջ, <http://www.hfy.am/am/mission.html> *Արարատ Բանկ ՓԲԸ պաշտ. կայքէջ՝ <https://www.araratbank.am/hy/irakanacvats-toxarkumner/124/մուտք>* է 14.11.2021թ.:
7. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ» ՀՀ Կենտրոնական բանկի 23.04.99թ. թիվ 63 որոշում, 3.7 կետ <https://www.cba.am>
8. ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն,

<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>,
ինչպես նաև <https://brite.blominvestbank.com/series/Weighted-Average-Interest-Rate-on-Eurobonds-3669/>

9. ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության բաժին՝
<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

10. <https://www.araratbank.am>

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕННЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

1/2022



ԹՅ ՎՕՎԻՅՆ Ի Ժ Ի ԺՅ. ՆՈՒՅԻՅ Կ՝ 30.03.2022 Ա.:
Ե՛Ի ճՆՅ. ՆԻՅՆ Ի Ժ Ի ԺՅ. ՆՈՒՅԻՅ Կ՝ 5.05.2022 Ա.:
Ի Յ Ի Յ ԷՒ՝ 22,75 Ի Ժ. ՍՅ ՍՈՒԷ: Ի Ժ Յ ՍՅ Կ՝ 100:

Հիմնադիր՝ շ ՆՕՅ ԷՇ Ժ՛Ի Յ ԻՅ Կ՝ ՆՅ ՍՅ ԷԵՅ ՆՅ Կ՝,
Ե՛Ի յՅ ՅՅ Ի՛ՆԻ՛, Օ. ՊՁԲՇ Ի. 5
ՆՅԷ. (0749) 4-04-91, յՅ յԵ (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական հրատարակումներ –
Գիտական տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru, website:
www.asu.am – Scientific publications – Proceedings.

